DEC 2010

891.99
Ա-91

01 JAN 2009

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1928

26 FEB 2013

22144

Գրադարան
ԱԶԳԱՅԻՆ
վչատուռ...

899-2000

Գրառեպվար 592 բ. Հ. 697 Տիրաժ 2000

Պետհրատի 2-դ տպարան Յերևանում—291

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

1.

Յերկու կոմյերիտականներ եյին նրանք։

Մեկը Տիգրանն եր, մյուսը Սիրաքը։

Մեկը յեկել եր մի յերկրից, մյուսը մի ուրիշ յերկրից։ Բայց վորովհետև յերկուսն ել հասակակիցներ եյին, յերկուսն ել մենակ, առանց ընտանիքի, և վերջապես, վորովհետև սենյակներ շատ քիչ եյին ճարվում, այդ պատճառով ել նրանք միասին եյին ապրում։

Տիգրանը տպարանում գրաշար եր, իսկ Սիրաքը կաշեգործարանի բանվոր։

Յերբ առավոտյան փչում եր գործարանի շչակը, յերկուսն ել վեր եյին կենում լռելյայն, քնկոտ աչքերով և մի քիչ լվացվելուց հետո շտապում եյին, մեկը գործարան մյուսը տպարան։

Յերկրորդ շչակը ճչում եր այն ժամանակ, յերբ յերկուսն ել տեղ հասած եյին լինում։ Յեվ շատ քիչ եր պատահում, վոր նրանք ուշանային։

Կաշեգործարանը հեռու չեր, իսկ տպարանը մոտիկ։ Յեվ դրանից եր, վոր ամեն անգամ, յերբ Սիրաքը տուն եր վերադառնում, Տիգրանն արդեն յեկած եր լինում։ Քիչ եր լինում, վոր այդ կարգը խախտվեր վորևե ժողովի կամ այլ պատճառով։

Նրանցից վոչ մեկը, տուն մտնելիս, մյուսին չեր բարևում։

— Դե՛, մեր Սիրաքն ե, ելի, մտածում եր մեկը,

Սիրաքը մի տարով առաջ էր Տիգրանից։ Ուստի և, դասամիջոցներին նրանք իրենց դասերի մասին կարծիքներ փոխանակելու հնարավորություններ շատ ունեյին, բայց ավելի շատ ունեյին վիճաբանելու հնարավորություն։

Յեվ նրանք վիճում եյին։

Վիճում եյին վոչ թե հենց այնպես, աննպատակ կամ ինքնանպատակ, այլ վորովհետև նրանցից յուրաքանչյուրն իր կարծիքների մեջ ինքնուրույն եր և այդ կարծիքները պաշտպանելու մեջ համառ։

Դասերը վերջանում եյին։

Դուրս եր գալիս մեկը և դռան մոտ սպասում եր մյուսին։ Գալիս եր մյուսը և գնում եյին։

Մի քիչ տեղ գնում եյին լուռ, մտածկոտ, ամեն մեկն իր դասերի հետ, ապա նորից նրանց սթափեցնում եր ինչվոր աղջկա կիսակոշիկների թկթկոցը սալահատակի վրա։

— Ի՞նչ տիկին է, է՜...

— Մեծ չի։

— Չե...

— Քանի՞ աղջիկ կարժենա ..

— Կարժենա...

Բայց միշտ այդպես չեյին խոսում։

Բոլորի մասին այդպես չեյին խոսում։

Յեթե փողոցով անցներ մի կոմյերիտուհի կամ բանվորուհիներից վորևե մեկը, Սիրաքն ու Տիգրանը մի քիչ ուրիշ կերպ եյին արտահայտվում նրա մասին։

— Ասում են քարտուղա՛ր ե ընտրվել։

— Լսել եմ։

— Արժե, աշխատավոր աղջիկ ե։

Կամ թե չե.

— Բարև, Սիրուշ, եդ ո՞ւր։

— Ակումբ։

— Արդեն ընդունվեցի՞ր միության մեջ։

Սիրուշը ժպտում ե. ընդունվել ե։

— Ակումբ չե՞ք գա։

— Ենտեղից ենք գալիս։

Յեվ շարունակում եյին ճանապարհը։

— Լա՜վ աղջիկ ե Սիրուշը...

Իսկ յեթե նախքան Սիրուշից բաժանվելը, նրանցից մեկն ու մեկը վառվռուն աչքերով նայում եր Սիրուշի յեքը թևերին, մտովին լափելով նրանց, և յեթե Սիրուշը նկատում եր այդ և հարցնում.

— Հը, ինչ ես նայում, ինձ խո չե՞ս ուզում ուտել,

Այն ժամանակ յերկուսն էլ ամոթից կախ եյին անում գլուխները, մեկն իր վարմունքի համար, մյուսն իր ընկերոջ...

Չե, իհարկե, ուրիշ ե կոմյերիտուհին կամ բանվորուհին, ուրիշ ե մեշչանկան...

Տանը մի քիչ կարդում կամ գրում եյին Սիրաքն ու Տիգրանը, ապա պառկում եյին քնելու։

Մեկը լուռ մտածում եր, շուռ գալիս մյուս կողքի վրա և մռմռում.

— Մի աղջիկ լիներ կողքս...

— Ըմ.. համաձայնվում եր մյուսը։

Յեվ յերկուսն էլ քնում եյին։

Յերկուսն էլ կոմյերիտականներ եյին, յերկուսն էլ քսան մեկ, քսան յերկու տարեկան, յերկուսն էլ առնական և առողջ...։

2.

Առավոտյան, Տիգրանն ավելի վաղ եր արթնացել։ Ձայն տվեց Սիրաքին.

— Սիրա՛ք...

Սիրաքը քնած եր։

— Սիրաք, վեր կաց։

Բայց Սիրաքն ինչպես յերևում եր, վոչ միայն վեր

կենալու տրամադրություն չուներ, այլ և արթնանալու։

Ծուլանալով վեր կենալ տեղից և Սիրաքին արթնացնել, Տիգրանը մահճակալի տակից դուրս քաշեց ինչ որ մի հին չին չուստ և նշան բռնելով շպրտեց դեպի նա։

Սիրաքը վայրկենաբար վեր ցատկեց, ձեռքն առավ չուստը և սկսեց յերկար նայել։

— Հը...

Սիրաքը շուռ ու մուռ տվեց չուստը, բարկացած դեն շպրտեց, ապա նորից պառկեց ու պինդ ծիծաղեց։

— Ի՞նչ եր, Սիրաք...

— Զահրումար եր։ Յերազ տեսա, թե մեր գործարանի տակը ռումբ են դրել, որ պայթեցնեն։ Ո՞վ եր դրել, չգիտեմ։ Յես ռումբն եյի փնտրում, մեկ ել տեսնեմ, անկյունում կանգնած մի մարդ, փաշիստի սև շապիկով, մի ռումբ ել ինձ վրա նետեց։ Իսկույն ռումբը բռնեցի, որ չը տրաքվի, տեսնեմ... չուստն ե։

Տիգրանը քիչ մնաց ծիծաղից ուշաթափվեր։

Սիրաքն ինքն ել ծիծաղեց։

Լսվեց առաջին շչակի ձայնը։ Ընկերները վեր կացան և սկսեցին հագնվել։ Լուսամուտի մոտ կանգնել եր Սիրաքը և դեպի փողոց եր նայում։

— Ե՜... ճար չկա, յես կնիկ պիտի առնեմ,—կես կատակ ասաց նա, շուռ գալով դեպի Տիգրանը։

—Ա՛ռ. մեր Սիրաքն ես, մեկ-մեկ ինձ ել կհյուրասիրես։

— Մի շաբաթ իմ կնիկը թող լինի, մի շաբաթ քոնը...

Տիգրանը բարձր ծիծաղեց։

Դուրս յեկան, դուռը փակեցին և յուրաքանչյուրն իր գործատեղին գնաց։

3.

Մի որ, Տիգրանը յեկավ և սովորականի պես սկսեց սպասել Սիրաքին։

Սովորական ժամանակն անցավ, իսկ Սիրաքը չկար։

Տիգրանը մենակ դուրս յեկավ տանից «քարշ գալու»։ Նա այսոր շատ բաներ ուներ ասելու Սիրաքին։ Մոսկվայից յեկած եքսկուրսանտներն այսոր յեկել եյին իրենց տպարանը տեսնելու։ Նրանցից յերկուսը Մոսկվայի տպարանի բանվորներ եյին, որոնք պատմել եյին այնտեղի տպարանների մասին և այն առավելությունների մասին, որ ունեն նրանք։

Տիգրանը շրջում եր փողոցով, միևնույն ժամանակ աշխատելով տեսնել Սիրաքին։ Այսոր նրանք ժողով չունեյին, ինչո՞ւ ուշացավ,—մտածում եր Տիգրանը։

Բայց անիծված Սիրաքը չկար ու չկար։

Յեվ միայն ակումբ գնալու ժամանակ եր, որ հանդիպեց նրան։ Նա գնում եր Սիրուշի հետ, ինչվոր կարևոր խոսակցությամբ բռնված։

— Ըհը, մտածեց Տիգրանը։ Յես ել ասեմ վո՞րտեղերն ե քարշ գալիս։ Դու մի ասիր, Սիրուշի հետ...

Ուրիշ դեպքում Տիգրանի մտքովն անգամ ծուռ բան չեր անցնի։ Բայց Սիրաքի այսօրվա յերկարատև ուշանալը, կարևոր խոսակցությունը Սիրուշի հետ, մի տեսակ արտակարգ թվացին իրեն։

— Սիրաք, ակումբ չե՞ս գա։

— Դու գնա, յես հետո կգամ...

Յեվ շարունակեց խոսակցությունը Սիրուշի հետ։

Տիգրանը գնաց ակումբ։

— Յես հետո կգամ... դու գնա... խե՞ր լինի։ Բայց չե՞ որ ուրիշ անգամ Սիրաքը կամ կթողներ կգար, կամ իրեն ել կպահեր, կսկսեյին յերեքով զրուցել կամ շրջեր։ Չե՛, տաքացել ե աննամուսը։

Իսկ հետո կարծես սթափվեց։ Ի՞նչ հիմարություն։ Կարծես յերկու հարյուր տարվա պառավ լինեմ։ Իսկույն կասկածեցի։ Ի՞նչ։ Չի՞ կարող տղան աղջկա հետ առանձին խոսակցություն ունենալ։ Առաջին անգամը խո չե՛։ Յեվ վերջապես, մի՞թե միայն Սիրաքը։ Ինքն ել, շատ անգամ,

ժամեր շարունակ մենակ է մնացել մի աղջկա հետ և այն էլ ինչպիսի՜ տեղերում: Բայց մտքից դուրս բան չի անցել: Ի՞նչ կա որ...

Բայց էլի, մի քիչ կասկածում էր Տիգրանը:

Քիչ հետո ակումբ յեկան Սիրաքն ու Սիրուշը:

Սիրուշը գնաց ընթերցարան, իսկ Սիրաքը մոտ յեկավ Տիգրանին:

— Հը՛... էդ ի՞նչ ունես Սիրուշի հետ...

Սիրաքը զարմացած նայեց Տիգրանին: Դեմքին տալով մի լուրջ, հարկ յեղածից ավելի լուրջ արտահայտություն, հարցրեց նրան.

— Դու կոմյերիտակա՞ն ես, թե՞ միջնադարյան պառավ:

Միջնադարյան պառավ խոսքը, որ նրանց լեզվով ամենավիրավորական խոսքերից մեկն էր, խոցեց Տիգրանին:

— Յես յես չլինեմ, թե դու Սիրուշի հետ սուխարի չես չորացնում...

Կոմյերիտական աշխարհում և կոմյերիտականի հոգում, բնավորության մեջ, ընկերոջից բան թաքցնելը չի ընդունված: Գաղտնիք չպետք է լինի մտերիմ ընկերների մեջ...

Սիրաքը պատմեց Տիգրանին, որ ինքն իրոք «տաքացել» է Սիրուշի վրա և հիմի շատ ու շատ սիրում է: Քիչ առաջ, Տիգրանը որ տեսավ, ինքը բացատրվում էր, որ իրենից լավ աղջիկ չկա աշխարհի յերեսին և ինքը զարմանում է, թե ինչպես է պատահել, որ թյուրիմացաբար այդքան լավ աղջիկ է ծնվել աշխարհի վրա: Սիրուշն առաջ կարծել էր, թե Սիրաքն ուզում է իրեն հետ ժամանակ անցկացնել և ասել էր.

— Խելոք կաց, թե չէ էդ տաքացած արյունդ էնպես սառցնեմ վո՜ր...

Բայց հետո, յերբ տեսել էր, Սիրաքն իսկապես սիրահարվել է, յերբ տեսել էր նրա մեջ առաջ բերած պատճառաբանություններն ու Լենինից մի քանի ցիտատները կենցաղի մասին, — կակղել էր:

— Հիմի, ավելացրեց Սիրաքը, ուզում եմ վաղն էլ հանդիպել, այս անգամ արդեն, վերջնականորեն նրա կարծիքն իմանալ ու ավանսով մի լավ համբուրել:

Տիգրանը ժպտաց:

— Լավ աղջիկ է Սիրուշը:

— Լավ ասիր ու թողիր, — վոգևորված ավելացրեց Սիրաքն ու սկսեց խոսել նրա առավելությունների, նրա դրական կողմերի մասին:

Քիչ հետո, յերբ դուրս յեկան ակումբից և տուն եյին գնում, Սիրաքը վոգևորված դեռ պատմում էր, իսկ Տիգրանը լսում էր նրան:

Յերբ այդ յերեկոյան պառկեցին քնելու, Սիրաքը, կարծես ինքն իր հետ խոսելով, ասաց.

— Թե մի առանձին սենյակ կունենամ...

Տիգրանը գլխի չընկավ թե այդպես հանկարծակի, Սիրաքի ինչին էր պետք սենյակը, բայց «ըմմ» արեց իբրև համաձայնության նշան:

Հետո քնեցին:

Բո՜ւ... Առավոտյան փչում էր գործարանի շչակը: Վեր կացան յերկու ընկերները և հագնվեցին: Սիրաքն առաջինը դուրս յեկավ տանից ու գնաց: Ամբողջ ճանապարհին նա քայլում էր մտածկոտ ու դանդաղ: Հետո քայլերն արագացրեց, որ չուշանա:

Յերբ տեղ հասավ դեռ մի քիչ շուտ էր. իսկ բանվորները հավաքվել եյին դես ու դեն և խոսում եյին:

Գարնանային արևը կիսով չափ դուրս էր յեկել սարի յետևից: Գործարանը, որ ընկած էր ծառաշատ մի վայրում, ծագող արևի այդ ժամին իրենից ներկայացնում էր մի գեղեցիկ տեսարան:

Սիրաքը մոտեցավ հավաքված խմբերից մեկին:

— Բարև:

— Բարև։

— Շատ ժամանակ կա՞ մինչև փչի։

— Հինգ-վեց րոպե։

— Ձեզանից վո՞ր մեկը սենյակի տեղ գիտի։

Մի քանիսը ծիծաղեցին։

— Լա՞վն ես ուզում թե շատ լավը։

— Ցես տեղը գիտեմ, բայց պատեր չունի բոլորովին, առաստաղն էլ ամպից է շինած։

— Մասիսի վրա մի լավ սենյակ կա, բայց շատ թանկ է։

— Բաղդադ գնա, էնտեղ լավ սենյակներ կան

— Չէ, ընդհատեց Սիրաքը. կատակ չեմ անում։ Ազատ սենյակ...

— Մոքիցդ հանի, ախպեր, հիմի սենյա՞կ կճարվի...

— Հույսդ կարի։

— Ո՞ւր ես ապրում հիմի. մի կերպ տեղավորվիր, յոլա գնա։

Նրանցից վոչ մեկը չկարողացավ ազատ սենյակի տեղ ասել Սիրաքին։ Վոչ մեկն էլ չէր կարծում, վոր շուտով կարելի կլինի գտնել։

4.

Ամիս և կես անցավ։

Սիրաքի և Տիգրանի կյանքի մեջ համարյա վոչ մի փոփոխություն տեղի չէր ունեցել։ Ամեն ինչ նույնն էր յեթե չհաշվենք այն, վոր Սիրաքը սկսել էր ուշ վերադառնալ տուն։

— Էլի սուխարի յե չորացնում, —մտածում էր Տիգրանը։

Գալիս էր Սիրաքը տուն և պատմում էր, թե ինչպես է այդ օրը հանդիպել Սիրուշին և ինչ են խոսել։ Ապա նորից գնում էին «քարշ գալու»։

Իսկ յեթե պատահում էր, վոր Սիրաքը չէր գալիս,—

շատ էր ուշանում, Տիգրանը մի քիչ հանգստանալուց հետո վեր էր կենում և գնում էր դուրս։ Ճանապարհին հանդիպում էր ընկերներից մեկին և նրա հետ սկսում «քարշ գալ», մինչև բանֆակի դասերն սկսվելը։

Բանֆակում արդեն, տեսնում էր Սիրաքին։

Սիրաքը դեռ չէր հուսահատվել և սենյակ էր փընտրում։ Ցեվ շատ հաճախ, յերբ Տիգրանը մտածում էր, վոր իր ընկերն էլի Սիրուշի մոտ է գնացել, նա թափառում էր այս ու այն կողմ, այս ու այն ծանոթին էր հարցնում ազատ սենյակի տեղ իմանալու համար։

Տիգրանին այդ մասին նա վոչինչ չէր ասել, վորովհետև չէր ուզում վոր անհաջողության դեպքում ընկերն իր վրա ծիծաղի, իզուր ջանքերի համար։

Բայց վերջապես, Սիրաքը մի փոքրիկ սենյակ գտավ, թեև բավական հեռու, բավական հասարակ և հարկ յեղածից ավելի փոքրիկ։

Այդ օրը, յերբ տուն վերադարձավ նա, Տիգրանը մահճակալի վրա պառկած, կարդում էր։

Սիրաքն ուրախ ներս մտավ։

— Սենյակ եմ գտել։

— Ինչո՞ւ. պիտի տեղափոխվե՞ս։

— Այո։ Ուզում եմ ամուսնանալ։

— Պահ՛... այ քեզ նորություն։ Տիգրանը ծիծաղեց.— Շնորհավոր լինի...

— Վաղը գործարան չեմ գնա. դու յել տպարան մի գնա, վոր իրերս տեղափոխենք ու նոր սենյակը մի քիչ կարգի գցենք։

Հետո դուրս յեկան տանից։

Մի աղջիկ անցավ։

— Հը՞...

— Լավն է...

5.

Առավոտյան յերկուսն էլ վեր թռան տեղերից, լսելով գործարանի շչակի ձայնը։ Բայց յերբ հիշեցին, վոր այդ օրը գործատեղի չեն գնալու, ճմռեցին իրենց աչքերը ու ծիծաղեցին։

Սիրաքը գնաց ֆուրգոն բերելու, իրեղենները տեղափոխելու համար։

Տիգրանը մնաց սենյակում։

Առաջին անգամ նա զգաց, վոր իրենցից վոչ մեկը չի կարող վորոշել թե իրերից վոր մեկն է իրենը, վոր մեկն ընկերոջը։ Իսկ հիմա, յերբ Սիրաքը տեղափոխվում եր, կարիք կար այդ վորոշելու։

Տիգրանը ծիծաղեց։

Ի հարկե կարիք չկար։

Յեվ նա այդ խնդրի վրա սկսեց նայել ուրիշ կողմից։

— Իմ ինչին է պետք այս պահարանը. կտանք իրեն։

— Յերկու աթոռն էլ ինձ բավական է։ Մյուսները թող տանի։ Կամուսնանա, պետք կգան իրեն։ Դե, ընտանիք կդառնա... Իրեղենները շատ պետք կգան իրեն։

— Ինչ վոր ուզում է, թող վերցնի։ Իմ բանն ուրիշ է։ Յես ամուրի յեմ։

Այստեղ Տիգրանը ծիծաղեց։

Ֆուրգոնը գոռաց և կանգնեց դռան մոտ։ Սիրաքը ներս յեկավ և սկսեց իրերը դուրս տանել։ Տիգրանն օգնում եր նրան։

Յերբ նորից սենյակ մտան, Տիգրանը դարձավ Սիրաքին, բավական տխուր ձայնով՝

— Շա՛ն վորդի... գնացիր, ելի...

Սիրաքը ծիծաղեց.

— Յերուսաղեմ խո չեմ գնում։ Ելի քաղաքումն եմ։

Հետո, յերբ ամեն ինչ պատրաստ եր, դուռը փակեցին, նստեցին ֆուրգոնի վրա և քշեցին դեպի նոր սենյակը։

Իրոք վոր, սենյակը շատ հեռու չեր։

Ինչքան վոր կարող եյին, կարգի գցեցին սենյակը։

Սիրաքը մահճակալը դրեց լուսամուտի մոտ։ Յեվ յերբ անկողինն եր փռում նրա վրա, Տիգրանը մոտեցավ, բռնեց մահճակալի գլխից և քաշեց դեպի սենյակի խորքը։

— Ինչո՞ւ, հարցրեց Սիրաքը։

Տիգրանն աչքով արեց.

Դրսից կերևա...

Յեվ քթերի տակ ծիծաղելով, շարունակեցին աշխատանքը։

— Սենյակը վերջնականապես կարգի գցել-սիրունացնելը Սիրուշի գործն է, Տիգրան. մենք մենակ մի քիչ կարգի գցենք, ուրիշ վոչինչ...

Ծիծաղեցին։

— Տեղափոխվեց, ելի,—մտածում եր Տիգրանը։

Ապա մոտեցավ լուսամուտին և նայեց դուրս։ Հեռվում յերևում եր ընդարձակ դաշտավայրը, վոր վողողված եր ամառվա տաք արևով։ Յերկնքի կապույտը թվում եր սովորականից բարձր, սովորականից ավելի խոր և ջինջ։

Ամպի վոչ մի կտոր չկար։

Տիգրանը ցանկություն զգաց դուրս գալու դեպի այդ դաշտը, արևի տակ զբոսնելու, պառկելու խոտերի մեջ և նայելու անամպ, կապույտ յերկնքին...

— Շատ լավ է սենյակդ։ Լուսամուտից մի անգամ դուրս նայելն ամեն ինչ արժե։

Ապա՝

— Դու կարգի գցիր, Սիրաք, յես մի քիչ դուրս գնամ։

Ու դուրս յեկավ, շտապելով առաջ գնաց, մինչև վոր հասավ բաց դաշտը։ Յեվ ինչպես ցանկացել եր,

այնպես էլ պառկեց խոտերի մեջ, սկսեց նայել կապույտ յերկինքին։

Արևը տապ էր հոսում և բզեզներն ու մեղուները դժժում էին։ Ճպուռն իր առօրյա յերգն էր խարտոցում։

Տիգրանը մի քանի ժամ մնաց այդտեղ։

Յերեկոյան, յերբ պառկում էր քնելու, հանկարծ նայեց դեպի այն կողմը, ուր յերեկ դրված էր Սիրաքի մահճակալը։

Յեվ էդ որը նա քնեց առանց նախնական խոսակցության, մտածելով, վոր հաճելի բան չէ մենակությունը։

— Շան վորդին տեղափոխվեց, ելի — մտածեց նա և քունը տարավ։

6.

Սիրաքի տեղափոխվելուց հետո, Տիգրանն այլևս չէր հանդիպում նրան։ Բանֆակում արդեն արձակուրդ էին տվել. այնպես վոր, վոչ Սիրաքն էր այնտեղ լինում, վոչ Տիգրանը։

Շատ էր հետաքրքրվում Տիգրանը, թե Սիրաքն ինչով է զբաղված, ինչ է անում։ Յեվ վորոշեց մի կիրակի գնալ նրա մոտ։

Արդեն անցել էր տասնհինգ-քսան որ, յերբ մի որ յերեկոյան, Սիրաքը փողոցում հանդիպեց Տիգրանին։

— Վաղն իմ կարմիր հարսանիքս է, արի։

Տիգրանը համաձայնվեց։

Ապա հարցրեց.

— Հը՞, սկի պաչում ես Սիրուշին...

Սիրաքը միայն ժպտաց։

— Դե ասա, հը...

— Ե՜ թող, — ծիծաղեց Սիրաքն ու հեռացավ։

Իսկ հետևյալ որը տեղի ունեցավ նրա կարմիր հարսանիքը։

Դե՛, վորքան էլ վոր հեռու լինեն սենյակներն իրարից,

899-2000

բայց չէ՞ վոր նրանց բնակիչներն իրար սրտակից ընկերներ են։ Բայց Սիրաքը «մի տեսակ էր դարձել» Տիգրանի աչքին և էդ «մի տեսակը» շատ անհասկանալի յեր Տիգրանի համար։

Նա այդ բանը նկատեց Սիրաքի ամուսնանալուց քսան-քսանհինգ որ հետո։

Սիրաքն ինքը յեկավ Տիգրանի սենյակը և ասաց, վոր գնան մի քիչ «քարշ գալու», ըստ հին սովորության։

Որը կիրակի յեր։

Տիգրանը վեր կացավ, գլխարկը ծածկեց ու գնացին։

— Ե, մի պատմիր տեսնենք ինչ կա, ինչ չկա։ Տպարանում ինչ նորություն կա, - հետաքրքրվեց Սիրաքը։

Տիգրանը պատմեց։

— Իսկ դու՞ վոնց ես, Սիրաք, էլի առաջվա նման, թե հիմի փոխվել ես։

— Չե, ինչու՞ պիտի եսքան շուտ փոխվեմ։ Էլի էն եմ։ Վոչ մազ ու մորուքս է ճերմակել, վոչ էլ աչքերիս լույսը նվազել։

Յեվ ինքն էլ ծիծաղեց իր ասածի վրա։

Այդ րոպեյին մի աղջիկ էր անցնում։ Տիգրանը, վորն ինչ վոր բան էր պատմում, խոսքն ընդհատեց ու դարձավ Սիրաքին.

— Կասես կաքավ լինի, հը...

Սիրաքը չպատասխանեց։

— Հը...

— Պատմությունդ շարունակիր, ասաց Սիրաքը, հերն էլ անիծած, թե կաքավ է։

Տիգրանը շարունակեց։

— Այ, հանկարծ բացականչեց նա, տեսնու՞մ ես, Սիրաք, սա այն աղջիկն է, վորի վոտքերը քեզ շատ էին դուր յեկել։

— Տիգրան...

— Ինչ։

Գրադարան

— Արի եդ մասին ել չխոսենք: Բոլորովին չխոսենք: Կոմյերիտականներ ենք, չե՞: Արժե՞ այդ դատարկ բաներով ժամանակ կորցնել:

Տիգրանը զարմացած նայեց նրա յերեսին և կարծես թե ինքնիրեն՝ քթի տակ մրթմրթաց.

— Եդ վո՞ր որվանից...

Յերեկոյան, յերբ պառկեց քնելու, նորից այդ մասին եր մտածում:

— Ինչո՞ւ չե փոխվել Սիրաքը: Կարծես առաջվանը չլինի: Ինչո՞ւ ասաց, «յեկ եդ մասին ել չխոսենք»...

Հենց դա յեր անհասկանալին:

7.

— Սիրա՛ք, ասաց Տիգրանը մի որ, փողոցում հանդիպելով նրան,—մի բան պիտի հարցնեմ քեզ:

— Հարցրու:

— Դու են որն եդ խոսքն ինչո՞ւ ասեցիր...

— Վո՞ր խոսքը:

Տիգրանը հիշեցրեց, թե վոր «խոսքի» մասին եր ասում:

— Հա՛, են...

— Հա...

— Գիտե՞ս ինչ, Տիգրան: Քանի չեյի ամուսնացել, կարծում եյի թե մի չտեսնված հրաշք ու չեղած դրախտ ե ամուսնությունը: Դուրս յեկավ վոր, դե, վոնց բացատրեմ, վոր հասկանաս: Դուրս յեկավ, վոր այնքան մեծ բան չի: Ասում ես—այսինչ աղջիկը սիրուն վոտքեր ունի. վոտք ե, ելի, դրա մասին մտածելու համար ժամանակ կորցնել արժե՞: Ենքա՞ն գործ կա անելու, մանավանդ կոմյերիտականի համար:

Տիգրանը լուռ եր:

— Մեկ ել այն եմ ասում,—շարունակեց Սիրաքը,

վոր դու յել, մի քիչ ուդ անես վոտների ու կրծքերի պատկերները քո գլխից: Մի որ ել կամուսնանաս ու կտեսնես վոր, դե, ամուսնություն ե, ելի: Ամենից լավն այն ե, վոր աղջիկը քեզ նման լինի իր բնավորությամբ, լինի ընկերական, քեզ հասկացող, վոր հետը հոգու կապ ունենաս: Մնացածը դատարկ բան ե: Դե, ամուսնություն ե, ելի...

Քիչ հետո, յերբ յերկու ընկերները բաժանվեցին, Տիգրանի համար խնդիրն ելի անհասկանալի յեր մնացել: Մտածելով այդ մասին, նա վորոշեց «հարցին գործնական լուծում տալ»...:

«ԽՈՐՏԱԿՎԱԾ ՀՈԳԻՆԵՐԻ» ՓՈՂՈՑՈՒՄ

1.

Յես նրան, այդ տասնութ տարեկան աղջկան հանդիպեցի սրանից ուղիղ մեկ և կես տարի առաջ, յերբ վոչ միայն չգիտեյի, վոր իր անունն Անահիտ ե, այլ և չգիտեյի նույնիսկ, թե նա գոյություն ունի աշխարհի վրա։

Մի պայծառ ու արևոտ առավոտ եր, յերբ յես վեր կացա անկողնից և շտապեցի գյուղ գնալ։ Արդեն կիրակին անցել եր և նորից յերկուշաբթի յեր։

Բայց յես դեռ չասեցի, թե ինչ մարդ եյի յես, կամ ինչու եյի գյուղ գնում։ Յես մի կոմյերիտական եյի և աշխատում եյի գյուղերում, վորպես կոմյերիտմիության հրահանգիչ։ Յուրաքանչյուր շաբաթ յերեկո գալիս եյի քաղաք, տեսնվում եյի ընկերներիս հետ, կիրակի որը անց եյի կացնում քաղաքում, իսկ յերկուշաբթի առավոտյան գյուղ եյի վերադառնում։

Իմ միակ ազատ որս, կիրակին, այնքան շատ եյի ոգտագործել և հոգնել, վոր այդ առավոտյան արթնացա բավական ուշ, և շտապեցի ճանապարհ ընկնել, չուշանալու համար։ Բայց յերբ անցա գավկոմի լուսամուտների տակով և լսեցի ներսից յեկող ձայները, մի քանի րոպեյով ներս մտա, մի անգամ ևս խոսելու և կատակելու համար ընկերներիս հետ, վորից հետո պիտի գնայի, ինչպես ասացի՝ դեպի գյուղ։

Ահա հենց այդ որն եր, վոր տեսա նրան, և յեթե չեմ սխալվում, հենց այդ որն էլ սիրահարվեցի նրա վրա։ Բո-

լորովին այդպիսի մտադրություն չունեյի, յերբ գավկոմի դրասենյակ մտնելիս տեսնելով նրան,— մի անծանոթ դեմք, վոր լուսամուտի կողքին կանգնած հերթի յեր սպասում քարտուղարի մոտ գնալու համար,— մոտեցա և ասացի.

— Բարև ձեզ, ընկեր, ծանոթանանք։

Հավատացնում եմ ձեզ, վոր վատ մտքով չասի այդ խոսքերը։ Յես միշտ այդ կերպ եմ ծանոթանում տղաների, բնականաբար նաև աղջիկների հետ։

— Մենք ծանոթ ենք իրար, ասաց նա և ծիծաղեց։

Միայն այդ ծիծաղի ժամանակ նկատեցի, վոր նրա դեմքը բավական գեղեցիկ եր.

— Ծանո՞թ ենք,— ասի յես զարմանալով. յերբվանի՞ց...

— Չե՞ս հիշում, ասաց նա, կարծես վիրավորվելով, վոր չեմ հիշում իրեն.— մենք սովորել ենք միասին մի դասարանում, սրանից յերկու տարի առաջ։

Ասաց ու ձեռքով շտկեց ճակատի վրա թափված մազերը։ Նրա ձեռքն էլ գեղեցիկ եր։

— Ափսոս․․ չեմ հիշում, ասեցի յես և տխրեցի։ Բայց չգիտեմ, թե ինչու տխրեցի։ Հետո դրա համար շատ եյի ծիծաղում ինքս ինձ վրա։ Գուցե նրա համար տխրեցի, վոր աղջիկը չեր հավատում ինձ, վոր իրոք, բոլորովին մոռացել եմ իրեն։

Նա նորից ծիծաղեց և այս անգամ նրա ծիծաղը չափազանց չարաճճի յեր ու զվարթ։

— Վոչինչ, յեթե չես հիշում. իմ անունս Անահիտ ե, իսկ ազգանունս՝ Տեր-Կարապետյան. բայց վորովհետև հիմի Տեր չկա, դրա համար էլ՝ Կարապետյան։

— Հա՜ . . . ասի յես թեթև ծիծաղելով ու, չգիտեմ ինչու, զարմանալով։ Իսկ իմ անունս . . .

— Գիտեմ, ասաց նա ընդհատելով. Արամ ե։ Արամ Հարությունյան։

— Վո՞րտեղից գիտես . . .

— Զագսից եմ իմացել, ասաց նա, չգիտեմ քանի յերրորդ անգամ ծիծաղելով։

Յես, ի հարկե, չհավատացի. նույնիսկ դեմքիս մի շարժումով արտահայտեցի զարմանքս։

— Ի՞նչ մարդ ես, վրա բերեց նա. եդ էլ չես հասկանում։— Գոնե գլխի կընկնեիր. յեթե մի դասարանում ենք սովորել, ուրեմն և ազգանունդ . . .

— Հմ . . . բացականչեցի յես։

Հետո նա պատմեց, թե ինչպես յես ու ինքը, ինչպես նաև մի ուրիշ ընկերուհի, մի քանի անգամ միասին պատրաստել ենք ռուսերեն դասը, որն առանձնապես դժվար է թյուրքահայի համար։

Եդ էլ չեյի հիշում։

— Ուրեմն դու թուրքահա՞յ ես։

— Այո, թյուրքահայ. ծնողներս մեռել են, իսկ յես մենակ եմ և աշխատում եմ ծխախոտի գործարանում։ Յեթե ինձ հետ միևնույն սենյակում ապրող ընկերուհուս չհաշվենք, յես բացարձակապես մենակ եմ։

«Բացարձակապես»-ն ինձ դուր չեկավ։ Ինչու՞ բացարձակապես մենակ։ Բայց նույն րոպեյին նա նորից գեղեցիկ կերպով ծիծաղեց, և յես մոռացա այդ։

Լուռ կանգնած եյի։ Հերթը հասավ նրան։ Մի անգամ էլ ծիծաղեց ու մտավ քարտուղարի մոտ։ Նոր միայն հիշեցի, որ ուշացել եմ։ Դուրս յեկա փողոց և ըշտապ-շտապ քայլեցի դեպի գյուղ տանող ճանապարհը։ Վորպեսզի շուտ հասնեմ գյուղ, սկսեցի սուլել մի աշխույժ մարշ, վորի տակտի համաձայն փոխում եյի քայլերս արագ-արագ և լայն-լայն . . .։

2.

Մինչև գյուղ հասնելս նրա մասին եյի մտածում։ Լավ աղջիկ է, ուրախ, գեղեցիկ, և կարծես թե ինչ վոր բանով զանազանվում է մյուս աղջիկներից։ Ամբողջ ճանա-

պարհին այդ «ինչ վոր բան»-ի մասին եյի մտածում, բայց չեյի կարողանում ըմբռնել, թե ինչ եր դա։ Միայն այսքանն եյի կարողանում հասկանալ, վոր նա յել մի պարզ և ընկերական աղջիկ է մյուսների նման, բայց ավելի յե գիտակցում իր աղջիկ լինելը, քան մյուսները։ Յերբ խոսում եյի նրա հետ, պարզ կերպով ինձ պաշարել եր այն զգացմունքը, վոր յես խոսում եմ վոչ թե ընկերուհու, այլ աղջկա հետ։ Նա ինքն եր այդպես վարվում։ Չգիտեմ, յես և՞ս նրա հետ ընկերաբար խոսեցի, թե այնպես, ինչպես սովորաբար տղան խոսում է աղջկա հետ, զգալով, վոր ինքը տղա յե, իսկ դիմացինն աղջիկ, վորին՝ վատ չեր լինի, յեթե համբուրեր։

Կարճ ասած, այդ որը տարորինակ կերպով եր սկսվել ինձ համար և այդպես էլ շարունակվում եր։ Ուրիշ անգամ, գյուղ գնալիս, մենակությունից չձանձրանալու համար, յես հասնում եյի առջևից գնացող գյուղացիներին և զանազան բաների մասին խոսելով շարունակում եյինք մեր ճանապարհը։ Իսկ յեթե վոչ վոք չեր հանդիպում ճանապարհին, յես ուրիշ բանով եյի զբաղվում։ Նայում եյի իմ շուրջը փռված դաշտերին և մտածում եյի։ Այս արտից սկսած մինչև դիմացի սապատավոր սարը — հսկայական տարածություն է։ Ո՞վ գիտե, գուցե մի քանի տասնյակ տարուց հետո այստեղ մի մեծ քաղաք կանգնի և քաղաքի անունն էլ լինի Կոմունաշեն։ Յեվ ամեն անգամ, յերբ անցնում եյի ապագա Կոմունաշենի մոտով, շարունակ համակվում եյի այդ գեղեցիկ հեռապատկերներով։

Քանի վոր տարվա այդ յեղանակին գյուղի ճանապարհի վրա անցորդներն ուշ-ուշ եյին յերևում, դրա համար էլ յես ստիպված եյի ավելի և ավելի խորանալ Կոմունաշենի հեռապատկերների մեջ և զբաղվել նրանցով։ Նույնիսկ բանն այնտեղ հասավ, վոր յես սկսեցի քաղաքն հատակագծել և փողոցներն ու շենքերը կառուցել։ Ծի-

նում էյի, քանդում, նորից էյի շինում ու քանդում, մինչև վոր քաղաքն իր վերջնական ձևն ստանար, կոմունիստական հասարակության յուրաքանչյուր անդամի համար պատշաճ հարմարություններով։ Մինչև հիմա յել համոզված եմ, վոր յեթե մի որ ինձ նշանակեն Կոմունաշենի կառուցման գլխավոր ճարտարապետ՝ չեն սխալվի։

Այդ օրն ես գյուղ տանող ճանապարհի վրա ինձանից բացի վոչ վոք չէր յերևում, ուստի յես սկսեցի Կոմունաշենի փողոցներով տրամվայի գիծ անցկացնելով զբաղվել։ Բայց Անահիտը յեկել կանգնել էր իմ մտքի առաջ և ինքն իր մասին պրոպագանդ էր մղում։ Ել ինչ կարող ես անել։

Ասենք դեռ այդ վոչինչ, վոր Կոմունաշենի նման մի հսկայական քաղաք տրամվայ չունեցավ. ցավն այն է, վոր գյուղի մոտ, ճանապարհին ընկած քարի վրա ըստ սովորականի նստելով, այդ օրը չզբաղվեցի գործիս վերաբերող խնդիրներով։ Սովորություն ունեյի, քաղաքում գտնված ժամանակս, կիրակի յերեկոյան պատրաստել գյուղերում տանելիք աշխատանքիս առաջիկա շաբաթվա ծրագիրը, վորը թեև բարեխղճորեն կատարում էյի, բայց մի անգամ ես աչքի էյի անցկացնում՝ այդ քարի վրա հանգստանալու համար նստելիս։

Այս բանն ինձ շատ վրդովեց և յես հայհոյեցի Անահիտին, անվանելով Մուսոլինիի աղջիկ, պասիվիստկա և, ինչպես ժողովրդական առածն է ասում՝ բանվորի մանգաղ գողացող։ Կարմիր քարն արդեն իմ յետևս էյի թողել, յերբ սթափվեցի և նկատեցի այդ։ Այլևս յետ վերադառնալ չուզելով, յես խոսք տվի ինքս ինձ, վոր աշխատանքի ժամերին բոլորովին չմտածեմ նրա մասին։ Յես խոսքս ի հարկե կատարեցի, բայց մի քանի թեթև վերապահումներով։

3.

Յերբ այդ շաբաթը վերջացավ, նոր միայն զգացի, վոր վեց որ ասածդ քիչ բան չէ։ Զգացի նաև, վոր գյուղից մինչև քաղաք ձգվող ճանապարհը բավական յերկար է յեղել, իսկ յես միայն նոր եմ նկատում այդ։ Մանավորապես այդ բանն զգացի ճանապարհին, յերբ ինձ թըվում էր, թե իմ փոխած յուրաքանչյուր քայլի փոխարեն քաղաքը հեռանում է ինձանից յերկու քայլ։ Հասնելու հույսս կտրվում էր արդեն, յերբ մոտեցա քաղաքի տների առաջին շարքին։ Բայց այդ օրը քաղաքը զարմանալիորեն մեծացել էր, փողոցները յերկարել էյին և տեղ հասնել չէր լինում։

Բայց ահա վերջապես մայր մտնող արևի շողերի տակ յերևացին փոքրիկ սենյակիս պատուհանի պսպղացող ապակիները։ Մոտեցա դարպասի դռանը, թակեցի և ինչպես ընդհանրապես, այդպես էլ այդ անգամ, դուրս յեկավ հարևան պառավը և դարբասը բացեց։ Սովորաբար նա հագած էր լինում աշխարհագրության քարտեզի բոլոր գույներով կարկատանված մի զգեստ, վորի փոխարեն այսոր հագել էր նոր շորեր։

Մեր սովորական սիրալիր վողջույններից հետո հարցրի նրան.

— Շնորհավոր լինի, նոր շորե՛ր ես հագել, տատի...

— Հա, վորդի, թոռս է կարել տվել. ինքն էլ մի ամիս արձակուրդ ա առել, եսոր-եգուց գալու ա։

Նրա թոռը մի ինչ վոր ուրիշ քաղաքում ուսանում էր և այդ տարի ավարտելով անցել էր ծառայության՝ իր առաջին վաստակից բաժին հանելով տատին։ Մասնակցելով պառավի ուրախությանը, մտա սենյակս։ Արդեն ուշ էր և յես շտապում էյի գնալ ակումբ տեսնելու ընկերներիս։ Բացի դրանից, այդ ժամերին ժողովներ էյին տեղի ունենում, ուստի յեվ պետք էր հասնել։

Ինչպես միշտ, այդ օրն էլ առաջին գործս յեղավ սանրվել, լվացվել, զգեստներս փոշուց մաքրել: Մասնավորապես այդ օրը մեծ խնամքով սանրեցի մազերս և զգեստներիս տվի, ինչքան հնարավոր էր, վայելուչ ձև: Խոսք անգամ չի կարող լինել, վոր այդ օրվա մասնավոր հոգատարությունս վորևէ կապ ուներ Անահիտին հանդիպելու ցանկությանս հետ: Ի հարկե վոչ: Հենց այնպես, քանի վոր պառավը կարող է նոր շորեր հագնել, դե յերիտասարդը հո իրավունք ունի մի բան էլ ավելին անենելու: Յեվ շատ հավանական է, վոր պառավի նոր զգեստըն էր, վոր ինձ թելադրեց մի քիչ ավելի խնամքով հարդարել մազերս և զգեստներս: Անպայման այդ էր պատճառը. թե չէ՞ ուրիշ ինչ պատճառ կարող էր լինել...:

Դուրս յելա սենյակից: Մի տեսակ էի: Այսինքն ինչ տեսակ: — Հուզվա՞ծ էի. դա այնքան էլ ճիշտ չի լինի: Անհամբե՞ր էի: Դա չէ՝ յերևի սխալ է: Բայց էլի, մի տեսակ արտակարգ էի: Յեվ վորովհետև, միտքս գոնե, շատ հանգիստ էր, դրա համար էլ այդ արտակարգությունն սկսեցի փնտռել զգացմունքներիս մեջ. մի լավ խրատ տալու համար նրան: Մինչև դարպասին հասնելս՝ գտա, վոր հարցը Անահիտի հետ մի քիչ... կապ ունի: Այդ օրը կարծեք մի քիչ ավելի էի մտածում Անահիտի մասին: Ինչու՞: Յև ինչ. հազիվ ճանապարհի կեսն էի անցել, յերբ յեղավ այսպես ասած՝ մի գյուտ, մի անակընկալ գյուտ: Յես Անահիտի վրա սիրահարված էի...

Սկսեցի ինքս ինձ մտածել: Ի՞նչ դժվար բան է առաջին անգամ սիրահարված լինել: Ահա յես գնում եմ ակումբ, յեթե կարելի չէ այսպես արտահայտվել՝ Անահիտին հանդիպելու համար: Բայց ասենք թե հանդիպեցի. հետո՞...: Ի՞նչ եմ ասելու, ի՞նքն ինչ է ասելու: Յենթադրենք, թե յես ասացի, վոր սիրում եմ քեզ. իսկ նա ասաց, թե յես էլ քեզ եմ սիրում: Դրանի՞ց ինչ...:

Խելքս բան չէր կտրում: Վորքան ծանոթ եմ, այդ

խնդրի վերաբերմամբ վոչ մի ձեռնարկ չկա տպագրված, կամ գոնե այբբենական դասընթացքի նման վորևէ բան: Նույնիսկ այդպիսին չկա:

Ինքս ինձ վրա բարկանում էի: Քո ինչ գործն է սիրահարվել, այն էլ առաջին անգամ տեսնելիս: Իսկ լավ կլինի՞, յեթե բանից դուրս գա, վոր նա արդեն սիրահարված է ուրիշին: Սիրահարվելուն էլ կարգ ու կանոն կա: Նախ պիտի իմանայիր, թե՝ ինչպես ասում են՝ ազատ է...:

Լավ, ասենք թե ազատ է: Հետո՞: Պիտի գնամ, հանդիպեմ իրեն, պիտի մի քիչ խոսենք համագումարի աշխատանքների մասին, մի քիչ էլ ընկերական հարցերի շուրջը և վերջացավ: Տուն վերադառնալիս նոր միայն պիտի հիշեմ, վոր այն, ինչ վոր հարկավոր էր, չեմ ասել:

Իսկ յեթե ասե՞մ...

Այդ րոպեյին մտքերս խզվեցին, վորովհետև արդեն ակումբի դռան մոտ էի հասել:

Մտա ներս: Ժողովն արդեն սկսվել էր:

4.

Ճիշտն ասած, չգիտեմ, թե սիրո ինչպիսի՞ տեսակներ կան և դրանցից վո՞րն է համարվում ամենաթունդը: Այնուամենայնիվ, իմ սերը բավական թունդ տեսակների թվին էր պատկանում: Սակայն, չնայած այդ բանին, հենց վոր մտա ժողովասրահը, իսկույն տարվեցի այն հետաքրքիր հարցով, վորն այդ ժողովի օրակարգի նյութն էր կազմում: Միայն մի անգամ շուրջս նայեցի այլ նպատակով, այսինքն փնտռելով, թե նա էլ կա՞ այդ ժողովում: Այդ փոքրիկ բացառությունը չհաշված, յես սովորականի նման էի և ամեն ինչ անցավ նույնպես սովորականի նման:

Յերբ ժողովը փակվեց և մենք դուրս յեկանք, յես

Սկսեցի նրան փնտրել։ Նա ժողովում չկար։ Փնտրեցի նրան ակումբի բոլոր սենյակներում. դարձյալ վոչ մի տեղ չգտա նրան։ Նա կարծես անհետացել էր, այն ինչ ակումբում ուրիշ շատ-շատերը կային։

Տխրեցի։ Ինձ պաշարեց մի տրամադրություն, վորի մեջ մարդ ընկնում է, մի կարևոր բան փնտրելուց և չգտնելուց հետո։ Գուցե բոլորիդ հետ էլ յերբեմն պատահել է այդպիսի բան։ Գրասեղանիդ դարակում, յենթադրենք թե ունես (գուցե և իրոք ունես) մի շատ հետաքրքիր գիրք։ «Կոմյերիտմիության անելիքները գյուղում» կամ մի այլ գիրք։ Բաց ես անում դարակը, վոր գիրքը վերցնես կարդաս, բայց չկա։ Ի՞նչպես կարող է պատահել . . .

Դե հիմա յերևակայեցեք իմ դրությունը, քանի վոր յես վոչ թե մի սիրած գիրք էյի փնտրում, այլ մի հետաքրքիր և ուրախ խոսակցուհու, մի պարզ ընկերուհու և, վոր այնքան էլ անկարևոր չեր՝ մի գեղեցիկ աղջկա։

Նստեցի պատահած մի աթոռի վրա և սկսեցի մտածել։ Այս մեկը լավ չեղավ։ Գուցե նա այս միջավայրից կտրված մի աղջիկ է և կարող է ամիսներով էլ վոտ չկոխել այստեղ։ Ո՞վ գիտե . . .

Յերևի դեմքս փիլիսոփայի արտահայտություն էր ստացել, յերբ մոտեցավ ընկերուհիներից մեկը և նստեց կողքիս։

— Ինչո՞ւ յես տխուր . . .

Հարցը տրված էր բավական հետաքրքրությամբ։ Դրսից վոգևորված, յես ուզեցի էլ ավելի մռայլ ցույց տալ ինձ, բայց գլխի ընկնելով, վոր դրանից վոչինչ դուրս չի գա, բացի մի քանի ծամծռություններից դեմքիս վրա, ուղղակի դարձա նրան և ասեցի.

— Սիրահարված եմ . . .

Չգիտեմ ինչպես, այդ խոսքիս մեջ ծիծաղելի բան կար, բայց նա սկսեց բարձր ծիծաղել։

— Ի՞նձ վրա չես սիրահարված։

Չե՛ մի . . . քեզ վրա։—Անահիտի . . .

— Վ՞որ Անահիտի . . .

— Տեր-Կարապետյան. բայց վորովհետև հիմի Տեր չկա, դրա համար էլ Կարապետյան . . .

Այս անգամվա ծիծաղը հարկ յեղածից չափազանց բարձր եր . . .

— Անահի՜տ . . . վատ չես արել, բայց զգույշ, նրա հոգեբանությունն «այնքան էլ նորերից չի»։

— Ուրեմն ճանաչո՞ւմ ես նրան, հարցրի յես մեծ հետաքրքրությամբ։

Ընկերուհիս, նկատելով վոր յես կատակ չեմ անում և իրոք սիրահարված եմ,—լրջացավ։

— Այո, ճանաչում եմ. այսինքն վոչ միայն ճանաչում եմ, այլ և մենք միասին ենք ապրում։

— Մի՞թե, այ քեզ պատահականություն։

— Այո, շարունակեց նա. անցյալ որը նա դիմում է տվել և ընդունվել է միության անդամ։ Այնուամենայնիվ նրա բնավորության մեջ դեռ անհարազատ գծեր կան . . . Բայց վոչինչ,—ավելացրեց ընկերուհիս,—կամաց-կամաց կուղղվի։

Սիրտս ուժեղ խփում եր։ Գուցե չեր խփում, բայց ըստ ընդունված սովորության, պիտի խփեր։ Դրա համար էլ յենթադրում եմ, վոր խփում եր։ Այնուամենայնիվ, յես բավական սիրային դրության մեջ էյի այդ րոպեյին։ Իսկ յերբ ընկերուհիս վեր կացավ գնալու, սպառնալով, վոր իմ անհամարձակության դեպքում ինքը կասի նրան, վոր ես սիրում եմ, յես այլես վոչնչով չեյի տարբերվում սիրահարված յերիտասարդից։

— Բայց, Արամ, ավելացրեց ընկերուհիս, դուրս գնալու պատրաստվելով,—յեթե իրոք չես սիրում, այլ ուզում ես ժամանակ անցկացնել, զգույշ կաց . . .

Վիրավորվեցի . . .

—Ժամանակ անցկացնե՞լ. յե՛ս...

Նա կատակ եր անում։ Նա հո գիտեր, վոր յես այդպիսի բան չեյի անի։ Չե՞ վոր յես կոմյերիտական եյի և հոգեբանությունս «այնքան ել հներից չեր»...։

Վեր կացա և գնացի տուն։ Յեվ պետք ե խոստովանեմ հանցանքս, վոր, խախտելով սիրահարության բոլոր կանոնները, հանդգնեցի այդ գիշեր սովորականի պես կուշտ ու կուռ քնել...։

5.

Գուցե յես անշնորհք կերպով եմ պատմում այս բոլորը։ Կամ գուցե պատմում եմ վոչ այնպես, ինչպես պետքն ե։ Յերբեմն ինձ թվում ե, վոր յես պատմելու շնորհք բոլորովին չունեմ։ Այնտեղ, վորտեղ պետք ե տխրել, չեմ տխրում, վորտեղ պետք ե հուզվել, չեմ հուզվում և ընդհակառակը։ Բայց դա իմ մեղքը չի, վոչ ել մի ուրիշինը։ Յերբ այն տխուր լուրն իմացա, վորի մասին պիտի պատմեմ մի քիչ հետո, նույնիսկ ժամանակ չունեցա տխրելու։ Դեպքերի բերմամբ, ճիշտ այդ որը խորհրդում կազմակերպել եյինք ծիծաղի յերեկո և յես պարտավորվել եյի մասնակցել այդ յերեկոյին մի կոմիկ դերում։ Ասացեք հիմի. յես մեղավո՞ր եմ, կամ ո՞վ ե մեղավոր...

Յերբ յես մի որ հանդիպեցի իմ մի անկուսակցական ընկերոջս և ամեն ինչ պատմեցի նրան, նա կատակի տեղ ընդունեց այդ բոլորը և ասաց, վոր յես սիրել չգիտեմ։ Հետո մի քանի ուրիշներն ել ինձ ասեցին այդ բանը։

Բայց, միթե իրո՞ք յես սիրել չգիտեմ։ Վոչ, իհարկե վոչ. յես սիրել գիտեյի և սիրում եյի նրան։ Շատ եյի սիրում։

Յերբ վերադառնում եյի իմ փոքրիկ սենյակը, իսկ այդ բանն ամեն որ եր պատահում այն ժամանակ, յերբ յես քաղաքումն եյի աշխատում,—նա, այդ համեստ կահավորված բունը դիմավորում եր ինձ իր սովորական մենակությամբ։ Բաց եյի անում դուռը և մտնում եյի ներս։ Կարդում եյի մի քիչ, հետո գրում, ապա պառկում եյի մահճակալի վրա և սկսում եյի մտածել։

Յերեկոն իջնում ե։ Այստեղ միայն յես եմ և այս փոքրիկ սենյակը։ Վորքան լավ կլիներ, յեթե նա այստեղ լիներ...

Նույնիսկ այն ժամանակ, յերբ դեռ չեյի տեսել Անահիտին, դարձյալ ցանկանում եյի, վոր նա լիներ ինձ մոտ։ Չգիտեյի, թե հատկապես ով ե այդ նա-ն, միայն այսքանը գիտեյի, վոր նա աղջիկ ե, գուցե և կոմյերիտուհի, և ուրիշ վոչինչ։ Իսկ յերբ Անահիտին տեսա, իսկույն զգացի, վոր դա ճիշտ և ճիշտ նա յե, վորին յես ցանկացել եմ իմ մենակության րոպեներին։

Գիտե՞ք, լավ բան չե, յերբ մարդ մենակ ե լինում։ Ճիշտ ե յես շատ և շատ ընկերներ ու ընկերուհիներ ունեյի, վորոնց սիրում եյի և նրանք ել ինձ եյին սիրում։ Յես ինձ մենակ չեյի զգում դրսում։ Այդ զգացմունքը պաշարում եր ինձ, յերբ յես գալիս եյի տուն հանգստանալու կամ քնելու։

Սենյակ ներս մտնելիս ինձ թվում եր, թե նա պիտի բաց աներ դուռը և ժպտար...

—Բարև, Արամ, ինչու այսոր ուշացար։

—Բարև սիրելիս. կենտրոնից մարդ եր յեկել... և այլն։

Իսկ առավոտյան նորից դուրս կգայինք տանից և կգնայինք մեր պաշտոնատեղիները։

Յերեկոյան կնստեյինք լուսամուտի մոտ և կնայեյինք դուրս, յենթադրենք՝ յերկնքին։

—Անահիտ, տեսնո՞ւմ ես Մարսը...

Նա իհարկե տեսնում եր...

—«Կարմիր աստղը» կարդացե՞լ ես, դրա մասին ե գրված։

Նա անպայման կարդացած կլիներ։

Յեվ մենք կսկսեյինք մեզ յերևակայել մի-մի Մենոն կամ Նելլա, վորոնք աշխատում են մարդկության ոգտին։

Այսպես կլիներ ամեն ինչ և յես մենակ չեյի լինի այդ փոքրիկ սենյակում։

Բացի մենակության զգացումներից, ինձ պաշարել եր մի նոր, դեռ մինչև այդ անծանոթ զգացմունք։ Զգում եյի ինչ վոր տաք հոսանքի շարժվելը յերակներիս յուրաքանչյուր մասում և աչքերս սկսում եյին տաքանալ։ Թևերս ձգվում եյին առաջ, մեկին գրկելու և համբուրելու համար, սեղմելու կրծքիս և շշնջալու, վոր ինքը լավ աղջիկ ե և յես իրեն սիրում եմ։

Մի՞ անգամ, յերբ ակումբից դուրս եյինք յեկել և յես դեպի տուն եյի ուղեկցում՝ բավական հեռու, քաղաքի ծայրում ապրող ընկերուհիներից մեկին, կանգ առա ճանապարհին և ասեցի։

— Դու գեղեցիկ աղջիկ յես...

Նա ծիծաղեց և ուզեց շարունակել ճանապարհը։ Յես ձեռքերս մեկնեցի և գրկեցի նրան։ Բայց նա դուրս պրծավ և հեռացավ մի քիչ։

— Ամոթ չէ՞, Արամ...

Յես գլուխս կախեցի...

— Լավ, հաշտվենք, միայն թե խոսք տուր, վոր այլևս չես անի, ասաց նա։

Յես խոսք տվեցի։ Իսկ յերբ մոտեցել եյինք իրենց դռանը, նա ասաց.

— Արամ, լավ կանես, յեթե ամուսնանաս։

Իսկ հետևյալ որը մենք նույն ընկերներն եյինք, ինչ վոր առաջ։

6.

Մի անգամ գյուղում յեղած ժամանակս հիվանդացա և ստիպվեցի յերեք շաբաթով քաղաք չգնալ։ Պառկել եյի

մեր կոմյերիտական տղաներից մեկի տանը և միայն լրագիրներով ու ստացած տեղեկություններով եյի կապված քաղաքի հետ։ Իսկ յերբ յերեք շաբաթը լրացավ, յես վեր կացա արդեն առողջացած և ուղեվորվեցի քաղաք։ Այնտեղ, զավկոմում իմացա, վոր բավական համարելով իմ աշխատանքը գյուղում, ինձ փոխադրելու յեն քաղաք, վոր պեսզի կրթությունս շարունակեմ։

Յեվ այսպես. յես նորից քաղաքում պիտի լինեյի ութ ամսվա գյուղական աշխատանքից հետո։ Իմ հիվանդանալուց հետո առաջին անգամ գնացի ակումբ։ Ընկերներս, վոր արդեն լսել եյին հիվանդությանս մասին և մի քանիսն էլ տեսնելու եյին յեկել ինձ գյուղում, հավաքվեցին և բաց արեցինք մի տաք խոսակցություն։ Յես շատ նորություններ եյի լսում, վորոնք մինչև գյուղ չեյին հասել։

Խոսակցության ժամանակ յես հանկարծ նկատեցի, վոր Անահիտը մենակ կանգնած ե լուսամուտի մոտ և խռովկան յերեխայի նման, ցուցամատը կրծելով, նայում ե մեզ։ Ինչու չի մոտենում, յեթե ուզում ե խոսել։

Բարևեցի։

Նա բարևեց բավական լուրջ դեմքով և շարունակեց այդպես մնալ։ Իսկ յերբ ընկերներն ու ընկերուհիները ցրվեցին ամեն մեկը մի կողմ և յես մնացի մենակ, Անահիտը նոր միայն մոտեցավ ինձ և յես տեսա, վոր նրա դեմքը սովորականի պես զվարթ եր։

— Արամ, ասաց նա ժպտալով, հիմա կարելի՞ յե քեզ հետ խոսել։

— Իսկ մի՞թե յերբևիցե չեր կարելի, զարմացա յես։

— Ե՜հ... ասավ նա սրտնեղվելով, յես հո եդ չեմ ասում. հիմա կարելի յե՞ մի քիչ յերկար խոսել քեզ հետ։

— Ինչքան վոր ուզում ես, ասի յես և նորից զգացի, վոր սրտիս բաբախումի ուժեղանալու ամենալավ ժամանակն ե, վորովհետև հիվանդությունիցս հետո այդ ջահել աղջիկն ինձ ավելի լավ եր թվում։ Բայց սիրտս թեև

այնքան էլ արագ չէր բաբախում, այնուամենայնիվ, դրա փոխարեն, յես ցանկանում եյի, վոր յերկար ժամանակ լինեմ այդ հաճելի աղջկա հետ։

Յերբ նա լսեց իմ համաձայնությունը, վերկացավ և առաջարկեց այգի գնալ։ Ամբողջ ճանապարհին խոսում եյինք այն նյութերի մասին, վորոնք հետաքրքրում եյին մեզ ամեն որ.—Յեվրոպա, հեղափոխություն, հետո Խորհրդային Միություն, հետո մեր յերկիրը, այս քաղաքը, ակումբ, բջիջ և այլն։

Նստեցինք մի նստարանի վրա։

—Իսկ ինչ է անում Աստղիկը, հարցրեցի յես իր ընկերուհու մասին։

Չգիտեմ, «ինչ է անում»-ը այդպե՞ս լսեց, թե՞ նրան թվաց, վոր յես ասի՝ ինչ է ասում։

—Նա ասում է, վոր դու ինձ սիրում ես,—ասաց նա, շրթունքներն այնպես ծամելով, կարծես հանդիմանում է նրան։

—Հմ... ասի յես և միայն այսքանը։ Դե այսքանն էլ ինարկե շատ եր։ Յերեք շաբաթվա հիվանդությունից հետո թեև չեյի դադարել նրան սիրելուց, բայց չեյի սպասում, թե այդքան շուտ պիտի պայթի այդ հաճելի... նու, փոթորիկը

Յես հազիվ «հա» եյի ասել և բերանս հազիվ իր առորյա դիրքի մեջ եր մտել, յերբ Անահիտն ավելացրեց.—

—Ստախոսը...

—Չէ, ինչու, վրա բերեցի յես. Աստղիկը սուտ չի խոսում. քանի վոր ասել է, ուրեմն ճիշտ է ասել։ Ո՛վ գիտի։

Անհարմար դրություն եր ստեղծվում։ Թե ընկերուհուս պաշտպանեյի, ակամայից խոստովանություն եր դուրս գալիս,—իսկ դա մի քիչ դժվար է առանց նախնական գիտելիքների։

—Ուրեմն դու ինձ սիրո՞ւմ ես...

—Դե Աստղիկը սուտ չեր ասի...

Անահիտը ծիծաղում է։

—Ասա, էլի...

—Սիրում եմ, Անահիտ։

Այս խոսքիս վրա նա նորից ծիծաղեց և մոտեցավ ինձ։

—Իսկ յեթե չե՞ս սիրում...

—Ախր վոնց, չէ՞ վոր սիրում եմ։

—Դե ուրեմն համբուրիր, վոր հավատամ։

Ինչու չէ։ Սա լիովին թույլատրելի յէ, բայց դրանից՝ չէ՞ վոր նա ուզում է հավատալ։ Վերջի ի վերջո, պիտի հավատացնեյի՞ նրան, վոր իրեն սիրում եմ։ Յեվ չնայած այն բանին, վոր մեզ կարող եյին նկատել, այնուամենայնիվ յես համբուրեցի նրան։

Այդ գիշեր, իրոք վոր, չքնեցի՝ պատահածի տպավորության տակ, իսկ սրտիս բաբախումներն յերեկոյանից սկսած արդեն բավականին արագացել եյին...

7.

Առաջին անգամ յես նրա մեջ վոչ-կոմյերիտական գծեր տեսա գարնան կեսերին։ Այսինքն ինչպիսի գծեր։ Շատ սարսափելի և անբացատրելի։ Դրանցից մի քանիսի մասին կպատմեմ ձեզ յերկու խոսքով։

Ամեն տարվա սովորության համեմատ, այդ անգամն էլ գավկոմը կանչեց մոտ հարյուր կոմյերիտականների, վորոնց հետ նաև ինքնակամ գնալ ցանկացող անկուսակցական յերիտասարդների (ակումբի անդամներից), մի քանի որով գյուղ ուղարկելու համար։ Պետք է անցկացնեյինք «բերքի տոնը»։ Յուրաքանչյուր խմբի մեջ կար մի զեկուցող, վորից բացի, մյուս ընկերները մասնակցելու եյին արվեստի ագիտ-դասերին և ներկայացումներին։

Առավոտյան ժամը 8-ն էր։

Գավկոմի դուռը հավաքված, մենք գյուղերի համեմատ խմբեր էյինք կազմում, վիճում, նորից կազմում և վերջապես յերբ մի խումբ պատրաստ էր լինում, իսկույն նստում էր իրեն հատկացված ֆուրգոնը։

— Դու ո՞ւր ես գնում, ասաց մի ընկեր Անահիտին, վոր նույնպես այդտեղ էր։

— Դեռ չգիտեմ։

Այդ ժամանակ դեպի Զ-ի շրջանը գնացողների միջից մեկը բղավեց.

— Յեկ այստեղ, Անահիտ. աստվածավախ պառավի դերը տանելու համար պետք կգաս, ուրիշ աղջիկ չկա հետներս։

Յես ուրախացա։ Նա յել է գյուղ գնալու և նույնիսկ պառավի կոմիկ դերն է տանելու. և իհարկե լավ կխաղա։

— Դա լավ յեղավ, ուրախ բացականչեցի յես։

Անահիտը, չգիտեմ ինչու զարմացած նայեց ինձ։

— Վոչ. յես ձեր խմբի հետ եմ գալու,--ասաց նա կամակորությամբ։

Մերոնցից մեկը բղավեց.—

— Մեր խումբը լրիվ է, նեղություն մի քաշիր...

Այդ րոպեյին գավկոմի քարտուղարը, այդ՝ մշտապես ուրախ Պետիկը, կանգնելով վոտների ծայրերի վրա, ծղրտաց.

— Մեկ, յերկու, յերեք...

Յեվ ֆուրգոնները միանգամից շարժվեցին դեպի զանազան կողմեր։

Վերադառնալուց հետո միայն իմացա, վոր Անահիտը վոչ մի խմբում չի յեղել։

Այդ դեպքից հետո նա ինձ հետ բավական սառն էր վարվում և նույնիսկ մի անգամ էլ լաց յեղավ, վոր յես իրեն չեմ սիրում։

Վորտեղից էր այդ բանն իր խելքի մեջ մտել՝ չգիտեմ։

Յերկրորդ անգամ (դա վերջին անգամն էր) այսպես պատահեց։

Մի գիշեր, քաղաքի հեռավոր ծայրում ապրող ընկերուհուս ճանապարհ պիտի գցեյի դեպի իրենց տուն։ Ընկերուհին չէր վախենում, բայց մենք, տղաներս, չէյինք թույլ տալիս նրան գիշերով մենակ վերադառնալ տուն՝ հանդիպող դատարկաշրջիկների փողոցային ակնարկները լսելով։ Դրա համար էլ մեզանից յուրաքանչյուրը պարտք էր համարում, նրան, ինչպես և հեռու տեղում ապրող մյուս ընկերուհիներին ուղեկցել տուն։

Այդ օրն ակումբում դասախոսություն կար։ Վերջանալուց հետո Անահիտն յեկավ.

— Գնանք, Արամ ջան, ուղեկցիր ինձ։

— Յես ճանապարհ եմ գցելու ընկերուհիներից մեկին, վորը շատ հեռու յե ապրում։ Արդեն խոսք եմ տվել։ Յեթե ուզում ես, յեկ դու յել. հետո միասին կվերադառնանք։

— Վոչ, չեմ ուզում, ասաց նա և վիրավորված հեռացավ։

Հետևյալ օրը սենյակումս նստած եյի։ Նախկին անպաճույճ սենյակս, շնորհիվ Անահիտի մի քանի այցելության, շատ էր գեղեցկացել։ Ամեն ինչ տեղն էր դրված, ճաշակով ու խնամքով։ Լավ աղջիկ էր Անահիտը, իհարկե, միայն թե մի քիչ անհասկանալի բաներ շատ ուներ...

Դուռը բացվեց և նա մտավ ներս։

— Անահիտ, քո մասին եյի մտածում և մեր ամուսնության մասին, ասացի յես ժպտալով, իսկ նա լուռ և անժպիտ մոտեցավ։

— Դու ինձ այլևս չե՞ս սիրում, շշնջաց նա։

— Ո՞վ ասաց...

— Ո՞ւր եյիր գնում գիշերով այն աղջկա հետ...

Յես պատմեցի ամեն ինչ։ Մի՞թե արժե կասկածել ընկերական պարտականություններ կատարելու խնդ-

ում։ Նա իմ ընկերուհին է, բայց Անահիտն է այն աղջիկը, որին սիրում եմ։ Միակը... Ի հարկե միակը։

Նա չհավատաց։

— Իսկ խոսք տալի՞ս ես, որ այսուհետև բոլոր կապերդ խզես նրա հետ։

— Ընկերակա՞ն կապերս...

— Այո, նույնիսկ ընկերական։ Յես չեմ ուզում քեզ նրա հետ տեսնել։ Խոսք տալի՞ս ես, Արամ ջան...

Բարկացա։

— Ոչ, չեմ տալիս։

Այս խոսքի վրա Անահիտը լուռ վեր կացավ և գնաց դեպի դուռը, կանգնեց մի քիչ, ապա առանց յետ նայելու՝ հեռացավ։

Այլևս անհնար յեղավ նրա հետ հաշտվել։ Նա դադարել եր ինձ սիրելուց, որովհետև, ինչպես ինքն եր ասել իմ մասին՝ «Նա ինձ ավելի առաջ թողեց, քան յես իրեն»...։

8.

Գավկոմի կամ Յեկայի կամքը չի՞։ Կամ որոշումը պարտադիր չէ՞ արդյոք։ Որոշել եյին նորից ուղարկել ինձ գյուղերը. ամառ եր և յես դպրոցական արձակուրդում։ Վերոհիշյալ դեպքից հազիվ անցել եր մի շաբաթ։ Ամառը յեղա գյուղերում. իսկ աշնանը նույնպես մտադիր եյի մի ամբողջ տարի նորից աշխատել գյուղերում, ապա գալ քաղաք և մտնել բանֆակ, հետո համալսարան։

Այս անգամ յես ամիսը միայն մի անգամ եյի քաղաք հանդիպում, իսկ յերբ յեղանակները ցրտեցին՝ հավաքեցի սենյակիս իրերն ու անկողինը, մնաս բարև ասեցի ծանոթ պառավին և տեղափոխվեցի գյուղ։ Հիմա կարող եյի գնալ ավելի հեռու գյուղեր, ուր մինչև այդ, յես աշխատանք տանելու հնարավորություն չեյի ունեցել։

Անցնում եյի գյուղի ճանապարհով և մտածում եյի այն լավ աղջկա մասին, որին սիրեցի, բայց որը շատ տարօրինակ գծեր ուներ։

Հին հոգեբանություն ուներ։

Ի՞նչ է անում նա հիմա։ Ինչո՞ւ այդպես վարվեց։ Յեվ այսպիսի շատ հարցեր։

Իսկ յերբ իր սայլի հետ մի գյուղացի յեր հանդիպում, կամ իշով գնացող մի ծերուկ, մենք բարևում եյինք իրար և խոսում պարենատուրքի ու նման բաների մասին։ Այսպես խոսելով գնում եյինք դեպի դիմացի գյուղը...։

9.

Յերեք ամիս շարունակ քաղաք չգնացի։ Դրսի հետ կապված եյի լրագրերով ու գավկոմից յեկող հրահանգներով։ Անահիտի մասին յերկու անգամ լսեցի։ Առաջին անգամ լսեցի, որ նա ամուսնացել է։ Մի անծանոթ տղա, անկուսակցական, ծանոթացել է նրա հետ և մի շաբաթից հետո ամուսնացել են։ Ամուսինը նրան շատ է սիրել։ Հետո լսեցի, որ Անահիտը պարծենալով է պատմել, որ Արտաշն իր պատճառով ծեծել է յերեք տղայի և պատակել յերկուսին։ Այդքան սիրել է նա Անահիտին։

Մի անգամ էլ այն իմացա, որ նա դադարել է բՋՋի հետ կապ ունենալ, դրա համար էլ նրան հեռացրել են յերիտմիությունից։

Այսպիսով ամեն ինչ վերջացավ...

Գնաս բարով սիրելի Անահիտ։ Իսկ յես պետք է դիմացի գյուղը հասնեմ։

10.

Գյուղի ճանապարհով սկսվում է հովը, Ի՜նչ գեղեցիկ են դաշտերը։ Քայլում եմ ճանապարհով.—յերկար է ճանապարհը։ Այս ի՞նչ թախիծ է նստել սրտիս մեջ։ Այդո՞ւմ մասին եմ մտածում...

Դիմացի արտի մեջ վորքա՜ն տուղտ կա։ Նրանց դեղին բաժակաթերթերն արևի պես են փայլում յերկար ցողունների վրա։ Ի՞նչ արտ է դա։

Դա—Կոմունաշենի «Խոշտանգված հոգիների փողոցն» է, այն հոգիների, վորոնք կարող եյին Նոր աշխարհինը լինել, բայց յեղան հնինը։ Յես ինքս եմ այսպես անվանել այդ փողոցը...

Գրպանումս մի նկար կա, մի լուսանկար։ Հանում եմ և նայում։ Անահիտինն է։ Ափսոս, ափսոս նա։ Յես նրա հետ եյի ուզում ամուսնանալ, բայց հիմա ուրիշի հետ պիտի ամուսնանամ, յերբ ամուսնանալու լինեմ։

Քամին շնկշնկում է, տուղտերն որորվում են։ Յես այստեղ քեզ համար հուշարձան կկառուցեմ, Անահիտ։

Յես քեզ շատ եյի սիրում։ Դու մեռել ես այժմ ինձ համար, բայց քո հիշատակն եմ սիրում հիմա յել։ Բայց և այնպես Կոմունաշենի բնակիչները թող իմանան, յերբ կանցնեն քո հուշարձանի մոտով, վոր թեև յես քեզ այնքան շատ եյի սիրում, այնուամենայնիվ քո հուշարձանը կառուցեցի «Խոշտանգված հոգիների փողոց»-ում, ուր առայժմ արտ է ցանված և ուր որորվում են վոսկեդեղին տուղտերը...։

Խ Ա Ն Դ Ը

1.

Վերջերս յես այնքան շատ եմ մտածում Անգլիայում կատարվելիք հեղափոխության մասին։ Անպայման Անգլիայում կատարվելիքի մասին։ Հետո արդեն, յերբ Անգլիան խորհրդային դառնա, մյուս յերկրների բանը հեշտ է։

Անգլիական գործադուլի յեռուն որերին յես գիշերները չեյի քնում, իսկ ցերեկով աշխատել չեյի կարողանում, այդքան անհամբեր եյի։ «Կգա շուտով, մտածում եյի յես, կգա հեռագիրն Անգլիայից և նրա առաջին բառերը կլինեն բոլորին, բոլորին, բոլորին»...

Եհ այդ Թոմասը, այդ դավաճան Թոմասը...

Յեվ իզուր չէ, վոր այդքան դառնությամբ եմ լցվել դեպի այդ յերկիրը, հատկապես դեպի այդ յերկիրը։ Ամենամոլեռանդ կրոնի յերկիրն է նա, ուր կրոնը տոկալի յե շղթաներից ավելի։ Այդպես են գրել Մարքսի «Կապիտալի» մեկնիչներն և այդպես է գրել Տրոցկին «Վո՞ւր փուլն ենք անցնում» գրքի մեջ։

Իսկ յես այնքա՜ն շատ լցվել եմ դառնությամբ դեպի կրոնը և գիտե՞ք թե ինչու։

2.

Սրանից միայն մի տարի առաջ եր. բայց ինձ թվում եր, թե յերկա՜ր, յերկա՜ր տարիներ են անցել այդ ժամանակից։

Երբ գյուղում աշխատելուց հետո, գավկոմի ցանկությամբ տեղափոխվում ես քաղաք, այնտեղ աշխատելու, շատ բան փոխված ե յերևում աչքիդ։ Ինձ հետ ել այդպես պատահեց։ Քաղաքից իմ մի քանի ամսվա բացակայության ժամանակ շատ ընկերներ եյին տեղափոխվել ուրիշ տեղեր և շատ նոր ընկերներ եյին հայտնվել։ Աստղիկն ել նրանցից մեկն եր։

— Աստղիկ,— ասեցի յես նրան մի որ,— դու շատ լավ աղջիկ ես։

Իրոք, նա լավ աղջիկ եր։ Թեև կոմյերիտական չեր, բայց հետաքրքրվում եր համարյա այն ամենով, ինչով վոր ընդհանրապես կոմյերիտականն ե հետաքրքրվում։

— Ինչո՞ւ կոմյերիտական չես,— ասի նրան մի ուրիշ անգամ։

Նա չպատասխանեց և ուրիշ բաների մասին սկսեց խոսել։

Իսկ յերրորդ անգամ յես նորից ասեցի նրան։

— Աստղիկ, դու շա՜տ լավ աղջիկ ես։

Ներսումս ինչվոր բան եր կատարվում։ Մի ինչվոր բան կուտակվում եր իմ մեջ և ինձ մղում եր դեպի Աստղիկը։ Ել ինչո՞ւ չասել.

— Աստղիկ, սիրելի Աստղիկ, յեկ ամուսնանանք...

Աստղիկը համաձայնվեց։ Նա վոչինչ չուներ դրա դեմ առարկելու։ Ինչի՞ համար առարկել։ Իմ մեջ քսանյերկու տարեկանի արյուն եր հոսում, իսկ նրա մեջ տասնութ տարեկանի արյունը։ Իսկ թե նա ինչ կարծիք ուներ գյուղատնտեսական կոոպերացիայի կամ վարկային ընկերության նշանակության մասին, դա այնքան ել կարևոր չեր այդ րոպեյին։ Յեվ այդպես, ամուսնացանք մենք։

* * *

Երբ գագսի մատյանում մեր յերկսի ստորագրությունները գրվեցին և մենք միասին դուրս յեկանք փողոց, յես նրան ասեցի.

— Ուրեմն մենք ամուսիններ ենք, Աստղիկ...

Նա զվարթ ծիծաղեց և խփեց թևիս։ Մենք ճանապարհը շարունակեցինք դեպի տուն...

Դուք գիտե՞ք, թե վորքան յերկար ե թվում և վորքան ուշ ե յերեկոյանում ամուսնության առաջին որը։ Վերջիվերջո մթնում ե և անհամբերությամբ կմկմում ես.

— Աստղիկ, տու՛ն չգնա՞նք, ուշ ե արդեն...

Աստղիկը սատանայի նման ժպտում ե և պատասխանում ե խորամանկ կերպով.

— Դու քո որումդ եսքան շուտ տուն գնացած կա՞ս...

Իհարկե լավ բան ե ամուսնությունը, բայց յերբեմն այդպես չի լինում։ Յերբեմն տարօրինակ բաներ են պատահում։ Ինձ հետ ել պատահեց այսպիսի մի բան։

Սրանից միայն մի տարի առաջ եր, բայց ինձ թվում ե թե յերկա՜ր, յերկա՜ր տարիներ են անցել այդ որվանից...։

3.

Մեր տան փողոցով դեպի աջ, վերևի անկյունում մի տուն կա։ Յերեկոներն այնտեղ լցված ե լինում մարդկանցով ու ծիծաղի և խոսակցության ձայներ են գալիս։ Զեկուցողի ձայն ել ե գալիս, իսկ մի ուրիշ սենյակից վոչ մի ձայն չի գալիս և դա ընթերցարանն ե։

Մեր ակումբն ե այդ շենքը։

Սովորական բան եր, վոր յես մտնեյի ակումբ, սովորական եր նաև այն, վոր Աստղիկն ինքը գար ամեն որ և կարդար կամ զեկուցում լսեր։ Բայց այս անգամ շատ ընկերներ հավաքվեցին գլխիս։

— Ամուսնացե՞լ ես...

— Ծածո՞ւկ ես ամուսնացել...

— Շնորհավոր լինի...

— «Մի բարձի ծերանաք»...

Մի քիչ հեռվում, հարցերի նույն տեսակ տարափի տակ եր ընկել Աստղիկը։

Հետաքրքիր է մեր կոմյերիտական աշխարհը։ Այնտեղ յուրաքանչյուր խոսակցություն կատակից է սկսվում և գնում է դեպի լրջություն։ Յերբ կատակը տեղի յեր տվել խոշոր տոկոսով, ընկերներից մեկն ասավ ինձ.

— Դե, իհարկե... մարդը չի կարող միանգամից փոխվել։ Այդ մասին Մարքսը գրել է, իսկ Պլեխանովի մոտ միջանկյալ հիշատակություն կա։ Հին և անպետք բաներ անպայման մնացած կլինեն։ Այ, օրինակի համար... օրինակի համար՝ Աստղիկը։ Ինչու համար կոմյերիտմիության մեջ չկա։ Ծագումը հարազատ է, ինքն աշխատավորուհի յե արդեն, տասնութ տարեկան, և...և վերջապես, ինչպես ասում են գիտակից աղջիկ է։

— Դու ինչով ես բացատրում, վոր նա կոմյերիտմիության մեջ չկա, — հարցրեց մի ուրիշը։

— Յե՞ս։ Յես, յելնելով նրանից, վոր մատերիալիստական հասկացողության համաձայն՝ ամեն ինչ իր հիմքն ունի, անպայման Աստղիկն ել վորոշ հիմք կամ պատճառ կունենա անկուսակցական մնալու։ Իսկ թե ինչն է պատճառը, յես չեմ կարող ասել։ Մարքսիզմը միայն բանալին է տալիս. լուծումը պիտի տա նոր սերունդը։ Լենինն իր ճառերից մեկում այդպես է դրել հարցը։ Գուշակություն չպետք է անել, այլ միայն յենթադրել։

Յես այդ մասին այնքան ել խոր չեյի մտածել։ Իսկապես, Աստղիկն ինչու կոմյերիտական չե...

Մեր խոսակցությունը յեզրափակվեց նրանով, վոր հիմի Աստղիկը մի կոմյերիտականի կին է, հետևաբար և այդ կոմյերիտականը նրան պետք է դեպի մեր շարքերը գրավի։ Նա օգտակար ուժ կլինի մեզ համար։

— Աստղիկ, դու գալիս ես տուն։

— Գնանք։ Ցը՛, Կիմա, ցը՛ Միրուշ, Սուրեն...

4.

Ճանապարհին յես հարցրի Աստղիկին.

— Դու ինչու կոմյերիտական չես, Աստղիկ։

— Ինչու համար, ասում ես։ Վորովհետև հնարավորություններ չեն յեղել։

— Այսինքն ինչ։

— Ա՛յ, յես գիտեյի, վոր չպիտի կարողանամ կանոնավոր կերպով հաճախել ժողովներին, չպիտի կարողանամ պարտականությունները լիովին կատարել, վորովհետև ժամանակ և այլ հնարավորություններ չեմ ունեցել։

— Իսկ հիմա մտադիր ես դիմում տալու։

— Տեսնենք։

— Հը՛մ։ Տեսնենք, ասում է։ «Տեսնենք»-ից հետո «յերևի» կլինի, «յերևի»-ից հետո, «մտադիր եմ», իսկ հետո չել՝ «անպայման մտնելու յեմ»... Յես գիտեմ Աստղիկին. նա լավ և գիտակից աղջիկ է։

Հասանք տուն։

Աստղիկ, սիրելի Աստղիկ, մենք տուն հասանք։ Յեկ հիմա մոռանանք այդ ամենը և հանձնվենք այն հրդեհին, վոր բորբոքվում է իմ մեջ դեպի քեզ և քո մեջ, դեպի ինձ։ Մոտեցուր շրթունքներդ։ Յեթե համբուրելու համար չեն, ել ինչու յեն քո շրթունքներն այդպես կարմիր։ Դեռ մի քանի օր է, ինչ մենք ամուսնացել ենք։ Մանավոր առևտրի և կապիտալիստական հասարակակարգի քայքայման պրոցեսի մասին խոսելու համար դեռ շատ ժամանակ կունենանք...։

5.

Մի ամիս անցավ։ Աշխատանքով ծանրաբեռնված, մենք չեյինք նկատում մի քանի մանրամասնություններ իրար նկատմամբ։ Նա դեռ չգիտեր, վոր յես նկարում եմ մի փոքրիկ ծիթաներկ նկար, վորի անունն եր «Կոմյերիտ-

տուհին»։ Իսկ մոդելն ինքն էր, Աստղիկը։ Ես շատ եյի սիրում նկարչությունը և որոշ ընդունակություններ էլ ունեյի, բայց նրանով զբաղվելու ոչ ժամանակ կար, ոչ հնարավորություն։

Մյուս կողմից, յերկար ժամանակ յես չեյի նկատում, վոր նա ամեն կիրակի, ցերեկվա ժամի 12-ին գնում եր ինչ վոր տեղ և վերադառնում եր յերկու ժամից հետո։ Մի որ, յերբ տան նստած խոսում եյինք, քաղաքային ժամացույցը տասներկուսը խփեց։ Կիրակի յեր որը։ Նա շտապ վերկացավ և դուրս գնաց։

— Շտապ տեղ ունեմ գնալու, – ասաց նա։

Յես նրա գնալուց հետո վերցրի Ստալինի ճառը և սկսեցի կարդալ։

Հը՛մ։ Մի քիչ հետաքրքիր ե։ Նա գնում ե զեկուցման, ժողովի, թե՞ վորևե նման պարապմունքի։ Լավ, այդ մասին հետո կհարցնեմ, մտածեցի յես և վորովհետև հետաքրքիր բաներ եր ասում Ստալինը, խորասուզվեցի ընթերցանության մեջ։

Կարծեմ մի ժամ կար, ինչ յես կարդում եյի։ Գիրքը դրեցի սեղանի վրա և վեր կացա։ Մեր անկողինն անկարգ վիճակի մեջ եր։ Կիրակի որն ինարկե թույլատրելի յե ուշ վեր կենալ։ Յեվ վորովհետև Աստղիկը շտապ տեղ եր գնում, դրա համար ել մոռացավ կարգի բերել անկողիններր։ Յես ինքս մոտեցա և սկսեցի սարքել։

Մինչդեռ զբաղված եյի այն հարցով, թե սոցիալիզմի ժամանակ ո՞վ պիտի սարքի անկողինները, տղա՞ն թե աղջիկը, հանկարծ բարձի տակից յերևացին մի քանի լղար գրքույկների սպիտակագույն թերթերը։

— Ի՞նչ ե կարդում Աստղիկը, մտածեցի յես և վերցրի գրքույկները։ Այ քեզ բան։ Ի՞նչ ավելորդ ժամավաճառություն ե զբաղվում նա։ Արժե՞ միթե կարդալ «Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթը, յերբ ուրիշ հազար ու մի բան կա կարդալու։ Ա՛յ, որինակ Բուխարինից ինչքա՞ն բան կա

կարդալու։ Ստալինից, մյուսներից. վերջապես Մարքսն ու Լենինը... և միթե հետաքրքիր ե այս «կրոնա-բարոյական» շաբաթաթերթը։

Նորից սուզվեցի ընթերցանության մեջ։

Աստղիկը ներս մտավ, իսկ մի քիչ առաջ խփել եր ժամի յերկուսը։

— Դու վո՞րտեղ եյիր, սիրելի Աստղիկ։

— Վո՞րտեղ... տնից դուրս, — ասաց նա և ծիծաղեց։

— Բայց հատկապես վո՞րտեղ։

— Ե՛հ, ինչքա՞ն ես հետաքրքրվում։ Ժողովի եյի գնացել, այսինքն եպերանտիստների պարապմունքին եյի գնացել։

Բայց միթե կրակի որերն են լինում նրանց պարապմունքները և ժամը 12-ին։ Իսկ յես կարծում եյի, թե ուրբաթ յերեկոներն են լինում. — մտածեցի յես։

Հանկարծ հիշեցի մի բան և սկսեցի ծիծաղել.

— Դու բռնվա՞ծ յես, Աստղիկ։

Կայծակի արագությամբ գունատվեց նա։ Յես վեր կացա տեղիցս։

— Յես կատակ արի, Աստղիկ։ Բայց միթե «Հայաստանի Կոչնակը» քեզ հետաքրքրում ե։

— Ա՛խ, դու դրա՞ մասին ես ասում, – թեթևացած ծիծաղեց Աստղիկը։ Ջե, ինարկե, չի հետաքրքրում։ Կարդալու վոչ մի նոր գիրք չունեյի և այդ շաբաթաթերթը պատահաբար ձեռք բերեցի։ Անհետաքրքիր բաներ են։

— Բայց դու շատ վախեցար, — ծիծաղեցի յես։

Ակամայից Աստղիկն ել ծիծաղեց։

6.

Բջիջի գունաբաց ժողովներին Աստղիկը հաճախում եր համարյա միշտ։ Յերեկ յես և նա գնացինք ակումբ, վորտեղ բջիջների ժողովներ եյին տեղի ունենում։ Յերբ ժողովը պիտի բացվեր, նախագահն ասաց.

— Այսօր դռնփակ է ժողովը...

Անկուսակցականները դուրս գնացին։ Դուրս գնաց Աստղիկն էլ։

Մեկն ինձ հարցրեց.

— Բայց մի՞թե Աստղիկը դեռ միության մեջ չի մտել։

— Վոչ։

— Ինչո՞ւ...

Յես գլուխս կախեցի։ Լսվում էր մեկի ձայնը.

— Ել ինչի՞ համար են ասել՝ «ագիտացիա անկուսակցականների մեջ». «կոմյերիտական, քո քրոջդ ու կնոջդ դարձրու միության անդամ»...

Մի ուրիշն ինձ անփույթ անվանեց։ Բարկանալու ինչ իրավունք ունեյի յես...

Ժողովն սկսվեց։

Բջիջի քարտուղարը զեկուցում էր «Կոմյերիտմիության նվաճումները» նյութի մասին։ Ե՛հ, այդ քարտուղարը... էլ ինչի՞ համար է խորամանկություն բանեցնում։ Ա՛յ, նա խոսում է իմ մասին և զեկուցման վերնագիրը պիտի լիներ։ «Արմենակը վատ կոմյերիտական է, մի անկուսակցական աղջկա չի կարող գրավել դեպի մեր շարքերը»... Նա անշուշտ իմ մասին է խոսում։ Ա՛յ, հենց թեկուզ այն խոսքը՝ թե «մեր աշխատանքն ընտանիքում շատ թույլ է», ինձ է վերաբերում։ Յեվ ինչքան սուր է ծակում այդ անպիտանը... Թեև քողարկված կերպով է ասում, բայց անպայման բոլորն էլ հասկացել են, վոր իմ մասին է խոսում քարտուղարը։ Ինչքա՜ն անցանկալի յե իմ դրությունը։ Գոնե շուտ վերջանար այս բոլորը...

Այն ինչ, քարտուղարը դեռ խոսում էր։ Իսկ հետո պիտի հարցեր տան, պատասխան ստանան, ըստ եյության խոսեն, իսկ վերջում բանաձև հանեն։ Ինչքա՜ն յերկար է տևելու...

Մինչդեռ ժողովը շարունակվում էր, յես կամացուկ դուրս յելա սենյակից։ Առաջին դեպքն էր դա։ Սկսեցի

ջղայնացած փնտրել Աստղիկին։ Բակում նստած, նա խոսում էր իր ընկերուհիների հետ։

— Աստղի՛կ տուն գնանք...

— Յես հետո կգամ, դու գնա, սիրելիս...

— Դու հիմա պիտի գաս։

Աստղիկը զարմացավ։ Ի՞նչպես թե։ Բռնությու՞ն... Յես նրա դեմքի վրա կարդացի այդ կասկածը։

Այնուամենայնիվ նա յեկավ։

— Ի՞նչ է պատահել քեզ, Արմենակ...

— Դու ինչո՞ւ համար կոմյերիտական չես...

Նա չպատասխանեց։

— Չե՞ս պատասխանում.— ջղայնացա յես։

Աստղիկը գլուխը վեր բարձրացրեց.

— Ոհո՜... նորությու՜ն...— ասաց նա։

— Ի՞նչը...

— Ի՞նչը ասում ես։ Խոսելուդ յեղանակը։

— Բայց ինձ չպատասխանեցիր,- Աստղիկ։ Ինչո՞ւ համար դու կոմյերիտական չես։

— Չեմ ուզում լինել։

— Իսչո՞ւ...

— Այդ իմ գործն է...

— Այդպես ուրեմն... Լա՛վ։ Բայց դու կարող եյիր ավելի շուտ ասել այդ բանը։ Իսկ հիմա բոլորը ծիծաղում են ինձ վրա, վոր յես անկարող եմ մեկին գրավել մեր շարքերը։

Աստղիկն ինձ նայեց զարմանքով ու հանդիմանությամբ։

— Չեյի սպասում,— ասաց նա։

Յես լուռ եյի։

Հասանք տուն։

7.

Անցավ մի շաբաթ։

— Աստղի՛կ, դու ինձանից վիրավորվե՞լ ես. դու իմ ընկերուհին ես և իմ կինը։ Իհարկե կներես վիրավորանքի համար։ Բայց շատ ու շատ վատ է, յերբ ասում են՝ «չի կարող գրավել դեպի մեր շարքերը»...

Աստղիկը նայեց ինձ։

— Դու յեթե մարդավարի հարցնեյիր, յես կպատասխանեյի։ Հիմա յել կպատասխանեմ, բայց վախենում եմ թե նորից ջղայնանաս։

— Պատասխանիր, չեմ ջղայնանա։

— Դե, խոսք տուր։

— Տալիս եմ։

Աստղիկը նստեց հեքյաթ պատմողի պես և իր փոքրիկ ձեռքերը ծնկին դնելով, սկսեց...

«Յես նոր հինգ տարեկան եմ յեղել, յերբ ինձ տվել են առաջին դասը, կրոնի դասը»...

Ցնցվեցի։ Ականջիս «Հայաստանի Կոչնակ»-ը միտքս ընկավ։

«Այնուհետև յես մեծացա, ամեն օր լսելով կրոնական քարոզներ և ընդհանրապես, ապրելով կրոնամոլ մարդկանց և ընտանիքի շրջանակներում։ Շատ անպետք բաներ սովորեցրին նրանք ինձ, բայց մի բան, մի զգացմունք, հինգ տարեկան հասակից սկսած, ապրում է իմ մեջ։ Յես ամբողջ նյարդերովս զգում եմ այդ։ Գիտե՞ս, ինձ թվում է, որ անհնար չի որևէ գերբնական ուժի գոյությունը։

— Պարզ խոսիր, յես հանելուկներ չեմ լուծելու։

Աստղիկն ինքնիրեն զսպողի սառնությամբ պատասխանեց։

— Յես հավատացյալ եմ...

Ի՞նչ...հավատացյա՛լ։ Ո՞վ է հավատացյալը, Աստղի՞կը...

Կայծակի պես անցան մտքովս «Հայաստանի Կոչնակի» համարները, մի քանի կրոնական բրոշյուրները, հետո մեկ Լենինը, մեկ Քրիստոսը, նորից Լենինը, նորից Քրիստոսը...

— Յես քեզ սկզբից այդ մասին չասացի, որովհետև կարծում եյի, որ կկարողանամ թագցնել, և մեկ էլ... չէ՞ որ յես քեզ սիրում եյի և ուզում եյի ամուսնանալ քեզ հետ...

— Լա՛վ, էլ կարող ես չշարունակել։ Յես ոչինչ չեմ հասկանում— ասացի յես հանգիստ տոնով, բայց հանկարծ, մի ծանր քարի նման բան խփվեց գլխիս պատերին։

— Քո աստծու վրա թքա՛ծ,— ճչացի յես։

— Չհամարձակվես, սիրելս...

... Այդ ո՞վ ասաց, Աստղի՞կը...

8

Հասավ կիրակի օրը։ Ամբողջ շաբաթվա ընթացքում յես և Աստղիկը համարյա թե չեյինք խոսել իրար հետ։ Յես նայում եյի նրան և մտածում եյի, թե որքա՛ն զզվելի բան է այդ կրոն ասածդ։ Ահա Աստղիկը, մի ջահել աղջիկ, որը փոքր ժամանակվանից յեղել է նրա գերին։ Իր ուղեղն ու յերևակայությունը բորբոքել են կրոնական թույնով, իսկ հիմա նա հավատացյալ է...

Նստած եյինք սենյակում։ Ժամի 11-ն անց եր։ Սպասողական դրությունն անհանգստացնում եր ինձ։ Պիտի գնա՞ Աստղիկն այսօր էլ, թե ոչ...

Նա այս հինգ-վեց օրվա ընթացքում տեսավ իմ հոգեկան տանջանքները, իմ անքնությունն ու անհանգստությունը։ Իսկ յեթե այսօր էլ նա գնա, նշանակում է կրոնն իրեն համար վեր է ամեն ինչից և ոչ մի գրոշ չարժե իմ մտատանջությունը նրա համար։

Զը՛նգ... զը՛նգ... Քաղաքի ժամացույցը տասներկուսն է խփում... Աստղիկը պիտի գնա՞ թե ոչ, պիտի գնա՞ թե ոչ...

Դանդաղ վեր կացավ նա և դիմեց դեպի դուռը…

— Ո՞ւր…

…։ Աստղիկը լաց եր լինում… Յես վոչինչ չգտա ասելու կամ անելու։ Նա դուրս գնաց տնից։ Լուսամուտից յես տեսա նրան։ Նա շտապում եր և գնում եր արագ քայլերով։

Իմ խեղճ, իմ մոլորված Աստղիկ։ Այս բոլորի մասին յես չեյի յել յերևակայում սրանից յերկու շաբաթ առաջ… Նա լաց յեղավ. յերևի շատ մեծ տառապանքներից հետո վճռեց գնալ։ Յես ինչ անեմ քեզ համար, վոր այդ թույնը դուրս գա քո հոգուց…

Տնից դուրս յեկա։ Ո՞ւր գնալ. ակումբ։ Բայց յեթե այնտեղ լինեն մարդիկ, վոր գիտենան այս բոլորի մասին։

Հանկարծակի մի միտք ծագեց գլխումս։ Ճանապարհս թեքեցի և ուղղվեցի դեպի գրախանութը։

— Տվեք ինձ հակակրոնական գրականություն…

9.

Յերեք որ եր, ինչ յես շարունակ վիճում եյի Աստղիկի հետ, աստծու և նման բաների մասին։ Իմ ամբողջ գիտական պաշարը մեջտեղ բերեցի, իսկ նա, այդ բոլորի դիմաց միայն մի բան եր ասում.

— Զգո՛ւմ եմ Արմենակ, նյարդերովս եմ զգում նրա գոյությունը։

Ե՜հ, նյարդերի դեմ վոչինչ չես անի…

Աստղիկն ինձ եր նայում խեղճ հայացքով։ Վերջին որերի ընթացքում այնքան փոխվել եր և դալկացել իմ սիրելի ընկերուհին։ Մի ցավ, մի ատելություն զգացի դեպի իմ վարմունքը, նրան վիրավորելու համար։ Մոտեցա նրան և գրկեցի.

— Աստղիկ, թանկագին Աստղիկ… Դու լավ աղջիկ ես, բայց ափսոս վոր հավատացյալ ես։ Ափսոս քեզ, Աստղիկ, ափսոս քեզ։ Յես քեզ համար հակակրոնական գրա-

կանություն եմ բերել։ Կարդա դու։ Յես ինչ գիտեմ վոր…։ Իսկ այդ Յարոսլավսկին, օ՛, նա խելոք մարդ ե. նա անպայման կկարողանա քեզ համոզել… Դու կիրակի որը նորից չես գնա, այնպես չե՞…

— Չգիտեմ…

Յես շարունակեցի.

— Հակառակ դեպքում դու այսպես էլ կմնաս։ Անկարող կլինես լիովին մերը լինել և լիովին օգտակար լինել հեղափոխությանը։ Գուցե դու սկի յել օգտակար չլինես։ Իսկ ինչ վերաբերում ե ինձ, Աստղիկ, ուզո՞ւմ ես, վոր յուրաքանչյուր քայլափոխին ինձ ասեն, վոր յես անզոր եմ մեկին գրավել մեր շարքերը. և վոչ միայն այդ, այլև այն, վոր յես անզոր եմ նույնիսկ կրոնի ազդեցությունից ազատագրել մի մարդու։ Յեվ գիտե՞ս, իրավացի կլինեն նրանք։ Դու դեռ այնքան ջահել ես, այնքա՜ն կենսունակ։

Համարյա ամեն որ, այս խոսակցությունն եր տեղի ունենում մեր մեջ։ Շաբաթ որը Աստղիկը մոտեցավ ինձ և ասաց.

— Լսիր, Արմենակ, դու քո համոզմունքներն ունես, իսկ յես իմը։ Խղճի ազատությունն արգելված չի։

— Յես բռնություն չեմ գործադրում,— պատասխանեցի սխուր ձայնով,— յես համոզել եմ ուզում։

Իսկ հետո նորից կիրակի…

— Աստղիկ,— ասեցի յես նրան այդ առավոտյան,— դու կարդացե՞լ ես այս գրքերը։

— Վոչ։

— Ինչո՞ւ…

— Չեմ ուզում կարդալ, Արմենակ,— ասաց նա և ակամայից փորձեց ժպտալ։

Յես նայեցի գրքերին։ Իրոք վոր, նրանցից վոչ մեկի թերթերը կտրված չեյին։

— Ինչո՞ւ չես կարդացել։

— Չեմ ուզում կարդալ, ասեցի։

Նորից գանգիս պատերին մուրճեր խփվեցին։

— Աստղիկ, դու այսօր և այսօրվանից հետո, այլևս կրոնական հավաքատեղի չպիտի գնաս։

— Ո՞վ ասաց...

— Յես եմ ասում և արգելում եմ քեզ։ Չպիտի գնաս, Աստղիկ։

— Յես հենց հիմա կգնամ,—ասավ նա և մոտեցավ դռանը։

Յես առաջ անցա և նրա ճանապարհը կտրեցի։

— Չեմ թողնի...

— Դու բռնությո՞ւն ես գործադրում։

— Այո։

Նա յետ դարձավ և նստեց։

— Արա ինչ որ ուզում ես։ Դժվար թե բռնության միջոցով հաջողվի քեզ կրոնի դեմ կռվել։

...Ճիշտ է ասում Աստղիկը։ Նա շատ ճիշտ է ասում։ Իսկ յես, բավական է որ ջղայնանամ, և կմոռանամ այդ տարրական ճշմարտությունը։

Դուրս յեկա տնից։

10.

Սովորական յերևույթ եր, որ անցնելիս փողոցով և տեսնեյի զանազան մարդկանց. բայց այս անգամ արտասովորն այն եր, որ բոլորն էլ գիտեյին իմ մասին և նայում եյին ինձ։ Յես չեմ կասկածում, որ գիտեյին։ Թե չէ ինչո՞ւ պիտի յես ինձ ճնշված զգայի փողոցով անցնելիս։

Հեռվից նկատեցի կոմյերիտական Հակոբին։ Նա հայտնի յեր իբրև հեղափոխության հաղթանակին թերահավատորեն վերաբերվող և ընդհանրապես վատ ու հոռետես կոմյերիտական։ Հարբում եր հաճախ և սկանդալներ սարքում։ Նա ինքը նկատեց ինձ և մոտեցավ։

— Բարև, Արմենակ։

— Բարև...

— Դու տխո՞ւր ես այսօր, ինչի՞ համար. խեր լինի։

Չպատասխանեցի։

Հակոբը մտախոհ կերպով նայեց դեմքին և խոսեց, ինքն իր հետ կարծես։

— Նեպը... Յեվ դեռ ինչե՜ր չի անի նա... Դեռ շատ մարդիկ կտխրեն և շատ տխուր մարդիկ կուրախանան ու կապրեն իրենց նախկին փարթամությամբ։ Ափսոս, որ կուսակցության օպպոզիցիան չհաղթանակեց։ Ա՛յ, ուրիշ բան կլիներ այն ժամանակ...։

— Ախր դու սխալվում ես,—ասացի յես,—նեպը հարկավոր է մեզ, բայց կրոնը, կրո՞նն ինչ գործ ունի, ինչի՞ համար է կրոնական այս ազատությունը։

Հակոբը, ի մեծ զարմանս ինձ, նայեց դեմքիս և ասաց խորիմաստ կերպով.

— Ամեն մարդու շապիկն իր մարմնին մոտ է։ Նախանձելի չէ նրա դրությունը, ում կինը բողոքականների կրոնական ժողովարանի հաճախորդ է։

— Ի՞նչ... — բացականչեցի յես,—դու գիտե՞ս այդ բանը։

— Այո, գիտեմ։ Բայց դու վոչինչ չես կարող անել դրա դեմ։ Հիմքերը շա՜տ ավելի խորն են։ Այս նեպն է կրոնի ուժեղ հիմքը։ Կրոնի ազատությունը նեպ է իդեոլոգիայի ասպարեզում։

Յես լուռ եյի...

— Հակո՛բ... մի րոպե անգամ չեմ կարող մոռանալ, որ Աստղիկը...

— Լսի՛ր,—ընդհատեց նա,—գնանք ճաշելու, դու այնտեղ կմոռանաս ամեն ինչ։

Այս մեջբերումն առիթ դարձավ, որ փակեյինք տխուր խոսակցությունը։

Ճանապարհին յես հարցրի Հակոբին։

— Այժմ ի՞նչ աշխատանք ես տանում միության մեջ և ընդհանրապես ի՞նչ հասարակական աշխատանքներ ես կատարում։

— Վոչ մի,— անփութությամբ պատասխանեց նա,— միևնույնն ե, բոլոր ջարդերն ապարդյուն պիտի անցնեն։ Լենինի գծից շատ ե շեղվել մեր քաղաքականությունը...

— Գինի.— պահանջեց Հակոբը, յերբ ճաշը դրին մեր սեղանի վրա։

— Ինչ, դու ելի հարբելու յես այսոր։

Վոչ, մենք միասին կխմենք մի քիչ։

— Յես չեմ խմի...

— Շատ քիչ կխմենք։ Դու մի մտածիր։ Քեզ ամեն հոգսից ազատ կզգաս մի քանի ժամ։

— Չեմ խմի...

— Նու, միայն մի շիշ։ Դա, ըստ բժիշկների, ճաշի ժամանակ ոգտակար ե։ Մի մոռանա, վոր առաջին անգամն ենք խմելու մենք միասին։

— Լավ, մի շիշը չեմ մերժի։

Յես գիտեյի, վոր լավ բան չեմ անում, բայց չգիտեմ թե ինչու համաձայնվեցի։ Մարդս իր կյանքում այդպիսի րոպեներ յերբեմն ունենում ե։ Բայց Պլեխանովը լավ ե ասել, թե՝ իդեոլոգիական այս կամ այն ազդեցությունը հնարավոր ե միայն այն ժամանակ, յերբ այդ իդեոլոգիայի ազդեցության համար մատերիալիստական հող, հիմունք կա։ Ինձ մոտ հենց այդ «մատերիալիստական հողը, հիմունքը» կար։

Այս մասին եյի մտածում և ուղեղս մթագնել եր բավականաչափ, յերբ սեղանի վրա հայտնվեց յերկրորդ շիշը։

— Խմիր,— ասաց Հակոբն ու բաժակները լցրեց.— վորքան ել վոր ինձ շեղված համարեն, այնուամենայնիվ յես ել մարդ եմ և չեմ ուզում մենակ լինել իմ վշտի հետ։ Խմիր, բախտակից ընկեր։

Հիշեցի Աստղիկին, ուզեցի վեր կենալ, բայց նստած մնացի և շարունակեցի խմել։ Մի քիչ հետո կորցրի բաժակների ու շշերի հաշիվը։ Հետո, ճաշարանի նվագն ու առանձին առանձին ձայները ի մի ձուլվեցին, դարձան

մի ընդհանուր զժժոց, վորը հետզհետե նվազում եր։ Առարկաները մոտենում եյին իրար, միանում եյին, ապա ծածկվում ամպանման մի մշուշով և անհետանում։ Հետո ինչ յեղավ, չգիտեմ...։

* * *

... Յերբ աչքերս բաց արի, իմ սենյակումն եյի։ Պառկած եյի շորերով, մահճակալիս վրա։ Մյուս մահճակալում քնած եր Աստղիկը։ Գիշերվա ժամը 2-ն եր. սենյակը բռնվել եր գինու հոտով, վոր փչում եր ինչ վոր անհայտ տեղից։ Յես սթափվեցի։

Ուրեմն, ինչ պատահեց։ Յես խմում եյի. հետո... Հետո այն, վոր այստեղ եմ։ Բայց ինչ յեղավ մինչև այստեղ գալս։ Ինչպես յեկա։ Աստղիկից կարելի յեր հարցնել, բայց յես ամաչում եյի նրան արթնացնել։ Ինչ յերեսով կանգնեմ նրա մոտ և խոսեմ նրա հետ։ Այդ ինչ արի յես, այդ ինչ արի...

Ու մի խորը, անտակ վիրավորանք, մի կատաղի վիրավորանք զգացի։ Հեղուկը, բույսից քամած հեղուկը մի քանի ժամ անընդհատ տիրապետել եր ինձ և ուղեղս մթագնել։ Ամոթ, ամոթ ինձ...

Հետագայում,— յերբ յես վոչ մի կաթիլ այլևս չխմեցի.— ինձ յետ եր պահում այդպիսի սայթաքումներից իմ կոմյերիտական գիտակցությունը, զզվանքս դեպի ալկոհոլը, բայց գլխավորապես նաև այն, վոր ինձ համար վիրավորական եր թվում և ստորացուցիչ՝ հեղուկի տիրապետությունը մարդու վրա։

Աստղիկը շարժվեց. ապա արթնացավ։

— Աստղիկ...

— Ամոթ քեզ, Արմենակ...

— Աստղիկ, վերջին անգամը կլինի սա...

— Լավ, հանվիր և պառկիր,— փաղաքշանքով ասաց նա։— Յես գիտեմ, վոր յես եմ դրա պատճառը. այդ միտքը

հուշում է ինձ։ Մի՛ անիր այլևս այդպիսի բաներ...

Ասողիկն ինձ պատմեց, թե ինչպես փողոցով անցնելիս յես շարունակ բղավել եմ «կորչի կրոնը»... և հայհոյել եմ աստծուն ու սրբերին։ Այդ մասին Հակոբն է պատմել իրեն։ Նույն Հակոբն է ինձ տուն հասցրել։

Յես ամաչում եյի նայել Ասողիկին և չքնեցի ամբողջ գիշերը։

11.

Քաղաքի հեռավոր թաղերից մեկում մի տուն կա, վորը լուսամուտներ ունի փողոցի վրա։ Դռանը ցուցանակ է կպցրած, վորի վրա գրված է «Բողոքականների ժողովարան»։ Յուրաքանչյուր կիրակի ժամը 12-ին, քաղաքի այս ու այն ծայրերից հատ ու կենտ մարդիկ են հավաքվում և լցվում են ժողովարանի փոքրիկ սենյակը։ Այստեղ, դպրոցական նստարանների նման նստարաններ կան և մի ամբիոն կա։

Քաղաքի մի քանի կողմերից, վախվխելով, զգուշանալով՝ վոր չնկատվեն, դեպի այդ ժողովարանն են գնում նաև մի քանի յերիտասարդներ ու աղջիկներ, վորոնցից մեկն Ասողիկն է։

Յերբ յես հասա ժողովարանին և լուսամուտին մոտեցա, արդեն սկսվել եր «ժողովը»։ Լսվում եր քարոզչի ձայնը.

— Աստված այդպես կարգադրեց և այդպես յեղավ... Անսահման է նրա խորհուրդը, մեծ է նրա զորությունը...

Բարձրացա վոտներիս մատների վրա և լուսամուտից ներս նայեցի։ Ասողիկը, թանկագին Ասողիկը նստած եր վերջին նստարաններից մեկի վրա և իր խելոք աչքերով նայում եր քարոզչին։ Այդ ժամանակ քարոզիչն ասաց.

— Փակեցե՛ք աչքներդ և հիշեցեք տիրոջը. յերգենք «Փառք աստծո»-ն։

Ու սկսվեց մելամաղձիկ, տխուր յեղանակը...

«Փա՜ռք աստծո, արարչին ամբողջ աշխարհի... Փրկչին ամբողջ մարդկության... ստեղծագործողին... բարեգութին ու բարերարին»...

Նայեցի Ասողիկին։ Յերգում եր նա յել...

Բոլորը, նաև նա, փակել եյին աչքերը և իրենց մտքում աշխատում եյին աստծուն պատկերացնել։ Այդ զզվելի ծերուկը... Նա դեռ այնքան հարուստ է...

Ու սրտիս տակ յեռաց, յեփվեց խանդը, կատաղի խանդը դեպի աստվածը։

Աստված, դու խլել ես ինձանից Ասողիկին... Նրան խլել ես կոմյերիտմիությունից։ Իսկ հիմա, նա ուրիշների հետ միասին նստած, փառք է տալիս քեզ։ Դու պիտի մեռնես, սրիկա ծերուկ, յես այդ գիտեմ, բայց քո յետևից շատերին կտանես դեռ։ Ասողիկը կերթա քո յետևից, վորովհետև իր զգացմունքների հետ կրոն են շաղախել և իր գիտակցության հետ՝ նույնպես կրոն...

Աֆի՜ն, աֆի՜ն, աֆի՜ն...

Ասողիկը յերգում եր, յերգում եյին մյուսներն ել։

Յեղանակը դարձավ մի հրեշ և սկսեց ինձ կրծել։ Այդ յեղանակի տակ ինչքա՜ն մտքեր ու զգացումներ են թունավորվել...

«Փա՜ռք աստծո, արարիչին ամբողջ աշխարհի»...

Նորից թրմխկ, խփվեցին մուրճերը գանգիս պատերին։ Ուժեղ, ցավագինորեն։

— Թքա՛ծ ձեր աստծու վրա,— ճչացի յես և ցատկեցի լուսամուտի վրա։

Միքանի ապակիների փշրվելու ձայն, ներսից ճչոց, աղմուկ, և մեկ ել այն, վոր յես կանգնեցի սենյակի հատակի վրա։

— Ո՞ւր է ձեր աստվածը։ Նա չկա։ Իսկ այս աստվածաշունչը զուր եք դրել այստեղ։ Թո՛ւ,— մոտեցա և թքեցի սեղանին դրված աստվածաշնչի վրա։

Ճիչ, աղմուկ, լաց, մի քանիսը հարձակվեցին ինձ վրա։

— Զմռսենք,—բղավեցի յես ու դուրս քաշեցի գրպանիցս, պատահաբար հետս վերցրած ատրճանակը: Տիրեց ընդհանուր սարսափ: Բարձրացրի մյուս ձեռքս, գիրքը վար քաշեցի սեղանի վրայից և գցեցի ոտքերիս տակ:

— Ահա ձեր աստվածը...

Ապա դառնալով Աստղիկին՝

— Եվ տուն չգաս, դու իմ կինը չես.—ասեցի և դուրս յեկա:

... Նա իրոք վոր տուն չեկավ այլևս...

Նրանից հիշատակ մնաց միայն անավարտ մի նկար և քաղցր մի հուշ...

12.

Յես այդ բոլորն արեցի և հազիվ թե դուրս չվտարվեցի միությունից: Ինձ արեցին ամենախիստ նկատողություն: Բժիշկներն ասեցին, վոր յես ջղային եմ, իսկ կոմյերիտմիությունն ասեց, վոր համբերող չեմ և «ռազմական կոմմունիզմի» մարդ եմ:

Յես արեցի այդ բոլորը, և յերբ ամիսներ անցան, նոր միայն հազիվ ափեցի ինձ:

... Ճիշտ եյին ասում բժիշկները, բայց առավել ևս ճիշտ եյին ասում կոմյերիտականները:

Յեվ յես այն ժամանակ իզո՞ւր եյի կարծում, թե հաշտ ապրելու և սիրով ապրելու համար բավական է միայն լինել յերիտասարդ ու տաքարյուն...

Յերկա՞ր է ճանապարհը վորով մենք անցնում ենք, և դժվարին է այն: Յերիտասարդ ենք մենք և անհամբեր: Արյունը յեռում է մեր մեջ: Մենք յերկարատև և համբերատար աշխատանքի անընդունակ չենք, բայց անսայթաք ել չենք յերբեմն: Փառք մեր կոմյերիտական ժողովրդին, փառք հեղափոխությանը...

* * *

Վերջերս յես այնքա՜ն շատ մտածում եմ Անգլիայում կատարվելիք հեղափոփոխության մասին: Այնտեղ ինչքա՜ն մարդիկ կան, վորոնք ժողովարաններում նստած, «Փառք աստծո» յեն յերգում: Իսկ թույնը ներս է ծծվում նրանց մեջ ավելի և ավելի խորը...

Իմ կոմյերիտական գիտակցությունը բորբոքում է ինձ, յես լցվում եմ ատելությամբ դեպի աստվածն ու կրոնը, և իմ մեջ բոցավառվում է անմար ու դեպի գործ մղող խանդը:

ԱՌԱՋԻՆ ՓՈՐՋԸ

1.

Արտաշը շուռ ու մուռ յեկավ անկողնի մեջ, հորանջեց մի յերկու անգամ և աշխատեց նորից քնել։ Բայց շչակի ձայնը խանգարում էր նրան։ Հանկարծ սթափվեց, և լսելով շչակի վերջին ճիչը, վեր թռավ անկողնից։

Լուսացել էր։

Այսօր նա շատ էր քնել։

Նրա փոքրիկ սենյակը, բանվորական հանրակացարանում, նման էր այն բազմաթիվ սենյակներին, վորտեղ ապրում են ամուրի բանվորները։ Մի բան, վորը տարբերում էր Արտաշի սենյակը մյուս ընկերների սենյակներից—դա ծայր աստիճան խառնիխուռն և անկանոն դրությունն էր։

Խառնիխուռն և անկանոն։

Բայց, բնորոշելու համար այսքանը բավական չէ։

Փոքրիկ սեղանի վրա, թանաքամանի կողքին դրված էր կոշկաներկի տուփը, խոզանակի և այլ պարագաների հետ միասին։ Նրա կողքին դրված էին Արտաշի գուլպաները ու գոտին։ Գետնին, անկողնի մոտ, դրված էր Ջլրամանը, վորի խուփը Կովալենկոյի քաղգրագիտության դասագիրքն էր։ Յերբ այդ գիրքը պետք գար, նա կվերցներ, փոխարենը մի ուրիշ գիրք դնելով։

Պատի վրա փակցված էին Լենինի և Նեմիրովիչ-Դանչենկոյի նկարները, մի տեսարան Մոսկվայից, ինչ-վոր կինո-պլակատ, «Огонек»-ի պատկերազարդ մի հայտարարություն և Կարմիր բանակի մուտքը Խարկով։

Յեվ այս բոլորի մեջ, իր անկողնի հետ միասին, իբրև նրա հետ սերտորեն կապված մի առարկա՝ պառկում էր Արտաշը և վեր կենում։

Այս առավոտ, վորովհետև ուշ էր վերկացել, նա ըշտապեց խսկույն հագնվել։

Հանկարծ աչքն ընկավ կտրված կոճակի տեղին—շապիկի վրա։

— Վոչինչ, մրթմրթաց նա։

Ու անցյալ որվա պես, մյուս որվա պես, ավելացրեց.—

— Վաղը կկարեմ։

Ապա, հագնելով մնացած շորերն ու կոշիկները, նա դուրս վազեց։

Հեռվից արդեն յերևում էր գործարանը, յերևում էին հավաքվող բանվորները, վորոնք գալիս էին այս ու այն կողմից։

Ու յերբ մոտեցավ Արտաշն էլ—փչեց յերկրորդ շըչակը։

Բանվորները ներս մտան։

Այն բանվորները, վորոնք աշխատում էին բամբակապատիչ մասում, իրենց քթերի վրա ամրացրին հատուկ պահպանիչներ, բամբակի փոշին ներս չշնչելու համար։

Մյուսներն էլ՝ հագնելով խալաթները, մտան իրենց գործատեղը։

Արտաշն էլ, հագնելով խալաթը, գնաց ներս և կանգնեց իր դազգահի մոտ։

Աշխատանքային որն սկսվեց։

— Վորտե՞ղ է,— Օհանյանը,— հարցրեց մի ընկեր, ըստ յերևույթին՝ բանվորներին ստուգողն ու ցուցակագրողը։

— Վերտեղ է,— կրկնեց մի ուրիշ բանվոր։

— Եսօր յերկուշաբթի չէ,— հիշեցրեց մի ուրիշը։

Վերստուգիչը լռեց։

Պարզ էր։

Ռհանյանը և, ելի մի քանի բանվորներ, հարբում եյին յուրաքանչյուր կիրակի, դրա համար ել յերկուշաբթի որերը գալիս եյին շատ ուշ, կամ բոլորովին չեյին գալիս աշխատանքի:

Կոմսոմոլիստ բանվորներից մեկը գլուխն որորեց:

Յերեկ այդ րոպեյին նա հիշեց աշխատանքի արտադրողականության բարձրացման լոզունգը, վորովհետև այդ րոպեյին նրա աչքն ընկավ պատուհանի գոգում դրված լրագրին, վորտեղ տպված եր այդ լոզունգը:

— Վոչ ու փուչն իրեն կփչացնի,— յենթադրեց մեկը:

— Եդքան ել խմել կլինի՞:

Ու լռեցին բոլորը:

Ներքևի հարկից լսվում եյին դինամո-մեքենաների գոռոցները, իսկ վերևում, միայն փոկերն եյին շարժվում մեկ սվսվալով և մեկ ել շրփացնելով. բայց փոկերից, լսվում եյին գազգաճների չխչխկոցները:

Գործարանի այդ մասն այնքան ել մեծ չեր: Բաղկացած եր չորս սենյակից, վորոնցից յուրաքանչյուրում աշխատում եյին տասնհինգական հոգի: Այն սենյակում, ուր Արտաշն եր աշխատում, բացի Ռհանյանից և կոմսոմոլիստ Վարդգեսից, կային նաև ութը հասակավոր բանվորներ և չորս յերիտասարդներ: Դրանցից յերեքը կուսակցական եյին, իսկ կոմսոմոլիստները, բացի Վարդգեսից ու Արտաշից, յերկուսն եյին:

Յուրաքանչյուրն իր գործով եր զբաղված և հազիվ եր նկատում, վոր ժամանակն անցնում ե:

Քեռի Վասիլը հազաց.

— Հը՜մ...

Դա նշանակում եր, վոր նա պիտի խոսի:

— Հը՜մ .. հ՜ըմ...

Մեքենաները չխչխկում եյին:

— Ռոստովում, տասչորս թվին, մի շունշանվորդի Իվան կար: Իրար հետ եյինք աշխատում: Եդ անաստվածն ամեն յերկուշաբթի գավոդ չեր գալի: Մի որ ել..

— Վարպետ,— բղավեց Վարդգեսը,— ախր աշխատում ենք, հա, հանգստի ժամին կպատմես:

— Լավ, դե դու յել... Ձվից նոր յելած... Տասնհինգ տարի յե աշխատում եմ, «զակոնը» չգիտե՞մ...

— Ախր չես թողնում աշխատենք:

— Լավ, Վասիլը կարճ կկապի,— պատասխանեց Սեդրակ անունով մի յերիտասարդ բանվոր:

Վասիլը շարունակեց.

— Հը՜մ...

— Հետո՞:

— Հա, մի որ ել... վերատեսուչն յեկավ թե՝ «այ Իվան, մինչև հիմի ռոճիկից յետ եյի պահում, վոր խըրատվես, չեր լինում. հիմի պիտի ասեմ, վոր յեթե մի անգամ ել բացակայեցիր, դուրս կանեմ»: Ես Իվանը, մի յերկու-յերեք շաբաթ չը բացակայեց: Մի որ ել,— ելի յերկուշաբթի յեր,— յեկավ ու իր գործի վրա կանգնեց: Յերկու-յերեք ժամ անցավ-չանցավ, մեկ ել ես Իվանը՝

— Վասադուլի, վազարոդկի,

Վիռոսլա պետրուշկա...

Բանվորները ծիծաղացին:

— Բռավո, յերգել ել գիտես, Վասիլ:

— Հա, կացեք վերջացնեմ, հետո: Հըմ: Դու մի ասիլ ես մարգըհեան ողի յե բերել, հենց գործարանումն ել խմել ե:

— Ինչ յեղավ...

— Ի՞նչ կա՝ վոր ինչ լինի: Մեկ, յերկուս, յերեք,— չեղավ: Մի որ ել, ելի վերատեսուչը մոտեցավ թե՝ «չնեղանաս, Իվան, գավոդ մտնելիս քեզ պտի խուզարկենք»:

Եդպես ել արին:

— Ինքն ինչ եր ասում. թողնո՞ւմ եր, վոր խուզարկեն:

— Հա՜յ-հա՜յ... Ի՞նքը... Սուտ խո չե՞մ ասում, վոր սատանա մարդ եր:

Արտաշը տաքացավ։

— Վարպետ Վասիլ, թող աշխատենք, է՛։ Ուզում ես տեղկոմին ասեմ։ Էն փչացած Գյորգուն վոնդելուց հետո, մի յերկու ամիս լավ եր, ելի։ Հիմի նորից։

Մի քանիսը համոզվեցին։

— Ճիշտ ե, ախր, հանգստի ժամին կշարունակես։

— Հըմ...

— Ի՞նչ։

... Մի որ էլ տեսանք, ես անիծվածն ելի հարբել ե, ելի՝

Վասադուլի, վազարոզկի,

Վիռոսլա

Պետ-

րուշկա։

— Խուզարկելուց հետո՞ յեր հարբել։

— Բա՞ս...

Մի քանիսը զարմանքից գործերը թողեցին ու դարձան դեպի Վասիլը։

— Վո՞նց թե...

— Դու մի ասի, որան վոր խուզարկում են, սա յեզ ողի չի բերում իր հետ։ Մի փոքրիկ աման թունդ սպիրտ ե բերում, հետո խառնում ե ջրի հետ, ու...

— Վա՜յ...

Բոլորը շրջվեցին դեպի ճիչը։

— Վա՜յ

Բանվորները վազեցին։ Մեկը կանգնեցրեց փոկերը։

Սեդրակի թևը մնացել եր մեքենայի տակ։

— Տեսա՞ք, յես չասի՞ թողեք աշխատենք։

— Յեղա՞վ...

— Տարեք հիվանդանոց։

Սեդրակը համարյա ուշաթափ դրության մեջ եր։

Քիչ հետո, արագ ներս մտավ գործարանի վարիչը և մի քանի բանվորների ոգնությամբ Սեդրակին տարան։

Յերբ մի քիչ հետո նրանք վերադարձան, մնացածները հարցրին.

— Վո՞նց յեղավ...

— Վնաս չունի, թեթև քերծվել ե, մի շաբաթից կլավանա։

Բոլորն ազատ շունչ քաշեցին.

Կոմսոմոլիստ Վարդգեսը ջղայնացած եր յերևում։

Նա, քթի տակ, կարծես թե ինքնիրեն, մի քիչ խոսելուց հետո, չհամբերեց և ձայնը բարձրացրեց

— Յեղբայր, յե՞րբ պետք ե մեր գործարանն ազատենք փնթիության, դանդաղկոտության ու ժամավաճառության մնացորդներից։ Դժբախտ դեպքերն էլ կշատանան, արտադրողականությունն էլ կիջնի...

Վոչոք չեր համարձակվում առարկել։

— Ճիշտ ե,—ավելացրեց Արտաշը։

Լռեցին։

Նորից դինամո-մեքենաների դղրդոցը ներքևի հարկից, նորից փոկերի պարն ու շրխոցը և նորից մեքենաների չխչխկոցները։

2.

Գործարանի վարչությունը, ինչպես նաև բոլոր բանվորները հուզված եյին։ Հանգստի ժամին, լուրը տարածվել եր բոլոր բաժանմունքներում։ Պարզվել եր նաև այն, վոր Սեդրակը, ուշադրություն դարձնելով Վասիլի պատմածներին, անզգուշությամբ թևը դրել եր ատամնավոր անիվի վրա, վորից և առաջ եր յեկել դեպքը։

Այդ առթիվ, շաբաշից հետո, նշանակված եր գործարանի բանվորների ժողով։

Որը մոտենում եր «շաբաշին»։

Մի քիչ անց, շչակը ճչաց և աշխատանքը կանգ առավ։

Բանվորները դուրս յեկան բաժանմունքից և շտապե-

ցին դեպի ակումբը, վորը գտնվում էր գործարանից վոչ հեռու, բանվորական հանրակացարանների կողքին։

Ու յերբ սպասում էին բոլորի հավաքվելուն, բանվորներից մեկը կատակի տվեց.

— Խեղճ տղա... ախր սիրահարված էր։ Հիմա վոնց պտի անի։ Մի շաբաթ չի հանդիպելու իր աղջկան։

— Ո՞ւմ հետ էր սիրահարված...

— Չես ճանաչի։

Յերբ բոլորն էլ հավաքվեցին, տեղկոմի քարտուղարը ժողովը բաց արավ։

— Ընկերներ։ Գործարանում դժբախտ դեպքերը դեռ չեն վերջացել, դեռ շարունակվում են։ Հիմա, դուք ինքներդ և մենք բոլորս, միացյալ ուժերով, պետք է գտնենք պատճառները և վերջ տանք...

Տեղկոմի քարտուղարից հետո խոսք առավ Արտաշն ու նկարագրեց դեպքը։

— Վասիլն էլ է մեղավոր, Սեդրակն էլ,— ավելացրեց նա։

— Սխալ է։

— Ճիշտ է։

— Լռություն։ Հերթով խոսեցեք։

Այս անգամ խոսեց Վերգինեն, վորն ապրում էր Արտաշի սենյակին կից սենյակում, նույնպես «խալաթատող» և աշխատում էր գործարանի բաժանմունքներից մեկում։ Նա նե՛ս խելոք կերպով պատճառաբանեց իր ասածները. մեղավոր գտնելով յերկուսին էլ։

— Յեթե նա իր գործին նայեր և գործի ժամանակ չզբաղվեր ուրիշի պատմությունները լսելով՝ եղպեխը բան չէր պատահի։

Հետո խոսեց մի կուսակցական, հատկապես Վասիլի դեմ։ Նրանից հետո ձայն խնդրեց «Տե-Ժե» Սաշիկը։ Նրա մասին բանվորները պատմում էին, վոր միշտ Մոսկվայից ստանում էր «Տե-Ժե» գործարանի թանգարժեք և «մեղ-

չականան» առարկաներ,—դուխի, պուդրա, մազերի ոծանելիք և այլն, վորոնք գործածում էր իր վրա։ Յուրաքանչյուր ամիս, յերկու անգամ, նամակաբերը գալիս էր գործարան և բղավում.

— Սաշա Հովհաննիսյան...

— Ելի «Տե-Ժե»,—ծիծաղում էին բանվորները։

Դրա համար էլ, նրա անունը դրել էին «Տե-Ժե» Սաշիկ։

Ուրիշ ածականներ էլ ուներ.—«մեշչան», «ինտելիգենտ», «պարոն բանվոր» «կես-աղջիկ» և այլն։ Ընդհանրապես, բանվորները չէին սիրում այդ տարօրինակ բանվորին։

Նա խոսեց այն մասին, վոր պետք է մեղադրել ամբողջ բանվորությանը։ Բոլոր էլ միանման անկարգապահ են։

— Մեկը-մյուսից պակաս չէ...

— Զայիդ կորի...

Հետագա խոսողները դուրս յեկան «Տե-Ժե»-յի դեմ և նրան դուրս բերեցին իբրև սխալվող։

Մեկը նույնիսկ ասաց.

— Յեվ հետաքրքիրն այն է, վոր Սաշան է միայն մեղադրում ամբողջ բանվորությանը։ Նա վոչ-բանվորական տարր է, հոգեբանորեն մեզ խորթ, կտրված, և այդ պատճառով է, վոր սխալվում է։

Վերջին խոսքն առավ չար և «խուլիգանական» թեքումներ ունեցող մի բանվոր, դուրս ցցված աչքերով և քերծված քթով,—յերևի կռվից հետո մնացած։ Նա, բոլորին ծանոթ, «խուլիգան» Գեղամն էր։

Մի քանիսը, կուսակցական Սերոբը, Անդրեասը և ուրիշ բանվորներ, ընդհատեցին Գեղամի խոսքը, վորը նման էր հայհոյանքով լցված մի ղալմաղալի։

Սկսվեցին առաջարկները։

Բոլորը դատապարտում էին և Վասիլին և Սեդրակին։

Ժողովը վորոշում հանեց, վորի մեջ ասվում էր, թե

պետք է կտրուկ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի այդպիսի դեպքեր այլևս չկրկնվեն։ Նաև նկատողություն արեցին Վասիլին։

— Ժողովը հայտարարում եմ փակված։

Բոլորը վեր կացան։

— Լավ վորոշում եր։

— Ճիշտ վոր…

— Դու տես, թղթի վրա չմնա։

Յեվ այսպես խոսելով, դուրս յեկան ակումբից։

Արտաշը գնում եր մի քանի ընկերների հետ։ Յերբ հասան ճանապարհին, նրանք ցտեսություն ասեցին և գնացին դեպի իրենց տները։ Արտաշն ել գնաց դեպի բանվորական շենքը, վորտեղ իր բնակարանն եր։

Ճանապարհին հանդիպեց Վերգինեյին։

— Տուն ես գնում…

— Հա։ Դու յե՞լ։

— Յես ել։

Նրանք ճանապարհը շարունակեցին միասին, խոսելով որվա դեպքերի մասին։

Յերբ հասան իրենց դռներին և յուրաքանչյուրն իր սենյակը պիտի մտներ, Արտաշը կանգնեց մի րոպե և ասաց Վերգինեյին։

— Ի՜նչ սիրուն խոպոպներ ունես…

Վերգինեն մի քիչ կարմրեց, ապա ծիծաղելով մտավ ներս։

Արտաշն առաջին անգամն եր աղջկա հետ խոսում այդպիսի «նյութերի» մասին։

Իսկապես վոր, գեղեցիկ, լավ աղջիկ ե Վերգինեն, բայց հատկապես այսոր, ինչքա՜ն գեղեցիկ եր նա…

Արտաշը մտավ իր սենյակը, պառկեց մահճակալի վրա, ջրամանի բերանից վերցրեց Կովալենկոն ու բաց արեց «հավելյալ արժեքի»-ի դասը։

3.

Յերեք, թե չորս որ հետո, Արտաշը նստած եր ակումբի հանգստի սենյակում։ Այնտեղ եյին նաև վարպետ Սերգոն, Վարդգեսն ու Արշակը և ելի ուրիշներ։

Խոսք բացվեց Սեդրակի մասին։

— Յես յերեկ նրա մոտ եյի,— հայտնեց մի բանվոր,— կամաց-կամաց լավանում ե։ Վաղը չե մյուս որը դուրս կգա հիվանդանոցից, բայց աշխատել կարող ե միայն մի ամսից հետո։

— Իսկապես, մի բան ընկավ միտքս,— հարցրեց մեկը, Սեդրակը սիրահարված ե։

— Ասում են…

— Ի՞նչ սիրահարվել, խաղ ե անում, ելի։

— Եդ շան վորդին,— լեզուն չփաթցնելով խոսեց Գեղամը,— կատարյալ «Դոն-Ժուան» ե։ Որական մեկի հետ ե լինում։ Յես բոլորն ել գիտեմ։

— Անցած որը,— շարունակեց մի ուրիշը,— մի յերկու շաբաթ առաջ, յեկավ թե՝ «յես սիրահարվել եմ Սիրուշի վրա»։ Ասում եմ՝ բա Սեդա՞ն։ Նա թե՝ «Ե, են հնացավ»…

Ծիծաղեցին։

— Սատանան…

Ու, կամաց-կամաց, խոսակցությունը կենտրոնացավ սիրային հարցերի և արկածների շուրջը։ Մի քանիսը պատմեցին իրենց կյանքից։

Մեկը պատմում եր, թե ինչպես ինքը սիրահարվել ե առաջին անգամ. մի ուրիշն իր արկածներից եր պատմում, յերրորդը՝ մի ուրիշ բան։

— Իսկ դո՞ւ…

Արտաշը չորս կողմը նայեց։

— Յե՞ս…

— Հա, ի՞նչ կա վոր…

— Յես ինչ...

— Դե դու յել պատմի, լսենք։

Արտաշը գլուխը կախեց։ Ի՞նչ պատմի։ Սիրային արկած... Ինչքան փորփրեց միտքը, նման բան նա չհիշեց։ Միայն այն բանն ընկավ իր միտքը, վոր իր տաս տարեկան ժամանակ, մի անգամ, մի փոքրիկ աղջկա հետ խաղ անելիս, գրկեց նրան և անցկացրեց առուն։ Մեկ ել են, վոր անցյալ որը Վերգինեյին ասաց.

— Ի՞նչ սիրուն խաղալիկներ ունես...

Բայց դրանք ի՞նչ պատմելու բաներ են։

Մեկը ծիծաղեց...

— Հը, չկա՞...

Արտաշը ձայն չհանեց, միայն թե, ինչվոր բան ասավ քթի տակ։

— Խի՞ չկա,— մեջ ընկավ մի ուրիշը,— գիշեր-ցերեկ Վերգուշի հետ ո՞վ ա լինում, յե՞ս թե Արտաշը...

— Սուտ է,— ասաց Արտաշն ու դուրս գնաց։ Նա իրեն շատ անհարմար եր զգում։

Նրան թվաց, թե իր յետևից բոլորն ել ծիծաղում են իր վրա։

Նա դուրս յեկավ ակումբից։

— Թյո՜ւ...

Արտաշը բարկացած եր յերևում։

— Մարդ ել քանիմեկ տարեկան լինի՞, առանց սիրային դեպքի,— մտածում եր նա։ Իր ընկերները, վորոնք ամուրի յեն, քանի-քանիսի հետ են յեղել։ Իսկ յե՞ս... Աղջիկ եմ, իսկական աղջիկ։

Նա մոտեցավ բնակարաններին։ Վերգինեյի լուսամուտից լույս եր յերևում։

— Ահա։ Ասում են՝ Վերգուշի հետ է։ Եդքան խելք ունե՞մ վոր... Տարի ու կես է, վոր իրար կողքի յենք ապրում, մենակ մի պատ կա իմ ու նրա սենյակի միջև, ու սկի մտածած կա՞մ, վոր հետը կապվեմ։

...Ինչքան ել լա՜վն է Վերգուշը...

Արտաշն աշխատեց պատկերացնել նրան իր աչքի առաջ։ Յեվ միշտ նրան թվում եր, թե Վերգինեն կանգնած է այն դրությամբ, յերբ ինքը խոսք բաց արավ նրա խաղալիկների մասին։

Այդ րոպեյին նա մի քիչ կարմրեց, շփոթվեց, հետո ծիծաղեց։

— Լավ աղջիկ է...

Մեկ ել ինքն իրեն, ավելացրեց։

— Նո՞ր է միտքդ ընկել։

— Նո՞ր ես տեսնում։

Յեվ անցնելով Վերգինեյի դռան մոտով, սահեց դեպի նրա լուսամուտը և նայեց ներս։

Վերգինեն ինչվոր շոր եր կարում։ Կողքին դրված եր կիսաբաց գիրքը։

Արտաշը Վերգինեյի սենյակը չեր տեսել։ Ներսում բոլորովին չեր յեղել։ Յերբ լուսամուտից ներս նայեց, նրան շատ դուր յեկավ այդ փոքրիկ սենյակը։

— Ճաշակով աղջիկ է Վերգինեն...

Վերգինեն ել, իր հերթին, Արտաշի սենյակում չեր յեղել։ Մի անգամ միայն դռնից նայել եր ներս և Արտաշին անվանել եր «փնթի սենյակ պահող»։ Արտաշն ել նրան «մեշչանկա» յեր ասել։

Նրանք վատ ընկերներ չեյին, և Արտաշն այսոր զարմանում եր, թե ինչու՞ նրանք չեն գնում իրար մոտ, խոսում, յերեկոները մի բան կարդում կամ խաղում։ Այդպիսով և մենակ չի լինի և...

— Լավ կլինի... մրմնջաց նա կամացուկ։

Մի րոպե տատանվեց, սակայն իր դուռը բաց արեց և մտավ ներս։

— Վաղը կգնամ Վերգուշի սենյակը, մի քիչ զրույց կանենք...

Գլխարկը շպրտեց աթոռին, գոտին մահճակալի ճա-

դերից կախեց, բլուզը գցեց մի կողմ, մյուս շորերը նե-տեց սենյակի պատահած անկյունը և պառկեց քնելու:

4.

Լույսը դեռ չէր բացվել:

Արտաշն արթնացավ:

Նրան ինչ վոր տարորինակ զգացում էր պաշարել: Թվում էր, թե ինչ վոր հեռու տեղում նվագում են մի անուշ յեղանակ: Մեղմ... մեղմ...

Հետո զգաց, իբր թե իր կուրծքն ուռչում է հուզ-մունքից: — Ինչքան լավ է, — մտածում էր նա:

Ուրիշ անգամ էլ յե՞րբ է այդպիսի բան պատահել իր հետ: — Չի պատահել, — մտածեց նա: Վորքան գեղեցիկ է յերևում լուսացող առավոտը... Յեվ այն պարտեզները, վոր կանաչել են, և այն լեռները, վոր յերևում են իր լուսամուտից: Առավոտը շուտով կբացվի: Ինչ լա՜վ է...

Արտաշը վեր կացավ ու մոտեցավ լուսամուտին:

Մի հեռու տեղից լսվում էր աքաղաղի ձայնը: Իսկ քիչ հետո շշակը կծղրտա:

Իսկ հետո, նա չգիտեցավ, թե ինչի մասին էր մտա-ծում: Մտքերը մի նյութի շուրջ չէյին կենտրոնանում: Մեկ առավոտը, մեկ յերաժշտության հնչյունները, մեկ էլ դեմի լեռները, պարտեզները...

Վերգինեն...

Կողքի սենյակումն է նա:

Յերևի հիմի քնած է: Ի հարկե քնած է: Ով գիտե, գուցե վերմակը ծռվել է, կախ է ընկել և Վերգինեյի ուսը բացվել է: Հետաքրքիր է, թե նա վոնց է քնել: Խոպոպ-ները հիմա քանդվել են յերևի...

Յեվ Արտաշն սկսեց մտածել: Վերգինեն: Լավ աղջիկ է, շատ լավ աղջիկ է...

Արտաշը հագնվեց:

Լույսը բացվում էր:

Ինչու՞ համար այսօր առավոտ մի տեսակ... ուրիշ է: Ամեն ինչ լավ է: Կարծես մեկը գուրգուրում է Արտաշին: Մեկը շոյում է նրա մազերը և շնչում է նրա դեմ, նրան մոտիկ...

Յեվ լուռ, առանց մի շշուկ հանելու, նստեց Արտաշը:

Ելի Վերգինեն միտքն ընկավ:

Նրան թվում էր, վոր յեթե այս անգամ հանդիպի Վերգինեյին, պիտի շփոթվի, շատ պիտի շփոթվի և պիտի ամաչի:

Ինչու՞...

Չկարողացավ պատասխանել:

Արդեն համարյա թե, բոլորովին լույս էր: Ամեն առավոտ, այս ժամանակ, Վերգինեն դուրս է գալիս և լվացվում է: Հիմի էլ յերևի դուրս կգա և կլվացվի: Դա սովորական բան է, բայց Արտաշի սիրտն ինչու՞ է տրո-փում այսպես ուժեղ:

Նա լուսամուտի մոտ նստած էր և վեր չէր կենում:

Իրոք վոր, քիչ հետո, Վերգինեյի դուռը չրխկաց, բացվեց ու Վերգինեն դուրս յեկավ, թևերը և վիզը բաց, սրբիչն ուսի վրա և սապոնը ձեռքին:

Արտաշն զգաց, վոր իր յերեսը կարմրում է, տաքա-նում է, զգաց, վոր ականջները զժժում են:

Վերգինեն լվացվում էր:

Սպիտա՜կ, սպիտակ են Վերգինեյի թևերը և այնպես լա՜վ են նրանք: Արտաշին թվաց, վոր սապոնի փրփուրն այդ թևերի վրա պիտի ավելի քիչ սպիտակ յերևա: Յեվ ուզեց Արտաշը, մի անգամ ձեռք տալ այդ թևերին:

Վերգինեն սրբիչն ուսից վար առավ, սրբվելու հա-մար: Նրա ուսը բացվեց և Վերգինեն մի վայրկյանում ծածկեց այն: Բայց Արտաշը տեսավ ուսի կլորությունն ու փոքրիկ մակերեսը և շնչեց խորը, ագահ...

Ու յերբ Վերգինեն տուն էր մտնում, տեսավ լուսա-մուտի մոտ նստած Արտաշին և շտապեց սրբիչով ծածկել

էր պարանոցն ու լանջը, որ գիշերաշապկի տակից չերևում էր: Ապա, շփոթված ու մոլոր հայացքով, նայեց Արտաշին, բարևեց ու անցավ:

Արտաշը բարևին պատասխանելու ժամանակ չունեցավ:

Նա դուրս եկավ տանից, մի քիչ կանգնեց դռան մոտ, ապա մոտեցավ Վերգուշի դռանը:

— Վերգուշ...

— Յեկա:

Յերբ Արտաշը, քնի հետ չընկնելով, շուտ էր արթնանում և Վերգինեյին տանն էր գտնում, նրանք միասին եյին գնում գործարան:

Այս անգամ ևս, նա շուտ էր վեր կացել:

Վերգինեն դուրս յեկավ:

— Եսօր սովորականից շուտ ես վեր կացել,—ասավ նա,—շուտ ես քնել յերևի...

— Չէ: Գիշերն սկի չեմ քնել:

Վերգինեն զննող հայացքով նայեց Արտաշին, յերևի մի բան կասկածեց, իսկ հետո չխոսեց:

Սովորականի հակառակ, այդ օրը նրանք ճանապարհին ուրիշ ոչինչ չխոսեցին և գնացին լուռ ու մտածկոտ:

Շչակը կանչեց:

— Գործի...

Բանվորները մտան իրենց բաժանմունքները:

Արտաշն ու Վերգինեն էլ բաժանվեցին և նրանցից յուրաքանչյուրը գնաց իր գործին:

5

Մի քիչ տատանվեց ու մտածեց Արտաշը:

— Ի՞նչ կմտածի: Չէ՞ ասի—ես տարի և կես է, որ իրար կողքի յենք ապրում և հիմա նոր, առաջին անգամ մտնում եմ իր սենյակը: Չէ՞ ասի, որ յերևի մի բան կա եստեղ...

Բայց հետո սիրտ արավ ու իր դուռը բաց արեց: Դիտում նրա աչքը դիպավ «Տե-ժե» Սաշիկին:

— Սաշի՞կ...

— Ո՞... բարև... բարև... տեղկոմի քարտուղարի տունը վո՞րն է, Արտաշ...

— Չգիտե՞ս: Տեղկոմի քարտուղարն ապրում է քաղաքի մյուս ծայրում: Են, որ մի օր յես ու դու գնացինք՝ կոլեկտիվի դրոշակը բերելու:

— Ինձ ասացին տեղափոխվել է:

— Ո՛չ: Ո՞վ է ասել:

«Տե-ժե»-ն շտապ քայլերով հեռացավ: Արտաշը նայեց նրա կտրատվող շարժումներին, շիք կոստյումին, յուղած մազերին և ձեռքում բռնած գլխարկին.

— Գալստուկով բանվոր... ղուխու հոտ... պուդրա...

Ու ավելացրեց.

— Թյու...

Հետո հանկարծ հիշեց. որ ինքը դուրս է յեկել Վերգինեյի մոտը գնալու համար: Ծեծեց նրա դուռը և ներս մտավ:

— Վա, բարև,—ժպտաց Վերգինեն:

— Բարև... ինձ մոտ ձանձրալի չէ... ասի՝ մենակ եմ: Ասի՝ գնամ Վերգինեյի մոտ, մի քիչ զրույց անենք:

— Լավ արիր, ընկեր,—կատակի ավեց Վերգինեն,—ես յերկու տարի չէ, որ «դըկից» ես, սկի ներս չես մտել: Սենյակս հավանում ե՞ս:

Արտաշը նայեց շուրջը:

— Շատ լավ է... ճաշակով է...

— Քո սենյակիդ նման չէ՞:

Արտաշին թվաց, որ Վերգինեն հեգնում է իրեն:

— Ե, ինչ անենք, դու աղջիկ ես:

Վերգինեն ծիծաղեց:

— Գող՝ սիրտը դող: Ճիշտ են ասել: Սենյակդ ինչու համար կարգի չես գցում: Փնթի...

Հետո ավելացրեց.

— Չնեղանաս...

— Չէ...։

Ու սկսեցին խոսել։ Վերգինեն իր կյանքից պատմեց, հարցրեց Արտաշի անցյալից, հետո խոսեցին բջիջի մասին, գործարանի, հետո հասնող մրգերի և այլն։

Արտաշը սիրտ առավ.

— Վաղն յեկ իմ սենյակս և աչքովդ տես։ Քոնն ուր, իմն ուր... Իսկական խոզաբուն է։

Վերգինեն ելի ծիծաղեց։

— Ի՞նչ լավ է ծիծաղում անպիտանը,—մտածեց Արտաշը և ասավ.

— Գեղեցիկ ես ծիծաղում...

— Յես գեղեցիկ չեմ վոր... կատակի տվեց Վերգինեն։

— Դու չել ես գեղեցիկ։

Արտաշը վեր կացավ ու մոտեցավ նրան։

— Առավոտյան դու լվացվում եյիր, յես թևերդ տեսա, ինչքան լավն են...

— Անամոթ,—հանդիմանեց Վերգինեն։

— Հիմի,—շարունակեց Արտաշը,—յես ինքս ինձ ասում եմ. ինչ լավ թևեր եյին. ինչ լավ աղջիկ է Վերգինեն. խոպոպները... աչքերը...

— Կամաց, կսիրահարվես,—ժպտաց Վերգինեն։

Արտաշը նույնպես ժպտաց։

— Դու ինչ գիտես, թե սիրահարված չեմ։

— Հա՛...

— Ինչ կա վոր...

— Վոչինչ... Գիտեմ վոր... Յես ել ասում եյի թե...

Ինչքան պարզ աղջիկ է Վերգինեն։ Մտքի մեջ յեղածն իսկույն ասում է։ Մարդ ուղղակի ամաչում է նրանից։

— Հը՞... հարցրեց Արտաշը...

— Ի՞նչը...—իր հերթին հարցրեց Վերգինեն, ծիծաղելու պատրաստ։

— Այ, սա...

Յեվ Արտաշը գրկեց նրան։

— Թող, անամոթ...

Ապա, դուրս պրծնելով նրա գրկից՝

— Ամոթ քեզ, խուլիգան...

Արտաշը չգիտեր իր անելիքը։ Հանկարծ շուռ յեկավ և դուրս գնաց։

Դրսում, պատի մոտ, նորից հանդիպեց «Տե-ժե»-ն։

— Ասում են տեղափոխվել ե...

— Ասողը գլուխը քարովն է տվել, դու չել հետը,—բարկացավ Արտաշն ու մտնելով իր սենյակը, դուռը պինդ շրխկացրեց։

— Ի՞նչ արի...

Նստեց սեղանի մոտ...

— Այ քեզ խայտառակություն., ինչ արի...

Նրան թվաց, թե մեջտեղի պատը չկա և Վերգինեն նայում է իրեն ու բարկանում։

Յեվ ուշ գիշեր եր, յերբ նա պառկեց քնելու...

Առավոտյան, Արտաշն արթնացավ ընկած տրամադրությամբ, տխուր ու մտածկոտ։ Յերեկոյան պատահածից մնացել եր մի անհաճո հիշողություն, վորը ճնշում եր նրան։

Նա վախենում եր այն բանից, վոր կարող է նորից հանդիպել Վերգինեյին։ Ի՞նչ ասի, կամ ինչպես նայի նրա յերեսին...

Թեև շուտ եր վեր կացել ու հագնվել, բայց դուրս չգնաց։ Վերգինեն դուրս յելավ լվացվելու, բայց այս անգամ, չգիտես ինչու, թեքվեց դեպի պատի մյուս կողմը, վորտեղ արդեն նա անտեսանելի յեր դառնում Արտաշի լուսամուտից։

Արտաշն սպասեց, մինչև վոր նա յեկավ, հագնվեց ու գնաց գործարան։

Մի քիչ ել սպասեց և ապա դանդաղաքայլ դուրս յեկավ։

Շչակն էլի փչում էր։

— Գործի...

Հանկարծ, հիշեց Արտաշը, որ դա յերկրորդ շչակն է, ուրեմն ինքն ուշացել է։

Թայլերն արագացրեց և մի յերկու րոպեյից հասավ։ Դազգահներն արդեն չխչխկում եյին։

* * *

Յերբ հանգստի ժամի շչակը փչեց, Արտաշը տատանվում էր — դուրս գնալ, թե չէ։ Ուզեց մի պատճառ բռնել։ Վերցրեց յուղամանը և սկսեց իր դազգահը յուղել, քթի տակ փնթփնթալով.

— Լավ չեն յուղել. դառում է...

Ու շուրջը նայեց, տեսնելու համար, թե ով լսեց իր ասածը։

Բոլորը դուրս եյին գնացել։

Քիչ հետո, մեկը դրսից բղավեց։

— Արտաշ, յեկ նախաճաշի. թեյը կսառչի...

Ել ինչ ասես։ Ծարահատված՝ դուրս գնաց։

Յեվ լավ էր, որ Վերգինեյին չհանդիպեց նա։ Շարունակ նայում էր կարծելով թե, ուր որ է, ահա նա կգա.

— Տխուր ես, — ասաց Վարդգեսը։

— Տխուր չեմ, գլուխս է ցավում մի քիչ։

— Դե՛ էլ գործի ինչո՞ւ յես յեկել. ցավը կարող է ավելի ծանրանալ։

— Չէ, թեթև է ցավում։

Վարպետ Սերգոն, որ թեյ էր խմում, գլուխը բարձրացրեց ու խորիմաստ հայացքով նայեց։

— Ըհըմ...

6.

Նստել է Արտաշն իր սենյակում ու մտածում է։

— Լավ չարի...

Բայց հետո հիշում էր, թե ինչպես լավ էր, յերբ գրկեց նրա մարմինը։ Հիշեց ու քունքերն սկսեցին խփել։

— Ե՛. հիմի լավ յեղավ... գեռ առաջ ընկերներ եյինք, խոսում եյինք իրար հետ։ Իսկ հիմի էդ էլ չկա...

Նա հառաչեց.

— Լավ չարի...

Ու յերբ որ մտածում էր, թե ինչ է անում հիմի Վերգինեն, — կարդո՞ւմ է թե գրում, կամ գուցե հանգստանում է, — իր դուռը թակեցին։

Ներս մտավ Վերգինեն։

— Ինչպե՞ս թե... մտածեց Արտաշը։

— Բարև, — ժպտուն և սովորականի պես պարզ, ասաց Վերգինեն։ — Յես յեկա սենյակդ տեսնելու։ Սա՞ է։ Լավ սենյակ է, բայց անկանոն ես պահում։

— Հա... — ասավ Արտաշը... — անկանոն է։

Վերգինեն շուրջն էր նայում։

— Ես ո՞ւր ես դրել։ Սա խոզանակի տեղը չի։ Պահ, սա՛ ինչ է. գրքերը շորերի հետ մի արկղում, թանաքը, գրչակոթը։ Իսկ ես կարպետն էստեղ չեն խփի...

— Բա ո՞նց...

— Կաց յես սարքեմ, — ասավ Վերգինեն և առանց պատասխանի սպասելու սկսեց դասավորել ու կարգի գցել սենյակը։

Արտաշն ապշել էր։

— Ախպեր, լավ աղջիկ է։ Փոխանակ իմ արածից նեղանալու, սենյակս կարգի յե բերում։

Նրա յուրաքանչյուր շարժումը սենյակում մի բան փոխում էր ու գեղեցկացնում։ Մի առարկա վերցնում էր, մաքրում և մի ուրիշ տեղ դնում։ Հետո մի ուրիշը։

Արտաշին թվում էր, վոր ինքն էլ կարող էր այդպես անել, բայց թե ինչու չի արել,—չգիտեր...

Կես ժամից հետո, սենյակը դարձավ չափազանց լավ և հաճելի։

— Տեսա՞ր։ Դե, սրանից հետո լավ կպահես։

— Ապրես, Վերգինե։ Ինչքան լավ սարքեցիր։

Հետո հանկարծ՝

— Վերգինե...

— Ի՞նչ։

— Դու չե՞ս նեղացել ինձնից...

— Չէ, չէ. . մոռացիր արածդ։ Վոչինչ։

Յերկուսն էլ լռեցին։

— Ե՛հ բարի գիշեր, – ասաց Վերգինեն քիչ հետո։— Յես գնամ քնեմ։

— Գնա. լույս բարի։

7

Ինչքան հանգիստ քնեց Արտաշն իր նոր սենյակում։ Նրան թվում էր, թե դա իր սենյակը չէ, այլ մի ուրիշինը, վորն անկարգ չի պահում և խառնափնթոր դրության մեջ չի թողնում ամեն ինչ։

Յեվ նա վորոշեց, վոր ինքն էլ լավ պահի իր սենյակը և ընդհարապես, սկսի «կարգի գալ»։

— Լա՜վ Վերգինե...

Անցել էր մոտ մի ամիս։

Արտաշն ու Վերգինեն ավելի մտերմացել էին այդ ժամանակամիջոցում։ Համարյա ամեն յերեկո, յերբ մութն ընկնում էր, նրանցից մեկը գնում էր մյուսի մոտ և յերեկոն անց էին կացնում մի բանով զբաղվելով։

Ամեն ինչ լավ էր, բայց Վերգինեն նկատում էր, վոր Արտաշն յերբեմն տխրում է և նայում է իրեն։ Նա կարծես հասկանում էր, բայց վորոշեց հարցնել։ Յեվ իրոք, մի օր, յերբ Արտաշն իր սենյակումն էր,—հարցրեց նրան։

— Դու ինչու՞ յես մերթ-մերթ տխրում։

— Յե՜ս... Չէ՜... հենց էնպես, ինչ կա վոր։

Ու շփոթված լռեց։

Բայց մի քիչ հետո, Վերգինեն նորից հարցրեց, և այս անգամ խորամանկ մի ժպիտ դեմքին.

— Դու հո իսկապես... սիրահարված չե՞ս ինձ վրա...

— ... Այո...

Վերգինեն ծիծաղեց և փաթաթվեց Արտաշին։

— Ա՛յ, այդպես։ Թե չե ինչ... խուլիգանի նման, առանց հարցնելու, ուրիշին գրկում ես։ Յես էլ քեզ եմ սիրում։

Ի՞նչ էր կատարվում իր հետ։ Արտաշը հազիվ հասկացավ։ Ուրեմն, ամեն ինչ վերջացավ. ամեն դժվարություն հարթվեց։ Ինքն ու Վերգինեն սիրում են իրար։

Ու յերբ անցավ սիրային «ընդվզումի» համբույրախառն բոպեն, նրանք նստեցին իրար կողքի և սկսեցին ծրագրել։

— Մեր սենյակների միջև յեղած դուռը բաց կանենք, մեկը կսարքենք քնելու և պարապելու սենյակ, մյուսն էլ՝ դրսի սենյակ և մի քիչ էլ... խոհանոցի նման մի բան։

Վերգինեն, իբրև համաձայնության նշան, շարժում էր գլուխն ու ժպտում։

Արտաշը հորանջեց։

— Հը՞...

— Դեռ վո՛չ...

— Լավ,—համաձայնվեց Արտաշն ու «գիշեր բարի» ասելով, դուրս յելավ Վերգինեյի մոտից։

Լավ յերեկո, լա՜վ յերեկո...

8

Գործարանում կյանքը սահում էր սովորականի պես։ Միայն թե, մի յերկու փոքրիկ բաներ պատահեցին։

Սեդրակն այն օրը գործարան պիտի գար. այսպես էր հայտնել նա մի քանի օր առաջ։ Յեվ այդ պատճառով էլ, նրա հետ մի բաժանմունքում աշխատող բանվորներն սպասում էին նրան։ Խոսակցությունը պտտվում էր Սեդրակի շուրջը։ Իսկ հետո, աշխատանքի ժամն սկսվեց։

Տեղկոմը ներս մտավ։

— Նոր լուր իմացե՞լ եք։

— Ի՞նչ լուր։

— Սեղրակին բանտարկել են։

— Ինչո՞ւ...

Ո՞վ գիտե... Քրեական բաժինը տեղեկանք է ուղարկել մեզ, որ նա ձերբակալվում է՝ մի աղջկա զոռով բռնաբարելու և մի ուրիշին խաբելու պատճառով։

— Այ թե ինչ...

Իսկ հետո լռեցին։ Գործի ժամանակ խոսել չի կարելի։ Այսպես էր ասել բանվորների ժողովի արձանագրությունը, և այդ արձանագրությունը «թղթի վրա չէր մնացել»։ Երբեմն, երբ բանվորները մի երկու խոսք էին փոխանակում գործի ժամերին, վարպետ Վասին ինքն էր նկատողություն անում։

— Չի կարելի...

Բանվորները ծիծաղում էին և լռում։

Հըմ...

Այն օրից հետո, երբ Սեղրակին ձերբակալեցին, դեռ երկար օրեր բանվորները խոսում էին նրա մասին։ Եվ անհամբեր սպասում էին նրա դատի կայանալուն։

Ոչ ոք չէր պաշտպանում նրան։

Արտաշը գլուխն էր օրորում։

Վարպետ Վասին ծնծնացնում էր։—

— Տծը... տծը... տծը...

9.

Արտաշի և Վերգինեի ամուսնության լուրն այն առավոտ տարածվեց գործարանում։ Ցերեկոյան, գործարանի ակումբում, նշանակված էր նրանց «կարմիր հարսանիքը»։ Բոլորն ուրախացել էին այդ առթիվ և շնորհավորում էին թե Արտաշին, թե Վերգինեյին։

— Շան ազա, լավ աղջիկ ձեռք գցեցիր։

— Վերգուշը լավ աղջիկ է։ Բնավորությունը, ինքը...

Եվ այսպես շարունակ։

Բայց, հանգստի ժամին, մի հետաքրքիր, չափազանց հետաքրքիր բան պատահեց, որի պատճառով բոլոր բանվորները ծիծաղից թուլացան։

«Տե-Ժե»-ն առանձնանալով, գրել էր մի նամակ, այն իմաստով, որ ինքը սիրում էր Վերգինեյին, առանց նրան չէր կարող ապրել, բայց ամաչել էր նրան հայտնել իր մտադրությունը։ Այժմ, երբ նա չի կարող ապրել առանց իր «Սեգայի», առանց իր «Դեզդեմոնայի» — ինքնասպանություն է գործում։ Ոչ ոքի չմեղադրել, մնաք բարև...

Ապա, մտել էր արտաքնոցը և խմել էր մի սրվակ դուխի։

Բանվորներից մեկը նկատել էր այդ։

«Տե-Ժե»-ին դուրս բերեցին արտաքնոցից, սարսափից չռած աչքերով,

— Օգնությո՜ւն. ես չե՛մ ուզում մեռնել։ Ես ապրե՜լ եմ ուզում։ Օ՜, իմ Սեգա, օ՜, Դեզդեմո՜նա, Օֆելիա՜... Ինձ հիվանդանոց տարեք, շուտ... շուտ...

Բժիշկն իզուր էր համոզում նրան, որ ոչինչ չկա և դուխին վտանգավոր չէ։

Նրան տվեցին փսխեցուցիչ դեղ։

Բոլոր բանվորները հավաքվել էին նրա գլխին և չգիտեյին ինչ անել, Ծիծաղը խեղդում էր բոլորին։ Երբ նա բաց էր անում բերանը՝ «օ՜ Դեզդեմոնա՜, օ, իմ կուռք» բացականչելու համար, — փչում էր դուխու հոտը և այնպես թունդ, որ շատերը քթերն էին բռնում, այդ հոտը չառնելու համար։

— Փյուֆ... «մեշչան», գոնե մազութ խմեյիր։

— Նաֆթ...

— Բենզին...

— Սպիրտ...

Հուզված «Տե-Ժե»-ին տարան տուն և յեկան, հայտ-

նելով, որ նա արդեն «դառել է ինքնիրեն» և կարծես վոչինչ չի պատահել։

Դեռ յերկար ժամանակ բանվորները հիշում եյին այդ դեպքն ու ծիծաղում։

* *
*

Յերբ սանդուխքներով դեպի ակումբն եր բարձրանում Արտաշը, կարմիր հարսանիքի համար, հանկարծ մի բան հիշեց ու ժպտաց։

— Յես ուզում եյի «սիրային արկած» ունենալ։ Անհաջող անցավ առաջին փորձը, և լավ յեղավ, որ անհաջող անցավ։

Իսկ յերբ հասել եր սանդուխքների վերևի ծայրին՝

— Փոխանակ «սիրային արկածի», իրոք վոր սիրահարվեցի։

Մոտեցավ դռանը և բաց արեց.

— Լավ աղջիկ է Վերգինեն։

Ներս մտավ։

Ներսում դղրդաց ծափահարությունը և «կարմիր հարսանիքն» սկսվեց...։

ԱՐԵՎԸ, ՀՈՒՐՀՐԱՆ ԱՐԵՎԸ...

1.

Իմ յերկրի լեռներում առատ է արեգակի լույսը և լեռների լանջին տաք է լինում յուրաքանչյուր ցերեկ։ Այնտեղ դեղնագույն արտերի հատ ու կտոր չերտերն են փռված անկանոն շարքերով, իսկ վերևում, դեպի սարի գագաթը, դեռ չի հասել վոչ մի փայտե գութան։ Այնտեղ, քարքարոտ հողը պղնձագույն է և կարմրին է տալիս հեռվից։ Մի կողմում մի ճեղքվածք, մյուս կողմում՝ անկանոն սարի սապատը. և այդ ամենը պղնձագույն։ Յեվ այդ ամենի վրա իր լույսն ու տապն է հորդում արևը, իմ յերկրի հուրհրան արևը։

Ներքևում, ուր այլևս գառիվայր չկա և հարթ դաշտավայրն է փռվում, ներքևում, ուղիներն են անցնում գալարապտույտ, ուղիներն են անցնում մանեման, իսկ այդ ուղիներով սայլերն են անցնում, կմախքի նման ցցուն կողափայտերով։ Անիվների մագութը վերջացել է և անիվները ճռռում են ինչ վոր հնօրյա յերգ՝ յերկար ճանապարհի և դանդաղ յեզասայլի մասին։ Գլորվող անիվների ձգած ատվերները ծածկում են յեզների վոտնահետքերը և իրենց յետևից թողնում են փոշուն հետք, ճանապարհի դեղին հողի վրա։ Դեղին է ճանապարհի փոշին, դեղին են ոգոստոսյան արտերը, դեղին են յեզները, վոր լծված են այդ հնամյա սայլին։

...Յեվ դեղին է արևը, հուրհրան արևը...

2.

Աթոն արևը շատ էր սիրում․ նույնիսկ այն ժամանակ, յերբ վեգ խաղալ նույնիսկ չգիտեր, նա սիրում էր արևը։ Յերբ իրենց ախոռից միակ կովն ու յերկու յեզները տանում էր դուրս, խառնելու հանդ գնացող նախրի հետ, նա արևին էր նայում ու ժպտում էր։ Ժպտում էր ծագող արևին։

Յերբ վերադառնում էր տուն հաց ուտելու, նա սիրուն արևի մասին էր մտածում։ Քիչ էր պատահում, վոր նա տանը հաց ուտեր։ Վերցնում էր նանի թխած բոքոններից մեկը և կրծելով դուրս էր գնում տանից։

Հասնելով կալերին, Աթոն ներս էր վազում, ընկերներին գտնելու համար։ Յեվ յերբ գտնում էր նրանց, նրանք գնում էյին դեզերից մեկի շվաքում խաղ անելու, կամ գնում էյին կալերից դուրս, ճանապարհի, լայն ճանապարհի վրա վազ տալու համար։ Յեվ ով վոր ամենից առաջ հասներ քարե կամուրջին, նա կը լիներ այդ որվա բոլոր խաղերի առաջնորդը։

Հորիզոնի մի անկյունից դուրս էր գալիս ամպի մի փոքրիկ պատառ։ Հետո նա մեծանում, մեծանում էր, ու իր մի ծայրով ծածկում էր արևը։ Զարմացած Աթոն վեր էր նայում դեպի յերկինք, ու կանչում էր արևին, դասագրքի մեջ սովորած վոտանավորով.

— Արև, արև, յեկ յեկ, գիգի քարին վեր յեկ...

Հաճախ արևը վոչ գալիս էր, վոչ էլ գիգի քարին էր վեր գալիս։ Սկսվում էր անձրևը։ Ծարահատված՝ Աթոն տուն էր վազում, ճանապարհին կրկնելով.

— Թող արա, թաթավ արա, գարի հացը բոլ արա...

Չար տղա չէր Աթոն։ Դրա համար էր, վոր տանը նրան մի քիչ ծեծում էյին, յերբ «խաղի յետև ընկած, տան գործը մոռահան էր անում» նա։

3.

Բայց Աթոն գործը «մոռահան» անող տղա չէր։

Յերբ տասնևհինգ տարեկան դարձավ նա, արդեն իր հոր «աջ կուռն էր», ինչպես ասում էյին գյուղացիները։ Իսկ հայրն ասում էր.

— Ա՛յ բալամ, մենք էլ խո հարուստ չենք, վոր մշակ պահենք։ Մենք մեր ուժով պիտի յոլա գնանք։

Լույսը բացվելիս վեր էր կենում Աթոն ու հագնում էր չորերը։ Յերբ աղբրի ափին կռացած նա լվացվում պրծնում էր, նայում էր յերկնքին.

— Եսոր արև ա լինելու...

Յեթե կողքին մեկը լիներ, այդպես կասեր նա, իսկ յեթե մենակ ինքը լիներ, այդպես կմտածեր։ Հետո կգար տուն ու անից էլ կգնար դաշտ, աշխատելու։

Խավար է գյուղը, բայց լույսը արդեն մտնում է ամենտեղ։ Խավարը յետ է քաշվում ու կծկվում է։ Աթոյի հայրը վորքան էլ անուսում, էլի հո գիտեր ուսումի ոգուտը։ Նա Աթոյին տվել էր սովորելու գյուղի դպրոցում, դրա համար էլ խիղճը հանգիստ էր։ Իսկ Աթոն շատ ուրախ էր, վոր կարդալ գիտե ու բացի դասագրքերից, նույնիսկ թերթ կարդալ կարող է։

4.

— Հո՛, հո՛, մարալ յեզ, հո՛, հո՛, ջեյրան յեզ, հո՛ մարալ, հո՛ ջեյրան...

Փխրուն հողը ճեղքվում էր գութանի յերկաթե խոփից և վեց զույգ յեզներն ավելի առաջ էյին անցնում։ Վեց զույգ յեզ, վեց ընտանիք, վեց հոտաղ։ Մի գութան ու մի մաճկալ։ Լավ են ասում, վոր «դեզ կանգնի, դեբան կկտրի»։ Եսոր Պետոյենց արտն են վարում, եգուց Աթոյենցը, մյուս որը մյուսինը և եդպես յոլա կգնան։

Մեկը հոռովել էր գլում, իսկ հետո վեց հոտաղ միասին, զիլ ձայնով հնչեցնում էյին: —

— Հոռովել հա՛...

Հետո մյուս հոտաղն էր հոռովելի խոսքերն ասում և նորից խումբը ձայնակցում էր: Իսկ յերբ որ լռում եյին բոլորը, Աթոն շարունակում էր յերգել: Այս անգամ արդեն, նա յերգում էր «դասագրքի հոռովելը».—

Ահա ծագեց կարմիր արև,
տաք և պայծառ է օրը,
դե քաշեցեք, սիրուն յեզներ,
առաջ տարեք արորը:

5.

Խավար էր գյուղը, բայց լույսն արդեն մտել է այնտեղ: Առաջին կարմիր դրոշակը պարզվեց մի խրճիթի ծայրին և այդ խրճիթում գյուղխորհրդի գրասենյակը տեղավորվեց:

Յերկրորդ կարմիր դրոշակի տակ դպրոցն էր, իսկ յերրորդի տակ՝ խրճիթ-ընթերցարանը:

Մի քանի կրծքեր զարդարվեցին կարմիր նշաններով, վորոնց վրա քարտուղար Սերգոն մեծ դժվարությամբ կարդաց ռուսերեն КИМ տառերը: Ասենք, եդ մասին բոլորն էլ գիտեյին: Բայց թե վո՛ր տառն էր К-ն, И-ն կամ М-ն, եդ միայն Սերգոն գիտեր: Ո՛չ գիրք ուսում, ռուսերեն լեզու...

Աթոն այդ յերեկո արտից տուն էր վերադառնում, սայլի վրա բարձած հասկի դեզի հետ: Հայրը գալիս էր Աթոյի հետ և մի զույգ դեղին յեզները դանդաղ շարժվում էյին: Աղբյուրի մոտ հանդիպեց Յեղոն:

— Աթո, արի, բան եմ ասում:

Աթոն ճիպոտը տվեց հորն ու մոտեցավ:

— Չե՞ս գալի ժողովի:

— Ի՞նչ ժողով:

— Կոմսոմոլի...

— Հա՜...

— Ըմ...

— Գնանք:

Գյուղում յերկար ժամանակ խոսում էյին կոմսոմոլի մասին: Յերիտասարդներն անհամբեր սպասում էյին բջիջի կազմվելուն: Հարևան գյուղում արդեն «կոմսոմոլ» կար, վորն ուներ տասնչորս անդամ:

— Մենք ինչո՞վ ենք պակաս, մտածում էր յուրաքանչյուր յերիտասարդ, վոր կոշտ ուներ իր ձեռքի վրա և վոտքերին սովորական տրեխ:

Եդ օրը լավ օր էր: Շատ լավ օր էր: Բջիջ կազմակերպվեց, անդամներ ընդունեցին, հետո զեկուցում յեղավ, իսկ մի ամիս հետո արդեն ինչե՜ր չեղան... Դարի հողերից մինչև պուճուր քարափը, վանքի արտից մինչև լեն «շոշը» զրնգում էր կոմսոմոլի անունը: Սիրողներ էլ յեղան, չսիրողներ էլ: Ու, զարմանալի բան: Ով վոր կոմսոմոլին չեր սիրում, նա յոթ-ութ լծկան ուներ տանը և ուրիշ շատ բան ուներ: Նրանց հին լեզվով «համփա» յեն ասում, իսկ նոր լեզվով «կուլակ»:

6.

Իմ յերկրի լեռներում առատ է արեգակի լույսը և լեռների լանջին տապ է լինում յուրաքանչյուր ցերեկ:

Վոսկեգեղին ճանապարհի վոսկեգեղին փոշու միջով քաղաք է գնում Աթոն:

Են յերբ էր, մի տարի առա՞ջ էր թե մի դար առաջ էր, յերբ Աթոն գրվեց կոմսոմոլի մեջ ու շա՜տ քիչ բան գիտեր: Են յե՞րբ էր, յերեք ամիս առա՞ջ էր, թե յերեք տարի առաջ էր, վոր Աթոյին ղրկեցին քաղաք կուսակցական դպրոց, սովորելու: Են յե՞րբ էր, մի շաբաթ առա՞ջ էր, թե մի տարի առաջ էր, վոր Աթոն արձակուրդ առավ ու գնաց իրենց գյուղը:

Իսկ հիմա, յոթնօրյա արձակուրդը լրացել ե, և Աթոն նորից գնում ե քաղաք, կուսակցական դպրոց։

— Վորդիս մի կտոր հացի տեր եղավ, մտածում եր Աթոյի հայրը։

— Մարդամեջ մտավ, ասում եյին գյուղացիք։

— Ես ուսումն ել մի ուրիշ տեսակ արև ե, վոր լուսավորում ե, մրմնջում եր ինքը, Աթոն։

Պայծառ ե արևը իմ յերկրի պղնձագույն լեռների տաք լանջերին, բայց ավելի պայծառ ե արևը կուսակցական դպրոցում։ Դրա մասին Աթոն շատ ե մտածել։ Յերբ առաջին անգամ ներս մտավ դպրոցի դռներից, իրեն մի քիչ նեղված եր զգում։ Յերկու որ հետո ընտելացավ ու տեսավ, վոր բոլոր ընկերներ ել իր պես կոշտ ձեռքեր ունեյին։ Մենակ թե նրանցից մի մասի ձեռքերը մուրճի կոթից եյին կոշտացել, մնացածներինը՝ մանգաղի ու մաճի։ Յեվ Աթոն զգաց, վոր նրանցից յուրաքանչյուրն եդ դպրոցից տանելու յե մի արև, պայծառ ու լուսավոր։

Հեյ գիտի Աթո, մեռած Աթո։ Եգուց մյուս որ, մեկ ել տեսար ավարտեցիր ու հայդե, դեպի գյուղ…։

7.

Չախկ, չուխկ, չախկ, չուխկ… Վո՞ր տարվանից ե մնացել այդ փայտե որորոցը։ Աթոն ել ե նրա մեջ պառկել։ Նանեյին վոր հավատաս, Աթոյի հայրն ել ե այն որորոցում անցկացրել իր որը, ծծկեր ժամանակ։

Չախկ, չուխկ, չախկ, չուխկ։ Իսկ հիմա՞ ով ե անուշ քնել այդ հին որորոցի մեջ։ Ո՞ւմ յերեխան ե դա։ Աթոյինը։ Այ գետինը մտած Աթո, դեռ յերեկ մի մատ յերեխա եյիր, իսկ հիմա դու ինքդ յերեխա ունեցար։

Նանեն որորոցի մոտ նստած, որորում ե Կիմային։ Յերբեմն նրա դեմքի պառավ խորշոմները յետ են գընում ու նա իր թոռան համար յերգում ե մի

հին, հին յերգ։ Չախկ, չուխկ, նորից որորվում ե որորոցը, չխկչխկում են որորոցի փայտից կախված կոճերը և յերեխան քնում ե հանգիստ։

Յերեխի մայրը, կոմսոմոլիստկա Սիրուշը, մի չորի կտոր գլխին կապած, աշխատում ե կաթնարտելում։ Յերբ յերեկոյան դաշտից տուն յեկան կովերը, նա նստեց փոքրիկ աթոռակի վրա ու սկսեց կթել նրանց։ Նրա սպիտակ մատների հպումից դուրս եր ցայտում սպիտակ կաթը դույլի մեջ, այնտեղ սպիտակ պղպջակներ առաջացնելով։

Հանկարծ դանդաղացան Սիրուշի մատների հպումները, նա ուղղվեց աթոռակի վրա, ձեռքը դեմ տվեց ծնոտին ու սկսեց մտածել, դեմքի վրա խաղացնելով հազիվ նշմարելի մի ժպիտ։

Կիմա…

Հոկտեմբերիկ Կիմա։

Պիոներ Կիմա։

Կոմսոմոլիստ Կիմա։

Կոմունիստ Կիմա…

Կովը խլշկոտած նայում եր։ Կողքի մսուրի մոտից լսվեց մի ծիծաղի ձայն ու յերևաց Մանիշակը։

— Ա՛ղջի, կովը խի՞ չես կթում։

Սիրուշը բարձր ծիծաղեց ու շարունակեց իր գործը։

8.

Չախկ, չուխկ, չախկ, չուխկ, քնիր Կիմա։ Քու հայրը, Աթոն աշխատում ե գավառում։ Նա կուսակցական դպրոցն ավարտել ե ու հիմա եդ բոլոր գյուղերում ցրում ե իր բերած արևը, հուրհրան, պայծառ արևը։

Խրճիթների առաստաղների սևացած գերանների տակ ինչքա՜ն մեծ ուժ կա ամբարված… Մրոտ առաստաղների տակ վաղվա կառուցողներն ու ստեղծագործողները դեռ վեգ են խաղում, կամ կրծոտում են բոքոնի կտորները։

Աթոն տուն ե վերադառնում։ Յերեկվա արևը, տա-

ռան արևը այրում էր շրջապատն իր տապով և փռում էր իր առատ լույսը։

Այս ճանապարհով նա շատ է անցել։ Մի ժամանակ ուրիշ կերպ, իսկ հիմա ուրիշ։

Մի ժամանակ նա իր հոգում ուներ մի արև, լուսավոր ու տաք, իսկ հիմա յերկու արև ունի։ Մեկն են, որ վառվում է յերկնքում, մյուսն են արևը, որ Աթոյի նըման շատերը ձեռք բերեցին հետո։ Մեկը մյուսից ավելի լուսավոր, ավելի տաք...

Պայծառ...

Աթոյենց տան դուռը ճռաց, ժպտերես ներս մտավ կուսակցական Աթոն։

Դրսում փայլում էր արևը, հուրհրան արևը...

ԾԱՂԿԱՎՈՐ ՋԻԹԸ

1.

Յեխաշեն պատերի մոխրագույնն ուներ իր հագուստների վրա և ամթարի սրճագույնն ուներ իր փափախի վրա այն տղան, որ դուրս յեկավ մի փոքրիկ դռնից և ուղևորվեց դեպի քաղաք։ Նրա ուսի խուրջինի վրա կարմիր գույն կար։ Դեղին գույն էլ կար խուրջինի ու նշանի վրա։ Իսկ սպիտակ միայն նշանի վրա կար և այդ սպիտակը ԿԻՄ տառերն էյին։ Բացի խուրջինից ու նշանից, ամեն ինչ գորշ էր տղայի վրա։ Փոշեկալած մազերի գանգուրը կախվել էր նրա ճակատին և այդ ճակատից ներքև տղայի թուխ դեմքն էր։ Այդ թուխ դեմքի վրա կար մի դժվարահասկանալի արտահայտություն։ Լայն ճակատի վրա հույս գրված լիներ կարծես, շրթունքների ծայրերին ժպիտ և աչքերի մեջ կամք։ Իսկ խուրջինի մեջ կար մի ամանյակ, որ նշանակում էր թե «չիթ է հարկավոր», մի գլուխ պանիր, որի իմաստն էր՝ «նավթ չունենք» և յերկու պուտուկ մածուն այսինքն՝ «աղ, լուցկի, մի քիչ էլ յերեխանց համար միրգ»։

Դաշտի ծաղիկների գունագեղությունը չուներ և դաշտի ծաղիկների գեղեցկությունը չուներ այն տղան, որ քաղաք էր գնում փոշոտ ճանապարհով...

2.

Այդ տղան Արշակն էր։ Վոչինչ չեր փոխվի, յեթե նրա անունը չտայի և վոչինչ չփոխվեց, յերբ տվեցի նրա անունը։

Յերբ ծախեց խուրջինի մեջ յուղածը և փողը գրպանը դրեց, նա գնաց բազարի ծայրի կոոպերատիվը, պետք յեղած իրերը գնելու։ Յերկար տնտղեց նա աղի ու լուցկու տեսակները, մրգի լամփն ու վառը, գները հարցրեց, նորից տնտղեց ու նորից հարցրեց և վերջապես առավ։ Իսկ հետո անցավ խանութի մյուս կողմը, որտեղ ծախում եյին շորեղենը։

Շատ յերկար ու շատ ուշադրությամբ է տնտղում իր գնելիքը գյուղացին։ Արշակն ել ուշադրությամբ եր տնտղում։ Բայց յերբ գործը չթի գնելուն հասավ, նրա աչքերն ավելի լարվեցին, նա մատներով շոշափեց կտորը, թքոտեց մի քիչ ու տրորեց իր ձեռքի մեջ և այդ բոլորից հետո նայեց չթի գույնին։ Դյուր չեկավ։ Ուրիշ տեսակն ուզեց։ Գործակատարն ամենայն համբերությամբ բերեց ուրիշ տեսակը։ Արշակը յերրորդ տեսակն ել ուզեց և գործակատարը յերրորդ տեսակն ել բերեց։

— Ի՞նչ արժի, հարցրեց Արշակը այս անգամ։ Դա նշանակում եր, որ չիթը իր սրտովն է։

Գործակատարը գինն ասեց։

— Հ՛մ...

Բազար անել չի կարելի, կոոպերատիվ է սա և գները վերջնական են։ Արշակն այդ մասին վաղուց եր կարդացել, նույն խանութի պատին կպցրած պլակատի վրա։

— Կտրի մի... վեց—յոթ արշ... մետր։

— Վեց թե յոթ...

— Յոթ մետր։

Իսկ յերբ մկրատը ճռաց ու չթից պոկեց Արշակի բաժինը, Արշակը ժպտաց։

Հ՞ը, ի՞նչ կա, տատանձ Արշակ։ Եդ ո՞ւմ համար ես տանում եդ սիրուն չիթը։ Զինի՞ն թե...

Փողը վճարեց Արշակը և յեկավ գործակատարի մոտ, չիթն ստանալու։ Մի անգամ ել նայեց և մի անգամ ել հավանեց։

Չիթը ստանալուց հետո մի բան միտքն ընկավ ու հարցրեց.

— Ես վո՞ր յերկրի չիթն է, ընկեր...

— Տեղական...

Վո՜նց թե տեղական... Չհավատաց Արշակը։ Յեթե գյուղում մեկն եդպես բան ասեր, Արշակը կբամփեր նրա գլխին։

Նորից հարցրեց։

— Ընկեր ջան, ներողություն, որ զբաղված ես, ամա շատ ա հետաքրքիր, վո՞նց թե տեղական չիթ։

— Քաղաքում գործարան է բացվել, եդ գործարանում են չիթը պատրաստում,—բացատրեց գործակատարը։

Յեվ որովհետև նա զբաղված եր, դրա համար ել Արշակն ուրիշ ոչինչ չհարցրեց և դուրս յեկավ կոոպերատիվից։

3.

— Դրա՞ համար եր չիթը եժան։ Հենց յես ել ասում եյի՝ վա՛յ թե լավ տեսակից չի,—մտածում եր Արշակը, ճանապարհին, գյուղ վերադառնալիս։ Կեսօրվա արևը սաստիկ շոգ եր անում։ Ելի լավ եր, որ ամպի փոքրիկ պատառները մերթ-մերթ ծածկում եյին արևն ու մի քիչ հով անում։

Դաշտում ծաղիկները, գունագեղ, գեղեցիկ ծաղիկները ժպտում եյին այս ու այն կողմից, և Արշակին թվում եր, թե ամբողջ դաշտը մի չիթ է, մի ծաղկանկար չիթ, եժան ու դիմացկուն։

— Սպասի մի հալա... Մտածում եր Արշակը։ Կոոպերատիվում նա ուրիշ շատ տեսակ չիթ եր տեսել և հիմա մտքումը դրել եր, որ մյուս անգամ քաղաք գնալիս, դրանցից ել առնի։

Յերևի դրանք ել «տեղական» են։

Յեվ նա սկսեց «տեղականի» մասին մտածել։ Վո՜նց... Հա՛յ շեն մնա իշխանությունը. չթի ֆաբրիկ ել բացեց, դե՛...

Յերբ հասավ գյուղին, Արշակը կանգնեց, բաց արեց խուրջինի մի քունջը, քիթը ներս խոթելով նայեց չթին և նորից համոզվելով, վոր վատ ընտրություն չի կատարել, վստահ մտավ գյուղ։

* * *

Այդ օրը, խրճիթի սենյակներից մեկում հավաքված մարդկանց Արշակը պատմում եր տեղական չթի մասին իր լսածը։

4.

Հետագայում «չթի ֆաբրիկի» մասին շատ բան իմացան գյուղում։

Արշակը ամենից շատ հետաքրքրվողներից եր։ Յերբ իմացավ, լրագրի մեջ եդ մասին կա գրած, վազ տվեց խրճիթ-ընթերցարան, կարդալու համար։

Յեվ եդպես անցան օրեր, քաղաքից շատ չիթ չեկավ գյուղը, շատ աղ ու լուցկի չեկավ. բայց եկի ցեխաշեն եյին պատերը և եկի աթարը սրճագույն եր. կիրակի օրերը, յերբ գյուղում դաշտային աշխատանք չեր լինում, ջահելները դուրս եյին գալիս դաշտ, «ման գալու» և «պար բռնելու» համար։ Աղջիկներից մեկը, վորի անունը Նարգիզ եր, հագին ուներ Արշակի բերած չիթը։ Արշակի ինչն եր եդ աղջիկը։

Ամեն առավոտ, յերբ տղամարդիկ եյին դուրս գալիս Արշակենց տանից, վորոնք Արշակի յեղբայրներն եյին. մի ծերուկ եր դուրս գալիս, վոր Արշակի հայրն եր և դուրս եյին գալիս յերկու կին, — Արշակի ամուսնացած յեղբայրների կանայք։ Նրանք գնում եյին դաշտ, աշխատանքի։ Յերեխաները դուրս եյին գալիս տանից և նրանցից ամեն մեկը մի կողմ եր գնում։ Տանը մնում եր պառավ Նանիս։

Իսկ Նարգիզը չկար։ Արշակենց տանեցիներից չեր նա։ Բա՞ ով եր... Եդ մասին միայն յերկուսը գիտեյին. — Արշակն ու Նարգիզը։ Մի տարի առաջ, պարի ժամանակ Արշակը

[illegible] եր նրա թևն ու աչքով եր արել։ Հիմի ել «ուզել» ե նրան և ամուսնանալու յեն շուտով...

Հետագայում, «չթի ֆաբրիկի» մասին շատ բան իմացան գյուղում։

Մի օր բջիջի քարտուղարը հանդիպեց Արշակին ու կանչեց իր մոտ։

— Արշա՛կ։

— Ի՞նչ։

— Դու ինչ աշխատանք ես անում. յերեք յեղբայրներդ առանց քեզ արտն ու անասուններին յոլա տանել չե՞ն կարող։

— Յոլա յեն տանում։ Յես յեղած—չեղած՝ մեկ ե։ Յանի ինչ արտ ու նախիր ունենք, վոր յոլա տանել չլինի։ Ենա՝ յես ուզում եմ բատրակ գրվեմ, մի տեղ վարձով աշխատեմ։

— Չե՛, եդ հլա թող։ Դու վոր բացակայես, ձեր տունը, տնտեսությունը խո չի՞ տուժի։

— Յես ասի, չե՛։ Բատրակ եմ գրվելու...

— Քարտուղարը տեսնես ինչ ե ասելու։ Շա՜տ հեռվից ե բռնացրել, մտածում եր Արշակը։

Հենց եդ ժամանակ, քարտուղարն ասեց։

— Գիտե՞ս ինչ։ Մեր բջիջից մեկին ղրկելու յենք քաղաք, «կուրսերը»։ Մի յերկու ամսից հետո պիտի ավարտի ու «չթի գործարանի» բանվոր դառնա։ Ուզում ե՞ս գնալ...

Յեթե ճամբի կողքով մարդիկ չանցնեյին ու դիմացի կտուրի վրա աղջիկները կանգնած չլինեյին, Արշակն ուրախությունից պար կգար։

— Դե շուտ պատրաստվի, վոր եգուց գնաս, ասավ քարտուղարը։

Արշակը վո՞նց հասավ տուն, ինքն ել չիմացավ։

5.

Չորս ամիս հետո, Արշակը կանգնած տեկստիլ գործարանի դազգահներից մեկի առաջ, չիթ եր գործում։

Գործում էր ու մտածում։ Ինչքա՜ն չիթ կա… Սրա կիսի կեսը որ բաժանեյին իրենց գյուղին, ամեն մի մարդուն կհասներ հազար մետր։ Յերկու հազար էլ կհասներ։ Եդքան չիթ, որ տեսնեն գյուղում, կգժվեն։ Տեսակ—տեսակ, գույնզգույն…

Արշակը չխկչխկացնում էր մաքուքն ու հիշում։

Հրեն, իրենց գյուղը։ Հիմի տեսնենք Նարգիզն ինչ է անում։ Յերևի փոցխ անելիս կլի։ Բա իր յերեք յեղբայրները, փոքրիկ Ոսե՞փը…

Հետո հիշեց իր քաղաք գալը։ Սկզբում սիրտը տխրեց, բայց վերջը սովորեց։ Հանրակացարանում բոլորն էլ իր պես տղերք էյին։ Բոլորի հետ դոստացավ ու ընկերացավ։ Վարպետը խոսք էր տվել, որ մի ամսից հետո արձակուրդ պիտի տա Արշակին։ Արշակն էլ գործում էր չիթն ու սպասում։ Սեպտեմբեր ամսից հետո նա բանֆակ կգնա և ուսումը կշարունակի։

Արշակը գործում էր ու մտածում։

6.

Նամակ։

«Հասնի գյուղն Ս……լու, ձեռն Պետրոս Դամաղյանցի։

Սիրելի յեղբայր Պետրոս!

Սաքուլենց տղեն խաբարը բերեց. իմացա, որ վողջ—առողջ եք։ Սաքուլենց տղեն ասաց, որ մի քիչ փող ա պետք. փողն ուղարկում եմ։

Յեթե ինձանից կհարցնեք, յես վողջ և առողջ եմ ու բանվոր եմ։ Որեկան ենքան չիթ ու կտավ ենք գործում, որ մեր տանը հերիք կանի հինգ-վեց տարի։ Անցած որը գործարանի մի ուրիշ մասն էլ գործի դրեցին։ Ես յերկու որս նոր մաշինաներ են բերելու։

Յես էստեղ լավ եմ… սովորեմ պիտի բանֆակում, ու ավարտեմ պիտի։ Բջիջ էստեղ էլ կա։

Նամակիս հետ ուղարկում եմ ուզածդ փողը, նմանապես չիթ ու կտավ, որ ռոճիկիս հաշվին առա։ Նմանապես են նախշուն չթից էլ եմ ուղարկում, որ Նարգիզին տաք, իրեն շոր կարի։

Այլ վոչինչ չունեմ գրելու։ Մի ամիս յետո յես կգամ։ Բարև բոլոր տանեցոց, նմանապես Նարգիզին։

Մնամ ձեր Արշակ Դամաղյանց»։

Յերբ Սաքուլենց տղեն նամակն ու կապոցները տվեց Արշակի յեղբորը, նա ժպտաց։

Բաց արեց կապոցն ու տանեցոց կանչեց։ Բոլորը հավաքվեցին իր գլխին ու սկսեցին նայել զարմանքով և ուրախությամբ։

Են չիթը, որ Նարգիզի համար էր ուղարկել, շատ սիրուն էր։ Ծայրին մի թուղթ էր կպցրել Արշակը, որի վրա քիմիական մատիտով գրել էր։

«Նարգիզ ջան, էս ծաղկավոր չիթը իմ գործածն ա»։

ԳՅՈՒՂԱՇԽԱՏԱՎՈՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(...Յերբ յես գնացի գյուղ աշխատելու, այնտեղ կար մի ուրիշը, որն աշխատում էր արդեն։ Յես փոխարինեցի նրան։

Նա մի հիշատակարան էր պահում, որը թողեց ինձ, կարդալու համար։

Յես կարդացի այդ հիշատակարանը և այժմ տալիս եմ տպագրության։ Գուցե ուրիշ հետաքրքրվողներ էլ լինեն, որոնք կարդան այս հիշատակարանը)։

....

Յես այս հիշատակարանը գրում եմ գյուղում, իմ աշխատանքի ընթացքում, իբրև խրճիթ-ընթերցարանավար։ Հետաքրքիր տպավորություններ կան, որոնք ուզում եմ գրի առնել, հետո, մի ուրիշ անգամ կարդալու համար։

27 ապրիլի

... Իրիկվա մայր մտնող արևի կարմրագույն շողերի տակ, դաշտից տուն դարձավ գյուղի նախիրը։ Կամաց-կամաց նվաղեցին բառաչոցները և գյուղը լռեց։ Օրվա աշխատանքից հոգնած գյուղը հանգիստ առավ, և արևը թեքվեց սարից այն կողմ։ Աստղերը դուրս յեկան, բոլորովին յերեկոյացավ։

Ամպերն յերկնքի զանազան անկյուններից սկսեցին հավաքվել և ծածկել յերկինքը։ Լուսնի և աստղերի այն լույսը, որ կար, չքացավ։ Այժմ մութը խորն է անհունորեն ու սև։

Իմ փոքրիկ սենյակում նստած, յես մտածում եմ իմ

վաղվա աշխատանքների մասին, և այն մասին՝ թե ինչպե՞ս պետք է վարել այդ աշխատանքները։

— Ի՞նչը կապեց ինձ այս գյուղի հետ,— մտածում եմ յես ինքս ինձ, աշխատելով պատասխան գտնել,— արդյոք գավկոմի «գրություն համար այսինչը», քաղլուսվարի վկայականը, որ «տրվում է առ այն, որ...», թե՞ մի ուրիշ բան։

Գյուղի ճանապարհի վրա յես շատ անգամ սայլվորներ եմ տեսել, որոնք քաղաք են գնում, որևէ բան ծախելու կամ գնելու համար։ Քաղաքից վերադառնալիս, նրանց աչքերում ժպիտ կա և դեմքերին՝ ուրախություն. իսկ անցյալ տարի, նախանցյալ տարի, քաղաքից վերադարձողի ճակատի վրա խորշոմներ կային, իսկ աչքերի մեջ տանջանք էր կարդացվում, Ասել է՝ կամ էժան են ծախել իրենց ունեցածը, շատ էժան, կամ թե գնած ապրանքի գները շա՜տ թանգ են յեղել։

Յերբ յես գյուղ յեկա, իմ դեմքի վրա գուցե տարտամ և անորոշ մի արտահայտություն լիներ, որովհետև տարտամություն և անորոշություն կար իմ սրտում։ Իսկ այսօր, աչքերիս մեջ դժվար թե նույն տրամադրությունը նստած լինի։

Ի՞նչ պատճառով։

Արդյոք ա՞յն, որ իմ աշխատանքների մեջ յես փընտռեցի և գտա մեծ գործին ծառայելու խոշոր հնարավորություններ, մի լավ բան անողի յեռանդով յես լծվեցի «աշխարհը փոխելուն»։

Գուցե և ա՞յն, որ յուրաքանչյուր հաջողություն իմ սիրտը լցնում էր բերկրանքով և իմ էությունը՝ կամքով։

Յե՛վ մեկը, և՛ մյուսը...

28 ապրիլի

Բանալին ձեռքումս խաղացնելով մոտենում եմ խրճիթի դռանը և բաց եմ անում կողպեքը։ Դռան մոտ ար-

դեն հավաքվել են գյուղացիները։ Ինձ հուզում է յերկու բան։ Մեկ այն, որ գյուղացիներն սկսել են ժամանակից շուտ հավաքվել խրճիթի դռան մոտ և մեկ էլ այն, որ յես ճիշտ ժամանակին եմ բաց անում դուռը և չեմ ուշացել։

Դուռը բացում եմ, մտնում ենք ներս և յես վառում եմ խրճիթի յերեք լամպերը։

Ամեն մեկը գյուղացիներից, վերցնում է մի թերթ և սկսում է կարդալ. մյուսները գիրք են ուզում և յես գիրք եմ տալիս նրանց։ Սկսվում է իմ օրվա ամենահետաքրքիր մասը։

Յերբ բարձրաձայն ընթերցանություն տեղի չի ունենում և յես լուռ նստում եմ խրճիթի մի անկյունում, հետաքրքրությամբ սկսում եմ նայել գյուղացիների դեմքերին։

Ահա Արութին ապերը, որը «Մաճկալի» յերրորդ յերեսն է կարդում ու ժպտում. յես հիշում եմ, որ այդ յերեսում տպված է կարտոֆիլի մշակության մասին մի նոր հոդված։ Յերիտասարդ Թևոսը «Ավանգարդն» է կարդում, և նրա դեմքի վրա յերևում է լարված հետաքրքրություն. «հեռագրեր է կարդում»,— անցնում է մտքովս։

Յեվ այսպես շարունակ։

Մտքերս ընդհատվում են։ Ինձ մոտենում է գյուղի միակ կոմյերիտականը։ Բարևում է ինձ և ասում է՝ արդեն սովորական դարձած իր խոսքը.

— Բա խի՞ բջիջ չունենք... հրահանգիչը յե՞րբ պտի գա։

Յերկուսս էլ գիտենք, որ շուտով պիտի գա հրահանգիչը, բայց շտապում ենք յերկուսս էլ։

Լռում է գյուղի միակ կոմյերիտականը։ Յես և նա սպասում ենք հրահանգչին։

Քնելիս, յերբ պառկում եմ անկողնում, կիսաքուն դրության մեջ դեռ հնչում է ականջիս այդ իրավացի պահանջը.

— Բա խի՞ բջիջ չունենք...

Յեվ փակում եմ աչքերս, վաղն ավելի յեռանդով արթնանալու համար։ Ու քնելիս, ինձ այնպես է թվում՝ թե գիշերվա մթության միջից մոտենում են գյուղին վառ ու պայծառ լույսեր...

29 ապրիլի

Խրճիթը բացվում է յերեկոյան ժամի յոթին և ժամի տասին փակվում է։ Ամբողջ գյուղը դաշտային աշխատանքի յե գնում, դրա համար էլ խրճիթը ցերեկով բաց չի լինում։ Ուրիշ բան է ձմեռը։ Իսկ հիմա դեռ գարուն է և դաշտերում դեռ չի վերջացել ցանքսը։

Ամեն օրվա պես այսօր էլ վեր կացա վաղ առավոտյան և գնացի զբոսնելու։ Գյուղից վերև, ձգվում է խճուղին, իսկ մի քիչ հեռվում՝ յերկաթուղին։

Ճանապարհով, դեպի արտերն են գնում գյուղացիները։ Նրանք սայլերի վրա զանազան գործիքներ են լցրել, իսկ սայլի կողքով գնում են ոտամարդիկ։ Կանայք ու աղջիկները նույնպես գնում են՝ ծլած արտը մաքրելու խոշոր քարերից, վորոնք խանգարում են սերմերի ծլելուն։

Մոտենում եմ արտերից մեկին։

— Բարև, Գևո։

— Այ բարև՜ քեզ, բարև՜։ Էլի ման գալու յես յեկել։ Արի մի քիչ զրից անենք, մինչև գութանը լծի։ Են անտեր արտը ես տարի խամ եմ թողալու։

— Խա՞մ։ Ինչու՞ համար։

— Չես գիտու՞մ։

— Գիտեմ, բայց քեզ եմ հարցնում, տեսնեմ գիտե՞ս։

— Այ տնաշենի տղա։ Մազերս ես ռանչպարության մեջ եմ սպիտակացրել։ Վոնց չգիտեմ։

Ու սկսում է բացատրել։

Յես նրա խոսքերի մեջ տեսնում եմ «Մաճկալ»-ի մի

քանի խրատները, բացատրությունները։ Ասել է, ամեն ինչ լավ է գնում և թերթն՝ անում է իր անելիքը։

— Գևո, մաճը չբռնե՞մ։

— Դու գնա գազեթի մաճը բռնի, ես չեմ կարող,— կատակում է Գևոն։

— Դե սուր, լավ։

— Բռնի, ամա բաց չթողաս ու չծռես։ Դուզ քշի։

Մի քանի րոպեից հետո մաճը տալիս եմ իրեն։

— Կսովորես, վոչինչ,— ասում է նա։

Եդ նշանակում է, վոր մաճ բռնելու մեջ թերություններ շատ կան,— մտածում եմ յես ու ժպտում։

— Դու մի արի քաղաք, յես մեր սառնոկլի մոտ քեզ կանգնեցնեմ,— սպառնում եմ յես,— հեշտ է՞, կարծում ես։

— Խի՞ ա հեշտ։ Ամեն գործ իր դժվարությունն ունի։

Յես վերադառնում եմ գյուղ, ճանապարհին մտածելով իմ լավ սառնոկլի մասին, վորի վրա յես քիչ չեմ աշխատել։

30 ապրիլի

Այսօր արդեն մութն եր, յերբ խրճիթ մտավ գյուղի ծերունիներից մեկը։ Յես վեր կացա տեղիցս և մոտեցա նրան։

— Բարև քեզ, պապի, բարև քեզ...

— Այ աստծու բարին, վորդի։

Նստեց։ Նայում է պատի նկարներին։ Սեղանի վրայի թղթերն է շուռ ու մուռ տալիս։ Դիտում է խրճիթում գտնվող մարդկանց։

Դու բարով յեկար այս խրճիթը, ծերունի՛։ Դու մեր չես թեև, ու չես էլ կարող լինել, բայց լավ արիր, վոր յեկար։ Յես քեզ կպատմեմ ամպի ու կայծակի մասին, կխոսեմ արտերի և տուրքի մասին, և յեթե ասածներից գոնե չնչին մասը հասկացար և ընդունեցիր, նշանակում է սոցիալիզմը հինգ րոպեյով ավելի շուտ կգա։ Նշանա-

կում է սոցիալիզմից բաժանող ժամանակը կրճատվեց հինգ րոպեյով ևս։ Հպարտանանք դրա համար յես ու դու ծերունի։

Վաղը մայիսի մեկն է։ Խրճիթը փակելուց հետո չգնացի տուն. բարձրացա գյուղից վերև և նստեցի շոսեյի ու յերկաթուղագծի միջև, մի քարի վրա։

Նստած տեղիցս մի քիչ ներքև, փոքրիկ գյուղն է, վոր մթության մեջ է։

Միայն գյուղխորհրդի գրասենյակի լուսամուտներից մի փոքրիկ լույս է յերևում։ Ենտեղ, յերևի Սաքոն է նստած և տուրքի թղթերն է կարգի գցում։

Վաղը մայիսի մեկն է։ Մոտակա գյուղերից կհավաքվեն գյուղացիները, կգա քաղաքից մի մարդ կամ կգան յերկուսը և միտինգ կլինի։ Յես ուրախ եմ, վորովհետև այն մեծ քաղաքում, և բոլոր քաղաքներում, յուրաքանչյուր բանվոր գիտե, վոր այս գյուղում հարյուր հոգի հավաքված նույն տոնն ենք տոնում, ինչ վոր իրենք։ Իսկ ինչքա՜ն գյուղեր կան և ինչքա՜ն հավաքված հարյուրներ...

Գիշերվա խորը լռության ու մթության մեջ վոչինչ ու վոչ վոք չկա կարծես թե։ Միայն այն եմ զգում, վոր յես նստած եմ, և մեկ էլ զգում եմ իմ տակի քարը։

Ժամանակն անցնում է։

Հանկարծ հեռվից, շա՜տ հեռվից, լսվեց գնացքի սուլոցը։ Վեր կացա տեղիցս։ Չի կարող պատահել, վոր դա նա լինի,— գնացքը։ Առավոտյան վաղ է նա անց կենում և ամեն օր յես տեսնում եմ նրան։ Իսկ հիմա գիշեր է և հազիվ ժամի տասնյերկուսը։

Ընդհատում եմ լսելս։ Ուրիշ ձայներ են հասնում ականջիս։ Խորը գիշերվա լռության միջից, մեղմ քամու հոսանքի հետ լսվում են որկեստրի նվագի հատուկտոր հնչյուններ։ Կարծես թե ինչ վոր տեղում, մոտիկ տեղում նվագում են։

Հեռվից յերևացին շոգեմեքենայի յերկու կրակե աչ-

քերը։ Ռելսերի վրայից սահող անիվների աղմուկը դարձավ պարզ ու վորոշակի։ Շոգեմեքենան նորից սուլեց։ Նշանակում է գնացքն արդեն հասավ ությերորդ հեռագրասյունին։ Հիմա հստակ գիտեմ, վոր վագոններից մեկի ներսից է գալիս նվագի ձայնը։

Ցեվ հանկարծ, անակնկալ կերպով հիշեցի, վոր դա մայիս մեկի առթիվ մարդկանց տեղափոխող գնացքն է։

Այսպես եր նաև անցյալ տարի, յերբ դեռևս գյուղ չեյի յեկել յես։

Տոնական գնացքը…

Գնացքը մոտենում է արագ։ Ահա շոգեմեքենան, ահա առաջին վագոնը, յերկրորդը, յերրորդը… Շրխկալով անցան նրանք և նոր եմ հաշիվ տալիս ինձ այն մասին, ինչ վոր տեսա…

Վագոններից մեկում նվագում եր որկեստրը։ Մյուս վագոններում մարդիկ խռնված խոսում եյին, ծիծաղում, և մտածում այն մասին, վոր առավոտյան շատ հեռու չեն լինելու իրենք…

Վեր կացա ու ճանապարհվեցի։

Գյուղ, գալիս եմ դեպի քեզ։ Դեպի քո խրճիթները, դեպի քո խավարը, դեպի լռությունդ։ Քեզ մոտ ել վաղը մայիսի մեկը կունենանք։ Կանցնեն շատ որեր, հետզհետե կխոսի լռությունը և խավարը կլուսավորվի։ Լույս ու կրակ կլինի ձեր խավար ու լուռ խրճիթներում, կգա այդ որը, մի որ ել ձեր փողոցում տոնախմբություն կլինի…

5 մայիսի

Այսոր յես մտածում եյի այն առաջին որվա մասին, յերբ գյուղ յեկա։ Դեռ ամեն ինչ անծանոթ եր ինձ այս գյուղում։ Գնացի սենյակս տեսնելու, և ապա գնացի խրճիթ ու դուռը բաց արի։

Մինչև ուշ գիշեր մենակ նստեցի և վոչոք չեկավ։

Մինչև ուշ գիշեր յես սպասեցի գոնե մեկին, բայց

չճռաց խրճիթի դուռը և վոչոք չմտավ ներս։ Դանդաղ անցնում եյին ժամերը։ Ինձ թվում եր, թե յես մենակության դատապարտված մի հանցավոր եմ և ուրիշ վոչինչ։

Իսկ մի ձայն ձայնում եր իմ ներսից.

—Սպասիր դեռ…

Այդ առաջին որվա արևը մայր եր մտնում և վերջալույս եր արդեն, յերբ խրճիթի դուռը կիսաբաց յեղավ, գյուղի տիրացուն խլշկոտալով ներս նայեց ու հեռացավ։

Նա յեղավ խրճիթի առաջին որվա առաջին այցելուն։

Յես այսոր մտածում եյի այդ առաջին որվա մասին և այն մասին. վոր քիչ մնաց հուսահատվեյի գործի անհաջողությունից։

…Բայց իզուր չեր ձայնում այն ձայնն իմ ներսից.

—Սպասիր դեռ և աշխատիր…

8 մայիսի

Այսոր քաղաքից յեկավ հրահանգիչը։ Վերջապես մենք ել բջիջ կունենանք։

Ու չնայելով նրան, վոր դաշտային և այլ աշխատանքների պատճառով գյուղում համարյա վոչոք չեր մնացել, բայց դարձյալ հնարավոր յեղավ կանչել յերիտասարդներին, և նրանցից շատերն յեկան։

Նրանք ուզում եյին «կոմսոմոլ գրվել»։

Յեկել եր նաև գյուղի միակ կոմյերիտականը։

Ընտանեկան կամ ընկերական զրույց եր այն, և վոչ թե պաշտոնական ժողով, վոր տեղի ունեցավ։

Իսկ հետո, գնաց հրահանգիչը, գյուղում թողնելով փոքր, բայց մեծանալ խոստացող մի բջիջ…

* * *

Անձրևում եր այս գիշեր։

Խուլ, վորպես ջրաղացաքարերի դղրդոցը, վորո-

տում էին ամպերը և կայծակն էր լուսավորում խավար գյուղը մի վայրկյան:

Քունս չէր տանում:

Ես նստած էի փոքրիկ գրասեղանի մոտ և մտածում էի, չգիտեմ ինչի մասին:

Անձրևը վար էր շրփում, և ինձ թվում էր, որ նրա շիթերի տակ գյուղի հողե տանիքները կսկսեն հալվել և ցեխի նման վար սողալ, բաց անելով կմախքի նման ցցուն առաստաղի գերանները...

Անձրևը գալիս էր արագ և հետզհետե փոխվեց կարկուտի:

Ես մտածում էի գյուղացիների մասին, որ հիմա իրենց մութ օդաներում պառկած են և խաչակնքում են սարսափահար, այս կարկուտի առթիվ:

Յերեկ, գյուղի մոտակա արտերում յես առաջին խոտհարը տեսա, որ խոտ էր հնձում: Սկսեցի մտածել խոտհարի մասին, արտերի մասին, և կարկտահար տեսքի մասին, որ ստանում են նրանք հիմա...

Մինչդեռ յես քնում էի, կտուրի վրա դեռ լսվում էին մանր սառցահատիկների թրխկոցները յեկել:

20 մայիսի

Քաղաքից մի գյուղատնտես էր յեկել:

Նրան ուղարկել էին հիվանդ անասուններին սրսկելու և յեկող տարվա համար գյուղատնտեսական փորձադաշտ հիմնելու գործերով:

Ես ծանոթացա նրա հետ և մենք յերկար խոսեցինք:

(Այստեղ, հիշատակարանից պակասում են բավական քանակությամբ թերթեր: Գուցե տան անդամներից մեկն է ընկել և մնացել է այդպես, կամ գուցե, որն ավելի հավանական է, Սոնա տատին, թոնիրը վառելու համար է գործածել այդ թղթերը, իբրև «կպչան»):

17 հունվարի

Յերկու շաբաթ է, որ ոչինչ չեմ գրել հիշատակարանիս մեջ, իսկ ժամանակն անցնում էր իր սովորության համեմատ:

... Ինչքան բան կարելի յե անել հենց այս փոքրիկ գյուղում:

Ինձ կլանել է աշխատանքների հեղեղը և յես ուրախ եմ, որ այդպես է:

Հիմա խրճիթ ընթերցարանն ունի մի շարք խմբակներ, որոնք պարապմունքներ են ունենում՝ բավականին կանոնավոր կերպով:

Յերբեմն նաև ներկայացումներ ենք տալիս:

Թեև յես սիրում եմ յերբեմն, յերբ խրճիթի փոքրիկ բեմի վրա կոմյերիտականներն անհաջող կերպով են ներկայացնում որևէ պիես, բայց հանկարծ ուրախության մի անտեսանելի հորձանք խփվում է յերեսիս:

— Սա դեռ սկիզբն է, սպասիր...

Գյուղն այժմ ունի կոոպերատիվ խանութ, իսկ դպրոցի կիսախարխուլ շենքը նորոգված է: Ինչքան դժվարությամբ գլուխ յեկավ այդ բոլորը...

Բջիջն աճում է: Յես մենակ չեմ այլևս:

Զգում եմ, թե ինչպես մի նոր ուժ է յեռնում իմ յերկրի այդ փոքրիկ գյուղերում...

Հիմա, յերբ բաց եմ անում խրճիթի դուռը և դրսում սպասողները հորձանքով լցվում են ներս, այլևս լռության թևերը չեն փռվում խրճիթի վրա և յես մենակ չեմ զգում ինձ այլևս:

Խրճիթը դժժում է, իսկ յես սիրում եմ այդ:

Առաջ խրճիթը յերկու սենյակ ուներ: Դահլիճ և ընթերցարան. Իսկ նույն շենքում մի յերրորդ սենյակ էլ կար, որի լուսամուտի փեղկերը յերկու տարուց ավելի յեր որ չէին բացվել, և ներսում, մթության մեջ, իրար

վրա էին լցված տախտակի զանազան կտորներ, ջարդված փայտե կահկարասիներ, վորոնք մնացել եյին նախկին դպրոցի նորոգումից հետո։

Յես մաքրել տվեցի այդ սենյակը և ապակիներ գցել տվեցի ջարդված լուսամուտներին։ Կահավորված ու լուսավոր մի սենյակ դարձավ նա և յեղավ խրճիթ-ընթերցարանի զրուցարանը, կամ ինչպես գյուղացիներն են ասում, -- «թազա ոդան»։

Այդ թազա ոդայում ամեն մի գյուղացի կարող եր գալ նստել, խոսել ուրիշների հետ, ծխել իր չիբուխը կամ թութունը, - ինչքան վոր իր սիրտը ուզենար։

26 հունվարի

Ամիսներ առաջ քաղաքից գրություն ստացա, վորտեղ գրված եր, թե գյուղերի համար կինոնկարներ են ցուցադրվելու այսուհետև։

Ամիսներ անցան, իսկ կինոնկարը չերևաց մեր գյուղում։

Այսոր կեսօրին, կինոմեքենան գյուղ հասավ, աշխատակիցների հետ։ Պատրաստում ենք եկրանը և ուրիշ հարմարություններ։

Վաղը նկարը կցուցադրվի, իսկ հետո մեքենան կանցնի մյուս գյուղերը։

27 հունվարի

Այսորվա յերեկոն յես չեմ կարող մոռանալ...

Դեռ ցերեկ եր, իսկ գյուղացիները խռնվել եյին խրճիթի սենյակներում և սենյակներից դուրս։ Նայում եյին նրանք, թե ինչպե՞ս ենք սավանն ամրացնում փայտերի վրա կամ ու՞ր ենք տեղավորում մեքենան։

Մեքենայի հետ յեկած ընկերներից մեկը գյուղացիներին հավաքեց իր գլխին և սկսեց բացատրել ու ցույց տալ մեքենայի զանազան մասերը։

Մութն ընկավ։

Գյուղացիներից մեկը, մեզ ոգնած լինելու համար, լուցկի վերցրեց և սկսեց վառել դահլիճի նավթի լամպաները։ Այդ րոպեյին հանկարծ ամբողջ դահլիճը վողողվեց գյուղում չտեսնված մի լույսի մեջ և նավթի լամպաները կարծես թե չքացան, իրենց լույսի հետ միասին։

Անկյունում դրված դինամոն իր գործն եր անում և առաստաղից ու պատերից կախված ելեկտրական լամպերը դահլիճին տալիս եյին պայծառ լույս։

Գյուղացիները հիացմունքի մեջ եյին։ Շատերը տեղավորվել եյին աթոռների և նստարանների վրա, բայց վորովհետև դեռ ել եյին գալիս, ուստի և լուսամուտի գոգերն ել գրավեցին, սակայն ելի մի մասը կանգնած մնաց։

Գյուղխորհրդի նախագահը հսկում եր կարգապահությանը և բանիմաց մարդու լրջությամբ բացատրում եր գյուղացիներին կինոյի գաղտնիքները։

Լույսերը հանգցրին։ Դահլիճում կատարյալ խավար տիրեց։ Միայն Ոսեփ ամին եր իր չիբուխը ծխում և նրա ծայրի կայծն եր պլպլում։

Նախագահը մոտեցավ նրան և ականջին փսփսաց.

— Եդ պատը մարի...

Բոլորի աչքերը նայում եյին սավանին. ու հանկարծ, կարծես թե սավանն անհետացավ, դիմացի պատն ել քանդվեց ու յերևաց հանդը, վորտեղ մարդիկ մեքենաներով վար եյին անում։

Բազմաթիվ բերաններ բացվեցին։

— Վա՜...

Յես սկսեցի բարձրաձայն բացատրել գյուղացիներին։

Նկարը փոխվեց։ Դաշտերով կռվում եյին մորեխի դեմ քաղում եյին մեքենայով, մեքենայով փոցխում եյին և այլն։ Յերբ նկարը վերջացավ և դահլիճում լույս յեղավ, գյուղացիները դեռ ուշքի չեյին յեկել զարմանքից։

Հետո սկսեցին ցույց տալ մի հեղափոխական նկար։ Մոսկվան ու Լենինգրադը յերևացին սավանի վրա։

Քաղաքացիական կռիվներ, Լենինը, Բուդյոննին։

Նկարը վերջանալուց հետո, գյուղացիները դժվարությամբ եյին հեռանում խրճիթից։

— Մի պատկեր ել ցույց տվեք։

28 հունվարի

— Ի՛հ, մեր խավար գեղը, ի՛հ, մեր մրոտ ճրագները,— ասավ ինձ այսոր մի գյուղացի։ Կինոմեքենան հեռացել եր գյուղից, տանելով իր հետ «պատկերն» ու պայծառ լամպաները։

Մեկ ել ով գիտե, յերբ կգա։

— Ի՛հ, մեր խավար գիշերները, ի՛հ, մեր մրոտ ճրագները,— ասին ինձ շատ ու շատ գյուղացիներ…

(Այստեղ ել հիշատակարանից նորից պակասում են մի շարք թերթեր. Շատ հավանական ե, վոր նույն Սոնա տատին ե մեղավորը…)։

14 մարտի

Գավկոմից ու քաղլուսվարից շատ հրահանգներ եյի ստացել։ Շատ հրահանգներ եյին ուղարկել նրանք, և յես ի կատար եյի ածել։ Այսոր յեկավ վերջին հրահանգը և յես պիտի ի կատար ածեմ այդ ել։

Մնաս բարև, փոքրիկ գյուղ, յես շուտով բաժանվելու յեմ քեզանից։ Այդպես եր ասում յերեկվա ստացած հրահանգը։

Յես արդեն բավականաչափ աշխատել եմ գյուղում։ Իմ տեղն ուրիշ մարդու յեն նշանակել, իսկ ինձ ուղարկում են սովորելու։

Աշխատում եյի այս փոքրիկ գյուղում իբրև խրճիթընթերցարանավար, ստանում եյի հրահանգներ, գործադրում եյի։

Յերկու որ առաջ, ստացա վերջին հրահանգը։

— Ձեզ փոխարինելու յե գալիս մի ուրիշը. գործերը հանձնեցեք։

18 մարտի

Այսոր նստած եյի խրճիթում, իմ սովորական անկյունում և գրում եյի։ Ի՜նչ լավ բան ե, յերբ մի հաճելի բան ես տեսնում՝ և գիտես, վոր քո աշխատանքի շնորհիվ ե յեղել դա։

Յուրաքանչյուր անկյուն քեզ խինդ ե պատճառում։

Յերբ յեկա այստեղ, միայն մի կոմյերիտական կար, իսկ հիմա ամբողջ մի բջիջ։ Վո՞րտեղից դուրս յեկան նրանք, այդ նոր կոմյերիտականները, այդքան արագ և այդպես հախուռն։ Ինչքա՜ն անհույս եր թվում գյուղը արտաքինից և առաջին հայացքից…

Յերբ յես այստեղ յեկա, կոոպերատիվ խանութ չկար, դպրոցի շենքը կիսախարխուլ եր։ Իսկ հիմա կոոպերատիվ կա և դպրոցը նոր շենք ունի։ Յես կհեռանամ գյուղից այն զգացումով, վոր իմ աշխատանքն ել ե տվել իր արդյունքը՝ գավկոմի ու կոոպերատիվի հրահանգիչների, գյուղխորհրդի ու շրջկոմի աշխատանքների հետ միասին։

19 մարտի

Խրճիթից դուրս յելա և գնում եմ դեպի գյուղի վերևի բլուրը։ Վերջալույս ե։ Արևն արդեն մայր ե մտել և կարմրել ե հորիզոնը։ Ո՞ւր ե գնում արևը… Դեռ ինչքա՜ն աշխարհներ ու մարդկանց պետք ե լուսավորի նա։ Նա, արևը,— այդ լուսավոր ու հուրհրուն արևը…

Ութերորդ հեռագրասյունի մոտ շոգեկառքը սուլեց։ Յերբ նա անցնի, յես կը բարձրանամ վագոններից մեկի վրա և կգնամ մինչև մոտիկ կայարանը, իսկ հետո վոտքով կվերադառնամ։

Գնացքը մոտեցավ, և յերբ անցնում եր, յես բարձրացա և նստեցի վագոններից մեկում։

— Սովորական ճամբորդներ, սովորական խոսակցություններ։

Անիվներն իրենց յերգն եյին յերգում, վոր շատ նման եր միալար մի յեղանակի։

Լուսամուտից դաշտերն են յերևում։ Նորից նույնը, ինչ վոր անցյալ տարի։ Վար, ցանք, քաղ…

Զանգ։ Գնացքը կանգնեց։ Իջա վար և քայլերս ուղղեցի դեպի մոտիկ գյուղը։ Յուրաքանչյուր քայլափոխին աճում է հետաքրքրությունն իմ մեջ.

Տեսնես այդ գյուղն էլ խրճիթ ունի՞, և խրճիթում գրադարան կա՞։ Իսկ ինչո՞վ է տարբերվում այդ խրճիթ-ընթերցարանը մերինից։

Յեվ այսպես բազմաթիվ հարցեր…

21 մարտի

Յերեկ յերեկոյան քաղաքից յեկավ «հաջորդը»։ Ծանոթացանք և խոսեցինք յերկար։ Նա մի շաբաթ ավելի շուտ է յեկել, վորպեսզի յես ծանոթացնեմ նրան աշխատանքի հետ։ Առաջին անգամն է նա գյուղում աշխատելու։

Ամեն ինչ, վոր կարող եր օգտակար ու հետաքրքիր լիներ նրան, յես ասեցի կամ ցույց տվի։ Իսկ այսօր նրան մի շարք բաների հետ ծանոթացրի։

— Լսիր, ասեցի յես,—յես մինչև հիմա քեզ ցույց տվի քո աշխատանքի պաշտոնական մասը։ Հիմա կծանոթացնեմ մի քանի ուրիշ բաների հետ, վորոնք կկազմեն քո առօրյայի մի մասը։

— Մնաս բարև, սիրելիս։ Աշխատիր։ Ահա թողնում եմ քեզ աշխատանքների մի ծով, մի անակ եմ թողնում քեզ և այս հիշատակարանը, վորը կկարդաս։ Գուցե հետաքրքիր լինի։ «Գյուղաշխատավորի հիշատակարան» է նրա անունը, վորովհետև յես այստեղ գրել եմ այն ամենը, ինչ վոր զգացել եմ իմ գյուղական աշխատանքի ընթացքում։

(Այստեղ վերջանում է հիշատակարանը)։

ԳԱՅԼԵՐԸ

1.

Ինչքա՜ն անանուն, ինչքան յետ ընկած գյուղ է Հողաշենը…

Յեվ ո՞վ գիտե նրա մասին վոր…

Այսինչ ճանապարհից թեքվիր դեպի այնինչ կածանը, այնտեղով գնա վոլոր-մոլոր, անցիր սարից այն կողմը և մի բլուրի փեշի տակ կծկված, դու կտեսնես Հողաշեն գյուղը։

Տասը-քսան տուն կա այնտեղ և հազիվ հարյուր յերեսուն մարդ։ Այդքան փոքր գյուղ է Հողաշենը…

Յեվ այդ է պատճառը, վոր համարյա թե վոչոք չը գիտե նրա մասին։

Ո՞վ գիտե նրա մասին։

Հողաշենից մի քանի վերստ հեռավորության վրա, ընկած են նրա պես փոքր և անանուն մի քանի գյուղեր։

Նրանք գիտեն Հողաշենի մասին։

Յեվ մեկ էլ, Հողաշենի մասին գիտեն այդ կողմերով անցնող գնացքի ճամփորդները։

Յերբ գնացքն անցնում է այդ լեռնաստանի խանձված և անհրապույր տեղերով, և յեթե մի քանի ճամփորդներ ձանձրույթով դուրս են նայում պատուհանից դեպի այդ անհետաքրքիր վայրերը, նրանք տեսնում են նաև Հողաշեն գյուղը։

Շրջապատի պես անհրապույր, շրջապատի պես չոր ու խանձված Հողաշեն գյուղը։

Նայում են ճամփորդները. հենց այնպես, անցողակի,
առանց որևէ հետաքրքրության:
Յեվ գնացքն անցնում է:
Յերբ այս կողմերով յերկաթուղագիծ են անցկացրել,
Առատաբեր գյուղն էլ Հողաշենի նման անանուն ու փոքր
է յեղել:
Գնացքն յեկավ, Առատաբեր գյուղի հենց կողքին
գնացքի կայան շինվեց և Առատաբերը մեծացավ, աճեց...
Իսկ Հողաշենը... Նա գծից մի քիչ հեռու մնաց, ա-
ռանց կայանի կամ կիսակայանի: Մնաց նա և նախանձով
ու վախով սկսեց նայել իր կողքից անցնող, առանց կանգ
առնելու անցնող գնացքին...
Փոքրիկ գյուղ է Հողաշենը...
Իզուր չէ, որ համաշխարհային պատերազմը հայտա-
րարելու օրերին, յերբ զորահավաք կար ամեն տեղ, զո-
րահավաք կար նաև Հողաշենում,—Հողաշենցի մի գյուղա-
ցի զարմացած բացականչել է.
— Եդ թագավորը վո՞րդիան գիտե, թե էս սար ու տե-
ղումը մին անտեր մնացած Հողաշեն կա, վոր սալդատ ա
ուզում...
Իսկ մի ուրիշն ասել է.
— Նո՞ր ենք ընկել թագավորի միտը: Խեր լինի...
Հողաշենի մյուս գյուղացիներն էլ, դրական կերպով
որորել են իրենց գլուխներն և համաձայնվել են նրանց
հետ:
Այսքան փոքրիկ գյուղ է Հողաշենը...

2.

Այդ փոքրիկ Հողաշենի վերևում, ուր լեռնաճարթն
է,—ձգված է յերկաթուղին:
Գնացքն անցնում է այդտեղից, արագ, առանց նույ-
նիսկ դանդաղեցնելու իր ընթացքը և առանց նկատելու,

վոր ինքն անցնում է Հողաշեն գյուղի կողքով, համարյա
թե քսվելով նրա պոչին:
Իսկ գյուղը, վոր գնացքի ձայնից լեղապատառ յե-
ղածի նման կարծես թե շտապում է ավելի ներքևանալ
դեպի ձորը,—նայում է գնացքի յետևից և ասում է Սա-
հակ-ապոր բերանով.
— Հեյ վա՜խ...
Արդյոք հեռավոր ու լայնարձակ հորիզոնների կարո-
տը չէ՞, վոր մաշում է այդ փոքրիկ գյուղին, արդյոք նրա
մեջ խոսողը՝ ձորից դեպի վեր, դեպի դաշտը ձգտող ցան-
կությունը չէ՞...
Ո՞վ գիտե, այդպես է գուցե...
Բայց մրափում է գյուղը:
Մրափում է գիշերով, յերբ լույսի վերջին նշույլը
մարում է լեռան յետևում և վերջին ճրագն է մարում
մութ ճրագակալի վրա:
Մրափում է ցերեկով, յերբ գյուղում համարյա վո-
չոք չի մնում և գյուղացիները գնում են դաշտ, աշխա-
տանքի:
Այսպես մրափում է գյուղը, իսկ ամեն ուրբաթ գի-
շեր, ժամի տասներկուսին գնացքի չխչխկոցն ու շոգե-
մեքենայի ուժեղ սուլոցը խանգարում են գյուղի մրափը:
Յերբ գնացքը գալիս անցնում է և նրա սուլոցի
ձայնը դեռ արձագանքում է գյուղի մյուս ծայրում,—ձո-
րում, իր հասարակ անկողնում պառկած Ավետին թվում
է, թե ձորովն էլ է գնացք անցնում:
Նա,—այդ հասարակ Ավետը, կծկվում է իր հասա-
րակ անկողնի մեջ ու կարծես վախենում է: Նրան թվում
է, վոր ահա, գյուղի յերկու ծայրերով անցնող գնացք-
ները հանկարծ իրենց ընթացքը կը դարձնեն գյուղի վրա
և վոտնատակ կտան խարխուլ խրճիթներն էլ, անկողին-
ներն էլ, գյուղացիներին ու Ավետին էլ...
Իսկ Ոհանենց տանն հաճախ Սրքոն արթնանում է

վնացքի ձայնից և յերբ սուլոցը նվազում է, —մտածում է ինքնիրեն.

— Պոչեզդի եա մի բանը լավ չի, վոր ակխտոք ա տալի ու մարդու քունը կտրում ա։ Թե էդ մի բանը չըլըներ, ավելի լավ կլներ...

Յեվ նորից քնում է։

Յեվ նորից մրափում է գյուղը, վորը մի քիչ արթնացել եր։

3.

Ձմեռն ինչքան ցուրտ է լինում Հողաշենում ու տաղտկալի...

Սարից քամին է արշավում գյուղի վրա, իսկ ձորում քամու հազարավոր ձայներն են աղաղակում։

Հողաշենում ձյուն հո չի՛ գալիս.—բուք է գալիս։ Հողաշենում ձյունը հո չի՛ նստում գյուղի վրա կամ ձորերի մեջ, այլ լցվում է։

Այդ ժամանակ ով կհամարձակվի Հողաշենից դուրս գալ։

Կամ ինչու Հողաշենից։ Նույնիսկ իր խրճիթից։

Նստում է հողաշենցին իր խարխուլ խրճիթում և լսում է քամու վազվզոցն ու բուքի վայնասունը դրսում։ Յեվ նա ամեն րոպե սպասում է, վոր ահա, կպոկվի իր հյուղակի կտուրը և բուքը ներս կլցվի։

Հողաշենում ամեն տարի պատահում է այդպիսի մի-յերկու դեպք։

Նստում է հողաշենցին իր խարխուլ խրճիթում և մտածում է ավելի մեծ ու հաստատուն շենքերի մասին, ավելի բազմամարդ ու մեծ շենքերի մասին և իր մտքում վորոնում է մի հաճելի յերազ այդ բոլորից հյուսված։

Իսկ դրսում անարև, ամպամած յերկինքը, բուքն ու քամին։

Իսկ գյուղի շրջապատում վոչ մի շունչ, և ձյուն ու քամի...

Յուրաքանչյուր գիշեր, յուրաքանչյուր ձմրան գիշեր, յերբ ամեն մարդ իր տունն է մտնում և իր անկողինը, գյուղի վերևում հավաքվում են գայլերն ու սկսում են վոռնալ։

Այնքան սխուր են վոռնում նրանք և այնպիսի վայնասունով, վոր յուրաքանչյուր հողաշենցի փշաքաղվում է։

Սարսափելի յեն վոռնում նրանք...

Յեթե գյուղի մի քանի շները չլինեն և գայլերը գյուղ մտնեն, նրանց դեմ ինչպես դիմանա Ոհանենց տան դուռը կամ նրանց չանգռտոցով ինչպես չծակվեն մյուս խրճիթների կտուրները...

Սոնան,—Թեոսի ջահել կինը, վախով վեր է կենում և բաց է անում իր փոքրիկ յերեխայի որորոցը։

— Այնտեղ է յերեխան... գայլը չտանի...

Ու յերեխան սեղմում է կրծքին Թեոսի կինը և նորից է քնում նույն անհանգիստ քնով։

Իսկ յերբ Թեոսը քաղաք է գնացած լինում, Սոնան սպասում է նրան, սկսում է ականջ դնել և սրտատրոփ ու խորը տանջվել.

— Յարա՛բ, Թեոսը ճանապարհ հո չընկավ...

— Ես գիշերին հո ճամբին չի՞...

— Գայլի բաժին չդառնա...

Սահակ ապերը հաճախ արթնանում է վոռնոցի ձայներից, խաչակնքում է մի քանի անգամ, ապա հառաչում է խորը և տխուր...

— Հեյ վա՜խ...

Իսկ յերբ լույսը բացվել է սկսվում, գայլերը հեռանում են վրեժխնդիր, վոր այդ գիշեր վոչինչ չկարողացան հափշտակել։

Յեվ յեթե մեկը նայի նրանց յետևից, տեսնի նրանց դանդաղաքայլ ու մոլոր նահանջը, կհամոզվի, վոր նրանք

հետևյալ գիշերն էլ են գալու, գալու, բայց ավելի հաստատակամ, ավելի կատաղի…

Եվ յերբ գալիս են նրանք հետևյալ գիշերն էլ,—նրանց վայրենի վոհմակը ավելի յե մոտենում գյուղին։ Ավելի համարձակները մտնում են գյուղ և փախցնում պատահաբար դրսում մնացած մի շնիկի։

Իսկ քիչ այն կողմում, գյուղի ամենածայրի տներից մեկի դուռն է չանգռում սովածությունից պաղպաղած գայլը, և ներսում սարսափից քարանում է հողաշենցին…

4.

Ձմրան մի ցերեկ, հազվագյուտ արևոտ ցերեկ, գյուղի յերեխաների մեծ մասը հավաքվել եր գյուղից վերև, յերկաթգծի և գյուղի նեղ ճանապարհի վրա։

Նրանք խաղում եյին այնտեղ և սպասելով այն հազվադեպ առիթից, վոր գնացքը ցերեկով եր անցնելու այդ որը—սպասում եյին նրան։

Բայց վորպեսզի անգործ չմնան, նրանք խաղում եյին և վազվզում։

Իսկ յերբ գնացքը բավականին մոտեցել եր, տղաներից մեկը կռացավ ու «թագավորական» յերկու կոպեկանոց պղնձե դրամը դրեց ռելսի վրա։

Անիվը կճխլի նրան և նա կը դառնա բարակ,բարակ…

Այդպես խաղ եյին անում յերեխաները յերկաթգծերի մոտ և փոքրիկ ճանապարհի վրա։

Ոհանենց տղա՞ն եր, թե՞ Ավետի փոքր յեղբայրը, վոր առաջարկեց վազել-բռնել խաղալ։ Եվ յերբ խաղով տաքացած, նրանք յերկար վազեցին յերկու ռելսերի միջով, հանկարծ նրանցից մեկի վոտքը հանդիպեց մի կոշտ բանի ու նա վար ընկավ։

Տղաները նայեցին։

Գետնի վրա ընկած եր մարդկային մի դիակ, իսկ

նրա կողքին լուցկիների կիսախանձ տուփ և մի քանի լուցկիներ, այրված գլուխներով։

Դիակն անճանաչելի յեր, պատառոտված, կտոր-կտոր արված և արյունոտ։

Յերեխաները սարսափով լետ փախան և նրանց ճիչը հնչեց այնտեղ, ուր դեռ նոր եր մարել շոգեմեքենայի ձայնը։

Յետ փախչելիս, շտապելուց, տղաներից մեկը սայթաքվեց և քիչ մնաց վոր ձորը գլորվեր։

Ոհանենց պատի տակ նստած, արևկող եյին անում գյուղի հասակավոր մարդիկ։ Նրանց մի մասը նոր եր վոտը դուրս դրել յերիտասարդությունից, իսկ մնացածներն արդեն մոտենում եյին ծերությանը։

Յերեխաները վազ տվեցին նրանց մոտ և պատմեցին իրենց տեսածը։

Գյուղացիները շտապով վեր կացան։

Ճանապարհին, արագ-արագ քայլերը փոխելով, նրանք խոսում եյին միմյանց հետ և աշխատում եյին իմանալ դիակի ով լինելը։

—Ես գիշեր մեր գեղից ո՞վ եր պակաս։ Քաղաք գընացած մարդ կա՞ր…

Փոքրիկ գյուղ է Հողաշենը։

Գյուղացիներից ամեն մեկը գիտե մնացած բոլոր գյուղացիներին։ Դրա համար էլ, նրանք յերկար չմտածեցին ու գտան։

Եվ յերկու-յերեք գյուղացի, միանգամից բացականչեցին, սարսափից աչքերը չռելով.

—Թեոսը…

Իսկ առաջ վազող յերկու-յերեք ջահելներն արդեն հասան դիակին, մի քանի նշաններից ճանաչեցին նրան և նույնպես բացականչեցին.

—Թեոսը…

5.

Շատ լացեց Սոնան, սիրուն ջահել Սոնան, բայց նա մեռած մարդուն կենդանացնել չի՞ կարելի...

Հողաշենցիները Թեոսին թաղեցին, որն այնքան ջահել հասակի մեջ, գայլերի բաժին դարձավ։

Նախքան նրան թաղելը, յեկավ Սահակ ապերը և Թեոսի դիակը տեսավ. հետո գնաց յերկաթգծի յերկայնքով և տեսավ այն տեղը, վորտեղ ընկած եր յեղել Թեոսը։ Հետո տեսավ բոլոր կարևոր ու անկարևոր նշանները և ասաց թե ինչպես է պատահել տխուր մահը։

Ինչպես եր լինում միշտ, յերբ գյուղացիներից մեկին գայլերը հոշոտում եյին։

Սահակ ապերը գնում նայում եր բոլոր կարևոր և անկարևոր նշանները, քննում, կշռադատում և ապա հայտնում եր գյուղացիներին մահվան բոլոր պարագաները, զարմանալի մանրամասնությամբ։

Ո՜, շատ հին մարդ եր Սահակ ապերը...

Գայլերից վախեցած ու կծկված գյուղին ինչքան է նման Սահակ ապերը։ Այդ գյուղի պես անմռունչ ու հին։

Գյուղն ու Սահակ ապերը միայն թաղել գիտեյին գայլերից հոշոտվածին և բերնե-բերան անցկացնել նրա պատմությունը, մինչև մի ուրիշի զոհվելը։

Թեոսի մահվանից հետո Սոնան ավելի սկսեց սիրել իր միակ յերեխային։

Նա այլևս որորոցում չեր քնեցնում նրան, վախենալով վոր մի որ էլ գայլն իր ազիզ բալին կտանի, իր Թեոսի միակ Թանկագին հիշատակը կը հափշտակի...

...Իսկ գիշերները, յերբ գայլերը գյուղի վերևում, քարերի վրա պպզած վոռնում եյին նորից, — Սոնան մրմնջում եր.

— Գետինն անցնեք... ձեր ջինսը յե՞րբ պիտի կտրվի..

6.

Որերը դանդաղ, միակերպ եյին անցնում Հողաշեն գյուղում...

Ձմռան որով, ինչ աշխատանք անեն գյուղացիները...

Պարապ նստում եյին նրանք և սպասում եյին մթնելուն, վոր հավաքվեն մի տեղ և զրույց անեն։

Պարապությունից ձանձրացած Սրբոն տրեխ եր կարում և կամ թե չէ, զբաղվում եր տնային վորևէ գործով։ Յերբեմն էլ նստում եր քուրսու մոտ, վոտքերը կարպետի տակից ներս կոխում դեպի քուրսին և մտածում եր գարնան բացվելու և իր անելիքների մասին։

Սահակ ապերը նստած իրենց ոդայում, անբաժան ձեռնափայտը անկյունում դրած, լուռ մտածում եր աշխարհի բաների մասին և տերողորմյայի հատերն եր քաշում ծուլորեն։

Սարիբեկենց Սենոն, անելու վոչինչ չունենալով, հացատան անկյուններից մեկից, բազմատեսակ հին առարկաների տակից գտնում-հանում եր «բերդանկա» հրացանը և մաքրում եր, ինքն էլ չգիտենալով թե ինչի՛ համար։

Հրացանի մի քանի փամփուշներն էլ եր մաքրում Սարիբեկենց Սենոն և ապա ձանձրանալով այդ անոգուտ աշխատանքից էլի իր նախկին տեղն եր դնում թե «բերդանկա» հրացանը և թե նրա մի քանի փամփուշները։

Այդ որը, իրիկնադեմին, Ավետի կինն ու փոքր յեղբայրն ի զուր սպասեցին քաղաք գնացած Ավետի վերադարձին։

Հարկն ստիպել եր նրան, ձմռան որով վեր կենալ, գնա՛լ հեռու քաղաքը, բան ու ման առնելու համար։ Գրնալիս նա խոստացել եր նույն որը վերադառնալ, բայց արդեն որն իրիկնանում եր ու մութն ընկնում, բայց նա չկար ու չկար։

Ավետի փոքր յեղբայրը շատ անգամ վազեց դեպի

գյուղի ծայրը և առաջ նայեց, դեպի դատարկ ու սպիտակ ճանապարհը...

Ավետի կինը շատ անգամ յելավ կտուրի վրա ու դեպի քաղաքի ճանապարհը նայեց...

Չյան սպիտակության վրա վոչ մի սև բիծ չեր նկատվում...

Ինչքա՜ն եր վախենում խեղճ կինը, վոր իր մարդն ել կարող ե Թեոսի որն ընկնել։

Յեվ յերբ յերկար նայելուց հոգնած ու հուսահատված նա անկողին եր մտնում, նրա վերջին հույսն այն եր վոր գուցե Ավետը քաղաքումն ե մնացել և վաղը կգա։

Իսկ գայլերն ելի հավաքվում եյին գյուղի վերևում ու ճանապարհի վրա։

Հողաշենը մրափում եր...

7

— Ուշ մնացի, ուշ մնացի, ուշ մնացի...

Արագ-արագ, վազելով փոխում եր քայլերը հողաշենցի Ավետը։

Ուսի խուրջինն արդեն սկսել եր նեղել նրան և Ավետին թվում եր, վոր նրա մեջ վոչ թե տասնչորս մետր կտավ կա, այլ տասնչորս փութ քար...

Չնայած ձմռան ցրտին, Ավետը քրտնել եր։

— Ուշ մնացի, ուշ մնացի...

Ու քայլում եր նա, սիրտ տալով ինքնիրեն։ Յեվ այդ րոպեյին ինչքան եր ուզում նա, վոր քաղաքից յեկած չլիներ։

— Փոշմանեցի...

Հիմի ենտեղ, քաղաքում ապահով ե։ Ի՞նչ գայլ, ի՞նչ բան...

...Հեյ գիտի քաղաք...

Թեկուզ Հողաշենը, քաստ Հողաշենը։

Կմտնես տունդ, դուռդ կփակես ու կնստես։ Դե՜, թող մտենա գայլը։ Բողարը մեն-մենակ, նրա պատասխանը կը տա։

Յերբ իր մտքից սթափվեց Ավետն ու նորից իրեն տեսավ դատարկ ճանապարհի վրա, գիշերով, գյուղից հեռու,—ավելի վախեցավ ու քայլերն արագացրեց։

— Ուրբաթ գիշեր... Թյու... ինչ վատ գիշեր ե... գոնե ուրբաթ չը լիներ...

Լուսնի լույսն ընկել եր ձյան լայնարձակ տարածության վրա և ամբողջ դաշտը լուսավորված եր ձյունից ել սառը մի լույսով։

Հեռվից, թեև բավական հեռվից, բայց արդեն զգացվում եր Հողաշենի մոտիկությունը։ Նկատելով ծանոթ դաշտերն ու քարերը, վորոնք ծածկված եյին ձյունի հաստ ծածկոցով,—Ավետն արագացրեց քայլերը։

Հեռվում, յերկնքի վրա յերևում եյին մոտեցող ամպերի մթնագույն շերտերը։ Լուսինը ծածկվելու վրա յեր։ Մութ կլինի։ Շատ մութ կլինի։ Իսկ մթության մեջ գնալն ավելի վատ ե.—վոչինչ չի յերևա։

Յեվ վորպեսզի ավելի լավ տեսնի իր շրջապատը, Ավետը թողեց ճանապարհը, բարձրացավ յերկաթգծերի մոտ և իր ճանապարհը շարունակեց յերկու ռելսերի միջով։

Նա գնում եր ռելսերի միջով, աջ ու ձախ նայելով և մտածկոտ հայացքով ու տրոփող սրտով։

Հանկարծ ցնցվեց ու քայլերն ավելի արագացրեց։ Նա մոտենում եր այն տեղին, վորտեղ ընկած եր յեղել գայլի բաժին դարձած Թեոսի գլխակը։

Աչքերը փակեց Ավետը, վախենալով, վոր նորից կը տեսնի իր համագյուղացուն, ռելսերի մոտ այլանդակորեն փռված...

Գայլերն զգացել եյին Ավետի մոտիկությունը. Ավետն ել նրանց մոտիկությունն եր զգում։ Յեվ յերբ նա լսեց առաջին վոռնոցը, չկարողացավ վորոշել, իսկակա՞ն վոռնոց եր լսածը, թե՞ իր ականջները ձայն տվեցին։

— Ուշ մնացի։ Փոշմանեցի...։

Առաջին վոռնոցը շատ հեռվից լսվեց, բայց յերբ լռեց այդ, Ավետը կարծես լսեց ձյան վրայից դեպի իրեն արշավող թաթերի ձայները։

Յեվ իրոք. ավելի մոտիկից լսվեց գայլի վոռնոցը յերկրորդ անգամ։

Ինչպես թե...

Ուրեմն պիտի գան գայլերը և պիտի պատառոտեն իրեն։ Իրեն, — հողաշենցի խեղճ ու կրակ Ավետին։

Ու վոչ մի ծառ չպիտի լինի վորի վրա բարձրանա, ու վոչ մի կրակ չպիտի լինի, վորով վախեցնի, վոչ մի խփելու քար չպիտի գտնի և վոչ էլ ապաստանվելու համար մի խրճիթ...

Ավետն սկսեց վազել։

Հենց առաջին քայլերից նրա շունչը կտրվում էր, բայց նա այդ բանի վրա ուշադրություն չդարձրեց։ Միայն թե շուտ հասներ...

Ու յերբ յերրորդ անգամ լսեց վոռնոցը, այլևս վոչ թե մի գայլի վոռնոց էր դա, այլ մի քանիսի։

Նրանց վոռնոցի ձայներից պարզորոշ լսվում էր, թե ինչքան արագ ու կատաղի էյին սլանում նրանք։

Քամին բերում էր նրանց վոռնոցը և նույնիսկ վոտնաձայները ձյան փափուկ մակերեսի վրա։

Ավետը վազում էր հետզհետե ավելի և ավելի արագ, իսկ ուսի խուրջինը նրան տանջում էր ավելի ու ավելի շատ։

Մեկ ուզեց գցել խուրջինը, մեկ էլ մտածեց, վոր յերբ արդեն վտանգն անցած կլինի, նա շատ պիտի ափսոսա խուրջինի և տասչորս մետր կտավի համար։

Չգցեց։

Անընդհատ վազում էր նա և հավատալը չէր գալիս, վոր իրեն կարող են հոշոտել այդ սոված գազանները։

...Այնինչ, նրանք մոտենում էյին, մերթ-մերթ վոռնալով։

Ավետը վազում էր վոչնչի չնայելով։ Ահա ճանապարհի կողքի բլուրը։ Յերբ նա անցնի բլուրի մյուս կողմը, արդեն կանգնած կը լինի Հողաշենի դեմառդեմ...

Ու մոտիկ, չափազանց մոտիկ...

Նրա վոտքերն սկսեցին շարժվել անկախ ուղեղից։ Հետզհետե հոգնեցին ծնկները, ծալվեցին վոտները, բայց նա լարեց իր վերջին ուժերն ու վազեց արագ, արագ...

Ահա տրեխի կապը քանդվեց։ Վոտքի տակ է ընկնում։

Վնաս չունի։ Կանգնելու ժամանակ չկա։

Գրպանից բան ընկավ։

Վնաս չունի...

Միայն թե ազատվի։ Միայն թե հասնի գյուղի առաջին տանն ու դուռը թակի։

Ավետը յետ նայեց։

Սարսափ...

Այնքան մոտիկ, — համարյա կրնկկոխ գալիս էյին գայլերը շնչակտուր վազքով, քթերի մեջ մռռացնելով ու կրճտացնելով ատամները։

Ավետը տեսավ նրանց աչքերի սովահար կրակները։ Մոտ շատ մոտ։

Սկսեց շուտ շուտ յետ նայել։

Մոտ են...

Կհասնե՛ն...

Ամենից մոտ վազում էր մի մեծ գայլ։ Յետ դառնալիս Ավետը տեսնում էր նրա զույգ աչքերի փայլը մյուսներից ավելի մեծ ու վառ։

Ու յերբ նա շարունակեց վազել, ու յերբ շուռ էր գալիս բլուրի կողքով, դեմից յերևացին մի զույգ ուրիշ կրակներ։ —

Գնացքը...

ցեռից լսվեց փռնոցը.

— Ո՜ւ՜...

Յեվ հանկած, դեմից, իր յերկաթե կոկորդի ամբողջ ուժով սուլեց շոգեմեքենան.

— Ո՜ւո՜ւո՜ւ...

Ավետը դուրս թռավ ռելսերի միջից, ճանապարհ տալով նրան:

Շրխկալով յեկան վագոններն և արագ անցան առաջ:

Գայլերն ու գնացքն իրար դեմ յելան...

Իսկ յերբ գնացքն անցավ, շարունակելով իր սուլոցը, Ավետը տեսավ, թե ինչպես ահաբեկ, ինչպես սարսափահար եյին փախչում գայլերը դեպի յետ, դեպի կուսական լեռները...:

Օհանենց ոդայում, գնացքի ձայնից արթնացավ Սրքեն ու կիսաքուն մռլտաց.

— Պոյեզդի ես մի բան լավ չի, վոր սվիստոկ ա տալի ու մարդու քունը կտրում ա...

8

Անանուն, յետ ընկած գյուղ ե Հողաշենը:

Բայց չէ՞ վոր այնտեղ ել են մարդիկ ապրում, և այդ մարդիկ գիտեն, վոր յեթե բերանդ բաց անես և պառկես, յերկնքից խնձոր չի ընկնի քեզ համար:

...Թեկուզ և այդ փոքրիկ գյուղում հազիվ տասը-քսան խրճիթ կար:

...Թեկուզ հազիվ հարյուր յերեսուն մարդ լինեն անանուն Հողաշենում:

Հետևյալ որն Ավետը պատմում եր իր հետ պատահած դեպքի մասին:

...—Հա՛. ընենց վազում եյի, վազում, վազում...

Նա շարժուձևերով աշխատում եր ավելի վառ կերպով ցույց տալ իր վազելու սարսափը:

...—Հենց հասնում եյին. գեղն ել մութ եր... հեռու... մեկ ել տեսնեմ՝ հասնում են: Ել ուժ չմնաց: Ասի՝ կորա...

Գյուղացիներն ուշադիր լսում եյին:

...— Մեկ ել, հենց վոր շուռ եյի գալիս բլրից դեսը, —մեկ ել տեսնեմ՝ պարավոզը:

Յեվ, այսպես, մինչև վերջը, մինչև իր տուն հասնելն ու կնոջ ուրախանալը,—պատմում եր Ավետը գյուղացիներին: Իսկ յերբ վերջացրեց ու լուռ կացավ, մի րոպե վոչ վոք չխոսեց:

— Ու՞, եդ անտերը պոյեզդի ձենից վախում ա,— հարցրեց մեկը, խզելով լռությունը:

— Ըտենց ա յերևում եյի...

— Ի՞նչ վախ, լեղաճաք ա ըլնում,—ասաց Ավետը: Միենակ ձենից չի, հենց նրա տեսքիցն ել և վախենում: Հլա պոեզդը սվիստոկ չեր տվել, վոր նրանք պոչները քաշեցին ու... պո՜ւկ, դեպի սարերը:

— Դե են վախը վա՛յ մեզ, վոր մինչև հիմի եդ զահրումարին վիշապի տեղ եյինք դնում ու ձեռներս ծալած մնում եյինք, վոր գա մեզ ուտի,—մրմնջաց Սահակ ապերն ու ավելացրեց.

— Հեյ վա՜խ...

Գյուղացիներն ել հառաչեցին.

— Վա՜խ-վա՜խ...

— Ջո՜ւր մեռավ Թեոսը,—ավելացրեց Սրքեն:

Այդպես խոսում եյին գյուղացիները, նստած մի պատի տակ. քուրքերը վրաներն առած, սպասելով վոր մթնի և հավաքվեն ոդաներից մեկում:

Մութն իջնում եր:

Մառախուղի թանձրացող քողի և վերահաս մթության պատճառով այլևս համարյա վոչինչ չեր յերևում: Գյուղացիները վեր կացան քարերի վրայից և ուղևորվեցին դեպի իրենց տները:

Սահակ Ապերը դեռ նստած էր մի քարի վրա, չգիտես թե ում համար. շարունակում էր պատմել գայլերի արարքների մասին և թվել այն հողաշենցիների անունները, վորոնց կերել եյին գայլերը մի տարի առաջ, յերկու տարի առաջ, յերեք, տասը, քսան...

— Ելի գայլերի հավաքվելու վախտն ա.—քաշվող մարդկանց լռությունը խզեց գյուղացիներից մեկը։ Էդ անտերները շատ են կատաղել։ Անցած շաբաթը չէ՞ր վոր Մուկուչենց շանը փախցրին ու լափեցին։ Էն էլ վո՞ր տեղից,—հենց դռան մոտից։ Գեղն եյին մտել անիծածները...

Ավետն էլ էր լսել այդ մասին, բայց այսոր, առաջին անգամ նա զգաց Բողարի ու Զալոյի անզորությունը և նրանց վրա դրված բոլոր հույսերի խաբուսիկությունը։

Մտմտաց մի քիչ ինքն իրեն, ապա բարձրաձայն դիմեց իր հետ քայլող տասնուհինգ գյուղացիներին։

— Բա մեզ ամոթ չի՞, գեղացիք, վոր էդ գազանի ձեռքին գերու պես դողանք... հերիք չի՞։ Մենք անշունչ պոչեզգի չափ էլ չկանք։

Լսվում եյին համաձայնության նշաններ։

Ավելի յերիտասարդները տաքացան։

— Գնանք տասը-քսան հոգով, խաբիկ տանք...

— Մի յերկու անգամ վոր աչքները վախեցնենք, էլ չեն կարա մեր գեղին մոտենալ։ Խաբիկ տանք։

— Տանք։

— Տանք։

Ու ծայր առավ վոգևորություն։

Ավետին թվաց, թե իր յերակների միջով հոսող արյունը տաքացավ, տաքացավ... Կգնան, կփախցնեն։ Բայց մենակ չեն գնա։ Միասին կգնան։ Ուս-ուսի, մեջք-մեջքի թև-թևի, իրար հետ։

— Ե՛չ, տղերք, խրատելով խոսեց մի հասակավոր հողաշենցի. էդ ամենը լավ, մենակ թե միասի չհանդիպեք...

Յերիտասարդները մի րոպե մտածեցին, ապա նրանցից մեկը բացականչեց.

— Մեկ-մեկ հո չենք գնա։ Իրար հետ կգնանք...

Յեվ մյուսները համաձայնվեցին.

— Իրար հետ կգնանք։

Յեվ չցրվեցին։

Ամեն մեկը իր տունը չգնաց։

Անցան դռների մոտով, տների մոտով։ Ամեն մեկը մտավ իր տունը, վերցրեց մի զենք,—փոցխ, գերանդի, մահակ ու դուրս յեկավ։ Սարիբեկենց Սենոն էլ գնաց տուն, անկյունից, զանազան առարկաների տակից դուրս հանեց իր հրացանն ու մի քանի փամփուշտները և դուրս յելավ տանից, ու նորից խառնվեց մյուսների հետ։

Հրացանի տեսքը վոգևորեց գյուղացիներին և ավելի մեծ համարձակություն ներշնչեց։

— Քանի՞ հոգի յենք։

— Տասնվեց։

— Չէ, տասնյոթ։

— Էն ա՛ Սարգիսն էլ յեկավ, տասնութ...

— Դե գնանք...

Յեվ այդ յերեկո, յերբ գայլերը նորից սկսում եյին հավաքվել գյուղից վերև, քարերի վրա,—Հողաշենից դուրս յեկան գյուղի յերիտասարդները և նույնիսկ բեխ ու մորուքավոր մարդիկ։

Նրանք զինված եյին գերանդիներով, փոցխերով, փայտ ու մահակներով, իսկ առջևից, «բերդանկա» հրացանն ուսին, գնում էր Սարիբեկանց Սենոն։

9.

Յերկար ճանապարհ չեր մինչև գյուղի վերևի քարերը, վորտեղ սովորաբար հավաքվում եյին գայլերը։ Բայց ձորը չսայթաքելու և ձյան մեջ չթաղվելու համար, գյուղացիները գնում եյին դանդաղությամբ և զգույշ կերպով։

Գնում էին նրանք իրարու մոտ, իրար գլխի հավաքված միասին։

Յերբեմն պատահում էր, որ նրանցից մեկն առաջ էր անցնում մյուսներից։ Յեվ յեթե նա մի քիչ հեռանում էր, յետևից ձայն էին տալիս.

— Եյ…

— Կա՛ց, կաց հասնենք։

— Մենակ առաջ մի գնա։

Յերբեմն էլ պատահում էր, որ մեկը յետ էր մնում։

Յեվ յերբ յետ մնացածն զգուշությամբ քայլելու տեղ էր անում ոտների համար և վերև նայելով գյուղացիներին հեռացած էր տեսնում, բղավում էր.

— Հեյ, գեղացի՛ք։

Գյուղացիները կանգ էին առնում կամ դանդաղեցնում էին քայլերը, մինչև որ նա գար և հասներ իրենց։

Այդպես առաջ էին գնում հողաշենցիները։

Յերբ արդեն մոտեցել էին ժայռերին, գյուղացիներից մեկը լարեց տեսողությունն ու նայեց առա՛ջ։ Նրան թվաց, որ իրիկնային անթափանց խավարի մեջ նա գայլի ստվերներ նկատեց։

— Գեղացիք, էն գելեր չե՞ն։

Ու մատով ցույց տվեց առաջ, դեպի մթությունը։

Գյուղացիները կանգնեցին։ Մի յերկու քայլ յետ մնացածներն էլ հասան նրանց ու կանգնեցին։

Սարիբեկենց Սենոն, հրացանի կոթը ձյան մեջ խրելով իբրև ձեռնափայտ, գալիս էր։

— Սենոն եկա՞վ, հարցրեց մեկը և տեսնելով նրան, կանչեց։

— Մոտ արի…

Յեվ սկսեցին նայել։

— Հը՞…

— Կասես թե գել ըլի…

Ավելի խիստ մոտեցան միմյանց գյուղացիները. մոտե-

ցան, մոտեցան և ամեն մեկն աշխատում էր լինել որքան կարելի յե մեջտեղում և շուրջը որքան կարելի յե շատ մարդ ունենալ։

— Հեյ-հեյ… բղավեց յերիտասարդներից մեկը, գայլերին փախցնելու նպատակով։

— Հո՜յ…

— Հո՜ւյ…

— Արա հեյ, հեյ, հեյ…

Ու ծայր առավ մի խառնիխուռն, բարձրագոչ աղաղակ։

Ներքևում, գյուղում, յերևի լսեցին ձայները։ Այնտեղ յերևացին կրակներ։

— Ա՛ գել, ա՛ գել…

— Հեյ, Հեյ…

Յեվ հանկարծ, միանգամից լռեցին, ականջ դնելու համար։

Յետևից, գյուղի կողմից, ձյան վրա ոտնաձայներ լսվեցին։ Բոլորը միանգամից յետ շրջվեցին, վախեցած շարժումներով։

Սարիբեկենց Սենոն հրացանն աննպատակ չխկացրեց.

— Մա՞րդ ես, գե՞լ ես… ո՞վ ա…

— Մենք ենք, — լսվեց ներքևից և չորս-հինգ համագյուղացիներ մոտեցան։

— Սահակ ապերն ասաց՝ ջահելները վաղ գնացին, առանց պատրաստություն տեսնելու։ Մեզ ղրկեց, ասաց գնացեք, բողարին ու չոլոյին հետներդ տարեք, մեկ էլ էս մազութած շորերը, վառելու համար։

Գյուղացիները շատ ուրախացան։

— Դե, հմի լսեք. իրար չկորցնեք, շատ էլ չհեռանաք։ Սենո, լավ կանես թե թվանքը լցնես։

— Լցրած ե…

— Լավ։ Դե գնանք։ Մազութը վառի։

Մի կտրտված փոցխի ծայրին կապված էր մազու-

թոտ գնցատու մի մեծ կտոր. գյուղացիներից մեկը վառեց լուցկին և մոտեցրեց շորերին։

Յեվ հենց նոր էր բոցավառվել մազութը, մեր մի քիչ հեռվից, անսպասելիորեն լսվեց.

— Ո՜ւ ու՜ ու՜ ու՜...

Խառնվեցին իրար։

— Չվախենա՛ք։

— Չցրվե՛ք։

— Իրար հետ։

Յերկու-յերեք յերիտասարդներ առաջ վազեցին և մի քանի քայլից հետո յետ շրջվեցին ու բղավեցին.

— Եկե՛ք...

Յեվ գյուղացիներն առաջ վազեցին։

Վոչ ոք չէր ուզում յետ ընկնել, մենակ մնալ։ Սկսեցին վազել. իրարից առաջ անցնել և հասնել առջևից գնացողներին։

Ու դրա համար, գյուղացիներն սկսեցին ավելի արագ գնալ, ընկել, բարձրանալ։ Միայն թե յետ չմնան։

Նորից լսվեց վոռնոց։

Առջևից գնացողները մի րոպե, բնազդաբար կանգ առան, ապա առաջ շարժվեցին. Նրանցից մեկը յետ դարձավ ու բղավեց.

— Կրակը բարձր պահի...

Յետևում նույնպես բղավեցին.

— Կրակը բարձր պահի։

— Հարա՜յ... հարա՜յ... հասեք,—լսվեց առջևից։

Գյուղացիները վազեցին, քրտնած, հոգնած, ձյան հպումից սառած ձեռներով։

— Հարայ, գելե՜րը, հասեք...

Հասան։ Ու միասին, «հուռռա՜» բղավելով վազեցին։

Յերբ լույսը բավական մոտեցավ, հեռվից նկատվեցին չորս-հինգ գայլերի ստվերներ, պպզած քարերի վրա։

— Հուռռռա՜ա՜...

Գայլերը զարմացած վեր յելան և դանդաղ յետ քաշվեցին։

— Վրա՛ տուր, վրա՛ տուր, վրա՛ տուր...

Յեվ մեծ ուրախությամբ տեսան հողաշենցիները, թե ինչպես արագացրին գայլերն իրենց ընթացքը և լույսից, ձայներից ու բազմությունից վախեցած, փախան։

Գյուղացիներն անասելի վոգևորվեցին։

— Չհեռանա՛ք, իրար հետ

— Իրար հետ։ Դե քշի՜...

Ու վազեցին փախչող գայլերի յետևից։

Յեվ այդ ընդհանուր ժխորի մեջ, յերբ ամեն մարդ աշխատում էր մյուսներին մոտ լինել, և վորքան մոտ էր լինում, այնքան սիրտ էր առնում,—լսվեց գյուղացիներից մեկի ձայնը.

— Սենո՜...

Սենոն միակ հրացանավորն էր։ Մյուս գյուղացիներն էլ լսեցին, հասկացան և սկսեցին նույնպես բղավել.

— Սենո՜ո՜ո՜...

— Սարիբեկա՛նց Սենո՜...

Մի քիչ հեռվից լսվեց.

— Էհե՜յ. եստեղ եմ։

— Թվանքդ բեր։

Վոչ մեկը չկանգնեց։ Սենոն վազեց, հասավ ու հրացանը ձեռքին բռնած հարցրեց.

— Ասում եք խփե՞նք...

— Կրակի՛...

Ծունկի յեկավ Սարիբեկանց Սենոն, բերդանկան դեմ արավ ուսին ու փողը քաշեց։

— Գո՜ւմփ,—լսվեց Հողաշենի պես հին ու կիսախարխուլ հրացանի ձայնը, իսկ դրանից հետո, հեռվից՝

— Ո՜ւ ու՜ ու՜...

Սենոն նորից մի փամփուշտ դրեց հրացանի մեջ և

կրակի լույսի տակ, նկատելով փախչող գայլերին, հրացանն այն կողմ ուղղեց։

— Փուճը, — լսվեց նորից։

— Մեկ էլ, Սենո...

Բայց նախքան Սենոն կկրակեր, դեմից լսվեց մի սարսափելի, վայնասունի նմանվող ոռնոց

— Կպավ...

— Պատրոնը կպավ։

Ու նորից մազութի աղոտ լույսի տակ, առաջ վազեցին հողաշենցիները։

Երբ որ, վիրավոր մի գայլ ընկել էր ձյան վրա ու վռնում էր, իսկ ավելի հեռվում չերևում էր փախչող վոհմակը։

Հասան հողաշենցիները։

— Մուղդա կաց չկծի։

— Տուր...

— Խփի...

— Տուր...

Ու մահակ մահակի ետևից, գերանդի գերանդու, — հարվածում էին գյուղացիները։

Գայլը սատկեց։

— Հրա մի լույսը դեսը բեր տեսնենք ինչ գազ ա եղ-գել սատածը։

Լույսը մոտեցրին։

Գյուղացիները կռացան և սկսեցին նայել։

— Էս հո իսկը շան նման ա, — զարմացավ մեկը։

— Հա...

Ու լուռ սկսեցին նայել։

Մի գյուղացի, ստուգելու համար, թե իրոք սատկած է գայլը, վրա բերեց մահակը և մի հատ խփեց գլխին։

Սատկած էր։

Ապա, համոզվելով որ գազանը շունչը փչել է, բռնեց պոչից ու շուռ տվեց մյուս կողքի վրա։

Մի ուրիշ գյուղացի, որի ոտքի մոտ ընկավ գայլի գլուխը, բնազդաբար ետ քաշեց ոտքը։

— Բա մեր շների ինչ եղան...

Նոր միայն նայեցին գյուղացիները և զգացին նրանց բացակայությունը։

Վախկոտ Բողարն ու Զալոն վաղուց էին քաշել պոչները ու փախել ետ, դեպի գյուղ։

— Դե յետ դառնանք։ Նա լավ ա։ Էլ գելը չի կարա մեր դեզին մոտենա։

— Մոտեցավ, — էլի կգանք...

Ու վերադարձան դեպի գյուղ։

Ճանապարհին մարվեց մազութոտ ջնջոտին, բայց գիշերվա մութն այլևս առաջվա պես սարսափելի չէր երևում և առաջվա պես վտանգավոր...

Ներքևում, գյուղում, դեռ երևում էին փոքրիկ ճրագները։ Գյուղում մնացածները դուրս էին եկել տներից և ճրագները ձեռքերին բռնած, սպասում էին վերադարձողներին։

Բլուրից գյուղ իջան հողաշենցիները և իրենց ետևից քարշ տալով սատկած գայլի դիակը, անցան գյուղի փողոցով։ Յուրաքանչյուր խրճիթի դռան առաջ հավաքվել էին գյուղացիներ և նայում էին եկողներին, ապա նկատելով գայլին, առաջ էին վազում և ահով նայում։

Բերեցին գայլի դիակը, գցեցին կալի մեջտեղը, բոլորը տեսան, զարմացան, խոսեցին, — ապա մտան իրենց տները։

Յեվ այդ որն առաջին անգամ, — Հողաշեն գյուղը հանգիստ քնեց։

10.

Քաղաքի վորսորդական պիտույքների խանութներից մեկը մտավ Գեվոն, — հաստ քուրքի մեջ փաթաթված։

— Բարև ձեզ...

— Ա՛յ բարև՛, ընկեր Գևո։ Ես ինչու չես ուշ-ուշ յերևում։ Մի մոտ արի, տեսնենք։

Գևոն մոտ գնաց, հանեց փափախը, թափ տվեց, նորից դրեց գլուխը։

— Ի՞նչ անեմ, — պատասխանեց նա, ժամանակ չի լինում. բանի-գործի տեր մարդիկ ենք։

— Ես ինչ խաբար է, մորթի չես բերել, հարցրեց խանութի վարիչը։

Գևոն ծիծաղեց.

— Ասա սկի գել մնացե՞լ է, վոր մորթի լինի... Ես քանի տարի չէ, վոր կոտորում ենք։ Գե՞լ կդիմանա...

Յեվ հանգամանքից ոգտվելով, սկսեց գովել իր և իր ընկերների քաջագործությունները։

— Է, ընկեր Գևո, հիմի դու են ասա, մոդ է պակաս թե մազդ, — կատակի տվեց խանութի կոմյերիտական ծառայողներից մեկը։

— Թփանքիս համար մի քիչ բարութ ու սաչմա պետք է առնեմ։ Պրծել ու։ Ցովեմներին իմ ձեռքով չեմ բռնելու...

Յեվ այսպես, մտերիմ խոսելով, գնեց իր և իր ընկերների համար վառոդ ու մանրագնդակ, տեղավորեց կոշկե պայուսակի մեջ և դուրս յեկավ խանութից, չմոռանալով մի սրտալի «Մնաք բարև» ասել ներսում յեղողներին։

Քաղաքում իր մյուս գործերը վերջացնելուց հետո, յերեկոյան դեմ Գևոն վերադարձավ դեպի իրենց գյուղը, — Հորաչեն։

ՀԱՑՎՈՐԸ

1.

Մարոն իրենց գյուղի ամենագեղեցիկ աղջիկն էր։
Այդպես եյին ասում գյուղի ջահելները։

Ամեն տարի, յերբ բացվում եր գարունը և գուլաբշին եր բարձրանում գյուղի դաշտերում, սարերում, ամեն տարի, յերբ վերադառնում եյին թռչունները, — Մարոն ավելի յեր հասունանում, մեծանում ու գարնան պես բացվում եր ինքն էլ։ Ավելի գեղեցիկ եր սկսում ժպտալ, աչքերը կարծես ավելի սև եյին յերևում, իսկ հասակն առնում եր անընդհատ, անընդհատ...։

Ամեն տարի, յերբ ձնհալ եր լինում ու դաշտերում բարձրանում եր տաք գոլորշին, Մարոյի ջահել հասակի վրա ավելանում եր մի տարի էլ։

Յերբ ծնվել է Մարոն, նրա հայրը գոմի մեծ գերանի վրա դանակով մի նշան է արել, և նրանից հետո, ամեն անգամ յերբ մի նոր գարուն է ավելացել Մարոյի տարիքի վրա, գերանի վրա մի նոր խազ է ավելացրել նրա հայրը։ Իսկ յերբ լրացել է Մարոյի հինգ տարին, — մեռել է Մարոյի հայրը և թողել է նրան ու մորը մենմենակ։

Մեռել է Մարոյի հայրը, թողել է նրան ու մորը մենմենակ և թողել է իր յերկու յեղբայր յեզներին, իբրև միակ ժառանգություն։

Ապրել են Մարոն և իր մայրը, նրանց պահել են յերկու յեզները։

2.

Մարոյենց գոմի մեծ գերանի վրա տասնյոթ խազ կար արդեն։ Ավելի, չեր ուռճացել ու հաստացել Մարոն, ավելի չեր կորացել ու պառավացել նրա մայրը։ Մեկը մոռացել եր իր հորը, իսկ մյուսը դեռ հիշում եր իր ամուսնուն։ Յեվ ամեն յերեկո, յերբ բառաչոցով դեպի գոմն եյին գնում այդ յերկու յեզները,—Մարոն ու Խնձորը, դռան շեմքին նստած Մարոյի մորը թվում եր թե ահա, նրանց յետևից տուն կմտնի իր հոգնած ամուսինը։

Բայց նա չկար և նրա ձայնը չեյին լսում վոչ իր կինը և վոչ էլ յերկու յեղբայր-յեզները։

Մարոն ու Խնձորը, այդ յերկու տասուչ ու ժիր յեզները, չորս տարուց ավելի չեր, վոր պահում եյին Մարոյենց ընտանիքին։ Յերբ արդեն մեռել եր Մարոյի հայրը, նրա մայրը յեզները փոխ եր տալիս գութանավորներին, վորոնք բանեցնում եյին նրանց և մի որ էլ, իբրև վարձ, վարում եյին նրանց արտը։

Այսպես ապրում եյին մայր ու աղջիկ, մենակ, իրար հետ, և նրանց պահում ու կերակրում եյին արդեն ծերացող Մարոն ու Խնձորը։

3.

Ինչ լավ ե գարնան բացվելու որերին նստել արևկող մի պատի տակ, նայել գոլորշի արձակող դաշտերի կողմը և մտածել անցյալ տարվա մասին...

Հիշել, թե ինչպես բացվեց գարունն անցյալ տարի, ինչպես վարարեցին գյուղի առուները և ինչպես տաքացրեց արևը...

Յերբ դեմքիդ փչի դեռ սառը գարնանային հովը, յերազել՝ թե ինչքան տաք եր անցյալ ամառ և հրճվել, վոր նորից գալիս են այդ որերը։

Ծածկել ամառային մի սեր ամառ որերին, խոտի դեզերի շվաքների տակ...։

Գոմի մեծ գերանի վրա Մարոն իր ձեռքով դեռ նոր եր քաշել տասնյոթերորդ խազը, դեռ նոր եր ձնհալը վերջացել և դեռ գոլորշի յեր բարձրանում գյուղի դաշտերում։

Նա այլևս յերեխա չեր և նրա կրծքի տակ յերեխայի սիրտը չեր թրթռում այլևս։ Դեռ անցյալ տարի, նա սիրահարվել եր իրենց գյուղացի Սեթի հետ։ Հաճախ եր հանդիպում նրան ու ժպտուն հայացքներով եր պատասխանում նրա ժպիտներին։ Սրանից բարևում եր Սեթը նրան և մի քանի անուշիկ խոսքեր ասում։

Իսկ հետո, յերբ Մարոյենց արտն եյին վարում և Սեթը գութանի հոտաղ եր, Մարոն ամեն անգամ գութանավորներին հաց տանելիս անցնում եր Սեթի մոտով, նայում եր նրան, ժպտում, իսկ յեթե տեսնողներ չեյին լինում, բարևում եր Մարոն ու բարև առնում։

Յեվ աշխարքով գոհ եր Մարոն։

Հետո յեկավ քաղի ժամանակը։ Յերբ Մարոյենց արտն եյին քաղում, քաղվորներին հաց տանողն ելի ինքն եր։ Տանում եր մոր յեփած խաշիլն ու ձվածեղը և մինչև արտ ձգվող ճանապարհը նրան թվում եր չափազանց կարճ...

Մի որ էլ, յերբ ելի հաց եր տանում, տեսավ Սեթին, վոր արտի գլխին, քաղած հասկի խուրձերից մեկի շվաքում իրեն եր սպասում։

Մոտեցավ, բարևեց և զգուշությամբ նստեց նրա կողքին։

...Քաղվորները չտեսնեն...

Բաց արեց հացի կապոցը, հանեց այնտեղից յերկու գաթա ու տվեց Սեթին։

— Սա էլ քեզ համար. յես եմ թխել։

Սեթը թևը տարավ նրա մեջքով, փաթաթվեց, գրկեց նրան ու յերեսը համբուրեց։

Շփոթված վեր թռավ Մարոն ու շտապեց քաղվորների մոտ։

...Զանգն...

Հիշում էր Մարոն այդ բոլորն ու հուզմունքից կարմրում։

Դեռ նոր էր վերջացել ձնհալն ու դեռ բարձրանում էր գոլորշին գյուղի դաշտերում։

...Յերանի շուտ գար վար ու ցանքսի ժամանակը...

Ամբողջ ձմեռը Մարոն ու Սեթն առանձին իրար չեյին հանդիպել։

Մարոն միայն աղբյուրից ջուր բերելիս էր տեսնում Սեթին, նայում ու ժպտում։

Այդ էր ամբողջը։

Իսկ այդքանը շատ քիչ էր։

Չէ՞ որ գոմի մեծ գերանի վրա տասնյոթ խազ կար արդեն...

... Ցնորել ամառ օրերի ամառային մի սեր, խոտի դեզերի շվաքների տակ...։

4.

Ի՞նչ բան է յերկաթը...

Յերկաթը կարող է մարդկանց լացացնել, ուրախացնել...։

Կարող է մարդկանց հանել իրար դեմ, կարող է մարդկանց իրար հետ կապել։

Յերկաթը կարող է տակնուվրա անել ամեն ինչ և հիմքից փոխել աշխարհը...։

Կարող է սիրելի Մարո...

Դեռ անցյալ տարի չէ՞ր, որ գյուղի դաշտերով արորն էր անց կենում ծանր, դանդաղ...

Դեռ անցյալ տարի չէ՞ր, որ Մարոն ու Սեթը և ուրիշ ջահել տղաներ ու աղջիկներ դուրս յեկան դաշտ կլոր պար բռնելու և ամեն ինչ սովորական էր...

...Ինչ բան է յերկաթը...

Գյուղին յերկու հատ տրակտոր ձեռք բերելու համար վաղուց էյին աշխատում գյուղխորհուրդն ու գյուղացիները...

Գյուղխորհրդի նախագահը շատ անգամ էր ասել գյուղացիներին տրակտորի մասին, խոտհար մեքենայի մասին և վերջն ավելացրել էր.

— Էն վախտը, դե ձեր լեզները մացու արեք, դեբանդիններն ու փոցխերն էլ յերեխանց խաղալիք։

Սիրուն Մարոն տրակտորի մասին մենակ այն գիտեր, որ տրակտորը յերկաթե մաշին է, որից լծում են գութանն ու վար անում։ Մեկ էլ այն, որ նրա վարը լավ է լինում ու շուտ։

Այսքանը։

Բայց յեկավ ժամանակը, որ Մարոն էլ, մյուսներն էլ անձամբ տեսնեյին տրակտորը և գաղափար կազմեյին նրա մասին։

Յերկու տրակտորները բերեցին գյուղ։

Ինչի՞ չէր նման տրակտորը։ Գյուղացիներից շատերն այդպիսի բան չեյին տեսել։

Յերբ նրանք անցնում եյին գյուղի միջով, չոր ու հաղթական, գյուղացիներից շատերն իրենց փափախները վար եյին առնում նրանց դիմաց։

Ուրախությունից էր այդ, զարմանքից։

Այդ օրը, գյուղի թոնիրների ծխի հետ մի նոր ծուխ էլ խառնվեց ու վեր բարձրացավ,— տրակտորի ծուխը։

Այդ օրն իրար հանդիպեցին աթարի ու բենզինի ծուխը,— մոտիկ, շատ մոտիկ, բայց դեմառդեմ կանգնած թշնամիների պես։

...Ի՞նչ է յերկաթը...

Այս գիշեր, ինչ որ՝ ուրիշ կերպ իջավ խավարը գյուղի վրա։ Ո՞վ կա գյուղում, լավ ու անծանոթ...

Ցերեկով մեկը չեկավ գյուղ, յերկաթաքայլ շրջեց, իսկ հիմի հանգստանում ե Մարոյենց դատարկ մարագում։

Վաղը դաշտ դուրս կգա։

Ի՞նչ պիտի լինի վաղը։ Վոչինչ։ Յերկու տրակտորները առավոտ կանուխ պիտի դաշտ դուրս գան ու պիտի վարեն։ Ել ինչ պիտի լինի վոր։

Մեկն այս գիշեր քրդըր ձայնով յերգ ե ասում գյուղի դատարկ փողոցներում ու շրջում ե։

...Վաղն ինչ պիտի լինի...։

5.

Գյուղացիներից նրանք, ովքեր սկզբից փող չեյին տըվել տրակտորը գնելու համար, սկսեցին վարել իրենց արտերը։ Իսկ հետո, մյուսները, ովքեր փող չեյին տվել սկզբից, եժան մի վճարով վարձում եյին տրակտորներից մեկնումեկը և վարել եյին տալիս իրենց արտերը։

Յեվ կատարվեց գյուղխորհրդի նախագահի ասածը։

Գյուղացիներից վոմանք ծախեցին իրենց յեզները, վոմանք ել, ովքեր վոր սայլ ունեյին, լծեցին ու գընացին աշխատանքի։

Առաջին իսկ որերին, գյուղացիներից շատերն զգացին տրակտորի օգուտը։ Շատ կնճռոտ ճակատներ հարթվեցին և անժպիտ դեմքեր ժպտացին։ Գյուղացիները ծախում եյին իրենց յեզները և նրանց գոմերում, ախոռներում յերևում եյին կովեր, վոչխարներ, այծեր։

Մարոյի մայրը նստեց հաշվի։

Մտածեց Մարոյի մայրը, մտածեց և յեկավ այն յեզրակացության, վոր յեզները պետք ե ծախել։

— Մարա՛լ յեզ, Խնձոր յեզ...

Մարոյի մայրը համբուրեց նրանց խոշոր աչքերը։

— Տասնչորս տարի դուք պահեցիք մեր ոճախի կըրակը, Մարա՛լ յեզ, Խնձոր յեզ...

— Իմ մարդի հալալ ախպերներն եյիք, մինչև որ նա մեռավ։

— Յերկուսդ մնացիք։

— Դե, հիմի յել յերկուսիդ եմ ասելու «գնաք բարի» Մարալ յեզ, Խնձոր յեզ։

Ու մի որ ել, յեզներն ուղարկեց քաղաք ծախելու։

Մի կով առավ յեզների գնով և ավելացած փողով ել յերկու վոչխար։

Կովի անունը Մարալ դրեց Մարոյի մայրը ի հիշատակ Մարա՛լ յեզան։

Իսկ յերբ գյուղի արտերից շատերը սևացան խոր ակոսներից, Մարոյի մայրը գնաց գյուղխորհուրդ, արտը վարել տալու համար տրակտոր վարձելու։

...Գյուղում ինչքա՜ն բան փոխեց տրակտորը...

— Ծը՜ռռ... ճը՜ռռռ...

Կասես հիվանդի ճանկ լինի։ Այդ խեղճ արորով հողի յերեսն ինչ՞ յես չանգռում, այ մարդ...

Տղադ գալիս ե քո յետևից. նա լցրել ե սերմացուն իր գոգի մեջ ու շաղ ե տալիս։ Դու մրոտ ես ցանում։

— Ծը՜ռռռ... ճը՜ռռռ...

Հրեն, այն կողքի արտումն ել են վար անում։ Վազգի՛, այ մարդ, վռազի, յետ չմնաս։ Տեսնենք վորդ շուտ կվարի...

Քու յեզները գյուղի մեջ յեզներից ամենալավերն են, այնպես չե՞։ Զերթ ես քսել նրանց մորթի վրա, ուտես վոնց են փայլում նրանք արևի տակ...

Դե, վռազի, հաա։

— Պա՛հ, մի նայի, այ մարդ...

Այս քանի՞ ակոս յեղավ հարևան արտում։ Տա՛ս ե։ Քսա՞ն ե։ Յերեսուն։

— Դե վարի, ե, անաշեն։

— Ծը՜ռռ...ճը՜ռռ...

Թոփը դեմ առավ քարի։ Կկոտրվի՞։ Դեն նետիր քարը։ Ասում ես դժվա՞ր է։ Դե պրծի, ուշացար։

Դանդաղ յերգում է մաճկալը, դանդաղ քշում է հոտաղը, դանդաղ գնում են յեզները, դանդաղ բացվում են ակոսները։

— Հո՛փ։

Ի՞նչ յեղավ։ Յեզը նստեց, խոփը ծռվեց, լուծը ջարդվեց...

Կանգնել է շվար մաճկալը՝ նստած յեզի մոտ, ծռված խոփի կողքին, ջարդված լուծի դեմ։ Ահա նա ձեռքը տարավ գլխարկին, հանեց․

— Շե՛ն մնաս, մեր հանդերի եգիթ...

Հարևան արտի մեջ տրակտորը վերջին ակոսը բաց արեց և անցավ մյուս արտը։

6.

Մարո՛, սիրո՛ւն Մարո։

Այդ ինչո՞ւ չես նստել այդտեղ, պատի տակ ու ծընկներդ ել գրկել ես յերկու ձեռքերով։ Օրը վար չեկավ, Մարո՛, վեր կաց, հաց տար գութանավորին։

Մարո՛, այդ ինչո՞ւ չես այդպես տխուր ու ասես թե՛ լացել ես։ Գութանավորին ինչո՞ւ հաց չես տանում։ Սեթը հիմի ենտեղ քեզ սպասելիս կլինի։

Հիմի աչքը ճամբին է...

Սեթը քեզ խաբե՛լ է, Մարո։ Սեթն ուրիշ աղջկա հե՛տ է սեր անում հիմի։ Սեթը խոսքը չպահե՛ց։

Դու գլուխդ օրորում ես, Մարո։ Չէ՛, ասում ես դու։ Սեթը չի խաբել, վոչ ել ուրիշ աղջկա հետ է սեր անում։

Ել ինչն է պատճառը, վոր եդքան տխուր ես։

Ել ինչն է պատճառը, վոր նստել ես այդտեղ, ձեր խրճիթի պատի տակ ու ծկներդ ել գրկել ես յերկու ձեռքով...

Դու բարձրացրիր սիրունիկ մատդ և դեպի ու՞ր ես ցույց տալիս, Մարո։

Դեպի ձեր ա՛րտը․ հը, ի՞նչ կա այնտեղ։

Այնտեղ յես վոչինչ չեմ տեսնում, Մարո։ Վոչ գեղին յեզներն են յերևում, վոչ ել մաճկալ Գևոյի փափախը։

... Վոչ ել Սեթը յեզների լուծի վրա։

Այստեղից յես վոչինչ չեմ լսում, Մարո։ Վոչ հոտաղների հոռովելը, վոչ ել մաճկալի «հո-հո»-ն։

...Վոչ ել Սեթի ձայնը։

Վոչինչ չկա այնտեղ։

Դու ելի դեպի ձեր արտն ես ցույց տալիս․ ախր ինչ կա այնտեղ։

Վոչինչ չկա, Մարո։

Այնտեղից մի փոքրիկ ծուխ է յերևում, ուրիշ վոչինչ։ Յերևի գառնարածները կոճղեր են հավաքել ու կրակի վրա խորովում են։

Յեվ այդ կրակի ծուխն է յերևի։

Այնտեղից տրաքտրաքոցի թույլ ձայներ են գալիս, ուրիշ վոչինչ։ Յերևի ելի գառնարածներն են, վոր հնուց մնացած վառոդ են գտել ու տրաքացնում են։

Յեվ այդ վառոդի ձայնն է յերևի։

Դու ելի ցույց ես տալիս ձեր արտը։

Կա՛ց, Մարո։

Յես տեսա։

Այն տրակտորն է, վորից ծուխ է յելնում ու ձայն։ Յերկաթե տրակտորը։

Դրա համար ես տխուր։

Գիժ, գիժ Մարո։

Բայց ինչո՞ւ յես տխրում։ Հիշիր կովն ու վոչխարները ձեր ախոռում, հիշիր մորդ, վոր շատ հոգսերից ազատվեց։

Ել ինչո՞ւ յես տխուր։ Սեթի համար, վոր ել չկա ձեր արտում։

...Մարո, գիժ Մարո...։

...Դեռ անցյալ տարի չէր, որ յես ու Սեթը, և ուրիշ շատ ջահել տղաներ ու աղջիկներ, դուրս յեկանք դաշտ կլոր պար բռնելու, և ամեն ինչ սովորական եր։

Ինչը փոխվեց։

Այս տարի նորից գարունը բացվեց և բացվեց ճիշտ անցյալ տարվա նման։ Կարծես ամեն ինչ նույնն եր։

Ինչը փոխվեց։

Կարծես ամեն ինչ նույնն եր և անցյալ տարվանը։ Նորից պիտի գար վարի ժամանակը և մեր արտում Սեթը պիտի յերգեր։ Ելի պիտի գար բացը և ելի դեզերի շվաքում Սեթը պիտի սպասեր։

Հիմա, յերբ ներս եմ մտնում մեր գոմը, վոչ Մարալըն ե ենտեղ, վոչ ել Խնձորը։ Դուրս եմ գալիս հանդ, Սեթը չկա։ Ել յես ում հաց տանեմ, սրտանց բարեեմ ու խոսեմ հետը։

...Ինչը փոխվեց...

7.

Քաղաքում, մի մեծ պահեստում, իրար կողք-կողքի դարսված եյին տրակտորներ, խոտհարներ, գերանդիներ...

Մեծ եր պահեստը, բայց հո մի գյուղի չափ չկար։ Կես գյուղի չափ չկար։—Գյուղի մի թաղի չափ ել չկար։

Ել ինչպե՞ս գուշակեր գյուղացի Օհանը, կամ մի ուրիշը, վոր յերբ դուրս գան պահեստից այդ յերկաթները ու շարժվեն դեպի գյուղերը,— ամբողջ մեր յերկիրը կը փոխվի։

Ի՞նչ ուժ եր թագնված այդ պահեստի ներսում...

Բանվորների ու չքավոր գյուղացիների պետությունը դուրս հանեց մեքենաներն ու շպրտեց մինչև իսկ յերկրի ամենահեռու անկյունները...

...Ամբողջ մեր յերկիրը պիտի փոխվի...

Նստել ես տրակտորի վրա ու վարում ես, Վարոս

Բայց գիտե՞ս, վոր տրակտորի անիվի յուրաքանչյուր պտույտն ինչքան ե փոխում մոտիկ գյուղն ու հեռավ ը բոլոր գյուղերը։ Յերեկ գյուղացի Օհանն իր արորը մանրեց ու լցրեց թոնիրը։ Բոցը բարձրացավ, բարձրացավ ու փթած արորը վառվեց։ Այսոր Պետրոսն իր յեզներից մեկը մորթեց, իսկ մյուսի գնով գերաններ առավ նոր խրճիթ շինելու համար։

Նստել ես տրակտորի վրա ու վարում ես, Վարոս։ Մենակ հողն ե ճեղքում խոփը։ Նա ճեղքում ե այն մթին խավարը, վոր կար գյուղի վրա թե գիշերով ու թե ցերեկներին։ Անիվներն առաջանում են ու նրա տակ ճխլվում ե Սաքոյի յեզասայլը։

Գյուղը բենզինի հոտ առավ։ Գյուղում բենզինի ծուխ յերևաց։ Բենզինն ու արորն իրար կողք-կողքի կապրե՞ն.— չեն ապրի։ Բենզինն ու արորն իրար հետ կհաշտվե՞ն— չեն հաշտվի։

Գյուղը յերկաթ հագավ։ Գյուղի հանդերում յերկաթը շրջեց։ Յերկաթն ու ցեխն իրար կմիանա՞ն.—չեն միանա։ Յերկաթն ու խիճերն իրար կը դիմանա՞ն.—չեն դիմանա, մեկը պիտի հաղթի։

Տրակտորը քաղաքից յեկավ բարիի պես ու ժպիտի պես յեկավ։ Ի՞նչ նոր շունչ բերեց նա։

Յեկավ, գնաց հանդ ու տիրեց։ Հակոբը «չեն տեսա» ասաց տրակտոր ուղարկող տերությանն ու Հակոբի հետ, վողջ գյուղը վողջունեց նրան...

Ամբողջ մեր յերկիրը պիտի փոխվի...

Վարոսը տրակտոր վարելու մեջ վարժ եր։

Նա յեր վարում տրակտորներից մեկը։

Քաքսված մազութից փայլող բանվորական շորերը հագին, գլխարկը թեքած ճակատի վրա, ղեկը մկանոտ ձեռքերում, իր տրակտորի հետ գնում ու գալիս եր արտի յերկայնքով բանվոր Վարոսը։

Համարյա կեսոր եր արդեն։ Յեվս մի կես ժամ և արտը վարած պատրաստ կլինի։

Վարոսը շուրջը նայեց։

Յերբ նա քաղաքի դաշտերում էր աշխատում, մենակ չէր․ շատ տրակտորներ կային և շատ ընկերներ։

Իր տրակտորի վրայից, բարձր ձայնով, վորպեսզի լսելի լինի, խոսում էր Վարոսը մյուս տրակտորների վրա նստածների հետ։ Շուտ վարելու մեջ մրցում եյին, հայտարարում և դեռ ուրիշ ինչքան բաներ եյին անում։

Իսկ այստեղ նա մենակ է և ձանձրանում է։

Դեռ չի սովորել մենակությանը։

Առաջին որերին, վոչինչ,— լավ էր։ Գյուղացիները գալիս եյին, ժամերով կանգնում և դիտում տրակտորի վարը։

Բայց հիմա սովորական է դարձել տրակտորը և քիչ է պատահում մի անգործ գյուղացի, վոր կանգնի յերկար և նայի։

Իսկ Վարոսը դեռ չի սովորել մենակությանը և շատ հաճախ ձանձրանում է։

Գոնե Սուրենը մոտ լիներ։

Բայց նա յել, մյուս տրակտորի հետ, գտնվում է գյուղի հակառակ ծայրում։

Յերևի նա յել է մենակ։

Հեռու ճանապարհի վրա մեկը յերևաց։ Վարոսը նկատեց նրան և ելի շարունակեց իր գործը։ Յերբ հասավ արտի մյուս ծայրին և յետ էր դառնում, ճանապարհով յեկողն ավելի էր մոտեցել և յերևում էր ավելի վորոշ։

Հայացքը լարելով, Վարոսը տեսավ վոր յեկողը մի աղջիկ է, ձեռքին փոքրիկ կապոց։

. . . Ով էլ լինի, մենակ մարդու համար հետաքրքիր է . . .

Աղջիկը մոտեցավ արտին։

. . . Այստեղ է գալիս . . .

Վարոսը տրակտորը դարձրեց և անցավ արտի մյուս կողմը վարելու։

Աղջիկը մոտեցավ։

— Բարև, յեղբայր։

Վարոսը տրակտորը կանգնեցրեց։

— . . . Բարև . . .

— Մարեն է ուղարկել,— ասավ աղջիկն ու ձեռքի կապոցը յերկարացրեց Վարոսին։

— Ի՞նչ է։

— Ճաշ։

— Ես ինչ լավ մարե յես ունեցել,— ծիծաղեց Վարոսն ու վար իջավ տրակտորի վրայից։

— Նա ձեր տղա՞ն է։

— Հա։

— Անունդ ինչ է, աղջիկ։

— Մարո։

Վարոսը բաց արեց կապոցը, շորը փռեց գետնին, հացերը դարսեց մի կողմ, ճաշի ամանը մեջտեղ բերեց և սկսեց ճաշել։

Մարոն դեռ կանգնել էր շփոթ դրության մեջ։

Վորտեղից-վորտեղ . . .

Մի ժամանակ նա հաց էր բերում գութանվորներին։ Սեթն իրեն էր սպասում։ Ժպտում եյին իրար տեսնելիս։ Մի անգամ էլ, քաղած հասկի մի խուրձի շվաքում Սեթը գրկեց իրեն, համբուրեց . . .

Իսկ հիմի, անծանոթ մի բանվոր և մեկ էլ տրակտորը։

Անծանոթ տրակտորը։

Մարոն քայլերն ուղղեց դեպի նա։

Նայեց Մարոն, յերկար նայեց տրակտորին։ Ծանր է յերևի։ Շատ ծանր։ Ինչքան մեծ է, ամուր . . . Մարդ իմանա. սա կարո՞ղ է ջարդվել-չէ, ինչո՞ւ պիտի ջարդվի վոր . . .

Նա մի րոպե նույնիսկ վախեցավ։ Ապա նորից նայեց մոտիկից, ուշադիր։ Ուրեմն, սա յեր այդ բոլորի պատճառը. լավի ու վատի։

Սա չէր, այս անշունչ չերկաթը . . .
Նա վերադարձավ Վարոսի մոտ։
— Դու ինչու չես ուտում, ընկեր Մարո։
— Յես կերել եմ։
— Ես հացն ով է թխել։
— Յես։
— Շնորհքով աղջիկ ես յերևում, ապրես դու։
Վարոսը վերջացրեց ուտելը, ճաշի ամանը կապեց շորի մեջ և տվեց Մարոյին։
— Մարես ասում եր, շուտ ա պրծնելու վարը։
— Հա։ Հենց եսօր կվերջացնեմ։ Մի քիչ տեղ է մնացել։
Մարոն դեռ չեր հեռանում։ Վարոսը նույնպես։
— Ինչքան սիրուն է անխծված աղջիկը . . .
Վարոսը շուրջը նայեց։ Ուզում եր մի պատճառ գտնել խոսելու, մի բանի մասին հարցնելու, մի բան պատմելու։ Տրակտորի մասին ինչու չի հարցնում Մարոն։ Ինքն ուրախությամբ կպատասխաներ։
Մարոն պատրաստվեց գնալու։
— Ինչ խոսել, ինչ հարցնել . . .
— Մարո, մի բան վոր հարցնեմ, չես նեղանա...
— Հարցրու։
— Դու սիրած ունես . . .
Մարոն բարկացած նայեց նրան իր սիրուն, սև աչքերով, վոչինչ չասաց ու հեռացավ։
— Ափսոս . . . թե ինձ սիրեյիր, յես քեզ կառնեյի, ասեց Վարոսը նրա յետևից։
Մարոն լսեց, կարմրեց ու շտապեցրեց քայլերը։
— Սիրուն Մարո . . .

8.

Վերադառնում եր նա ճանապարհով։
Վերջապես ինքն էլ տեսավ տրակտորը մոտիկից, տե-

սավ արտում, ուր դեռ անցյալ տարի գութանավորներն եյին։
Մայրը ճաշն յեփել եր և ուղեցել եր վոր ինքը տանի։
. . . Ջահել աղջիկ, չոլ, ուրիշ մարդ չկա. վոնց ուղարկեմ մենակ աղայի մոտ . . .
Բայց Մարոն խնդրել եր մորը վոր ինքը գնա։
— Արտը հեռու, դու պառավ... կդադրես ..
. . . Մեկ էլ վոր, յես տրակտորի վարը չեմ տեսել. մի գնամ տեսնեմ եդ ինչ տեսակ բան ա...
Յև ահա, վերջապես ինքն էլ տեսավ։
... Գյուղում ինչքան բան փոխվեց...
Գութանատեր հարուստները կատաղել են տրակտորի դեմ։ Յեկավ, ձեռք մեկնեց աղքատ գյուղացիներին, իսկ իրենց տները քանդեց։ Այլևս վոչոք չի գնում իրենց մոտ, գութանը փոխ վերցնելու կամ արտը վարել տալու համար։
Հարուստ գյուղացիները կատաղել են տրակտորի դեմ։ Նրանցից վոչ մեկը տրակտորն առնելու մեջ բաժին չունի, իսկ հիմա, վոչ մեկն իր արտը տրակտորով վարել չի տալիս։
Տրակտորը Մարոյենցն է ու Մարոյենց պեսներինը։
Բայց Մարոն ինչու յե տխուր։
Ինչու՞ յե գլխիկոր։
Գլխակախ գնում եր նա դեպի գյուղ և չեր նկատում դեմից մոտեցող Սեթին ու մի քանի ուրիշ յերիտասարդների։
Գալիս եյին նրանք լուռ ու անժպիտ։
Յերևի կեսօրվա արևն արդեն սկսել եր նեղել։
Գալիս յեին նրանք, ուսերին գերանդիներ, փոցխեր։ Կողքերից կախ արած հացի փոքրիկ կապոցներ, հեսաններ և այլ իրեր։
Սեթը տեսավ Մարոյին և ընկերներից յետ մնաց։
Յերբ յերիտասարդներն անցան Մարոյի մոտով, նա վեր նայեց ու տեսավ նրանց։

...Սիրուն Մարո, մեզանից վոչ մեկինը չեղավ...

Սեթը ժպտեցավ։

—Մարո՞...

—Վա՜յ Սեթ ջան, բարև։ Էդ ո՞ւր ես գնում...

—Վերջիան եյիր գալի, Մարո։

—Արտից։ Տրակտորվորին հաց եյի տարել։

Կարմրեց Մարոն հանցագործի պես։

—Ախր էդ ո՞ւր, Սեթ ջան...

—Հեռու յենք գնում, Մարո։ Էս տարի գեղում աշխատող չունենք։ Մեր տեղ տրակտորն ա աշխատում, գե, նրան էլ հոտաղ պետք չի։ Մենք էլ, գեղի անգործ բատրակներս, վեր կացանք ու գնում ենք ուրիշ գեղում աշխատելու։

—Է՛, էն կողմի գեղերում...

—Վո՞նց ախր, Սեթ ջան։ Էն կողմի գեղերում տրակտոր չկա՞։

—Հլա չկա։ Էս տարի հլա չկա։

—Բա վոր բերեցին...

—Վոր բերեցին... Վոր բերեցին, ուրիշ գեղ կգնանք։ Մեր յերկրի մեջ գեղից էլ շատ բան։ Իսկ թե բոլոր գեղերն էլ տրակտոր ունեցան՝ կգնանք քաղաք։

—...Սեթ ջան...

—Գնամ, Մարո, յետացա։ Էս տարի իրար չենք տեսնի։ Դու ասա՝ վերջս ելի իրար հասնենք։ Ցես ելի կգամ մեր գեղը, ելի քեզ հետ սեր կանենք։ Թե պատահեց, մեկնումեկի հետ քեզ խաբար կտամ իմ մասին։

Սեթը նայեց շուրջը։

Տեսնող չկար։

Մոտեցավ Մարոյին ու համբուրեց յերեսը։

—...Մնաս բարև...

Մարոն յերկար նայեց նրա յետևից, մինչև վոր նա գնաց, միացավ միուսներին։

Արևի շողերի տակ փայլփլում եյին գերանդիները

վայրկենական փայլով, հետո մարում եյին և փայլում կրկին, կրկին...

...Գյուղում ինչքա՜ն բան փոխեց տրակտորը...

Մարոն դեռ նայում եր։

Ահա նրանք բարձրացան դիմացի բլուրը։ Մեկը յետ դարձավ ու նայում ե։ Սեթն ե...

Անպայման Սեթն ե։

Ահա հասան բլուրի վրայով ձգվող ճանապարհին։ Ահա ծավեցին։ Մի քիչ էլ վոր անցնի, էլ նրանք չեն յերևա...

Վերջին անգամ շողաց վերջին գերանդին և անցավ բլուրից այն կողմ։

Մարոն հառաչեց ու շարունակեց ճանապարհը։

...Սեթ, հիմա՛ր Սեթ, տրակտորն եկավ էլ կհասնի...

9.

Գյուղում մենակ սիրուն դաշտեր ու լեռներ կան։

Ծաղիկներ կան։

Առուներ։

Գյուղում քարքարոտ փողոցներ էլ կան, կեղտոտ գոմեր էլ, խարխլված խրճիթներ էլ...

Գյուղում մենակ աշխատավոր ու բարի մարդիկ կան...։

Թևոսենց Դավիթը գյուղի հենց մեջտեղում, աղբյուրից մի քիչ վերև, մի մեծ ու սիրուն տուն ունի։

Գյուղում յերեք տուն կա թիթեղածածկ։ Տերտերի տունը, հին քյոխվա Թաթուլինն ու Թևոսենց Դավիթինը։

Գյուղում յերկու տուն կա ծաղկազարդ փոքրիկ պարտեզ ունեցող։ —Հին քյոխվա Թաթուլինն ու Թևոսենց Դավիթինը։

Գյուղում մի տուն կա յերկու մեծ գութան և յոթ զույգ լծկան ունեցող։ —Թևոսենց Դավիթինը։

Առաջ, դեռ անցյալ տարի, յուրաքանչյուր գյուղացի, վոր անասուն չուներ, Դավիթի մոտ եր վազում իր արտը վարել-ցանել տալու համար։ Յև մենակ ինքն ու Դավիթը

գիտեյին, թե ինչն եր պատճառը, վոր ուրախ ներս մտնողը. մռայլված եր դուրս գալիս նրա տնից։

Այնուամենայնիվ, Թևոսենց Դավիթն իր յեզներն ու գութանները փոխ տալիս եր։

Իսկ վերցնողները քիչ չեյին։

Ուրիշ գործեր ել ուներ Թևոսենց Դավիթը։

Սերմացու յեր փոխ տալիս, փող, արտը վերցնում եր կիսովի ցանելու...

Հողամասերը կորցնելուց հետո, յերբ իր ատամները ջարդվեցին, նրա հույսը մնացել եր այդ գործի վրա։

Վատ չեր։

Յև գուցե յերկար ժամանակ ել շարունակվեր այդպես, բայց կամաց կամաց կարճացան Դավթի ձեռները, յերբ մեջտեղ յեկան փոխոգկոմն ու վարկային ընկերությունը, կոպերատիվն ու բատրակների պայմանագիրը...

Ել ո՞վ փող կվերցներ Թևոսենց Դավթից։

Ել ո՞վ փոխ կվերցներ նրա սերմացուն։

Իսկ հիմա, տրակտոր են բերել գյուղը։ Ել ինչպես չկատաղի Դավիթն ու չհայհոյի չգիտես թե ում յոթը պորտը...

... Բայց ինչ դուրս կգա հայհոյելուց...

— Բայց ինչ դուրս կգա հայհոյելուց,— ասում եր Դավիթն ինքնիրեն, նստած իր թիթեղածածկ տան դռան մոտ, քարի վրա։

Ել ո՞վ կվերցնի իր յեզն ու գութանը։ Ել ո՞վ իր արտը կհանձնի նրան կիսովի...

Ու խորը վիրավորվում եր գյուղի հին հարուստ, ատամնաթափ գայլ դարձած Դավթի սիրտը։

... Մի բան պիտի մտածել...

Յեվ իրոք, նա մտածում եր, գտնելու համար այդ մի բանը։

Որեր անցան։

Յելի որեր անցան։

Յեվ յերբ նորից անցնում եյին որերը, վերջապես Դավթին թվաց, թե գտել ե ճարը։

Գոնե տրակտորի դեմ։

Գոնե միայն տրակտորի դեմ։

Յերեկո յեր այդ որը և տունը Դավթինն եր։

...Սեղանի վրա ողի կար դրված կավե ամանով։ Բաժակներ կային ու կտրտված կոլբասի կտորներ։

Սեղանի շուրջն հավաքվել եյին ինքը,— Թևոսենց Դավիթը, հին քյոխվա Թաթուլը, մի մարդ, կասկածելի, շատ կասկածելի անցյալ ունեցող, ելի մի յերեք հարուստ գյուղացի և յերկու ջահել-ջուհուլ, չորս-հինգ լուծ անասուն ունեցող մարդկանց տղաներ։

— Ախպեր, ես կառավարությունը թողում չի, վոր մենք ել ապրենք։ Արտերս խլեցին՝ լավ, քթներիցը գա։ Տներիցս մեկը խլեցին, դպրոց շինեցին՝ եդ ել քթներիցը գա...

— Ջաղացս խլեցին...

— Հա, ես մարդու ջաղացը խլեցին՝ եդ ել թող քթներիցը գա։ Ել ինչ են ուզում. հիմի ել տրակտոր են դրկել գեղը։ Խի՞ չեն թողնում, վոր մենք ել ապրենք։ Տրակտորս վո՞րն ե։ Են ա՝ իմ յոթ լուծ անասունն ու յերկու գութանը գեղացոնց նոքար։ Թող բանեցնեն։

— Յես են գյուղխորհրդի նախագահ Ավետի...

...Հին քյոխվա Թաթուլի սիրտը գաղվել եր. իրեն գցեցին, հիմի ակլոր Ավետը...

— ... Ի՞նչ ե ուզում գեղացիներից։ Խեղճերից փող հավաքեց, տարավ քաղաք, եննտեղից եդ ժանգոտ երկաթի կտորը բերեց։ Բա վոր եգուց խարաբանի, ել չաշխատի...

— Լամն ել են ե, վոր չաշխատի, խարաբանա։ Բա վո՞նց գիտես։ Թող մի քիչ խելքները գլուխները գա։

— Դրուստ ես ասում, ամա եդ անտեր զատն հանգիստ իր բանին ա. առավոտից իրիկուն, առանց բեզարելու աշխատում ա...

Թևոսենց Դավիթը շարժվեց։

— Ուզենք, չի աշխատի․․

— ․․․ Վո՜նց․․․

— Դրուստ, վո՜նց․․․

— Հենց դրա համար էլ բերել եմ ավել ես ջահել-ջուհուլին։ Հիմի, գեղացիք, թե խոսք մեկ անենք ու ակի մարդ չիմանա մեր մաքինը, էդ գործը գլուխ կբերենք։

— Ախր վո՜նց․․․

— Հալա մի խմեք․․․

Կլկլաց կավե ամանը, գլգլաց ուրթը բաժակի վրա կռացած և ելի բազմեց իր տեղը։

Ուրթը կարիկ կոկոացին և անշարժացան։

— Ես գիշեր, ես ջահել-ջուհուլին ղրկենք տրակտորները խարաբ անելու։ Մի-մի կտոր երկաթ վոր պոկեցին միջից,— պրծավ, էլ չեն աշխատի։ Մինչև վոր նորից շինել տան, մենք գեղայոնց կասենք։—

— Տեսա՞ք ձեր տրակտորը․․․

— Գութա՛նն ա լավ թե տրակտորը, հը՞․․․

Յե՛զն ա լավ թե երկաթը․․․

Կասկածելի, շատ կասկածելի անցյալ ունեցող մարդը տեղից վեր կացավ։

— Չէ՜․․․ չէ՜։ Տրակտորն ինչ մեղք ունի։ Տրակտոր ղրկողն ելի կղրկի։ Տրակտոր ղրկողն ուրիշ պատուհաս էլ կղրկի։ Տրակտորը խարաբ անելու տեղ պիտի պետությունը խարաբ անել։ Տրակտոր ղրկողն էլ նա յէ, տուրք նշանակողն էլ,․․․

Նրա խոսքը կիսատ մնաց։

Հավաքվածներից մի քանիսը վախեցած նայեցին դես ու դեն։

— Չէ, ախպեր, դու ինչ ես քարոզում։ Ամեն մարդ պտի իր մեջքի զորության չափ բեռ վերցնի, վոր մեջքը չկոտրվի։ Մենք տերության հետ գլուխ կարանք հանի․․․

Բոլորը համաձայնվեցին։

Կասկածելի, շատ կասկածելի անցյալ ունեցող մարդը լուեց և այնուհետև այլևս վոչինչ չխոսեց։

— Հա՛,— են ելի ասում, վոր մի-մի կտոր երկաթ պոկեցին թե չէ, էլ չեն աշխատի։

Մի քանիսը ժպտացին բերկրանքով։

Մի քանիսը տաքացան։

— Ա՜յ, շէն մնա գլուխդ ու կրակով ջաղացի պես միշտ աշխատի, Դավիթ ապա,— կատակի տվեց Թաթուլը։

— Եղա՛վ։

— Եղա՞վ․․․

— Եղավ, եղավ․․․

— Ռազի՞ յեք։

— Հա՛, ախպեր, հա։

Նորից գլգլաց կավե ամանը,— գավը։

Նորից բաժակները բարձրացան։

— Հիմի հույսը մնաց ես ջահել-ջուհուլի վրա։ Տեսնենք վո՜նց պտի անեք։

Ջահել-ջուհուլը պատկառանքով ժպտաց։

— ․․․ Դրանց լավ խմացրու, յեառ,— Դավթի ականջին ի վար շշնջաց ոդու հոտ փչող ինչ վոր բերան, ակնարկելով յերկու յերիտասարդներին։

— ․․․ Գործդ տես․ յես ամեն ինչ գիտամ․․․

10.

Թեև արդեն գիշերվա ժամի տասնմեկն էր, բայց քունը մոտ չէր գալիս Մարոյի աչքերին։ Գոմի ոդան նեղ էր թվում ու կարծես խեղդում էր իրեն։

Ինչու՞ չէր քնում։

Տանիքից ներս ընկած լուսնի շողքը չթողեց։ Դռանը մոտիկ կամ կտուրի վրա ելի շները կլանչոց բարձրացրին։

Սիրունիկ, սև աչքերը բաց պահել էր Մարոն ու միտք էր անում։

․․․ Հիմա՞ր Սեթ․․․

— Տեսնես Սեթն ո՞ւր է հիմի։ Չգիտի՞ գա, չգիտի՞ ուզի իրեն...

Մարոն հառաչեց։

Անջիգյար Սեթ, տրակտորը խո քեզ չէ՞ր ուտի. ինչու համար փախար։

Էն էլ, ո՞վ գիտի ուր...

Էն վերջի օրն ինչ անուշ բարևեց, գրկեց ու հետո բարև առեց։ Վերջն էլ ասեց. «յերանի իրար հասնենք»...

Միամիտ, հիմար Սեթ...

Ապա Մարոն հիշեց, թե ինչպես իր մայրը դատարկեց իրենց օդան, մի քիչ, ինչքան որ հնարավոր էր, կարգի բերեց ու տվեց քրեհով Վարոսին ու Սուրենին։ Հիմի, մի տաս-տասնհինգ վոտք այն կողմը, դրսի օդայում, քնած են նրանք։

... Էն վո՞նց է վարում տրակտորը։ Կասես հրաշք լինի։ Սեթ, տասչորս լուծ յեզան գութանով տրակտորին չես կարա հասնի։ Էն վո՛նց է վարում...

— Բա թևերը... Վարոսի թևերը... Կասես տրակտորի երկաթից շինած լինեն։ Բռնում է երկաթն ու շուռ է տալիս, վո՛ր կողմն ուզենա։ Հետո էլ յերգում է։ Չի՞ վախենում անիծած տղան. .

Մութն էր ողողում. չերևաց թե ինչպես կարմրեցին Մարոյի յերեսները։

... Սեթ, վախենում եմ Վարոսն ինձ առնի...

Մարոյի աչքերը կամաց կամաց փակվում էին։

— Էն օրը գնացել էյի մեր արտը։ Է՜, էն օրը, վոր դու գնում էյիր, Սեթ։ Վարոսն ինձ խոսք գցեց. ասավ՝ «քեզ կառնեյի, ափսոս վոր սիրած ունես»... Մի յերկու անգամ էլ հետս խոսեց էդ մասին։

Յեվ աչքերը փակեց Մարոն։

Մեկ նրան թվում էր, թե արթուն է, մեկ էլ թվում էր, թե քնած է։ Չորս կողմը մութն էր ու վոչինչ չէր յերևում։

... Էն ինչն է պսպղում էնպես, դիմացի բլուրի վրա։ Անհա անհետացավ։ Չէ, էլի յե պսպղում...

Էն ինչ է...

Հա՜ էն Սեթի գերանդին է, վոր փայլում է արևի տակ։

— Էդ ո՞ւր ես գնում, Սեթ...

Չլսեց. շուռ յեկավ սարի էն մյուս կողմը։

... Հրեն... գնում են։ Էն ինչքան շա՜տ են։ Էն ո՞ւր են գնում։ Ուսերի վրա դրել են գերանդիներ, փոցխերը։ Կասես փոցխ ու գերանդու անտառ լինի։ Էն ո՞ւր են գնում։ Գնում են ու հետո էլ յերգում են։ Կասես սեյրան են գնում, կլոր պար բռնելու։

Ի՞նչ անուշ են յերգում...

Սեթ, յես իմացա ուր ես գնում։ Յետ դառ։ Տրակտորը քեզ չի ուտի։ Է՜-հեյ, գեղացիք, յետ դարձեք. տրակտորը ձեզ չի ուտի։ Մարդագե՞լ է տրակտորը, Թեվոսենց Դավիթն է տրակտորը։

... Չկան... չեն յերևում... գնացին...

... Մեր գեղի հանդերում ես ո՞վ է յերգում էսպես անուշ ու անծանոթ։ Յես էդպես յերգ լսած չկամ։ Էդ ինչ ես յերգում, տղա։ Կապույտ մխի յետևից է դեմքդ յերևում։ Էդ ինչ մուխ ես արել, տղա։

Էդ դո՞ւ յես, հա, Վարոս։ Տրակտորի վրա յես նստել ու վարո՞ւմ ես։ Յես էլ ասի՝ ո՞վ է։ Կա՛ց, Վարոս, կաց մի տեսնեմ տրակտորը։ Ես վողջն երկաթից է, հա՞։ Դու յե՞լ ես երկաթից։ Չէ՞։ Խաբում ես։ Այ, քու թևերդ երկաթ են, իսկական երկաթ։ Թող ձեռք տամ տեսնեմ երկաթ չե՞ն...

... Վարոս, անգութ տղա յես դու։ Տրակտորս առար եկար, ո՞ւր թողրիր Սեթին։ Քաղի օրերին, ամեն օր ինձ էր սպասում մեր արտի գլխին, մինչև հացը տանեյի։ Մոտենալիս կծիծաղեր, կասեր. «եկա՞ր, հացվոր աղ-

Չէկ, սոված մեռա»։ Բայց խո սոված չէր.—ուրի՞շ բան էր ասում...

— Ե՛յ, ե՛յ, անաշենի տղա, մի քիչ ցենը բ.ի. կճըխ-ցես ինձ էդ երկաթի տակ։

— Ե՛յ, ե՛յ...

Մարոն արթնացավ։

Արևն ելել էր, օրը լուսացել։

Իրենց դռան մոտից անցնում էին յերկու տրակ-տորները։ Մարոն լսեց յերկուսի ձայնն էլ, ու դեռ չէր իմանում, այս ե՞լ էր յերազ, թե՞ վոչ մեկն էլ յերազ չէր...

Ախոռում մայրը կով էր կթում։ Վոչխարները դուրս յեկան ու գնացին հոտին խառնվելու։

11

Ի՞նչ է յերկաթը։ Մարդը նրան շունչ ու հոգի չի տալիս։ Մարդը նրան ղեկավարում է։ Գնում է յերկաթը գետնի վրայով, ակոսում է նրան ու մշակում։

Ահա յես բռնել եմ ղեկը և ահա յես նստել եմ յեր-կաթի վրա։ Նա հիմի իմ ստորադրյալն է, իմ հլու կամա-կատարը։

Ուզենամ, կքշեմ։

Ուզենամ, չեմ քշի։

Ուզենամ, նրան վեր կբարձրացնեմ դեպի այս սարը և մյուս լանջով կիջեցնեմ ներքև։

Ուզենամ, չեմ անի։

Ուզենամ, նրան յեզասայլի պես դանդաղ կքշեմ կամ գնացքի պես արագ։ Շուռ կտամ դեպի աջ, ձախ։ Յետ կդարձնեմ, կկանգնեցնեմ, նորից կքշեմ։

Ուզենամ, չեմ անի։

Գյուղի վերևում, վարում էին յերկու տրակտորները։

— Եսօր գիշեր շատ անհանգիստ եմ քնել, Սուրեն։

— Գիտեմ, գիտեմ։ Մեջքից հանել է քեզ էդ շան աղ-

չիկը, հա,—վորպեսզի լսվի, բղավեց իր տրակտորի վրա-յից Սուրենը։

Վարոսը ձայն չհանեց։

— Ձե՛ռք քաշիր. քաղաքից մի աղջիկ կբերես, հետը կապրես։ Տեսնում ես, մարդը սիրած ունի։

— Ձե՛, Սուրեն։ Ախր շատ լավն է, էդ գետին մտա-ծը, շատ։

Ու յերկուսով էլ ժպտացին։

— Ասում ես ես գիշեր անհանգիստ ես քնել։ Ու-րեմն ուշքդ վրա պահիր, չքնես, տրակտորին բան-ման պա-տահի։

— Ձե՛, ինչ քնել...

Լռեցին։

Վարոսն հասավ արտի գլխին ու շուռ տվեց ղեկը։ Տրակտորը ծռվեց և յետ դարձավ։ Վարոսին թվաց, թե ղեկը դժվար է դառնում ու պտուտակը թուլացնելու կա-րիք կա։ Մեկ էլ մտածեց, վոր յերևի իրեն այդպես մի-այն թվաց։ Բայց յերբ արտի մյուս ծայրի մոտ էր, ղեկը դժվարությամբ դարձավ, Վարոսը ձեռքը մեկնեց դեպի արկղիկը, պտուտակի բանալին վերցնելու համար։

Բանալին չկար։

... Ո՞ւր եմ թողել...

— Սուրեն, մի բանալին տուր, վինտը թուլացնեմ։ Իմ բանալիս չկա։ Յերևի մարագումն եմ թողել։

— Մարագում բանալի չկար. սիրահարված մարդ ես, խելքդ կորցրել ես, բանալին էլ հետը,—ծիծաղեց Սու-րենն ու բաց անելով իր տրակտորի արկղիկը, բանալին նետեց դեպի Վարոսը։

— ... Վարոս...

— Հը՞։

— Իմ բանալիներից մեկն էլ չկա։ Ի՞նչ խաբար է...

— Քու բանալի՞դ էլ...

— Հա...

Վարոսը մտածկոտ կանգնեցրեց տրակտորը։

— Յես ասեցի ախր, — ջղայնացած խոսեց Սուրենը, — ասեցի էդ անտեր կողպեքը մի՛ք դցի մարագի դռանը — փչացած է, լավը առեք։ Ասեցի վոր յերեխաները բաց կանեն կմտնեն ներս, բան-ման կկորչի։

— Նոր կողպեք պիտի առնել տալ, ճար չկա։

Ու տրակտորներն ելի շարունակեցին վարը, նույն աշխուժով ու յեռանդով։

— Թյու ձեր կերած կաթին ու խմած ջրուն, — կատաղել եր Թևոսենց Դավիթը։ Իրենց մարդ հաշվեցի, մարդավարի դրեցի, ասի մի գործ անենք։ Գնացել կլյուչներն են գողացել բերել։ Յեղավ՝ են ա տրակտորները ջուխտով ել փռում են դինջ ու հանգիստ։ Յես ձեր կերած կաթին ու խմած ջրին...

Դավիթն իզուր վերցրեց բանալիներն ու նետեց դեպի Ջահել-Ջուհուլը։

Վոչինչ չոգնեց։

Այս ազդեցությունից արդեն սթափված, յերկուսն ել սարսափահար մերժում եյին Դավթի առաջարկը, — գիշերը նորից փորձել։

— Դավիթ ագա, մեզ տյուրմումը փթացնելու միտք խո չունե՞ս։ Ախր վոնց կլինի... Չենք կարա...

— ...Անոթ ձեր հոր նամուսին... Ձեր հերերը ձեզ պես ջահել են յեղել։ Գետնովը տվիք նրանց աբուռն ու ամոթըն ել, ձերն ել... Ուռդ յեղեք աչքիցս։

Ջահել-Ջուհուլը դուրս գնաց։

Իզուր չէր նստել Թևոսենց Դավիթը թախտի վրա և իզուր չէր մտածում նորից մի ճար գտնելու համար...

12.

Ամիսներ անցան և յեկավ ամառը։

Մոտեցան քաղի ժամանակները։

Գյուղխորհրդի գրասենյակում ամեն որվանից շատ եյին հավաքվել գյուղացիներն այդ որը։

Նախագահը նստել եր մի սեղանի մոտ, ձեռքում բռնած թղթերի մի կապոց, բարձր ձայնով ինչվոր բան եր խոսում գյուղացիների հետ։

Նրա յետևում, պատի վրա յերևում եյին մի քանի նկարներ, ինչվոր ձեռագիր լոզունգ և արդեն պոկված, հին թղթերի մնացորդներ։

Շատ հասարակ եր գյուղխորհրդի գրասենյակը։

Շատ հասարակ եր նաև գյուղխորհրդի նախագահը։

— Հիմի, են եմ ասում, վոր ձեզանից վոչ մեկը քիթը չկախի, յա բողոքի։ Քանի շուտ ա, ասում եմ գրվեք։ Են ա եսոր-եգուց քաղի վախտն ա...

Խոսքը վերաբերում եր խոտհար մեքենա գնելուն։

— Վարկային ընկերությունն օգնում ա։ Դուք ինչ պիտի տաք վոր... տուն-գլուխ հինգ մանեթ, հինգ մանեթ ել են գլխից։

— Ընկեր նախագահ, ելի տրակտորո՞վ ե բաներն ու խոտհարը։

— Չե, ձիով, ձիով։ Ախր անցած որը շրջանի գեղատնտեսին կանչեցի, վոր այդ մասին խոսի ու չգիտցողն իմանա։ Նա մանրամասն բացատրեց։ Դու չես իմացե՞լ։

— Ախ՛, — դիմեց հարցնողին մի գյուղացի — դու չե՞ս տեսել, անաշեն։ Մկրատի նման խուզում, անց ա կենում։ Դու ինչքան կարաս ձիերը շուտ-շուտ քշի։

Նախագահը, գործնական մարդու շտապողականությամբ հարցրեց.

— Ել ով կա...

Առաջ յեկան մի քանի գյուղացիներ։

— Գրի ինձ ել...

— Ինձ ել գրի։

— Հակոբանց Սահակն ասում եր, վոր իրեն ել գրես։

Նախագահը վեր նայեց։

— Ու՞ր, վոտները փետացել են, չի՞ կարում ինքը գա, դըրվի։

Այսպես յեռում եր աշխատանքը գյուղխորհրդի գրասենյակում։

Իսկ դրսում սրե՜, շո՜գ, և հացահատիկներն եյին հասնում։

Խշշում եյին դեղին արտերը տաք քամու մեղմ խաղից և կարծես ջուր եր անցնում, լայնատարած խշշոց բարձրացնելով։

Խոտերը վաղուց եյին քաղվել։

Այն բլուրի հետևից, ուր ամիսներ առաջ անհետացան գյուղացի մի խումբ բատրակներ, յերևաց գերանդու մի ծանոթ փայլ։

Յերևաց փայլը, յերերվեց, բարձրացավ և բլուրի յետևից յերևացին չորս- հինգ հոգի։ Առաջացան, յեկան փոշոտ ու հոգնած, վոտները քսքսելով խճուղու տաքացած հողին ու փոշի բարձրացնելով։

Յեթե Մարոն տեսներ նրանց, անպայման կճանաչեր Սեթի հետ գնացած ընկերներին։

... Բայց Սեթին չեր գտնի նրանց մեջ, վորովհետև նա չեր վերադարձել։

Չեյին վերադարձել նաև ուրիշ յերեք-չորսը։

Բատրակները մտան գյուղ։

Այցելուների ժխորից հազիվ հանգստացած և գրասենյակում մենակ նստած նախագահը չզգաց, թե ինչպես բացվեց դուռն ու ներս մտան յերեք-չորս փոշոտված մարդիկ։

— Բարև ընգեր նախագահին...

— Յա՜, դուք եք, բարև։ Ես վո՞ր քամին ելի յետ քշեց ձեզ, գեղացու գործի ես թունդ ժամանակին։

— Բա ինչ անեյինք, ուրիշ տեղ գործ ճարելն հո հեշտ չի՞։ Ամեն գեղն իր բատրակն ունի, ամեն գեղ իր տրակտորն ա ունենալու եսօր-եգուց։ Ասինք, ելի գնանք

մեր գեղը։ ասում են շուտով հողաբաժանություն ա ըլնելու։ Թե կառավարությունը մեզ ձեռք մեկնի, հող կվերցնենք, կմշակենք, կամ բատրակ կմնանք...

... Այս խոսք վրա մեկը ծոցից հանեց «Բատրակ, Ներքի պայմանագիր» գրքույկն ու դրեց նախագահի սեղանին։

— ...Կամ մի կերպ կապրենք, ելի։

— Ախր յես ասում ելի՝ Գեղի բատրակին ելի գեղը պտի պահի; գործ տա։ Ամենից առաջ դուք մտեք բատրակների միության, հետո մի ճար կգտնենք։

— Լավ։

Նախագահը չորս կողմը նայեց, ապա զննեց յուրաքանչյուրին առանձին-առանձին։

— Բա Արիստակեսն ո՞ւր ա, Սարգիսը, Սեթը, Գաբրելը, Համոն...

— Սարգիսն ու Համոն շոշի վրա քար ջարդող դառան, Գաբրելը գնաց հանքերը, Արիստակեսն ու Սեթն ել գնացին քաղաք, գործ ու մործ ճարելու։

Նախագահը մտածեց։

— Վնաս չունի՝ թե ճարեն, լավ կլի...

Իսկ հետո դարձավ դեպի բատրակները, խորհրդատուի տոնով։

— Յեկեք ձեզ համար կոլլեկտիվ տնտեսություն սարքենք...

— Վո՞նց...

— Այ, ըսենց...

Ու նախագահն իր շուրջը հավաքեց բատրակներին, գործի դրեց յերկու ձեռքերն ու լեզուն և սկսեց շարժ ու ձևերով բացատրել։

13.

Մինչև վոր աշնան վարի ժամանակը գար, Վարդան ու Սուրենը պիտի գնային քաղաք, ավտոմոբիլի շոֆերությամբ զբաղվելու։ Աշնանը նորից տրակտորի վրա, իսկ ամբողջ ձմեռը նորից շոֆեր։

Մի օր, յերկուսով մտան մարագը, տրակտորները լավ մաքրեցին, ամեն ինչ դրեցին իր համապատասխան տեղը, հաստ ծածկոցներով ծածկեցին յերկաթե նրա մեքենաները և հանձնեցին գյուղխորհրդին։

— Ելի ես կողպեքը դուք պտի բաց անեք, հա՛,— ասավ նախագահը, ցույց տալով դեպի մարագը, վորտեղ պահված եյին յերկու տրակտորները։

— Ի հարկե...

Նախագահը ժպտաց։

— Յես ինչ գիտեմ... Ասում եմ՝ չլինի՞ գեղից խռովեցիք ու էլ չեք ուզում յետ գալ։

Սուրենը ծիծաղեց։

— Ինչո՞ւ պիտի խռովենք, ընկեր Ավես. մեր տան պես եյինք ըզգում։

Գրասենյակում ավելի եյին հավաքվում գյուղացիները։

Սուրենը՝ միշտ ուրախ, ձեռք բարև արեց բոլորի հետ։ Վարոսն էլ ձեռք բարև արեց, բայց ինչվոր ամփոփված եր յերևում ու ցրված։

Գյուղացիներին մի քիչ զարմացրեց Վարոսի այդ արտակարգ տրամադրությունը, բայց վոչոք չեր կարող ասել պատճառը։

Պատճառը։

Սատանա Սուրենը չգիտե՞ր պատճառը։— Ի հարկե կիմանար։

Յեվ դրա համար չե՞ր, վոր նա դարձավ դեպի Վարոսը հետևյալ խոսքերով։

— Յե՞ս եմ գյուղը շատ սիրում, թե՞ դու...

Իսկ յերբ հեռացան, նա նորից կատակի ավեց.

— Ասում ե խո չե՞ք խռովել. նա ինչ գիտե, վոր վաղը-մյուս օրը Վարոսը գյուղին փեսա յե դառնալու։

Վարոսը ձայն չհանեց։ Տխուր եր յերևում։

...Ի՞նչ սիրուն աղջիկ ե եդ Մարոն...

Նա գնում եր մտազբաղ ու գետնին նայելով։ Ամբողջ

ճանապարհին, մինչև տուն հասնելը, ընկերներն այլևս վոչինչ չխոսեցին։

— Վույ, յես ձեր ճամբին մատաղ, ազիզ տղերք,— մրմնջաց Մարոյի մայրը, յերբ Սուրենից լսեց, վոր այսօր գնալու են քաղաք,— իմ հալալ աղի պես եյի մոտիկ տալի ձեզ։ Ձեր չ՞որը տանեմ, էլ պտի գա՞ք, թե հենց ես եր։

— Չե, մայրիկ, աշունն էլ եստեղ կլինենք, կարող ե պատահել յեկող գարնանն էլ, յեկող աշնանն էլ...

— Հա, հա, յեկեք,— մրմնջաց Մարոյի մայրը։ Ձեզ պես ով կարա տրակտոր քշի։ Ելի յեկեք, հասեք վարին։

Ու մինչդեռ ընկերներն իրենց իրերն եյին հավաքում ու կապկպում, Մարոյի մայրը գնաց հացատուն, թոնիրը վառելու և մի յերկու հավ յեփելու՝ ճամբորդների համար։

— Մարո,— կանչեց նա աղջկան, գնա ոգեն տղերանցն ոգնի։

Մարոն ներս մտավ տղաների մոտ։

— Գնում եք, հա...

— Բա ինչ...մեկ էլ կգանք, ե՜ աշնանը...

Վարոսն ելի լուռ եր։

Սուրենը մոտեցավ նրան և աննկատելի փսփսաց.

— Հ՛ը, դե խոսի. թե բան պիտի ասես, ասա, թե չե էլ վախտը կանցնի։ Յես դուրս եմ գնում։

Ու մի քիչ հեռալուց հետո, հանկարծ բացականչեց.

— Վարո՛ս, եդ անտերն արտում թողեցի. գնամ բերեմ, թե չե կը մոռանանք, կմնա։

Ու դուրս յելավ։

Նրա դուրս գնալուց հետո, դեռ մի քիչ ժամանակ լուռ եյին թե Մարոն և թե Վարոսը։

...Եսօր գնում ա։ Ե՜, թող գնա։ Ինձ ինչ։ Քիթն էլ կախել ա։ Տեսնես ինչի՞։ Չլինի՞ սիրտը կոտրվել ա...

...Բա Սեթի սիրտը կոտրված չի՞։ Հետո գնացածներն յետ դարձան, մի-մի բուն են դրել գեղումն ու մեջք-

մեջքի տված, իրար հետ աշխատում են. իսկ ինքն ո՛վ գիտի որտեղ ա հիմի…

…Հրեն, շորերն ա կպցնում։ Ի՞նչ թևեր ունի. իսկը երկաթ։ Թե մի բան դուրս գալիս ա, էդ թևերն են։ Վո՛նց ա բանեցնում տրակտորը…Վո՛նց ա բանեցնում…

Վարոսը դեռ լուռ էր։

—…Մարո…

— Ի՞նչ…

— Էսօր յես գնում եմ. բա դու ի՞նչ ես ասում…

— Ինչ պիտի ասեմ, այ տղա։ Էն ա քաղաք ես գնում, մեկին կառնես, պրծավ գնաց։

— Չէ՛, Մարո, յես ուրիշ աղջիկ չեմ առնի. յես քեզ եմ ուզում, իսկ դու քար ես կտրել։ Ախր ինչու՞…

Մարոն չգիտեր ինչ պատասխաներ։

— Այ Վարոս, քեզ չեմ ասե՞լ, որ սիրած ունեմ…

— Ի՞նչ սիրած, Մարո։ Հիմի խո էստեղ չի՞։ Գուցե սկի յել իրար չառնենք, կամ սկի յել իրար չտեսնենք։ Գուցե նա հիմի մի ուրիշի հետ սիրահարված է, գուցե հիմի ամուսնացել է։ Ո՞վ գիտե, նա չէ՞ր կամուսնանա։ Կամուսնանա՛։ Ե՛, իսկ դու չպիտի՞ ամուսնանաս։ Մայրդ պառավ, դու ջահել, մենակ։ Չպիտի՞ ամուսնանաս։

— Հա, համա…

— Համա ինչ…

— Ախր խոսք ենք տվել իրար…Ախր յես սիրում եմ նրան, էն էլ ինձ…Յերեխա վախտվանից իրար հետ ենք մեծացել մի գեղում, մի գեղի ջուր ենք խմել ու մի գեղի հաց կերել։ Սեթն իմ հոգին հասկանում ա, յես էլ իրենը։

…Մեր արտում ինչքան ենք սեր արել. ասում ես ախր…Վո՛նց կլինի էդ բոլորը մոռանալ…

…Սիրում եմ, չէ՞…

Այս անգամ Վարոսն էր, որ լռեց։ Կապոցը վերցրեց թեւի տակ, Սուրենի կապոցն էլ մյուս ձեռքում բռնեց և մի ձեռքը յերկարացրեց Մարոյին։

— Ե՛հ, դու գիտես,—մնաս բարև։ Յես վոր՝ պիտի ամուսնանամ։ Ասեցի դու լինեյիր…

Յեվ յերբ դուրս էր գնում դռնից, յետևից Մարոն կանչեց նրան ցածր ձայնով.

—…Վարոս…

Վարոսն յետ շրջվեց։

— Դու աշունքս ելի գալու յես։ Թե մինչև էն վախտը Սեթը չեկավ,—խոսք կտամ…

Վարոսն հանկարծակի ժպտաց և ուղղվեց դեպի Մարոն։

— Չէ՛, գնա, Վարոս,—եսքանը։

Վարոսը կոտրված գնաց դուրս, իսկ Մարոն նստեց թախտի վրա, տխուր, սուս…

…Սեթ, հիմա՛ր Սեթ…

14.

Ինչի՞ խոսք տվեց…Ինչի՞ խոսք տվեց…Ինչի՞…

Քանի՞ ամիս է, որ Սեթը գնացել ա։ Ինչի՞ խոսք տվեց։

Գուցե պատճառն այն յեղավ, որ Մարոն մտածեց իր ծերացող մոր մասին և այն մասին, որ մայրը շատ է չարչարվում իրեն համար։

Գուցե պատճառն այն յեղավ, որ Սեթի ընկերները վերադարձան, իսկ նա չկար։ Չի յեկել դա։ Հա՛, չի յեկել դա…

Վարոսը գնաց և ելի կգա։ Շուտ կգա։ Իսկ մինչև նրա գալը Սեթը չպիտի՞ վերադառնա…

…Ինչու՞ խոսք տվեց…

Աշունն իջավ։

Ամեն օր իրիկնապահին, դաշտից դեպի կալերն էին գալիս հասկերով բարձած սայլեր։

Կալերում, առավոտից մինչև իրիկուն, մանրում էին վոսկեդեղին հասկերը, վերածում հացահատիկի ու հարդի։

Իսկ աշունն անընդհատ իջնում էր։

Որ ըստ որև պակասում եյին արտերն և ավելանում խոզանները։

Արտերից այն կողմը, անտեր բուսած մի քանի ծառները տերևաթափ յեղան։ Ամեն ինչից յերևում եր, թե ինչպես եյին պատրաստվում գյուղացիները դիմավորելու համար տարվա դաժան յեղանակին, լեռնային բքաշունչ ձմռանը։

Նայում եր Մարոն դեպի քաղաք տանող ճանապարհը։

Չի յերևում այդ ճանապարհի վրա Սեթը, մի ժանգոտված գերանդի կամ կոտրված մի փոցխ ուսին դրած...

Բայց Սեթը չեր յերևում, վոչ գերանդի ուսին դրած, վոչ ել փոցխ։

Մարոն ել եր լսել այն մասին, վոր Սեթը քաղաք ե գնացել։ Իսկ դրանից հետո ուրիշ ինչ—չգիտեր։

Յեվ նայում եր նա, առանց հույսը կտրելու։

...Շուտով դաշտերում վոչ մի արտ չի մնա, վոչ ել մի քաղվոր։ Մենակ քամին կպտտվի եդ դատարկ դաշտերում...

Յետ դառ, Սեթ...

...Շուտով աշնանավարի ժամանակ կլինի և ելի տրակտորները դաշտ դուրս կգան։ Վարոսն ելի կհանդիպի Մարոյին և իր անծանոթ գրավչությամբ կհմայի նրան...

Յետ դառ, Սեթ...

...Դու ինչ մարդ ես վոր, Սեթ։ Ընկերներդ յետ դարձան, նրանցից ամեն մեկը մի բույն ե շինում։ Ընկերներդ յեղբոր պես աշխատում են իրար հետ և գյուղումն են։ Իսկ դու ով գիտի ուր ես...

Բայց ելի, ամեն որ նախորդ որվա պես, քաղաքի ճանապարհի վրա չեր յերևում վոչ Սեթի ծանոթ կերպարանքը, վոչ ել ժանգոտված գերանդին կամ կոտրված փոցխը, վոր պիտի լիներ նրա ուսի վրա։

Մարոն հույսը կտրեց։

Գյուղում այս աշնանը չորս-հինգ հարսանիք ե լինելու։ Մեկն ել իրենը կլինի։ Դհոլ զուռնա կդրմբա մեկ այս թաղում, մեկ այն թաղում, մեկ գյուղից վերև՝ Գևորանց տանը, մեկ ել գյուղից ներքև՝ Պողոս ամենց ոդայում։

...Այդ հարսանիքներից մեկն իրենը կլինի...

Մտածում եր Մարոն ու յերբեմն ել հուզմունքից շիկնում։ Իր մարդն ամենից լավը կլինի։ Յերկաթե թևերով, տրակտորի հետ խաղացող։ Գյուղում ուրիշ մեկը կարո՞ղ տրակտոր բանացնի...

...Դու ինչ մարդ ես, Սեթ. տրակտորը քեզ ուր նետեց...

15.

Դաշտերը դատարկվեցին։

Հազիվ թե մի ուշացած սայլ յերևար ճանապարհի վրա կամ յետ մնացած մի գյուղացի։

Քամին վազեց, սուրաց ազատ դաշտերով, իր թևերի վրա առավ հասկերի թափթփված մնացորդներն ու հեռու քշեց...

Գյուղը կուչ յեկավ։ Անասունները ախոռները մտան, մարդիկ խրճիթները

Գյուղի դաշտերում, այնտեղ, ուր Թևոսենց Դավիթի արտն ե և մյուս հարուստների արտերը, յերևացին գութաններ ու յեզներ։

Հոռովելի միապաղաղ հնչյունները տարածվեցին մոտիկ սարերում, կողքի ձորում ու չքացան։

Իսկ մյուս գյուղացիներն սպասում եյին տրակտորների աշխատելուն։

Գևորանց աղջիկն իր մարդու հետ գնաց գավառամասի կենտրոնը.—դագա։ Պողոս ամու տղան ել գնաց իր կնոջ հետ։ Ուրիշներն ել գնացին։

Իսկ այնտեղից վերադառնալուց հետո, նրանք սպա-

տում էյին որ սկսվի հարսանիքների շրջանն և իրենք ա-մուսնանան։

Զուռնաչի Ալեքսանն իր զուռնան պատրաստեց, փոր-ձեց մի յերկու անգամ և տոնը վերցրեց։

Թոնրի կրակի վրա դհոլչի Աղաջանն իր դհոլը լավ չորացրեց ու փորձելու համար մի քանի անգամ թրխկ-թրխկացրեց մատներով։ Իսկ առավոտներն սկսեց հում ձու ուտել, ձայնը բաց անելու համար։

Նախագահի ասածի պես, ելի Վարոսն ու Սուրենն էյին, որ բաց արեցին մարագի դռներն և այնտեղից դուրս հանեցին տրակտորները։

Աշնանավարն սկսվեց։

Գյուղի դաշտերից շատերը սևացան մի քանի օրվա ընթացքում։

Ու մի օր էլ, բարձրաձայն խոսելով, վորպեսզի լսվի, իրենց տրակտորների հետ դաշտից տուն վերադարձան Վարոսն ու Սուրենը։

Առաջին անգամ Գևորանց կալումն էր, որ դմբրաց դհոլ զուռնան և բոլորեց կլոր պարը։

Գյուղացիների ուրախության ու հարսանիքների շրջանն սկսվեց…

…Գյուղում մի տղա կա, ջլապինդ բազուկներով, ամառան պես վառվռուն ու պայծառ։ Նա սիրում է Մարոյին և նրա պատասխանին է սպասում։

Ինչի՞ համար է սպասում,— Շատ հասարակ ու պարզ բացատրություն է տալիս նա ինքն իրեն, նաև իր ընկերոջ՝— Սուրենին․

— Անիծվածը շատ լավն է…

Մի աղջիկ էլ կա գյուղում, որ սիրել է մի տղայի և նրան դեռ չի մոռացել։

Աղջիկը սիրել է նրա սև մազերը, սիրել է նրա ծի-ծաղը։ Հավանել է նրա աշխատելու յեռանդին ու բարի,

պարզ բնավորությանը։ Իրենց տրտում է տեսել այդ տղային։ Տեսել է ու հավանել։

Նայել է աղջիկը տղայի աչքերին և կարծես նրա աչ-քերի մեջ իրենց հանդերի արձակությունն է տեսել ու հողի շունչն է առել նրա մարմնից։ Աղջիկը սիրել է նրա աչքերի հանդանման այդ արձակությունն ու նրա մարմնի այդ հողաշունչ բույրը։

Տղան էլ սիրել է աղջկան։ Տրակտոր չտեսած արտի նման է թվացել նրան աղջիկը։ Աղջիկը նրան թվացել է հանդի հրաշք։

Յեվ այդպես, սիրել են իրար այդ տղան ու աղջիկը։

Հիմի տղան գյուղում չէ։

Աղջիկն հիշում է նրան և միաժամանակ հիշում է անցյալ տարին, գութանի դանդաղ ընթացքն արտերում, ճիպոտի ծույլ շարժումը և այդ բոլորը նրան լավ, շատ լավ է թվում։

Սեթի մեջ նա իրենց արտի նահապետական պարզու-թյունն է սիրել և այդ արտի մեջ էլ սիրել է Սեթին։

Հիմի հիշում է աղջիկն անցյալ ամառը և ամառնային սերը խոտի դեզերի շվաքների տակ…

Ո՞ւր է տղան։

Տղան էլ հիշում է յերկաթ չտեսած հանդերն և այդ հանդերի հրաշքին…

…Քաղաքի ճանապարհի վրա դժվար թե Սեթն յե-րեա, ուսին փոցխ կամ գերանդի…

Մարոն հույսը կորեց Սեթից…

16.

— Մարո, Սեթը չեկավ…

— …Չէ…

— Ի՞նչ ես ասում հիմի…

— Յեղացել է. բալքի կգա, ով գիտե։

— Չէ, Մարո։ Սեթն յերևի քաղաքում աշխատում է։

Յերևի ամուսնանալ չի ուզում. թե չէ մի կերպ քեզ կտեղեկացներ իր մասին։

Մարոն լուռ էր։

— Գուցե քաղաքում նա ամուսնացել է։ Ո՞վ գիտե։ Գուցե դրությունն էնպես է, վոր հնարավորություն չունի կամ առայժմ չի ուզում ամուսնանալ, ո՞վ գիտե։

Ելի լուռ եր Մարոն։

— Ե՛, իսկ դու վերջիվերջո պիտի ամուսնանաս, չէ՞...

— Հա, համա...

— Ուրիշ ի՞նչ վոր...

Մարոն չպատասխանեց։

...Իր մարդն ամենից լավը կլինի...

Լավ տղա յե Վարոսը, շատ լավ տղա յե։ Բայց Սեթը լավ չէ՞ր։ Ջէ՞ ախր, Սեթի հետ սեր են արել, ապրել կողք-կողքի, մի գյուղում...

— Հ՞ը, Մարո...

— ...Գնա մարեյիս ասա։ Յես խոսք տալիս եմ...

— Հո՞ Մարո...

— ...Հա...

Աշնանավերջի այդ ծրով գարնան արև՞ եր, վոր փայլեց Վարոսի դեմքի վրա։ Այն ի՞նչն եր, վոր տաքացավ, տաքացավ, կրակ կտրվեց ու սկսեց վազել նրա մարմնով։

Վարոսը գրկեց Մարոյին ու համբուրեց։

Թույլ, շատ թույլ ընդդիմացավ Մարոն ու նրան թվաց, թե Վարոսն համբուրեց իր յերեսի ճիշտ այնտեղը, վորտեղից Սեթն եր համբուրել։

Վարոսը վազ տվեց Սուրենի մոտ, հայտնեց նրան պատահածի մասին, ապա յերկուսով վեր կացան և գնացին Մարոյի մոր մոտ։

17.

Առաջին ձյունը։

Մարոն ու Վարոսն ամուսնացան։

Շատ ուրախացավ Մարոյի մայրը։ Նա ազատվեց իր մտահոգության առարկայից։ Տարիներով պահած-մեծացրած իր Մարոյին ամուսնացնելը նրա վերջին տարիների հոգսն եր և ամենամեծ հոգսը։

Շատ ուրախացավ, բայց մի բան կտրում եր նրա սիրտը։

Այդ այն եր, վոր Վարոսն ու Մարոն ձմռանը քաղաք եյին գնալու և ինքը պիտի մենակ մնար և պիտի կարոտեր։

Ողայից, վորտեղ արդեն Վարոսն ու Մարոն եյին ապրում, Սուրենը տեղափոխվեց մի ուրիշ տեղ։

— Ել ինչի՞ եյիր կամակորում, ասեց Վարոսը Մարոյին, մի քանի որ անց։ Են որը, վոր դու արտը հաց բերեցիր, հենց են որը յես քեզ հավանեցի և մտադրվեցի անպայման առնել։

Մարոն թեթևակի ժպտաց, ապա նայեց Վարոսին։

— Ի՞նչ ասեմ, Վարոս։ Յերբ վոր դու տրակտորի հետ յեկար,—մի ուրիշ կերպ յեկար։ Յես էնպես իմացա, թե դու յել տրակտորի մի կտորն ես, տրակտորի մի ակը։ Նրանից յետո, հենց վոր տրակտոր եյի տեսնում, դու եյիր միտս ընկնում, քեզ տեսնելիս ել՝ տրակտորը։

Են որը, վոր արտում դու ինձ առաջին անգամ խոսք գցեցիր, յես շատ ամաչեցի ու շատ ել զարմացա։ Բայց եդ ասածդ ինձ մի տեսակ դուր եկավ. ել եդպիսի բան ինձ հետ չի պատահել...չգիտեմ...

Ու լռեց։

Վարոսը ժպտաց ու Մարոյին գրկեց։

Յեվ յերբ անցան որեր, Մարոն սկսեց ավելի և ավելի ուրախանալ, ժպտալ և կարծես մոռանալ, վոր մի ժամանակ սիրել է Սեթ անունով մեկին, վորը հիմի չկա։

Այժմ նա շարունակ մտածում եր քաղաքի մասին։

...Կգնամ քաղաք, կսովորեմ...կոմսոմոլ կգրվեմ... Վարոսի հետ քաղաքում կապրենք, իսկ մեկ-մեկ ել կգամ մեր գեղը։

Իսկ հետո, մի գաղտուկ միտք անցավ Մարոյի գլխից։

Անցավ, վայրկենաբար ստեղծեց ու կորավ։ Մարոն այդ մասին չուզեց եւ չերկար մտածել։ —

...Տեսնես Սեթին չե՞մ հանդիպելու քաղաքում...

18.

Սահնակն արագ սլանում է քաղաք տանող ճամբով, ձյունապատ դաշտերով։

Թռի՛ր, սահնա՛կ։

Յետեւում, ձյունի տակ ծածկված մնացին ծանոթ դաշտերն ու ծանոթ տեղերը։ Ձյունն իջնում է փաթիլ-փաթիլ և ավելի հաստ է ծածկում։

Սահնա՛կ, թռի՛ր։

Սլացե՛ք, ձիե՛ր։

Այս ինչ արագ, ինչ խուսափուկ է վազում ճանապարհը դեպի յետ, դեպի գյուղ։ Այս ինչ արագ են անհետանում ծանոթ տեղերը...

...Շուտով կհասնենք մեր արտին ու կանգնենք...

Ո՛ւֆ, քշի՛ր ձիերին, շո՛ւտ, շո՛ւտ։ Ինչո՞ւ չեն կանգնել ձիերը։ Հավատա ինձ, ձիերը կանգնել են։ Չէ, գնում են նրանք, բայց դանդա՜ղ, դանդա՜ղ...

Ինչո՞ւ չեն դանդաղ գնում...

Հիմա՛ր ծեր, ինչո՞ւ այս ճանապարհով բերեցիր։ Ուրիշ ճանապարհ չկա՞ր, ուրիշ դաշտ չկա՞ր։ Ինչո՞ւ բերեցիր մեր արտի մոտով։ Չեմ ուզում տեսնել մեր արտը։ Ինչի՞ յե պետք. ո՞վ կա այնտեղ վոր...Վոչոք էլ չկա։

Սիրտս նեղվում է։ Այսքան էլ դանդաղաշարժ սահնա՞կ լինի։ Վո՞նց ես յոլա գնում այս ծույլ ձիերի հետ։

...Ահա մեր արտը։ Այ, այստեղից սկսած—արտն քշիր։ Շատ արագ։ Ախր ուշանում ենք. դրա համար եմ տանում...

...Են ինչ ջուր է գլգլում սպիտակ ձյան տակ։ Զնգո՜ւն

է, ինչ է։ Մեր արտի կողմից է գալիս ձենը։ Ձյունն էնտեղ հալվում է ու մի քիչ հետո քչքչալով կգնա...

...Գետնից մի գազ վերև բարձրանում էր գոլորշին. ինչքան լավ էր...Ամբողջ դաշտում գոլորշի չեր բարձրանում, ինչքան լավ էր...Հիմի նորից գոլորշի չբարձրանա... Հանկարծ գարուն չգա... Գութանվորները դաշտ դուրս չգան...

...Սեթը չսպասի...

Ի՜հ Վարոս, գյուղից ինչու յեկանք։ Գյուղում լավ եր։ Ինչու յեկանք։ Յե՞տ դառնանք նորից մեր գյուղը...

Վերադառնանք գյուղ։ Եգուց-մեկել որ գարունը կբացվի և ամեն ինչ առաջվա պես լավ կլինի։ Ձյունը կհալչի...կգնա...Արևը դուրս կգա և անուշ կփայլի...

...Չե՞ս խոսում։

Յերկաթի պես պինդ՝ կանգնել ես սառծիդ վրա։ Յես մտածում եմ, իսկ սահնակը հեռանում է ավելի ու ավելի...

...Թող հեռանա...

Թող շո՛ւտ հեռանա սահնակը, Վարո՛ս։ Ես ինչու չե կանգնել։ Վորտեղից գտար ես ծանրաշարժ ձիերին։ Ուրիշ մարդ չկա՞ր, ուրիշ ձիեր չկայի՞ն։ Ինչու չե դանդաղ քշում։ Ի՞նչ է ուզում ասել։ Գուցե դիտմամբ է անում, որ վերջին անգամ եր արտը լավ տեսնե՞մ...

...Վարոս, չլինի՞ այս մարդը կարծում է, թե յես Սեթին ելի սիրում եմ...Սխալվում է, Վարոս։ Ի՞նչ Սեթ։ Նայիր։ Ի՞նչ կա այնտեղ.—ձյուն, ուրիշ վոչինչ...

...Մեղավոր խո չե՞մ...

Յեղել է մի ժամանակ ես գյուղում մի հոտաղ, կանգնել է ամեն օր նա արտի գլխին և իր սիրածին է սպասել։ Արա է գնացել սիրածին ու հանդիպել է հոտաղին։ Մի տարի սեր են արել նրանք, հետո յեկել է արտատերն ու հոտաղին փախցրել է հեռու, հեռու...

...Ո՞ւր է հիմա նա...Ո՞վ գիտե...

…Ի՞նչ է անում հիմի… Էլի քաղաքումն է։ Հանքերն է գնացել։ Ո՞վ գիտե…

Սահնակը սլանում էր։

Ու մինչդեռ թափվում էին ձյան սպիտակ փաթիլները, սահնակն անցավ Մարոյենց արտի կողքով ու բարձրացավ բլուրը։ Մարոն յետ նայեց։ Ներքևում յերևում էր ձյունածածկ գյուղը, յերևում էին սպիտակ դաշտերը։

…Դանդաղ գնա, սահնակ. ինչի՞ ես շտապում. չե՞նք հասնի, կուշանանք։

Ո՞ւր ես տանում այդքան հեռու և այդպես արագ։ Դանդաղ գնա։

Գնա դանդաղ, ինչպես գնում են գիակառքի յետևից, գնա դանդաղ և անձայն գնա։

Կույսի պես էր պառկում գյուղը։ Յեկավ տրակտորը, մազութոտ շրթունքով համբուրեց նրան,—արտասավորեց…

Ի՜հ, Վարոս…

…Մի քանի րոպե հետո էլ ոչինչ չի յերևա…

…Դանդաղ գնա…

Սահնակն արդեն հասնում էր բլրի վերևի մասին, որտեղից պիտի թեքվեր դեպի մյուս կողմը։

…Իսկ հետո ոչինչ չպիտի յերևար…

Մարոն հառաչեց։

…Էլ մնաս բարև՛ իմ բոլոր հուշերին և այն տեղերին, որ ինձ սիրելի էին…

…Փոքրիկ աղջիկ էի։ Հետո մեծացա, աճեցի… Մի որ էլ հանդիպեցի մի լավ տղայի…

…Յեղել է մի ժամանակ էն գյուղում մի հոտաղ, կանգնել է ամեն որ նա արտի գլխին և իր սիրածին է սպասել…

…Մի տարի սեր էն արել նրանք և հետո…

Սահնակը ցնցվեց ու վար սլացավ։ Մարոյի մտքերի թելը կտրվեց։ Շուրջը նայեց Մարոն։

Վոչ գյուղն էր յերևում, վոչ էլ ծանոթ դաշտերը…

Ու կարծես արթնանալով ինչ-որ թովչությունից, խորը շունչ առավ Մարոն… ժպտաց, ապա լայն ծիծաղեց ու սեղմվեց Վարոսին։

19.

Մարդկային ուժի յերգը։

Մկանոտ թևերի յերգը և ղեկավարող մտքի յերգը։

Յերկու թև, մարդկային յերկու թև, տարիներ շարունակ բռնել են ճիպոտն ու շարժել են դես ու դեն։

Ուժը ծախսվել է անարդյունք, անօգուտ կորել է։ Միայն ճիպոտ շարժելու յե պետք յեկել այդ ուժը։

Հարյուրավոր մարդկային ձեռքեր չարչարվել են, բայց յեկել են յերկու տրակտոր և փոխարինել են նրանց։

Թող կեցցեն տրակտորները։

Հիմի յերկու թևերը, մարդկային ուժով լցված այդ յերկու թևերն այլևս ճիպոտ չեն շարժում իզուր տեղը։ Հիմի նրանք մուրճ են բռնում ու չուգուն են կռում։

Մեկն իր ճիպոտը կոտրեց։

Հնոցի բոցերի մոտ հանդերի յերգը մեռավ նրա սրտի մեջ։ Հանդերի հրաշքն էլ նրա հետ մեռավ։ Հիմի նրան էլ չի հուզում հնամյա հանդերի վայրենի ազատությունն ու կուսությունը։

Հնոցի բոցերով նա իր սիրտը լցրեց և լցրեց իր հոգին։ Նա սիրեց իր աշխատանքն և իր թևերի ուժը նվիրեց նրան։

Էլ իզուր տեղը ճիպոտ չի շարժում նա,—նա հիմի իր մկանների ուժով ավելի շատ է ստեղծագործում և ավելի լավ։

Ի՜նչ ուժ էր թաքնված իր թևերի մեջ։ Ինքը չգիտեր։

Ի՜նչ ասես, վոր չեն կարող ստեղծագործել իր թևերը։ Ինքը չգիտեր։

Մի ժամանակ ճիպոտ է բռնել նա և կարծել է, թե

միայն ճիպոտի համար է ստեղծված ինքը։ Ուրիշ բանի պետք չի գա։

Իսկ հիմա չուգունի հետ են խաղում — չուգունից են կարծր իր թևերը։

Չուգունի հետ և յերկաթի։

Գյուղի դաշտերում յերկաթե տրակտորն է աշխատում։ Կեցցե յերկաթը։ Նա գնաց գյուղ, ցնցեց և ամեն ինչ դեպի լավը դարձավ։ Ինքը հիմի սիրալիր վողջույն է ուղարկում տրակտորին։ Գնաց գյուղ, ազատեց իր թևերը ճիպոտ շարժելուց ու ցույց տվեց, թե վորքա՜ն մեծ ուժ կա ամբարված մարդկային մկանների ու մարդկային ուղեղի մեջ և վորքա՜ն շատ բան կարող է անել նա…

Կեցցե տրակտորը…

Քաղաքի գործարաններից մեկում, չուգունի գործարանում, աշխատանքն յեռում եր։

— Կաղապարները սարքեցի՞ր։

— Սարքեցի. ավազը մի քիչ պակաս է։

— Հրեն, անկյունում կա, մաղիր։

Վարպետը ցուցմունքներ եր անում։

— Տաքությունը շատ չբարձրանա, լավ նայիր, Սարաքել։

Ապա դարձավ իր կողքին աշխատող բանվորներից մեկին։

— Հրա՛չ, չուգունին ուշադրություն դարձրու. Սեթը դեռ խամ է։

Սեթը, հագին բանվորական շորեր, կանգնել եր իր գործին։

Ինչքա՜ն եր փոխվել…

Հնոցի շոքից այրված դեմքն ստացել եր բանվորական հաղթ արտահայտություն։ Նա վերև եր հավաքվել շապկի թևերը և նրա մկանոտ թևերը մինչև արմունկները բաց եյին։

Այն որվանից, յերբ մտավ այս նոր վայրը, շատ բան

փոխվեց նրա համար։ Կարծես աշխարհը նոր եր տեսնում։ Իսկ յերբ կամաց-կամաց անցավ մի տարին և ինքը վարժվեց իրեն հանձնարարված աշխատանքին, սովորեց ու ըմբռնեց իր գործը, Սեթը քիչ չզարմացավ այն ստեղծագործող ուժի առթիվ, վոր կար իր մկաններում…

Իրոք վոր, ինչքա՜ն բան փոխվեց…

Նա գյուղից դուրս յեկավ այն տխուր մտածմունքներով, վոր ինքն ու իր ընկերները բանի պետք չեն և ամեն տեղից պիտի դուրս քշի յերկաթը։ Բայց ահա, յերկաթ ու չուգունի գործարանն իրեն ներս առավ և ինչքա՜ն փոխեց…

…Յես էլ հենց գիտեյի թե մենակ ճիպոտ բռնելու յեմ պետքական…

Մի յերկու ամսով քաշած եր նեղություններն ինչ եյին այն բավականության առաջ, վոր զգում եր նա, կաս-կարմիր կորած չուգունի հետ խաղալիս։

Հաճախ նա հիշում եր իրենց գյուղը և մտածում եր նրա մասին։ Մի ժամանակ կարծում եր, թե իրենց գյուղից և հարևան գյուղերից են կողմն էլ աշխարհ չկա։ Յեվ սիրում եր իրենց գյուղը։ Ինչի՞ չեր սիրում։ Ի՞նչ կար…

…Հիմի ուրիշ բան է։ Տրակտորը գյուղ մտավ և ինքը դուրս յեկավ գյուղից։ Հիմա վոր վերադառնա, գյուղի ինչքա՜ն պիտի փոփոխված գտնի…

Այգիների բույրերին նա խորը շնչում եր և ժպտում

…Շէն մնա տրակտորը…

Սեթը դարձավ դեպի իր կողքի ընկերը, համագյուղացի Արիստակեսը։

— Արիստ…

— Հը…

— Ասում են՝ մեր գյուղումն էլ բջիջ կար, հա…

— Կար, բա…

— Բա ինչի՞ յես խաբար չեյի։ Յես գեղումն ակի գառ

չեյի իմանում։ Բալքի կոմսոմոլ գրվեյի ու եսոր ել ամառս շատ կլիներ...

Արիստը լուռ եր։

Իսկ քիչ հետո.

—Գեղում չեղավ, եստեղ եղավ, մեկ չէ...

—Մեկ է. բայց ասում եմ՝ ինչքա՜ն մութն եյի են վախտը... Եղի դու փոքրինչ,—լավ եր. կոմսոմոլի մեջ ես յեղել, բարակ միության...

—Եհա... մութն եր գեղում։ Հիմի լավ կլի, չէ...

—Լավ կլի...

—Արիստ, ինչ գործի յես, արի ինձ օգնի,—բղավեց վարպետը.- եղտեղ պրծա՞ր։

—Պրծա, ասավ Արիստն ու վազեց։

Սեթը մնաց մենակ։

Նա սկսեց ինչվոր յեղանակ սուլել, միաժամանակ աշխատանքը շարունակելով։ Հնոցից դուրս թռչող կայծերն այժմ արդեն չեյին սարսափեցնում նրան, ինչպես մի տարի առաջ, սկզբի որերին...

20.

Շրջում եր քաղաքի փողոցներով Մարոն ու մտածում եր։

Բոլորովին մի նոր աշխարհ եր բացվել նրա աչքերի դիմաց։ Թեև նա դեռ գտնվում եր առաջին խանդավառ տպավորությունների ազդեցության տակ, բայց մի բան լավ գիտեր.

— Ո՜ւր մեր գեղը, ո՜ւր քաղաքը...

Առաջին օրվա յերեկոն քաղաքում՝ հեքյաթի պես եր։ Հարյուրավոր վառվռուն լույսեր, բազմությունը, փողոցները, կառքերը... Նրան թվաց, թե ընկել է են հեքիաթային աշխարհներից մեկը, վորոնց մասին պատմում եր իր մարեն, յերբ դեռ ինքը փոքր եր։

Բայց չէ՞ վոր նա քաղաքում ուրիշ անգամ ել ե՛ յեկել։ Յերկու անգամ։ Մեկ՝ յերեք տարի առաջ, յերբ մոր հետ յեկել եր շոր առնելու, մեկ ել անցյալ տարի։ Բայց ինչու քաղաքն այդպես չեր...

Առաջին անգամին, նա իջել եր պանդոկի բակը, մնացել եր սայլի վրա, հարևան Գևորանց տղաների հետ, իսկ մայրը գնացել եր կոոպերատիվի խանութը, չիթ առնելու։ Շատ լավ հիշում եր։ Այն ժամանակ իրենց գյուղում դեռ կոոպերատիվ չկար։

Պանդոկը գտնվում եր քաղաքի ծայրամասերից մեկում, ճանապարհի կողքին,—համարյա դեռ քաղաք չհասած։ Նա մնացել եր այդ պանդոկի բակում, սայլի վրա յերկու ժամ, մինչև վոր մայրն յեկել եր և յերկուսով նորից վերադարձել եյին գյուղ։

Յերկրորդ անգամին ել վոր յեկան, արդեն յերեկո յեր և մութը։ Յերբ մոտեցան քաղաքին, սկսեցին յերևալ բազմաթիվ ճրագների լույսեր. կարծես այդտեղ փռված եր մի մեծ, մեծ գյուղ։

Բայց Մարոն և իր մայրը չգնացին դեպի այդ լույսերի կողմը։ Նրանք գնացին մի նեղ ու մութ փողոց և մտան Մարոյի հոր ծանոթ Ակոբենց տունը։ Շատ քիչ բանով եր տարբերվում այդ տունը գյուղի տներից։ Հասարակ, գյուղական կահկարասիներ, նավթե լամպ,—իսկը գյուղի ոդա։

Առավոտ կանուխ վեր կացան, դեռ լույսը չբացված, և ճանապարհ ընկան, վորպեսզի շուտ հասնեն գյուղ։

Բայց հիմա կարծես նա առաջին անգամն եր տեսնում քաղաքը և իր յերկու անգամվա տեսածներն ուրիշ տեղեր եյին, և վոչ թե այս քաղաքը։

Յեվ հետո։ Նախկին յերկու անգամին ել, յերբ նա քաղաք յեկավ, վոչոքի հետ չխոսեց, չծանոթացավ։ Իսկ այս անգամին, Վարոսն իրեն ծանոթացրեց շատ տղաների և աղջիկների հետ,—ուրախ, ընկերական պարզություն ու մտերմություն ունեցող տղաների և աղջիկների հետ։

Մարոն կամաց-կամաց մտածում էր, վոր մի ժամանակ սիրել էր մեկին և վորին հիմա նույնիսկ չի յել տեսնում: Վերջապես հաղթեց յերիտասարդական ուրախ և աշխույժ բնավորությունը և Մարոն նորից նախկին Մարոն դարձավ.— կրակի կտոր:

Շրջում էր նա քաղաքի փողոցներով ու մտածում էր:

Յեվ կամաց-կամաց, աստիճանաբար նրան սկսում էր համակել մի նոր, մինչև այդ գոյություն չունեցող զգացում: Նա հիշում էր իրենց գյուղը և իրենց գյուղն իրեն այնքա՜ն խղճուկ էր թվում... Մի րոպե պատկերացրեց, վոր քաղաքի՝ օրինակ՝ ավտոմոբիլներից մեկը գնա ու խփվի իրենց պատին: Ի՞նչ կլինի: Մտածելուց սարսափեց: Իհարկե փուլ կգա:

Օհաննեսի աղա Գասպարը գյուղում մի նոր տուն էր շինել, վորի վրա հիանում էյին բոլոր գյուղացիները, նաև Մարոն:

Ի՞նչ տուն էր... Այ, քաղաքի լավ ընկած տներից մեկի նման: Ի՞նչ էր վոր...

Իսկ գյուղացիները... Ինքը... Մարոյին թվում էր, վոր յեթե մեկն իրենց գյուղի դպրոցն ավարտեր, էլ նրանից գիտուն մարդ չէր լինի աշխարհում: Բայց ահա, Վարոսի ընկերները,— Արտաշեսը, Անուշավանը, Ցոլիկը, Գարեգինը.. Նրանցից ամեն մեկն իրենց գյուղի դպրոցին ուսուցիչ կարող է լինել:

Ինչքա՜ն նոր բան կա աշխարհում և ինչքա՜ն շատ բան կա...

Ինքն յեկավ քաղաք: Իսկ գյուղն ի՞նչ յեղավ: Իրենց գյուղը: Մի րոպե Մարոն պատկերացրեց գյուղի յերեկոն, գյուղի փողոցները, գյուղի պակասներն ու հազարավոր ցավ-դարդը:

Խեղճ գյուղ... Մարոն ինչքա՜ն էր սիրում իրենց գյուղը: Տասնյաթը տարի այնտեղ ապրել է, մեծացել: Կատակ խո չի՞:

Մարոն սիրում էր իրենց գյուղն ու խղճում նրան:

...Տեսնես ինչ յեղավ...

Մարոն հիշեց Վարոսին, հետո հիշեց տրակտորը: Հիշեց ու հանկարծ ցնցվեց:

Տրակտո՜րը...

Տրակտորը գյուղումն է: Մեկ հատ չէ.— յերկու: Յերկու տրակտոր. մե՛ծ, վողջը յերկաթից:

Մարոյին թվաց, թե այդ տրակտորները քաղաքի կտորներն են, վոր պոկվել են նրանից ու գյուղ են գնացել: Գնացել են գյուղ ու ճամբա յեն բացել, վոր իրենց յետևից ուրիշներն էլ գնան:

Յեվ Մարոն այնպես հանգիստ զգաց իրեն, յերբ մտածեց տրակտորների մասին: Յեվ էլ չխղճաց իրենց գյուղին, ինչպես խղճում են մի անճար արարածի:

Մարոն այնքան ապահով զգաց իրեն: Յերկու տրակտորները գյուղում՝ բերդի պես թվացին նրան: Նոր միայն զգաց, վոր մի ինչվոր լավ բան կար տրակտորների մեջ: Այն օրվանից, յերբ նրանք գյուղ գնացին, գյուղում շատ բան փոխվեց:

...Լա՜վ յեղավ, լավ յեղավ, վոր տրակտորները գնացին գյուղ: Մարոն սկսեց մտածել քաղաքի մասին, տրակտորների, յերկրին տեր կանգնած բանվոր ու գյուղացի մարդկանց տերության մասին և այն մասին, թե ինչ պիտի լինի իրենց գյուղի վերջը:

Բայց այստեղ նա խճճվեց ու պարզ պատասխան գտնել չկարողացավ: Յեվ այդ րոպեյին վորքա՜ն ցանկացավ նա ավելի խելոք մարդ լինել և այդ բոլորից գլուխ հանել — հասկանալ:

Ու թեև պարզ պատասխան չէր կարողանում տալ ինքն իրեն, բայց հեռավոր կերպով զգում էր ինչվոր լավ բանի մոտիկություն և զգում էր վոր ամեն ինչ լավ կլինի:

Մտածում էր Մարոն այդ բոլորի մասին և շրջում էր

քաղաքի փողոցներում, աշխատելով տեսնել և իր ուղեղի մեջ տպավորել յուրաքանչյուր շենքի, յուրաքանչյուր փողոցի գեղեցիկ պատկերը։

21.

Բանվորական ակումբի՝ սենյակներից վոչ մեկը դատարկ չեր։

Յուրաքանչյուր անկյունում, յուրաքանչյուր սեղանի մոտ, աթոռների վրա, հավաքվել եյին բանվորները, մեծ մասամբ յերիտասարդներ։

Սեթին ել այնտեղ եր։ Նա նստած եր խաղասենյակում, մի սեղանի մոտ, Արիստակեսի և իրենց գործարանի բանվորներից մեկի հետ։ Այդ բանվորն ու Արիստակեսը խաղում եյին, իսկ Սեթը հետևում եր նրանց խաղին։ Ապա մի քիչ հետո, նա դուրս յեկավ և գնաց հանգստի սենյակ և սկսեց զրուցել մի քանի հավաքված բանվորների հետ։

Հանգստի սենյակն այդ որն, այնքան ել նման չեր հանգստի սենյակի։ Այնքան եյին լցվել, վոր նստելու տեղ չկար։ Յեվ չնայած սենյակի ընդարձակությանը, դարձյալ թվում եր, թե շատ փոքր ե սենյակը։ Ամենուր լսվում եյին խոսակցության ու ծիծաղի ձայներ և այդ ձայների մեջ, հեռվից չեր կարելի վորոշել վորևե առանձին բառ կամ հնչյուն։—Լսվում եր միայն համատարած ղժժոց և յերբեմն յերբեմն, ղժժոցն ընդհատող ընդհանուր ծիծաղ։

Բայց և վոչ մեկի մտքից չեր անցնում, թե այդ ամենը դեմ են հանգստի սենյակի կանոններին։ Նրանցից յուրաքանչյուրն հանգստանում եր և նրան թվում եր, վոր այդպես ել պիտի լինի և վոչինչ չկա, վոր խանգարի իրենց հանգստությանը։

Վարոսը ներս մտավ։ Քիչ հետո ներս մտավ նաև Մարոն, Ցոլիկի և Արաքսիի հետ։ Նրանք յերեքով հավաքվեցին անկյունում և շարունակեցին իրենց խոսակցությունը,—ըստ յերևույթին շատ հետաքրքիր ու գրավիչ մի նյութի մասին։

Վարոսը մոտեցավ նրանց։

—Աղջիկերք, յես գնում եմ խաղասենյակ, մի քիչ խաղ անելու։ Յեթե հրդեհ ընկնի կամ ջրհեղեղ լինի, ինձ կանչեցեք։

Յեվ դուրս գնաց։

Մարոն մի րոպե նայց նրա յետևից։ Յեվ նրա աչքերում կարդացվում եր, թե ինչպես խորն ու ինչքան շատ եր սկսել նա սիրել Վարոսին...

Աղջիկները շարունակում եյին իրենց խոսակցությունը։

Մարոն ուշադիր լսում եր, ապա սկսեց հետաքրքրվել շրջապատով։ Յեվ վորովհետև նա վաղուց չեր, վոր դուրս եր յեկել գյուղից, դրա համար ել նրան այնպես եր թվում, թե ահա, կհանդիպի իրենց գյուղացիներից մեկին ու մեկին։

Որինակ, անցնում եր փողոցով և հանկարծ տեսնում եր մի մարդու, չափազանց նման Ահարոնենց Մուշեղին։ Կամ թե չե, անցնում եր մայթի վրայով և մտածում եր, վոր ահա, դեմից դուրս կգան իր ընկերուհիները, Սիրանուշն ու Շուշիկը, կամ Բեգլարենց Մանիշակը։ Ապա սթափվում եր, հիշում եր, վոր քաղաքում ե հիմի և ժպտում եր իր միամտության վրա։

Հանգստի սենյակում յեղողներից մեկը շատ նման ե իրենց հարևան Սաստուր բիձի տղին. ճիշտ վոր, ինչքան նման ե...

Ահա այն մյուսը։ Իսկական, վոնց վոր Զոփուռի տղեր Կարապետը։ Նրա պես, խոսելիս փոքրացնում ե մի աչքը և ծուռը ծիծաղում ե։

...Իսկ այն մյուսը, կաշվե պինջակ հագածը, վոր կանգնել ե Սաստում բիձի տղին նմանվողի ու մյուսների հետ և խոսում ե՝ ինչքան նման ե Սեթին...

Մարոն մի քիչ նայեց նրան և սկսեց մտածել Սեթի մասին։ Տեսնես հիմի վորտեղ ե եդ շան դյադեն...

Լսել եր, վոր նա քաղաքումն ե։ Մի քանի անգամ, փողոցով անցնելիս աչք եր ման ածել նրան տեսնելու համար, բայց չեր տեսել։ Իսկ հետո դադարել եր փնտրելուց, մտածելով, վոր նա այս քաղաքում չի։

Բացի դրանից, Մարոն այլևս չեր ուզում մտածել նրա մասին ու տխրել։

Իսկ հիմա, Սեթի նման մարդուն տեսնելով, նա ակամայից սկսեց մտածել Սեթի մասին։

Հաստատ վոր, տեսնես ուր ե եդ անիծված տղան...

Յեթե մի որ Սեթը գա քաղաք և հանդիպի իրեն, ինքն ինչ կերպ պիտի հանդիպի։ Իսկ Սեթն ինչպես պիտի հանդիպի իրեն...

Այն որվանից, յերբ Մարոն քաղաք յեկավ, իր մեջ շատ բան փոխվեց։ Յեվ նրան թվում եր, վոր Սեթն հիմի դժվար թե այնքան սիրելի թվա իրեն, ինչքան վոր առաջ։ Գյուղն իրեն թվում եր անցած մի յերազ, Սեթն ել հետը...։

Վաղը, յերբ ինքը վերադառնա գյուղ, գյուղն այլևս այն հին գյուղը չի լինի, ինչվոր իր ժամանակին եր։ Հազար ու մի բան փոխված կլինի և հնից շատ քիչ բան մնացած կլինի։ Նա կսիրի այդ գյուղը, կկապվի նրա հետ, կաշխատի։ Նա կաշխատի գյուղում, վորպեսզի իրենց գյուղն ել առաջ գնա, լուսավորվի և այս քաղաքի պես դառնա։ Ինքն անպայման կաշխատի գյուղում. կվերադառնա գյուղ, յերբ դպրոցն ավարտի և լինի խելոք ու բանիմաց մարդ...։

...Իսկ այն գյուղը, վոր կար իր ժամանակ, ել առաջվա նման իրեն սիրելի չի լինի.. Այն գյուղից մնացած կլինի Մարոյի սրտում միայն հուշ և ուրիշ վոչինչ.. Այն գյուղից Մարոյի սրտում հիմա յել մնացել ե միայն հուշ և ուրիշ վոչինչ։

Սեթը նույնպես հուշ ե։ Ուրիշ վոչինչ։

Յեվ եդ հուշ — Սեթին նա ինչպես պիտի հանդիպի...

Սեթի նման մարդը նայեց Մարոյի կողմը։ Մարոն նկատեց այդ։ Սեթի նման մարդը զարմացավ. Սեթի նման մարդը թողեց ընկերներին և արագ քայլերով մոտեցավ։ Սեթի նման մարդը...

—Մարո՜...

—Սեթ։

—Մարո, դու ինչ ես անում եստեղ...

—...Սեթ..ինչքա՜ն ես փոխվել...

—Ես վո՞նց պատահեց, մի պատմի, աղջի...

—...Վո՞նց...Տրակտորը...Վարոսի հետ նշանվեցի... Վարոսն յեկավ քաղաք, յես ել հետը...յեկա...

—Ա՜ղջի, Վարոսին ես առել, ծիծաղեց Սեթը, ուշադրություն չդարձնելով իր սրտի հեռու-հեռավոր, աննշան ծակոցին։

—Բանվո՞ր ես դարձել, Սեթ։

—Հա։ Ե՛, պատմի տեսնենք, ինչ կա, ինչ չկա։

Մարոն չպատասխանեց։

...Սեթն ե...

Նա ձեռք տարավ գլխին, հավաքեց իր ճակատի վրա յեկած մազերը, մատների արանք առավ մի փունջ մազ և սկսեց խաղալ նրա հետ։

...Սեթն ե...

—Մարեդ վո՞նց ե, աղջի։

—Լավ ե։ Դու ե՞ս քաղաքումն ես ապրում, Սեթ։

—Հա։ Արտն ես տարի ցանել ավե՞ց։

—Ցանել ավեց. տրակտորով վարեցին, խոտհարով ել քաղեցին։ Սեթ, դու գիտե՞ս, վոր հետիդ գնացածներ, Մուշեղը, Սատուրը, Հակոբը ելի յետ դարձան գեղ ու հիմի ենտեղ լավ ապրում են։ Հող ստացան, անասուն առան։

—Գիտեմ, Մարո։ Ե՛, ասել ե՝ մարեդ մենակ մնաց,

նա։ Խեղճ պառավ։ Ասենք վնաս չունի, աչքաբաց կնիկ է։ Յեզներն ինչ արեց։

—Ծախեց. կով առավ. փոչխար էլ։ Հիմի որ բանվոր ես, հիմի՞ չե լավ թե առաջ, Սեթ։

—Հիմի։ Հիմի շա՜տ լավ է…

Ու նայեց Մարոյին, կարծես հարցնում էր.

—Լավ չե՞…

—Ճիշտ որ… Քաղաքում շա՜տ լավ է, շա՜տ,—ավելացրեց Մարոն։

Լռեցին։

…Սեթն է…

Առաջին րոպեյին այնքան շփոթվել էր Մարոն։ Հետո ինքն իրեն գտավ։ Հուզմունքն անցավ։ Մտքերն սկսեցին սլանալ նրա ուղեղի միջով, բայց ո՛չ առաջին րոպեյի նման խառնիխուռը։

Սեթն է։ Այն Սեթը, որ մի ժամանակ իրենց արտում, ճիպոտը, - էհ, չէ։—Մարոն չուզեց մտածել ճիպոտի մասին։ Հիշեցի քաղը, գերանդիները, Սեթին, որ քաղվոր էր գյուղի արտերում։ Բայց այս մասին էլ յերկար չուզեց մտածել նա։ Չեր մնացել Սեթի հետ կապված մորմե հուշ, որ սիրելի լիներ իրեն։ Ի՞նչն էր մնացել այդ բոլորից։—Սեթը։ Միայն Սեթը։

Յեվ առաջին անգամ Մարոն զգաց, որ Սեթին չի սիրում։ Յերբվանի՞ց, ինչպե՞ս.—չկարողացավ պատասխանել։

Նայեց Սեթին։ Նայեց և համոզվեց։ Ել այսուհետև նա իր ընկերն է,—ուրիշ ոչինչ։

—Սեթ, սկի գեղը միտքդ չե՞ս գցում։

—Գե՞ղը. հա, ինչ կա որ։

—Սկի։ Ասում եմ՝ ինչ եր… Մութը, յետ ընկած։

—Հիմի լավ կլի, Մարո։ Կամաց-կամաց լավ կլի։ Ասում են՝ խոտհար են առել գեղացիք, ասում են ուսումնարանի շենք են շինում, դու կգիտենաս։

—Հա։

—Լա՜վ կլի…

—Յես որ ուսում առա, գեղ պիտի գնամ ու էնտեղ պիտի աշխատեմ, Սեթ։

—Լավ կանես, Մարո, լավ միտք ես արել։

—Բա դո՞ւ։

—Յե՞ս…

Սեթը ժպտաց։

—Յես բանվոր եմ, Մարո։

Ու չսպասելով Մարոյի խոսելուն, սկսեց պատմել այն մասին, թե ինչքան լավ է գործարանում, թե ինչպես լավ է գնում աշխատանքն ու բանվորական որն ինչքան շուտ է անցնում։

Մարոն լսում էր նրան, մտածում էր գործարանի մասին, հետո մտածում էր գյուղի մասին և այն մասին, որ ինքը պիտի գնա գյուղ ու պիտի այնտեղ տանի աշխարհի լավը…

Յերկուսն էլ զգում էին, որ մեռել է իրենց սրտում կուսական գյուղի լուսնոտ պատկերն ու սերը խոտի դեզերի շվաքների տակ։ Յերկուսն էլ զգում էին, որ իրենց կանչում է միևնույն ձայնը,—յերկաթե կոկորդով ու սիրելի։ Կանչում է նույն գործի համար, նույն նպատակի։

Յեվ յերբ վաղն օրը բացվի, նրանք կգնան դեպի այդ ձայնը.—մեկը դեպի գործարան, մյուսը դեպի գյուղ…։

ՍՈՆԱ

1.

Մի քանի տարի առաջ յես ավելի յերիտասարդ եյի։ Յես հիմա չել եմ յերիտասարդ, բայց ուրիշ եր այն ժամանակ, ուրիշ հիմա։ Զգում եմ, թե ինչպես անցնում են տարիները և յես մեծանում եմ. այդ են ասում և՛ կուստոմսն իմ գրպանի մեջ, և՛ անընդհատ աճող մազերը դեմքիս վրա, և՛ բնավորությանս փոփոխվելը... Զգում եմ, վոր արդեն փակվում ե իմ կյանքի այն ամենալավ շրջանը, վորը կոչվում ե ջահելություն։

Բայց յես բոլորովին չեմ մտածում այդ ամենի մասին և ինձ թվում ե, վոր կյանքի բոլոր տարիքներնել հավասար չափով սիրելի յեն, վորովհետև ինքը կյանքն ե սիրելի։ Յես չեմ սիրում հիշել անցած-գնացած օրերը, վորովհետև յես միշտ ապրում եմ ներկայով։ Յեվ յեթե չլիներ այսորվա մի աննշան դեպքը, յես դժվար թե հիշեյի այն փոքրիկ պատմությունը, վոր պատահեց ինձ հետ սրանից հինգ տարի առաջ։

Յես այսոր տեսա մի աղջկա և ինձ թվաց՝ թե մենք վաղուց ծանոթ ենք յեղել միմյանց։ Թվաց թե մի ժամանակ յես ու նա յեղել ենք մտերիմ եր և նա շատ հաճախ ե ժպտացել ինձ իր կապույտ աչքերով։ Նա հաճախ նայել ե ինձ իր կապույտ աչքերով, վորոնց մեջ յես կյանքի ամբողջ պայծառությունն եմ տեսել և գարնան շունչն զգացել...

Յեվ ինչպե՞ս կապվում են այս մտապատկերներն իմ

կյանքի այն շրջանի հետ, յերբ յես դեռ նոր եյի վոտք դնում յերիտասարդության շեմքին...

Բայց գուցե, իրոք, պատահել ե այդպիսի բան և մենք անցյալում մտերիմներ ենք յեղել։ Գուցե լոկ մտապատկերներ չեն այս բոլորը։ Սակայն յես այդ հաստատ չգիտեմ։ Այսոր յերբ Վազգենը նրա հետ միասին պատահեց ինձ և ուզեց ծանոթացնել մեզ միմյանց, աղջիկը ձեռքն ինձ մեկնեց ճիշտ այնպես, ինչպես անում են նոր ծանոթացողները։

Սակայն յես չբռնեցի այդ ձեռքը, այլ ասեցի։

— Մենք վաղուց ծանոթ ենք միմյանց...

Աղջիկը չշփոթվեց։ Նա միայն նայեց ինձ զարմացած ձեռնալով և հարցրեց.

— Մի՞թե։

Այնուհետև մենք բաժանվեցինք։

2.

Իմ հուշերի մեջ վորքան սերտ են կապված իրար հետ՝ յերկրիս արշալույսն ու իմ կյանքի արշալույսը։ Առաջին բանը, վոր յես հիշում եմ, այն ձիավորներն են, վորոնք «Մարսելիոզ» յերգելով մտան մեր քաղաքը։

Այդ օրվանից են սկսվում իմ հուշերը։ Նրանից առաջ յես վոչինչ չեմ հիշում հիմա և յերբ աշխատում եմ վորևե բան մտաբերել, աչքիս առջև պատկերանում ե արյունոտ և մոխրագույն մի քաոս, ուրիշ վոչինչ...

. . . .

1923 թվին եր։ Բուռն վոգևորությունների տարեթիվ եր դա։ Ամենուրեք «Ինտերնացիոնալ» ու միտինգ, ամեն շաբաթ զորահանդես, ամեն որ պատկոմական շարքերը փողոցներում և մեր, կոմյերիտականներիս հակակրոնական կարնավալները։

Մեր ակումբը, վոր նախկին նահանգապետի շենքն եր, ամեն որ ու գիշեր լցված եր լինում յերիտասարդ-

ներով։ Ցերեկները դասախոսություն էր լինում կամ յերգեցիկ խմբի պարապմունք, վորտեղ սովորում էինք «Ինտերնացիոնալ» ու «Մարսելյոզ» յերգել, իսկ գիշերները ակումբի սենյակներից մեկում մենք պլակատներ էինք նկարում՝ հետևյալ օրվա կարնավալի համար։

Հիշում եմ այդպիսի մի գիշեր։

Վերջացրի աստծու ծաղրանկարը և գլուխս կռացրի սեղանին, մի քիչ ննջելու համար։ Սենյակում գտնվող մյուս յոթ-ութ ընկերները լուռ շարունակում էին իրենց աշխատանքը։

Շատ ննջեցի թե քիչ, դա չեմ հիշում. հիշում եմ այն, վոր գլուխս չափազանց ծանրացել էր և յես ուզում էի քնել, լավ քնել։ Բայց այդ բանը համարյա հնարավոր չէր, վորովհետև այդ գիշեր ուրիշ շատ աշխատանք կար անելու։

Յեվ յես ննջում էի։

Ականջս ձայն ընկավ։

— Մ՛ա՛մ՛...— արեցի յես քնի միջից։

Քիչ հետո՝ նորից։ Կարծես մեկը բղավելիս լիներ ականջիս մոտ։ Յես գլուխս չբարձրացրի,—քունս տանում էր, այլ կրկնեցի նույնը.

— Մ՛ա՛մ՛...

Բայց ծիծաղի սուր ձայնը, վորն ինձ վոտքի հանեց, առիթ դարձավ վոր յես մի լավ բարկանամ.

— Ձե՞ք կարող լուռ աշխատել, տո շուն շան...

Ընկերներից մի քանիսի ներկոտ վրձինները բարձրացան և ուղղվեցին դեպի մեղավորի կողմը։ Նոր միայն տեսա Սոնային, վոր կաշվե պինջակը հագին և գլխին կարմիր գլխաշոր կապած, կանգնել էր լուռ ու մունջ։

— Ի՞նչ գործ ունես կես գիշերին զբաղված մարդկանց մոտ, խանգարում ես, փախի՛ր մորդ ծոցը,—մռմռացի յես ու նորից գլուխս կախեցի սեղանին։

Ընկերներս հանկարծ ծիծաղեցին ու միանգամից լռեցին։ Սոնան դեռ չգիտեր ինչումն է բանը և հարցնում էր ծիծաղի պատճառը։

Յես ննջեցի։

Մի պինդ հարված կողքիս՝ ինձ ստիպեց վեր թռչել։ Սոնան էր։

— Ի՞նչ ասեցիր...

— Թող քնեմ, Սոնա։

— Չե, չե. ի՞նչ ասեցիր։

— Թող քնեմ, ասում եմ։

— Թո՛ղ քնի Արմենը, հոգնած է,—ասաց ընկերներից մեկը։

— Չե՛մ ուզում,—վոտքը գետնին խփեց Սոնան,—թող ասի թե ի՛նչ ասեց քիչ առաջ։

— Վոչինչ։

— Չե՛մ, ասա։

— Կրակ խո չե՞ս։ Ասեցի՝ փախիր մորդ ծոցը։

Ընկերների նոր ծիծաղը հարկադրեց Սոնային հարմար պատասխան փնտրել։ Քիչ մտածելուց հետո դանդաղ ասաց.

— Դու փախիր...

— Ա՛խ,—ասեցի յես կեղծ հառաչով,—յես էլ՝ եդպիսի մի տեղ եմ փնտրում...

Ընկերներից վոչ մեկը դեռ հինգ րոպե չեր կարող աշխատել, բուռն ծիծաղի պատճառով։

— Սոնա, մայրդ մեջտեղ գնաց։

— Վա՜յ, Սոնա, ո՞ւր փախչի Արմենը, մեկ էլ տես, ո՞ւմ մոտ։

Սոնան հաղթված նստեց և յես շարունակեցի հանգիստ ննջել։

Քիչ հետո, տեսնեմ մեկն ինձ ձայն է տալիս։

— Արմեն...

— Հը...

— Ա՛յ Արմեն...

— Հը՛, հը՛…

— Գլուխդ կցավի։ Յես կնստեմ, գլուխդ դիր ծընկիս ու քնիր։

Աչքերս բաց արի։

— Սոնա՛, էլի դու՞ յես։

— Ասում եմ ծունկիս դիր գլուխդ, քնիր, հիմար, իսկ դու բարկանում ես։

— Հա՜մ, լավ,— ասեցի յես առանց զարմանալու Սոնայի բարեսրտության վրա և գլուխս դրի նրա ծընկին։— Իսկ դու փայտի նման պիտի նստե՞ս։

— Չէ, յես աստվածածին պիտի նկարեմ։

Յես նիրհեցի, իսկ քիչ հետո, արդեն քնում էի խորը քնով…

Յերեկի Գուլլիվերը, նավաբեկությունից հետո, ծովափին արթնանալիս, ինձ նման է կապկապված յեղել։ Բայց նրա դեմքը սովորական է յեղել, առանց ներկվածների։ Իսկ իմ դեմքս… Սեղանին դրված հայելու մեջ մի սատանայի տեսա։ Շարժվեցի վոր ավելի լավ նայեմ,— յես եմ։ Ուզեցի վեր կենալ, բայց բազմաթիվ գոտիներով ու պարաններով կապված էի նստարանին։ Սոնան անհետացել էր։

— Լավ, Սոնա, յես քու հախիցը կգամ։

3.

Յերեկոյան, ժամը 5-ի մոտ, զողանջում էին քաղաքի յեկեղեցիների զանգակները, վորոնց մեջ ավելի ուժեղ էին հնչում աստվածածնի յեկեղեցու զանգերը։ Քաղաքի փողոցներում անսովոր անց ու դարձ կար։ Դեպի յեկեղեցիներն էին գնում բազմաթիվ մարդիկ, կանայք, մանավանդ ծերեր և հասակավորներ։

Իսկ յեկեղեցիներից մի քիչ այն կողմը, ակումբում հավաքվում էին կոմյերիտականները։ Այստեղ ևս նույն փութկոտությունը, նույն արտակարգ բազմամարդությունը։

Ընթերցարանի սեղանների վրա լրագրեր չկային, պարապմունք չկար, վոչ էլ դահլիճում ներկայացում։ Յերևում էր, վոր կոմյերիտականներն այսոր հավաքվում էին իրոք վոր մի արտակարգ բանի համար։

Բոլոր սենյակներում լցված էին նրանք։ Յեվ վորքան էլ շատ լինեյին, այնուամենայնիվ, մեզանից յուրաքանչյուրն անձնապես ծանոթ էր մյուս բոլորին,— այդ մեծ ընտանիքի, այդ մտերիմ ընտանիքի մյուս անդամներին։

— Տղերք, Մկոն չկա։

— Ինձ հետ էր գալիս։ Ճանապարհին մարդ հանդիպեց, կանգնեց, հիմի կգա։

— Արտաշն յեկե՞լ է։

— Չէ՛։

— Սարգի՞սը, Հակո՞բը, Ցոլե՞կը։

— Դահլիճումն են։

— Արա՞մը, Հրա՞չը, Հարությո՞ւնը, Գուրգե՞նը, Սոնա՞ն, Մարո՞ն…

— Չէ՛։

— Ուրեմն դեռ սպասենք մի քիչ էլ։ Դեռ ուշ չէ,— չէ՞։

— Չէ՛։

Ակումբի բակում գտնվող մի դռան մոտ կանգնել էին տաս-քսան կոմյերիտականներ և նայում էին ներս։ Ներսից ինչ վոր մեկը դուռը ծածկում էր, սակայն քիչ հետո, դրսում հավաքվածները նորից բաց էին անում դուռը և միահամուռ ծիծաղում։

— Կտեսնեք հետո, ինչ եք հավաքվել, տո՛։ Ցրվեցեք։ Մի՛ք խանգարի։

Խրատները քիչ էին ներգործում և հավաքվածների ծիծաղն ու հետաքրքրությունը վոչնչով չէր նվազում։

Հավաքվածների մի մասը հույսը կտրած հեռանում էր, բայց հեռացողների տեղը բռնում էին ուրիշները։

— Շարքի՛,— լսվեց ինչ որ սենյակից։

— Շարքի՛, շարքի՛,— կրկնեցին բոլոր սենյակում հավաքվածները և սկսեցին փողոց դուրս գալ։ Դռան մոտ հավաքվածները շտապեցին շարք կանգնելու։

— Յերկ-յերկու։

— Յերեք-յերեք։

— Չորս-չորս։

— Քսանչորս քառասունչորս։

Ծիծաղը պրծավ։

Յեկավ Անիկը, վորին կոմյերիտականները «հրամանատար» եյին ասում և բղավեց։

— Չո՛րս-չո՛րս...

Կարճահասակ Աշիկը, վոր առաջին բոլեյին չեր յերևում Անիկի յետևում, նույնպես բղավեց.

— Չորս-չորս...

Անիկը յետ դարձավ։ Շարքերում ծիծաղեցին։

— Տեղդ կանգնիր, ոգնական հարկավոր չե։

Աշիկը, զինվորական հաղթ քայլվածք ձևացնելով, մոտեցավ շարքերին։

— Տղեք ջան,— ուլիցեն գնալիս, խոսել-խնդալ չեղնի։ Մեն ուլում, ինչ կեներ՝ երեք, նամուսով գնացեք, կոմսոմոլիստի նման։

Շարքերն ուշադրությամբ լսում եյին։

— Եվել-պակաս լոզունգ բաց թողնել չեղնի։ Խուժանի պես չը յերգեք. իրար հետ, մե ձենով...

Շարքերից մեկի ծայրին խոսում եյին։

— Ծո, եղաեղ սուս, յա։ Ուխտավորի եշ խո չի՜ գոռա։ Բան հասկցեք։

Բոլորի նախատինքի ազդեցության տակ, ծայրամասը լռեց։

— Տղեք ջան, յերգը մեհան չենեք։ Վով որ խոսքերը հըլը լավ չի սորվե, թող Մկոյից առնե։ Քովը տըպած—պատրաստ կա։

Շարքերում լուրջ լսում եյին։ Ապա, հանկարծ, բոլորի աչքերն ուղղվեցին դեպի ակումբի դուռը և բոլորը միասին փռթկացին։

— Որհնյա՛ է տեր, որհնյա՛ է տեր...

Անիկը յետ շրջվեց և ինքն ել չկարողացավ ծիծաղը զսպել։ Այնքա՛ն նման եյին դուրս յեկել տերտերները, տիրացուները, շարչին, բուրժուան։

Շարքերում խոսակցություն ծայր առավ։

— Կուզիկ տերտերն ո՞վ ե։

— Մկոն ե։

— Կա՞րճը...

— Չի ճանաչվում։

— Տիրացո՞ւն...

— Սերգոն ե։

— Չե, Տիգրանն ե։

— Սերգոն ե։

— Ճիշտ ե, Սերգոն ե։

Յեվ այդպես, ճանաչեցին բոլորին, մինչև Հիսուս-Քրիստոսը, մինչև մայր աստվածածինը՝ վորը Սոնան եր, մինչև բուրժուան։

Բայց վոչ վոք չկարողացավ ճանաչել կարճլիկ տերտերին։

Շարքերում աղմուկ ծայր առավ։

— Կարճը...

— Կա՛րճը, կա՛րճը...

Կարճլիկ տերտերը կանգ առավ, ձեռքի խաչով խաչակնքեց և վորոտաց.

— Խաղաղություն ամենեցուն։

Ականջ խլացնող հռհռոցի միջից լսվեցին ձայներ.

— Հարությունն ե, Հարությունն ե։

Կերպարանափոխված խումբն անցավ շարքի գլուխը։

— Ել չեմ լսե, հա՛,— կրկնեց Անիկը։— Դուք ընձնից լավ կհասկնաք։

Ամեն ինչ պատրաստ էր։

— Բան-ման պակաս չկա՞։ Բան մոռհան չերի՞ք, համենայն դեպս հարցրեց Ոնիկը։

Մի վայրկյան լռությունից հետո, շարքերի միջից լսվեցին ձայներ.

— Պլակատնե՛րը...

— Տո՛, հա՛, պլակատները։

Բայց դեռ չէին լռել, յերբ ակումբի դռնից դուրս յեկան տասնհինգ-քսան կոմյերիտականներ՝, ձեռքներին հակակրոնական պլակատները, վորոնք մենք եյինք նկարել անցյալ գիշեր։

Շարքերում նորից աղմուկ ծայր առավ։

— Մեր խմբին պլակատ։

— Մի հատ էլ մեզ։

— Մեզ էլ, մեզ էլ...

Ոնիկն ու Հրաչն արագ բաժանեցին պլակատները և շարքերում լռեցին։

Ոնիկը ձեռքերը խողովակի նման դրեց բերանին և բղավեց.

— Առա՛ջ...

Շարքերը լուռ շարժվեցին։

Անցնելով մի քանի փոքրիկ փողոցները, կոմյերիտականների շարքերն ուղղվեցին դեպի գլխավոր փողոցը, ուր այդ ժամանակ շատ մարդիկ կային։

Անցորդները զարմացան։ Ամբողջ փողոցով մեկ նրանք կանգնեցին և սկսեցին նայել։ Ոնիկը ձայն տվեց.

— Մկո, գլե...

Յեվ Մկոն սկսեց, աղիողորմ, ծիծաղից պայթեցնելու չափ վողբալի ձայնով.

Յերկինք, յերկիր, արքայություն,
Էլ չեն տալիս մեզ գորություն.
Էլ չեն խուզվում մարդիկ հազար,
Մորուքներս տանենք բազար...

Ապա, վիզը յերկարացնելով և ձայնին տալով առասպելական նոտաներ, կլկլացրեց.

Կ ո՜ ո՜ մսոմոլի զատիկն եկավ,
Վայ մեր որին, ես ինչ եղա՜ա՜վ։

Ամբողջ շարքը թնդացրեց.

Կոմսոմոլի զատիկն եկավ,
Վայ ձեր որին, ես ինչ եղավ։

Ապա, բաց թողեցին մի քանի հակակրոնական լոզունգներ, ուռա բղավեցին, իսկ քիչ հետո Մկոն նորից սկսեց։

Փողոցի յերկու կողմը, մայթերի վրա, պատերի պես կանգնած էր ժողովուրդը։ Նրանց մեջ ծայր առավ ծիծաղը, անվերջ ծիծաղը և ծափահարությունը։ Իսկ հասակավորներն ու պառավները խաչակնքում եյին և յերեսները շուռ տալիս։

Ու մինչդեռ փողոցում հավաքվում եյին մարդկանց նոր և նոր հորձանքներ, մեր շարքերն անցան առաջ և թեքվեցին մի ուրիշ փողոց։

— Դեպի Փրկչի ժամը,—ձայնեց Ոնիկը։

Շարքերն ուղղվեցին դեպի այն կողմը։ Յեվ յերբ բավական մոտեցել եյինք, նորից սկսեց Մկոն։ Դեռ յեկեղեցու մուտքերին չհասած, շարքը խմբովին թնդացրեց յերգի կրկնողությունը։ Յեկեղեցու մի քանի դռներից դուրս պրծան ներսում յեղողները և հենց այդտեղ էլ քարացան։

— Մեղա՜ քեզ, աստված, մեղա՜, մեղա՜ ..

— Աստծու կրակը թափվի ձեր վրա, կոմսոմոլներ...

Իսկ մեր շարքերից։

— Կրոնը աֆիոն է, վոր թունավորում է մասսաների ուղեղները։

— Կորչի՛ կրոնը։

— Կեցցե գիտությունը։

— Ուռա՜...

— Կեցցե կոմունիզմը։

— Ուռա՜...

Յեվ նորից շարունակելով «կոմսոմոլի գատիկը», շարքերը շարունակեցին ճանապարհը։

— Դեպի սուրբ Գրիգոր լուսավորիչը,—հրահանգեց Օնիկը և շարքերն ուղղվեցին դեպի այն կողմը։

Յեվ այնտեղ, նորից նույնը։

Աստվածածնի յեկեղեցին, իբրև ամենաբազմամարդն ու ամենակարևորը, մենք թողել եյինք վերջին հերթին։

Յեվ յերբ Օնիկը վերջապես ձայն տվեց.

— Դեպի սուրբ կույս մայրիկ՝ Մարիամ մա՛յր աստվածածինը—ամբողջ շարքով, ծայրեծայր, անցավ ուրախ բացականչությունների ու շշունջների ալիքը։

Մկոն կոկորդը մաքրեց։ Պլակատներն ավելի բարձրացան և շարքերն աշխուժացան ավելի։

— Մարիամ աստվածածին, առաջ արի, ասեց Օնիկը։ Սոնան անցավ ամենից առաջ։ Այդ բոլոր նախապատրաստությունից հետո, շարքն առաջ շարժվեց նորից։

— Սոնա, գեղգեղա։

Սոնան սկսեց բարակ ձայնով.

Հայր Հովսեփը ամուսինս եր,
Հայր աստվածը սիրականս,
Հազար ջահել հրեշտակներ
Գիշեր-ցերեկ լիքն եր տանս։
Վորն ե հայրդ, Հիսուս, ասա,
Հայր Հովսե՞փը, թե հայր աստված։

Այնքան վողբերգական եր յերգում Սոնան, վոր շարքերը թուլանում եյին անձայն և զսպված ծիծաղից։ Կըրկնոտությունն ուշացավ։

Օնիկն ուզում եր հրահանգել, բայց յերևում եր, վոր հազիվ եր կարողանում ծիծաղը պահել։

— Դե՛, տղեք... ինի՛, ինի՛, ինի՛... Դե՛, տղեք, յերգը կրկնեք։ Ինի՛։ Մտեհա՜ն երեք. ինի՛, ինի՛...

Օնիկի մեջընդմեջ ծիծաղն ամեն ինչ լրացրեց։ Շարքերում ծիծաղը դուրս հորդեց։

— Ո՛հո-հո...

— Ի՛հի-հի...

— Ե՛հե-հե...

Բայց հանկարծ, կարծես հրահանգով, բոլորը լռեցին։ Մոտենում եյինք յեկեղեցուն։

— Մկո, գլե..

Մկոն գլեց։ Յեկեղեցուց դուրս թափվեցին աղոթականները։ Դուրս թափվեցին նաև տերտերներն ու տիրացուները, մեկի ձեռքում աղոթագիրք, մյուսի ձեռքում բուրվառ, յերրորդի մոտ ուրիշ բան։

— Մկո, գլե...

Բայց վոչ թե Մկոն, այլ ամբողջ շարքն սկսեց գլել։ Յերգի ձայնի մեջ խլանում եյին աղոթական կանանց ինչ վոր մրմունջները։

Չգիտես վորտեղից, մի քանի կոմյերիտականներ գըտան մի սեղան և բերեցին։ Հրաչը բարձրացավ սեղանի վրա։

— Ընկերներ...

Յեվ սկսվեց միտինգը։ Տերտերները, տիրացուները, աղոթականները, մոռացած ամեն ինչ, զարմացած լսում եյին։ Մի տիրացու ձեռքի բնազդական շարժումով դեռ բուրվառում եր հավատացյալներին ու վոչ հավատացյալներին։

— ... Ձայնը տրվում ե Մարիամ աստվածածնին...

Բայց հազիվ եր Սոնան բարձրացել սեղանի վրա, յերբ մի քանի հարբած հավատացյալներ հարձակվեցին դեպի մեզ։

— Տո, դուք ո՞ւմ աստվածածնին ձեռ առնեք, յես ձեր մեծ ու պստիկը,—ասեց մեկն ու հարձակվեց դեպի Սոնան։ Մյուսներն ել։

— Ե՛յ, եյ, քաղաքացիներ, խենթացե՞լ եք, ինչ ե,—

բղավեցին շարքերի միջից։ Բայց դրությունն ուրիշ կերպ պետք եր փրկել, վորովհետև հարձակվեցին մի քանի ուրիշներն ևս։

Շարքերը խառնվեցին։ Կոմյերիտականները շրջապատեցին անկարգություն անողներին և Սերգոյի ու մյուսների մկանուտ թևերը մի քանի րոպեյում բռնեցին բոլորին։ Լսվեց Սոնայի ձայնը։ Յես վազեցի դեպի նա և հասա ճիշտ այն րոպեյին, յերբ հարբած մի մարդ ուզում եր բռունցքն իջեցնել նրա գլխին։ Յես պինդ բռնեցի նրա թևը և յերեսն ի վեր սուլեցի.

— Ֆյո՜ւ՜... ղուռումսաղ...

— Շարքե՛րը, — լսվեց Ոնիկի ձայնը։ Բոլորս նորից կանգնեցինք շարքի. իսկ անկարգություն անողները, միլիցիոների անհաճելի ընկերակցությամբ, ուղևորվեցին համապատասխան տեղը։

Մենք վերադարձանք։ Ճանապարհին վիճում եյինք միմյանց հետ այն մասին, վոր կրոնի դեմ մեր պայքարը շա՜տ թերի կողմեր ունի, վորոնք պետք ե ուղղել։ Բայց այդ մասին ավելի լուրջ խոսելը թողնելով մի ուրիշ անգամի, մենք նորից վողողեցինք փողոցները մեր յերգի հնչյուններով.

Կո՜մսոմոլի զատիկն յեկավ,
Վա՜յ ձեր որին, ես ինչ յեղավ...

Մութն եր, յերբ վերադարձանք։

Սոնան և մյուսներն սկսեցին հանել իրենց շորերը և նորից վերածվել կոմյերիտականների։

Մոտեցա Սոնային։

— Սոնա...

— Ի՞նչ։

— Արի ասեմ։

Սոնան յեկավ։ Նայեցի շուրջս։ Սենյակում մարդ չկար։

— Յեկ, ականջիդ բան եմ ասում։

Սոնան ականջը մոտեցրեց դեմքիս, բայց յես, փոխանակ բան ասելու, բռնեցի նրա գլուխն յերկու ձեռքերով ու համբուրեցի նրա յերեսը։

— Կերա՞ր... ես ել քեզ յերեկ գիշերվա պատասխանը։

— Վա՜յ, ինչքան վատն ես, — մրմնջաց Սոնան։ — Ամոթ ինձ, թե ուրիշ անգամ քեզ հետ մենակ մնամ։

Յես դուրս յեկա սենյակից գոհ սրտով, վոր լավ վրեժխնդիր յեղա Սոնայից։

Համբույրը վոչ մի ազդեցություն չթողեց ինձ վրա և յես շուտով մոռացա այդ։

4.

Յերիտ-ակումբում, բացի ակումբի թատերական սեկցիայից, կար նաև մի ուրիշ թատերական խումբ, — շրջիկ խումբ, վորը հայտնի յեր Նիկոլի խումբ անունով։

Յերբ յես մտածում եմ այդ շրջիկ խմբի մասին, աչքերիս առջև պատկերանում ե Նիկոլը, հատակի խոզանակը ձեռքին, կամ վերարկուն թարս հագած։

Նիկոլի խումբը։ Ո՞ւմ հայտնի չեր։ Դժվար թե վորևե ակումբում կամ դահլիճում դասախոսություն ու ժողով տեղի ունենար, առանց Նիկոլի խմբի ներկայացման։ Հրավիրում եյին։ Իսկ յեթե չհրավիրեյին, Նիկոլն ինքը կգնար «համապատասխան» մարդու մոտ և կասեր.

— Ընկեր, մենք ուզում ենք ձեր ժողովից հետո ժողովականների համար բեմադրել մի քանի փոքրիկ կոմեդիաներ։

— Խնդրեմ։ Բայց ինչո՞ւ առաջուց չասեցիք, վոր նախապատրաստություն տեսնեյինք։

— Վոչինչ, մենք ամեն ինչ պատրաստել ենք։

— Խնդրեմ, խնդրեմ...

Շատ քիչ եր պատահում, վոր Նիկոլի խումբը յելույթ չունենար։ Դա լինում եր սգահանդեսների կամ մահվան տարելիցների յերեկույթներին, վորովհետև, ինչպես ամեն մարդ սահմանափակ կարողություններ ունի, այնպես ել

Նիկոլն ու իր խումբը միայն կոմեդիա խաղացողներ եյին և կապ չունեյին «վողբերգության» հետ։

Յեվ այսպես, իր բազմաթիվ կոմեդիաներով, Նիկոլի խումբը շրջում եր ակումբից-ակումբ, գյուղից-գյուղ։ Հաճախ, մի որվա ընթացքում նրանք ներկայացում եյին կազմակերպում յերկու և նույնիսկ յերեք տեղում։

Շատ հազվադեպ եր, վոր Նիկոլի խմբի ներկայացումները վճարովի լինեյին։ Յեվ այդ ել այնպիսի դեպքերում եր պատահում, յերբ խումբը գրիմի և այլ պիտույքների կարիք եր ունենում, կամ ուզում եր վորևե գյուղ գնալ և փող եր հարկավոր լինում։

Այդպիսի դեպքերում, Նիկոլի ձեռագիր աֆիշաները լինում եյին մեկից ավելի, այն ել աչքի ընկնող տեղերում կպցրած։

Ահա դրանցից մեկը.—

«Յերեքշաբթի, հունիսի 6-ին, յերիտակումբում, շրջիկ թատերական խումբը, Նիկոլի ղեկավարությամբ, կբեմադրի «Կորչի բուրժույ» կոմեդիան, 1 գործողութ., հեղ. Նիկոլի։ Ռեժիսոր՝ Նիկոլ։ Գլխավոր դերերում՝ (այբուբենական կարգով)—Նիկոլ, Արուս, Բագրատ, Գրիգոր, Դայդայ, Թամարա, Լյուսի և այլն։ Ադմինիստրատոր՝ Նիկոլ։ Տոմսերը կարելի յե գնել ներկայացման որը, կասսայում և մինչև ներկայացման որը՝ Նիկոլի մոտ»։

Իսկ աֆիշայի ներքևի մասում—մի կողմում՝ «սկիզբը ժամի 8 ին», մյուս կողմում՝ «բեմադրություն Նիկոլի»։

Շատ կարևոր ե վերջին հանգամանքը։

Բեմադրություն Նիկոլի,—դա նշանակում ե, վոր պիեսի մեջ պետք ե լինեն առնվազն յերեք ուտելու տեսարաններ, վորտեղ բուրժուաներն ուտում են, ուտում են տրաքվելու չափ, իսկ դահլիճում ծիծաղում ե ժողովուրդը։

Վոչ մի դեկորացիա հարկավոր չեր Նիկոլին։ Միայն հաց, պանիր և մի քիչ ել վարունգ ու կանաչի։ Նա գիտեր այդ բոլորից պատրաստել մի ճոխ սեղան, ուր բուրժույները պետք ե ուտեյին։ Այդքան բառացի և անմիջականորեն եր հասկանում Նիկոլը բուրժուազիայի գիշատիչ և «ուտող» քաղաքականությունը։

Վորպեսզի լավ «խաղա», Նիկոլը ներկայացումների որերին համարյա վոչինչ չեր ուտում։ Յեվ իրոք, յերեկոյան նա «խաղում եր» շատ լավ։ Նայում եյին դահլիճում հավաքվածները, կուշտ ծիծաղում և ծափահարում։ Յերբ վերջանում եր ներկայացումը, Նիկոլն իր խմբով վազում եր դեպի մի ուրիշ ակումբ, այնտեղ ել մի չորս-հինգ հատ փոքրիկ կոմեդիաներ «ուտելու»։

Նրա խմբում կային տաս-տասնյերկու հոգի։ Նրանցից վոչ մեկը դժգոհ չեր Նիկոլի դերաբաժանությունից, թեև միշտ ել առյուծի բաժինը—գլխավոր դերը վերցնում եր ինքը, անխուսափելի Նիկոլը։

Ինչի՞ յեմ յերկար կանգ առնում Նիկոլի խմբի վրա։ Վորովհետև այդ խմբի հետ եր, վոր յես ու Սոնան, նաև մի քանի ուրիշ կոմյերիտականներ, առաջին անգամ գնացինք գյուղերն եքսկուրսիայի։

Ամառն եր։ Արևը պայծառ եր փայլում դաշտերի վրա և հեռու գյուղերն յերևում եյին վոսկի կիսամշուշի մեջ։ Ակումբից դուրս գալով, մի որ յես, Սոնան և ելի մի յերեք չորսը, գնում եյինք դաշտ, զբոսնելու։

Սոնան նայեց դեպի մի հեռու գյուղ և ասաց.

— Գյուղը...

Մենք բոլորս տեսնում եյինք այդ, բայց վորովհետև լուռ եյինք և չեյինք մտածում վոչնչի մասին, սկսեցինք խոսել գյուղի շուրջը։

— Իսկապես. յես վաղուց ե, վոր գյուղ չեմ գնացել։ Չգիտեմ ինչ են անում այնտեղ։ Արժե մի որ վեր կենալ ու գնալ։

— Ըմ, արժե։

Հարցրի Սոնայից.

— Դու ինչ ես ասում, Սոնա, հը՞։

— Արժե, իհարկե։

— Ասում եմ գնանք, դասախոսություն տանք, խոսենք գյուղացիների հետ։ Կոմսոմոլիստներ էլ կան. կըծանոթանանք, մի քիչ կզրուցենք և ուրիշ շատ բան։

Մեկն առաջարկեց.

— Նիկոլի խումբն էլ կտանենք մեզ հետ։

— Հա՛, կտանենք. ճիշտ վոր, շատ լավ կլինի. ներկայացում կտանք. ժողովուրդ կհավաքվի։

— Կգա՞ս, Սերգո։

— Կգամ. կգա՞ս, Սոնա։

— Կգամ. կգա՞ս, Հարություն։

Համաձայնությունը շատ շուտ կայացավ։ Վորոշեցինք շաբաթ յերեկոյան մեկնել, կիրակի որը մնալ և յերկուշաբթի վերադառնալ։ Ընտրեցինք մի հեռավոր գյուղ։

Գյուղը, վորտեղ պետք է գնայինք, ուներ բեմ և դահլիճ, վորը գտնվում էր դպրոցի շենքում։ Իսկ դպրոցի շենքը գյուղի ծայրին էր գտնվում, մի փոքրիկ բլուրի վրա։ Մի ժամանակ յեկեղեցի էլ է յեղել այդտեղ, բայց հետո փուլ է յեկել և ժամանակի ընթացքում բոլորովին քանդվել է։ Բլուրի վրա մնացել է միայն դպրոցի շենքը։

Յերբ մենք գյուղ հասանք, արդեն մութն էր և յերևում էին շատ փոքրիկ ճրագներ։ Դպրոցում լույս չկար։ Մեզանից մեկը,—Կարոն, վոր ծանոթ էր այդ գյուղին, մեզ ուղեկցեց գյուղխորհրդի նախագահի տունը։

— Բարև, ասաց նա։

— Ա՛յ ասսու բարին, կոմսոմոլներ, ասաց նախագահը ժպտալով և մոտեցավ մեզ։ Ներս յեկեք, մի-մի չայ անուշ արեք։

— Շնորհակալ ենք, ընկեր։ Մենք յեկել ենք էքսկուրսիայի և ուզում ենք վաղը յերեկոյան մի ներկայացում ու մի դասախոսություն տալ... Կօգնե՞ք։

Նախագահը թևերը կանթեց մեջքին։

— Աչքիս վրա, կոմսոմոլներ։

Իսկ քիչ հետո.

— Ներս եկեք. դրան մեջտեղն ինչի՞ յեք կանգնել։ Տատ էլ կոմունիստի տուն չի, խո սատանի տուն էլ չի՞, կատակի տվեց նա։

Մենք ծիծաղելով ներս մտանք։ Նախագահի կինը վոտքի կանգնեց և կարծես ուզում էր մեր ձեռքը համբուրել։ Բայց չկարողացանք հասկանալ, թե ինչ միջոցներով նախագահը նրան հասկացրեց այդպիսի բան չանել։

— Մի տեղ կարո՞ղ եք գտնել, վոր այսօր ու վաղը քնենք,—հարցրեց մեր ընկերներից մեկը։

— Վա՛յ։ Էդ ինչ խոսք է։ Իմ տունս տուն չի՞։ Ուզում եք՝ մի շաբաթ մնացեք։

— Չէ, ընկեր նախագահ, ձեզ նեղություն կտանք։ Ախըր շատ ենք, տասնութ հոգի։

— Նեղությո՞ւնն ինչ խոսք է։ Ոդան մեծ, ծալքի մեջ էլ—փառք... դէ, ծալքի մեջ էլ տեղաշորը պակաս չի,— ասեց նա։

Մնացինք նախագահի մոտ։ Նստեցինք։ Հավաքվեցին մի քանի դրկիցներ։ Նրանք հետաքրքրությամբ նայում էին մեզ, բայց առավել և Սոնային, վորը միակ աղջիկն էր մեր մեջ։ Յերևի նրա կարմիր գլխաշորն ու կաշվե պինջակը շատ էր զարմացրել նրանց։

Նախագահը խոսում էր մերոնց հետ։ Պարենտուրքի մասին հարցրեց, իշխանության մասին և նման բաներ։ Մի ժամ այդպես խոսելուց հետո, դարձավ իր կնոջը.

— Աղջի, ոդայում տեղ գցի։ Ճամբա յեն եկել, բեզարած կլինեն։

Կինը գնաց ոդան, իսկ նա շարունակեց մեզ հետ խոսել։

— Շատ ջահել եք, դեռ ձեր կյանքի գինը չգիտեք։ Վոր ասեմ՝ մինչև լուս նստենք, կնստեք։ Բայց շուտ քընողը շուտ էլ վեր կըկենա, առավոտվա հովին կզարթնի, համ առողջ կլինի, համ էլ գործունյա...

Յերբ գնում էինք քնելու, նախագահը մեզ հարցրեց.

— Ոչխարը վո՞րիդ կողակիցն ե. ուզո՞ւմ եք՝ կողինքն եստեղ փռեմ։

Բարձրացավ անասելի ծիծաղ։

— Ընկեր նախագահ, մենք բոլորս էլ խալաստոյ ենք։ Սոնան էր։

— Հա՞,—հարցրեց նախագահը։ Յես ասի, վոր եղպեր կլինի։

Բայց յերևում եր, վոր նա շատ զարմացավ, թե ինչպես կարող ե մի աղջիկը տասնութ տղայի մոտ խալաստոյ մնալ։

Բոլորս գնացինք ոդան և հանվեցինք քնելու։ Սոնան նստած սպասում եր, աշխատելով մեր կողմը չնայել։ Ապա հարցրեց.

— Պրծա՞ք։

— Պրծանք։

— Փուհ,—փչեց ճրագը Սոնան և սկսեց հանվել։

Քիչ հետո բոլորս քնեցինք։

5.

Մինչև այստեղ յես քեզ այսպես եմ հիշում, սիրելի Սոնա.—հիշում եմ մեր այն ընկերական լավ կյանքը և քեզ, իբրև սիրելի ընկերուհի։ Իսկ դրանից հետո, իմ հուշերն ուրիշ գույն ունեն և ուրիշ յերանգ։

Յերեկոյան մենք քնեցինք, իսկ հետևյալ որվանից յես քեզ սիրում եյի, Սոնա։

Ինչի՞ համար այդպես հանկարծակի պատահեց այդ բանը։

Նրա՞ համար, վոր արդեն ժամանակն եր իմ սիրելու և միայն մի փոքր առիթ եր պետք, վոր դու իմ սրտում ընկերուհուց վերածվեցիր սիրուհու...

Նրա՞ համար, վոր այդ որն առաջին անգամ յես տեսա, թե ինչպես քո կարմիր գլխաշորի ու կաշվե պինջակի տակից իր դեմքը ցույց տվեց աղջիկը...

Չգիտեմ։ Յեվ ինչ կարիք կա անպայման գիտենալու այդ բոլորը...

Միայն մի փոքրիկ, մի հասարակ բան առիթ դարձավ, վոր դու փոխվեցիր իմ աչքում։—

Ներկայացումը վերջացնելուց հետո, դերակատարներն ամեն կերպ, ինչպես վոր կարող եյին, մաքրում եյին իրենց դեմքերը։ Դու մասնակցել եյիր ներկայացմանը և քո դեմքի վրա յել կային գրիմի հետքեր։ Կարոն մի շորի կտոր եր վերցրել և մաքրում եր քո դեմքը։

—Ի՞հ, լավ չես կարողանում մաքրել,—ասեցիր դու և հարցրեցիր.

—Ջուր կա՞.

Ջուր չկար։

—Առուն մոտիկ ե, ասեց Կարոն, գնա լվացվիր։

Տղաների քունը տանում եր։ Նրանք շտապում եյին քնել և վոչոք չեր ուզում քեզ ընկերացնել մինչև առուն։ Յես ասեցի.

—Գնանք, Սոնա, յես կգամ։

—Չեմ գա քեզ հետ. դու համբուրում ես,—ասացիր դու։ Ապա դարձար մյուսներին.

Դե ձեզանից մեկն էլ թող գա ինձ ու Արմենի հետ։

Այդպես էլ յեղավ։

Սոնա՛, ինչի՞ցն եր այն, վոր դու շատ լավ ասեցիր այդ։ Յես քեզ նայեցի և առաջին անգամ բուռն ցանկություն ունեցա քեզ համբուրելու, պինդ, պինդ համբուրելու շրթունքներդ և ասելու.

—Հ՜ը, վախենո՞ւմ ես իմ համբուրելուց. դե առ...

Այն խոսքերիդ ժամանակ, Սոնա, քո կաշվե պինջակի տակից, իսկապես վոր, իր դեմքը ցույց տվեց աղջիկը...

Յերբ այդ գիշեր պառկեցինք, յես յերկար ժամանակ չեյի քնում և մտածում եյի։ Յեվ պատահած չնչին մանրամասնություններ, փոքրիկ դեպքեր, սկսում եյին ուրիշ կերպ յերևալ աչքիս։

Հիշեցի, թե ինչպես մի անգամ յես գլուխս դրել եմ ծնկիդ և քնել եմ։ Յեվ դա ինձ շատ դուր յեկավ։ Չգիտեյի այն ժամանակ... Հետո հիշեցի, թե ինչպես համբուրել եմ քեզ։ Յես համբուրե՞լ եմ Սոնային,— մտածում եյի։ Բայց ինչու՞ համար մինչև հիմա այդ բանն ինձ վրա վոչ մի ներգործություն չի արել։ Իսկ հիմա, քիչ ե մնում վեր կենամ և գնամ նրա մոտ, վոր պառկել ե ինձանից մի քանի քայլ այն կողմ։ Գնամ և ասեմ.— Սոնա ջան, թույլ տուր քեզ հետ քնել։ Յես միայն մի անգամ կհամբուրեմ քեզ, կգրկեմ և կքնենք։ Ուրիշ վոչինչ...

6.

Շատ բան փոխվեց այդ օրվանից։

Չգիտեյի, գուցե Սոնան նկատել եր իմ վերաբերմունքի փոխվելն իր հանդեպ։ Յես նրա հետ այժմ անհամարձակ եյի խոսում և այլես առաջվա նման ընկերական անփութությամբ չեյի վերաբերվում դեպի նա։ Մանավանդ խուսափում եյի ընկերական այն կատակներից, վորոնց ընթացքում յես կարող եյի բռնել նրա թևը, խփել ուսին և այլն։ Այդ բոլորի մեջ յես այժմ նոր իմաստ եյի դրել և նոր բովանդակություն։

Ինձ թվում եր, վոր Սոնան նկատել եր փոփոխությունը։ Նա, վոր մյուս բոլորի հետ, առաջվա նման պարզ եր և ընկերական, ինձ հետ խոսելիս,— յերբ յես և նա առանձին եյինք լինում,— դառնում եր սակավախոս ու լուռ։ Կարծես խոսելու վոչ մի բան չկար և մենք ինչվոր անհաճո դրության մեջ եյինք գտնվում։ Յերբեմն այդ դրությունն ինձ թվում եր սպառնական։

Մի որ, կեսօրին յես ներս մտա ակումբ և գնացի ընթերցարան, վորի լուսամուտները նայում են դեպի ակումբի բակը։ Սոնան ընթերցարանումն եր։ Նրան տեսնելուն պես, յես թողեցի կարդալու միտքը և կանգնելով լուսամուտի մոտ, սկսեց նայել դուրս։ Արևոտ ցերեկ եր

և ակումբի բակը, ուր միայն մի ընկուզենի կար և վոչ մի ուրիշ ծառ,— վողողված եր արևի տաք լույսով։ Այդպես քիչ կանգնելուց հետո յես դուրս յեկա բակը։ Ձեռքերս դրի գրպաններս և կանգնեցի դռան մոտ։ Վոչնչի մասին չեյի մտածում։

Քիչ հետո, բակ դուրս յեկավ Սոնան. ինձ տեսնելով դռան մոտ կանգնած, նա արագ անցավ և գնաց դեպի ընկուզենին։

Չբարևեց,— մտածեցի յես։

Սոնան, մի ձեռքով հենված ընկուզենուն, մտածկոտ կռացրել եր գլուխը և նայում եր իր վոտքին, վորի ծայրով խաղում եր գետնի հետ։

Մոտեցա նրան։

—...Բարև, Սոնա։

—Բարև...

—Ի՞նչ խոսեմ,— մտածեցի յես։ Սակայն մտքերս չեյին կենտրոնանում։ Թողի մտածելը և լուռ կանգնեցի Սոնայի մոտ։

Կաշվե պինջակը նրա հագին եր։ Կոճակները քանդվել եյին և տակից յերևում եր նրա մուգ-կարմրագույն շրջազգեստը։ Յես սկսեցի նայել նրա շրջազգեստին։

—Ինչքա՞ն սազում ե...մտածեցի յես։

—Սոնա,— ասեցի յես։

—Ինչ...

—Դու ինչի՞ յես կաշվե պիջակ հագնում...

Սոնան նույն դեմքով, խաղում եր գետնի հետ։ Քիչ հետո պատասխանեց.

—Սիրում եմ։

—Գիտե՞ս, Սոնա, առանց պիջակի ավելի լավ ե։ Չե՞ս հանի...

—...Ինչի՞ յես ուզում վոր հանեմ, կամացուկ հարցրեց նա։

—Հենց այնպես։ Լավ կլինի։

Սոնան ուզում էր պատասխանել․ այդ րոպեյին, Գարեգինը դուրս յեկավ բակ և բղավեց․

—Սոնա՛, յեկ, արդեն հավաքվել ենք։

Սոնան հանկարծակի փոխվեց, ծիծաղեց և պատասխանեց նրան․

—Յեկա։

Յեվ վազեց։

Յես նստեցի ծառի տակ և սկսեցի մտածել։ Սոնա։ Ինչի՞ չե ինձ հետ փոխվել... Այ, մի ուրիշը և նա դարձյալ նախկինն ե...

Ինչի՞ չե փոխվել...

7.

Մի քանի որից հետո, ակումբում, նորից հանդիպեցի Սոնային։

Այսպես յեղավ։

Մի քանի ընկերներ, հավաքվել եյինք ակումբի բակում և խոսում եյինք։ Զրույցի նյութը այս եր և այն, բայց հատկապես վոչինչ։

Ակումբի դռնից բակը մտավ Սոնան։ Նայեցի նրան և սիրտս դղրդացողի տրոփեց։ Նա հանել եր իր կաշվե պինջակը և քանդել եր կարմիր գլխաշորը։ Հագին ուներ այն մուգ-կարմիր շրջազգեստը․ կարճ կտրված մազերը գեղեցիկ կերպով բոլորվել եյին նրա գլխի շուրջը։ Ուրախ մոտեցավ հավաքվածներին։

— Ոհո՛, Սոնա։

—Սոնա, մեշչանակացել ես։

—Սոնա, իսկական աղջիկ ես դարձել։

Յես ուզում եյի ոտարոտի տրամադրության մեջ չերևալ, ուստի ուրախ ժպիտով դիմեցի Սոնային։

—Այ, այսպես շատ գեղեցիկ ես։

Սոնան նայեց ինձ․

—Գիտե՞ս, չկարծես թե քո խոսքերիդ համար եմ հանել պինջակս։

Ապա դարձավ մյուսներին․

—Անցյալ որն ինձ ասում եր պինջակդ հանիր, կգեղեցկանաս։ Հիմա հանել եմ, նա յել պիտի կարծի, իր խոսքերի ազդեցության տակ...

Ու ծիծաղեց։

Իսկ յես շփոթվեցի մի քիչ։ Ինչո՞ւ հիշեցրեց այն առանձին խոսակցության մասին, և այն էլ այսպիսի ձևով...

Առանձնացա։

Նստեցի և սկսեցի մտածել։ Ինչ միամիտն եմ։ Իսկ յես կարծում եյի, թե նրա մտքումն էլ մի բան կա։ Բայց ահա, նա առաջին իսկ պատեհ առիթին կատակի յե վերածում այն, վորը իմ կարծիքով մի բանի սկիզբ եր...

Բայց չե, դու ինձ չես խաբի, Սոնա։ Դու ինձ համար ես հանել կաշվե պինջակդ և գլխաշորդ քանդել։ Յես այդ գիտեմ։

Յեվ այդպես, իմ մեջ կռվում եյին յերկու մտքեր։ Ինձ համար, թե վոչ։ Յերբեմն այդ մտքերից մեկն եր տիրապետում, յերբեմն մյուսը։ Ու յես չեյի կարողանում գլուխ հանել։ Յեվ այս անորոշության մեջ, անցան որեր։

Շատ հաճախ պատահում եր այդ որերին, վոր յես վճռում եյի գնալ Սոնայի մոտ և ամեն ինչ ասել նրան։ Ինձ թվում եր, վոր նա ինձ կլսեր լրջությամբ և ուշադրությամբ, ապա կժպտար և կը փաթաթվեր ինձ...

Բայց հանկարծ հիշում եյի, թե ինչպես նա ուրիշների մոտ խոսեց այն համբույրի մասին։ Մի՞թե վաղն էլ վեր չի կենա և չի պատմի բոլորին, վոր յես իրեն սիրում եմ։ Կպատմի ու կծիծաղի, կծիծաղեցնի մյուսներին էլ։ Ինարկե, յեթե չի սիրում ինձ, այդպես կվարվի...

Իսկ յես ինչ գիտեմ, սիրո՞ւմ ե ինձ թե վոչ...

. . . .

Այս ամբողջ պատմության հետ սերտ կապված ե իմ քաղաքից հեռանալու դեպքը։ Ո՞վ գիտե թե իր կյանքի մեջ մի փոքրիկ դեպքն ինչպիսի փոփոխություններ կարող

է բերել։ Յեթե յես քաղաքից չհեռանայի, – չտեղափոխվեյի ուրիշ քաղաք, ո՞վ գիտե թե ինչպես դասավորվեր իմ ու Սոնայի պատմությունը։

...Ամեն տեղ յերկաթ-ակումբ կա և ամեն տեղ կան ընկերներ։ Ամեն ակումբ ունի իր Գարեգինն ու Ցոլիկը, Մարգոն ու Աշոտը, Սոնան, Կարոն...

Ամեն տեղ յես կգտնեմ ինձ ընկերներ։ Ամեն տեղ կունենամ մտերիմ Կարո, չարաճճիությամբ լցված յեռանդուն Գարեգին և վիճաբանության մարմաջով բռնված «հակառակորդ» Ցոլիկ...։ Բայց դժվար թե յես մի ուրիշ Սոնա գտնեմ այդտեղ. վորովհետև, միևնույնն է, յես նրան չեմ փնտրելու, քանի վոր ինձ դեռ շատ սիրելի յե այստեղի Սոնան...

Մտա ակումբ, մնաս բարև ասեցի ընկերներին և դուրս յեկա։ Փողոցում ինձ հանդիպեց Սոնան, վոր դեպի ակումբ եր գալիս։ Բայց ինձ թվում է, վոր յերբ յես ներս մտա, նա ակումբումն եր և հետո դուրս յեկավ, յերևի ինձ հետ մենակ հանդիպելու համար...

Բայց ինչո՞ւ պիտի այդպես լինի։

—Մնաս բարև, Սոնա,—ասեցի յես, բավական տխուր։

—Գնո՞ւմ ես,—հարցրեց նա, և նրա ձայնի մեջ յես չնկատեցի տխրության վոչ մի շեշտ։

—...Գնում եմ։

Մի քիչ տեղ քայլեցինք միասին։ Յես մտածում եյի, վոր յերբ անկյունին հասնենք,—կբռնեմ նրա ձեռքը և կասեմ.

—Սոնա, յես քեզ սիրում եմ։ Ուզում ես ծիծաղիր ինձ վրա, ուզում ես վոչ։ Մտածիր և նամակով պատասխանիր։

Ապա կթողնեմ նրան և արագ կհեռանամ։

Բայց ուրիշ կերպ պատահեց։ Մի քիչ տեղ գնալուց հետո, Սոնան ինքնիրեն ծիծաղեց և ասաց.

—Աշխատիր այնտեղ ել չհարձակվել աղջիկների

վրա և համբուրել։ Գնաս բարև։—Ապա ծիծաղեց ու հեռացավ։

Միամիտ, ասում եմ ինքս ինձ։ Կատակը լուրջ ես ընդունել և կարծել ես, վոր ուրիշ բան կա նրա մտքում։ Բայց նույնն է նա,—Սոնան։ Նա նախկինն է և վոչինչ չի փոխվել նրա մեջ։ Յես եմ միայն, վոր սիրում եմ ու զրկվել եմ սառնարյուն կերպով դատելու ընդունակությունից...

8.

...Հետո այդ քաղաքը։

Հասարակական աշխատանքների ծովի մեջ խեղդվեցին բոլոր անձնական զգացմունքները։ Այսինքն, վոչ թե խեղդվեցին, այլ քաշվեցին յետ,—թաքնվեցին։

Վեց ամիս յես աշխատում եյի և վեց ամիս շարունակ, չեյի հիշում այդ փոքրիկ պատմությունը։ Յերբեմն միայն, յերբ նամակ եյի գրում ընկերներին, բարևում եյի և Սոնային։

Այդքանը։

Յեվ այսպես անցան վեց ամիսները։

Մի որ, յերբ տանը նստած եյի և չեմ հիշում, թե ինչով եյին զբաղված, դուռը թակեցին։

Բաց արի։

—Սոնա՞...

—Հա, յես եմ։

—Այս վո՞նց յեղավ։

—Յեկանք եքսկուրսիա։ Յես ազատ ժամանակ գտա և յեկա քեզ տեսնելու։ Հին ընկերներ ենք, չե՞...

—Դե, յեկ ներս։

Սոնան ներս յեկավ և նստեց։ Յես ել նստեցի և սկսեցինք խոսել։ Նա հագել եր ավելի «աղջկական» և ավելի գեղեցիկ եր յերևում այդ շորերի մեջ։ Ո՞ւր կաշվե պիջակը, ո՞ւր սա...

—Ինչքա՜ն ես փոխվել, ասեց նա ինձ։ Շա՜տ ես փոխվել։

Ապա, մի քիչ լռելուց հետո...

—Ախր ժամանակ է անցել...

—Սոնա,—ասեցի յես,—լսի՛ր։ Անցած բաների մասին խոսելը ներելի չե։ Յեզ քեզ մի բան պիտի ասեմ։—Գիտե՞ս, անցած բան։ Չծիծաղե՛ս։

—Չե, ինչո՞ւ պիտի ծիծաղեմ։

—Ե՛հ, Սոնա։ Մարդ ինքն ել չգիտի, թե վաղը կամ մյուս որն ինչ պիտի լինի։ Անցյալի մասին խոսելն ավելի հեշտ ե։ Դու գիտե՞ս վոր յես քեզ սիրում եյի...

Ծիծաղեց.

—Գիտեմ։

—Իսկ դու չե՞յիր սիրում, հ՞ը...

—Չե, պատասխանեց Սոնան, մի վարկյան լռությունից հետո։

—Յես այդպես ել գիտեյի։ Նույնիսկ վերջին րոպեյին, յերբ յես մնաս բարև ասեցի, դու կատակ արեցիր և ծաղրեցիր ինձ, Իհարկե չեյիր սիրում։

—Ուրիշ խոսելու բան չկա՞,—հարցրեց նա ժպտալով, ապա հանկարծ բացականչեց.

—Հա, ճիշտ վոր։ Գիտե՞ս ինչու յեմ յեկել քեզ մոտ։ Դու յերևի արդեն լավ ծանոթացել ես այս քաղաքին և նրա շրջապատին։ Գնանք, ինձ ցույց տուր մի քանի հետաքրքիր տեղեր։

Դուրս յելանք։

. . . .

Այստեղից սկսած, նորից սկսվում ե մի լավ հուշ։ Հուշը այն մասին, թե ինչպես դուրս յեկանք տանից և ինչպես մեր վոտքերը մեզ տարան քաղաքից դուրս, դեպի այգիները։ Կարծես այդ եր քաղաքի ամենահետաքրքրելի տեղը։

Ճանապարհին յես և Սոնան համարյա վոչինչ չեյինք

խոսում,—մտածում եյինք։ Թվում եր, վոր յես գիտեմ, թե ինչ ե մտածում նա և նա յել իր հերթին, գիտե իմ մտքի մեջ յեղածը։

—Հոգնեցի,— ասեց նա և նստեց մի ծառի տակ։

Յես կանգնած եյի նրա մոտ։

—Նստիր,—ասաց նա։

Նստեցի։ Դարձյալ լուռ եյինք մենք և դարձյալ թվում եր, թե գիտենք միմյանց մտածածը։

Քիչ հետո Սոնան կամաց հարցրեց.

—...Իսկ հիմա չե՞ս սիրում...

Անմիջապես չպատասխանեցի։ Նախ մտածեցի հարցնել.—ինչը չեմ սիրում.—իբրև թե չգիտեմ ինչի մասին ե խոսում։ Հետո թողի այդ միտքը։ Տատանվում եյի պատասխանել։

Իսկ քիչ հետո.

—...Սիրում եմ...

Սոնան նայեց ինձ ու թեթև ժպտաց։ Յես ևս, նայեցի նրան։ Նրա աչքերում յես կարդացի պատասխանը։

—Ի՛հ, ինչ ենք մուկ ու կատու խաղում, Սոնա։ Յես գիտեմ, վոր դու յել ինձ ես սիրում։ Մեշչանի նման տանջում ենք իրար, ասեցի յես ու գրկեցի նրան։

Այս անգամ նա բոլորովին չընդիմացավ։

Իսկ քիչ հետո, մենք միմյանց պատմում եյինք մեր սիրո մասին և միմյանց բացատրում եյինք այն «մութ և անհասկանալի» կետերը, վորոնք յեղել եյին մեր «պատմական» շրջանում...

9.

Հինգ որից հետո Սոնան գնաց։ Այսպիսով վերջացավ այն փոքրիկ պատմությունը։

Հիմա, այդ որերից անցել են մի քանի տարիներ։

—Ինչո՞վ վերջացավ,—յերևի կհարցնեք դուք։

—Կիսատ մնաց,—կպատասխանեմ յես։

Յերբ յես գնացի կայարան և նրան ճանապարհ եյի դնում, վերջին րոպեյին ասացի.

—Սոնա, մենք կամուսնանանք:

Իսկ նա ինձ պատասխանեց իմ իսկ խոսքերով.

—Ո՞վ գիտե՝ վաղն ինչ կպատահի: Մարդ ինչպես կարող է գիտենալ: Յեթե այդպես յեղավ, ինարկե շատ լավ կլինի...

Այդպես չեղավ:

Տարածության հեռավորությունն իրն արեց, ժամանակն իրը: Յեվ բացի այդ: Արևոտ հինգ ցերեկների մեր սերը մի՞թե շղթայի նման կապել եր մեզ միմյանց: Այդպես չեր: Սոնան այդպես չեր մտածում: Յեվ այդ եր պատճառը, վոր յերբ յես լսեցի վոր նա ամուսնացել է, բոլորովին չզարմացա:

Այդ բոլորից մնաց մի լավ հիշատակ:

Այսոր նա ինչո՞ւ ասաց՝ «մի՞թե»: Չլինի՞ կարծում եր, վոր յես խոսք բաց անեմ այն պատմության մասին: Կամ գուցե նրա ամուսինը, Վազգենը, խանդոտ մարդ է:

Պատճառը չգիտեմ: Այնուամենայնիվ, յերբ այսոր նա ասաց «մի՞թե», յես պարզորոշ կերպով տեսա, թե ինչքա՜ն փոխվել է նա այն որվանից, յերբ կաշվե պինջակ եր հագնում և գլխին կապում եր կարմիր գլխաշոր:

Իսկ յես,—չնայած նրան, վոր անցնում են տարիները և կուսատոմսը գրպանիս մեջ, մազերը դեմքիս վրա՝ վկայում են այդ մասին,—մնացել եմ նախկինը: Յես «մի՞թե» չեյի ասի: Յես հիմա յել այն եմ և իմ մտքի մեջ մրմնջում եմ յուրաքանչյուր հանդիպող կոմյերիտականի հասցեյին.

—Ի՞նչ է, դու կարծում ես, թե յես հասակավոր ձի՞ յեմ: Յես այսոր ել կարող եմ մրցել քեզ հետ ամեն ինչի մեջ: Ընկերական կատակների ու ցատկոտոցների, մտերիմ զրույցների կամ եքսկուրսիա կազմակերպելու: Յես ելի նախկինն եմ,—ելի առաջվա պես յերիտասարդ:

Իսկ Սոնան... Տարինե՞րը փոխվեցին, թե՞ այն, վոր աղջիկը նրա մեջ գերազանցեց կոմյերիտուհուն և նրա մեջ շատ և շատ փոխվեց: Համենայն դեպս, մենք տարբեր միջավայրեր ընկանք և տարբեր շրջանակների մեջ:

Յեվ դրանից է, վոր յես հիմա յել նույնքան յերիտասարդ եմ, վորքան վոր մի քանի տարի առաջ: Նույնքան յերիտասարդ կլինեմ նաև սրանից մի քանի տարի հետո:

...Իսկ դու վո՞րտեղ ընկար, Սոնա...

Քեզ փոխեց այդ աշխարհը:

Կուսատոմսը գրպանիս մեջ և այս վողջ աշխարհն ինձ ուրիշ բան է ասում, ուրիշ բան թելադրում:

Չե՞ վոր յերիտասարդ է հենց այն աշխարհը, վորն իմ շուրջն է փռվում և տարածվում է ավելի հեռու...

ՄԵՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ

1.

...Տափաստանները ձգվում են մինչև հորիզոնը և շրջապատը լայնարձակ է ու հարթ։ Շրջապատում ոչինչ չի երևում բացի երկնքից, որ հորիզոնի բոլոր կողմերում միանում է երկրի հետ, և բացի հարթ դաշտավայրից, որը չունի ոչ մի խորդուբորդություն ու հասնում է մինչև հորիզոնը, նրանից էլ հեռու է անցնում...

Ոչ մի ծառ չկա այդ անծայր տափարակում և նույնիսկ կանաչ չկա շատ տեղերում։ Տեղ-տեղ միայն երևում են կանաչյա պատառներ այդ չոր տափարակում և նրանք գյուղեր են։ Սպիտակ սվաղած փոքրիկ տնակներ կան այդ գյուղերում և յուրաքանչյուր տնակի առաջ փոքրիկ պարտեզ կա, ուր ծառեր կան և կանաչներ են բուսնում։

Բայց շատ հաճախ, տափաստաններում նույնիսկ այդ գյուղերն էլ չկան և երկաթուղին է միայն, որ ձգվում և ամայի դաշտավայրով։ Այդպես անցնում են բազմաթիվ վերստեր և բնակչության ոչ մի հետք չկա կարծես թե։

Սակայն բոլորովին ամայի չէ հարթավայրը։ Երկաթուղագծի կողքին, յուրաքանչյուր մի քանի վերստից հետո, կան փոքրիկ, միանման տնակներ, որոնց շուրջը կան մի քանի միանման ծառեր։ Այդ տնակներում ապրում են միանման մարդիկ և միանման աշխատանք ունեն նրանք։

Այդ տնակները գծապահների տնակներն են։ Այնտեղ ապրողը պարտավոր է մաքրել երկաթուղագիծը մինչև

մյուս տնակը, մյուս տնակն ապրողն էլ՝ մինչև երրորդ տնակը և այդպես շարունակաբար։ Ամսական մի անգամ քաղաք են գնում նրանք կամ մոտակա կայարանը, ռոճիկ ստանալու և մթերք գնելու համար։

Այդ տնակներից յուրաքանչյուրի մեջ ապրում է մի ծերունի կամ մի պառավ, կամ թե մի մարդ իր կնոջ՝ և ամենաշատը մի երեխայի հետ։

Ահա այդ տնակների, այդ գծապահ տնակների և նրանց բնակիչների կյանքից մի բան պիտի պատմեմ ձեզ։

2.

Գծապահի մի տնակ կար։ Այնտեղ ապրում էին՝ տղամարդը, որ քառասուն տարեկան էր, հինգ տարով ավելի փոքր նրա կինը և վեց տարեկան երեխան։

Հայրը ամեն առավոտ մաքրում էր գնացքի գիծը, իսկ հետո տնային աշխատանքներով էր զբաղվում։ Մայրը ճաշ էր եփում, շորեր էր կարկատում և երբեմն էլ, շաբաթական մի անգամ, լվացք էր անում։

Իսկ երեխան ինչ ուներ անելու։ Իր շրջապատում միայն տափաստանն էր և երկու ռելսերն էին, որոնց մի զույգ ծայրերը հորիզոնի մի կողմումն էին անհետանում և մյուս զույգը մյուս կողմում։ Միայն ավազ կար շրջապատում, որ պետք էր գալիս շպալների վրա լցնելու համար և ավազից էլ շատ հող կար։

Բակում յոթ-ութ հատ ծառեր կային, իսկ պատի տակ կար արևի առատ լույս ու տաքություն և ավազը շատ էր այնտեղ։ Երեխան էլ նստում էր փոքրիկ բակում, պատի տակ և խաղում էր ավազի հետ։

Այդպես անցնում էին մեկ մեկու նման օրերը։

Հաճախ պատահում էր, որ երեխայի ծնողները գնում էին մյուս տնակում ապրողների մոտ, իսկ իրեն թողնում էին տանը։ Ծնողները գնում էին դեպի հարավ,

իսկ դեպի հյուսիս չեյին գնում, վորովհետև այն կողմը դրկիցը մի ժայռ և մենակյաց ծերուկ եր։

Յերեխան, վորի անունը Վալոդիա յեր, այդպիսի դեպքերում ելի նստում եր պատի տակ, ելի խաղում եր ավազի հետ, իսկ յերբ վոր ձանձրանում եր, գալիս նստում ռելսերի կողքին և նայում եր։

—Ո՞ւր են ձգվում յերկաթագծերը...

Մի օր, յերբ Վալոդիայի ծնողները տանը եյին, մյուս տնակի բնակիչներն իրենք յեկան։ Մարդ ու կին եյին և մեկ ել նրանց փոքրիկ աղջիկը։ Վալոդիան տեսավ աղջկան, կանչեց իր մոտ և նրանք սկսեցին խաղալ միասին։ Վալոդիան առաջին առաջին անգամն եր խաղ անում ուրիշի հետ միասին։ Հետո յել դուրս յելան յերկուսով ու շարունակեցին խաղալ ավազի վրա։

Այնքա՜ն ուրախ յերեխա յեր Աննան...

Յերբ նրանք գնացին և Աննան ել գնաց, Վալոդիան նորից մենակ մնաց ու նրա փոքրիկ գլուխն սկսեց մտածել։

Ի՞նչ վատ բան է մենակությունը..

3.

Ելի օրեր անցան։

Վալոդիան Աննային կարոտեց։ Շատ կարոտեց։ Շատ ու շատ կարոտեց, և վորովհետև նրանց տնակը գիտեր, դրա համար ել յերկաթագծերի միջով ուղիղ գնաց այդ տնակը։ Յերբ հասավ, մոտեցավ լուսամուտին ու կանչեց։

— Աննա, յեկ խաղ անենք...

Ծնողներն զգացին Վալոդիայի բացակայությունը և յերբ Աննայենց տնակի մոտ, Աննայի հետ խաղ անելիս գտան նրան, վոչինչ չասեցին և ժպտացին, հանգարտ շունչ քաշելով։

...Իհարկե լավ բան չէ մենակությունը...

Այնուհետև, հաճախ Աննան ինքն եր գալիս Վալոդիայի

մոտ և խաղ եյին անում, իսկ ծնողները գնում եյին մյուս տնակը, զրույց անելու և կարտ խաղալու համար։

4.

Ձմեռ եր։ Ելի Վալոդիան մենակ եր, և ելի ծնողները տանը չեյին։ Մայրը պատվիրել եր նրան, դուրս չգնալ և չը մրսել։ Վալոդիան ել դուրս չեր գնում և չեր մրսում։ Միայն թե ներսում, մենակության մեջ, շատ ձանձրալի յեր։

Հանկարծ դրսից մի ձայն լսվեց։

—Վա՜—լո՜—դի՜...

Վալոդիան լուսամուտից դուրս նայեց։ Աննան եր։ Իսկույն ներս կանչեց նրան և վազեց ընդառաջ։ Ի՜նչ լավ յեղավ, վոր յեկավ Աննան։ Վալոդիան այլևս տխուր չէ, վորովհետև մենակ չէ այլևս։

Սկսեցին վագոնների պատկերազարդ գիրքը քրքրել։ Բուքը վռնում եր և քամին եր վազվզում դրսում։

—Աննա, դու ի՜նչպես յեկար...

Քամին եր վազվզում դրսում, իսկ ձյունն անվերջ գալիս եր։

—Ապրես Աննա, դու քաջ ես...

Ձյունն անվերջ գալիս և ծածկում եր յերկաթուղագիծը։

—Աննա, վաղը յես ինքս կգամ քեզ մոտ, վոր դու ճանապարհին չմրսես։

Ծածկում եր յերկաթուղագիծը, ամբողջ տափաստանը, արծաթագույն ռելսերը։

Յերեկոն իջնում եր վար։

Ո՜ւ...լսվեց հեռվից, բայց դա գնացքի ձայնը չեր։ Դա գայլն եր մոտենում տնակին։ Յերևի շատ հեռվից եր յեկել և մեծ ախորժակով։

—Վալոդիա, ո՞վ է դուռը չանգում...

—Վոչոք. դա բուքն է խփում պատերին։

— Վոչ, չանգռում են, Վալոդիա...

Վալոդիան էլ գիտեր, որ գայլն է դա։ Ինքն էր վախենում, բայց սիրտ էր տալիս թե՛ Աննային, թե՛ իրեն։

Գայլը չանգռում էր կատաղի կերպով ու վոռնում։ Աննան էլ իմացավ, որ գայլ է դա։ «Յերևի նա արդեն քանդում է դուռը», մտածեց նա ու սեղմվեց Վալոդիային։ Վալոդիան գրկեց նրան և մնացին այդպես, դողալով վախից։

Հեռվից, շատ հեռվից լսվեց մի նոր ձայն։

— Ո՜ւ՜՜...

Դա արդեն, գնացքն էր մոտենում։ Վալոդիան էլ, Աննան էլ, ձայնից ճանաչեցին նրան։ Յերանի իրենք էլ լինեյին այդ գնացքի մեջ։ Կթռչեյին հեռու, հեռու, և գայլն այնուհետև դատարկ սենյակի դուռը պիտի չանգռեր։

Գնացքն անցավ շրխկալով։ Վալոդիան ու Աննան տնակի լուսամուտների միջով տեսան վագոնի լուսավոր ապակիները։ Շոգեկառքը սուլում էր դեռ, յերբ գնացքն անցավ։

Յերբ անցավ գնացքն ու սուլոցը դադարեց, դռան մոտ այլևս գայլը չէր վոռնում։ Գնացքը փախցրել էր նրան։

Այդ որվանից, Վալոդիան ու Աննան շատ սիրեցին գնացքը. սիրեցին այն տեղը, վորտեղից գալիս էր նա, և այն տեղը, ուր գնում էր և ուր չէր յեղել իրենցից վոչ մեկը։

5.

Արագ...արագ...արագ...

Կյանքը սահում է, ամեն ինչ փոխվում է։ Կանաչ ծառերը չորանում են և նրանց տեղ նորերն են մեծանում։ Աշնանը թափվում են տերևները, իսկ մյուս գարնան նրանք կանաչում են նորից։ Ծաղիկները մեռնում են և ուրիշ ծաղիկներ են բուսնում։

Աճում են մարդիկ, քաղաքները, նավահանգիստները... Այդպես աճում ու մեծանում են նաև մենավոր մարդիկ։

Յերբ Վալոդիան ու Աննան մեծացան,— ուզեցին ամուսնանալ իրար հետ։ Յեվ վորովհետև յերկսի յել ծնողները գծապահներ եյին և մտերիմներ, դրա համար էլ չընդդիմացան։

Նրանք ամուսնացան։

Մի որ էլ, յերբ գնացքն յեկավ ու դանդաղեցրեց իր ընթացքը տնակների մոտ, Վալոդիան ու Աննան մնաս բարև ասեցին իրենց ծնողներին, համբուրվեցին, նստեցին գնացքն ու գնացին...

— Ո՜ւր...

Նրանք գնացին ձուլվելու իրենց միլիոնավոր ընկերների, միլիոնավոր յեղբայրների ու քույրերի հետ։

Անիվները թակթակում եյին, գնացքը սլանում էր։ Գծի կողքին, մերթ-մերթ յերևում եյին փոքրիկ լույսեր։

Գծապահ տնակների կրակներն եյին նրանք...

ԿԱՐՄԻՐ ՔԱՌԱԿՈՒՍԻՆ

1.

Մութն ընկավ և առաջին գորտը կռռաց Գետառ-չայի ջրերում։

Առվի յերկու ափերին շինված հողե տներում պլպըլացին աղոտ լույսեր։ Հեռվում մի դուռ բացվեց և ներս մտավ մեկը, վոր վերադառնում եր որվա աշխատանքից։ Յերկրորդ դուռը բացվեց ավելի մոտիկ մի տեղում և յերկրորդ մարդը ներս մտավ։ Յերրորդ դուռն ել վոր բացվեց, դա ջրից մի թիզ բարձր գտնվող ջարդոտված դուռն եր։ Այնտեղ ել մարդ մտավ, վորի թևի տակ կապոց կար։

Իսկ չորրորդ դուռը չբացվեց... Նորից լուռ ու խաղաղ դարձավ շրջակայքը և յերկրորդ գորտը կռռաց Գետառ-չայի ջրերում...

Նեղ փողոցներ կան քաղաքի այդ ծայրամասում, նեղ փողոցներ կան, վորոնք անընդհատ ցեխաշեն պատեր ունեն և ուրիշ վոչինչ։ Լուսամուտները շատ քիչ են այդ ցեխե պատերի վրա և սակավ են հանդիպում նրանք։ Նրանք փոքր են ու սևացած։

Նեղ փողոցներով յերկու մարդ չեն կարող անցնել կողք-կողքի։ Կամ իրար պիտի դիպչեն և վար գլորվեն, կամ ել միմյանց յետևից պիտի գնան։ Այդքան նեղ են այդ փողոցները։ Նրանք լապտերներ չունեն և լույսի շող անգամ չկա այնտեղ։ Ամպ գիշերներն այնտեղ վոչինչ չի յերևում։

Այդ փողոցները վոլորապտույտ են։ Յուրաքանչյուր տաս տասնհինգ քայլից հետո մի ուրիշ նեղ փողոցի անցք ե բացվում այդ նեղ փողոցում և նոր փողոցի մեջ ել ուրիշ-ուրիշ անցքեր։ Յեվ այդպես շարունակ։ Ու բոլորն ել նեղը, նեղը ու մութ...

Յերրորդ գորտը կռռաց յերկա՜ր, յերկար և մյուս յերկու գորտերի հետ սկսեց յերգել Գետառ-չայի ջրերում...

Նեղ փողոցներից մեկով, անանուն նեղ փողոցներից մեկով մի թուրքի աղջիկ եր շարժվում։

Աղջիկը քայլում եր արագ-արագ և յերևում եր, վոր իրեն ծանոթ են այդ նեղ-նեղ փողոցները։ Չադրայի տակ եր նա և հեռվից նման եր շշի։

Յերբեմն նա յետ եր նայում և ավելի արագացնում եր իր քայլերը։ Ինչ վոր մարդ եր նկատվում քսան քայլի վրա։

Նեղ են այդ փողոցները և յերկու մարդ չեն կարող անցնել կողք-կողքի։ Նրանք իրար յետևից պիտի գնան։ Դրա՞ համար եր անծանոթ մարդն աղջկա յետևից գնում։ Ուրեմն, ել ինչու՞ համար եր շտապում աղջիկը...

Յերբ չադրայի փեշի վերջին ծայրն ել անհետացավ, ծռվելով դեպի մի ուրիշ փողոց, մարդն արագացրեց իր քայլերը։ Նա ել ծռվեց այդ նեղ փողոցով, իսկ աղջիկը յետ եր նայում։ Յերբ տեսավ մարդուն, նա վազեց։ Վազեց մարդն ել նրա յետևից։

Սպիտակ շիշը թռչում եր նեղ փողոցով, իսկ նրա յետևից այն յերկարահասակ մարդը։ Ո՜ղի, ո՜ղի... ո՞ղի յե լցված այն շշի մեջ, հարբեցնող, գրավիչ։ Գինի՞ կա այդ շշի մեջ, աչքեր մթագնող ու երքեր բորբոքող գինի՞։ Շի՜շը... շիշն ինչու՞ յե թռչում։

Յետ մնաց յերկարահասակ մարդը. չկարողացավ հասնել աղջկան և լուծվեց խավարի մեջ։ Չորրորդ գորտը կռռաց Գետառ-չայի ջրերում, չորրորդ դուռը ճռռաց և չադրայով աղջիկը ներս ընկավ։

2.

Յերևան քաղաքի շենքերի պատերին խաչաձև նշաններ կան։ Շտապ մի ձեռք, կոպիտ վրձինով խաչաձև նշան է գծել, իսկ ներկն այդ խաչի թևերից կաթիլներով հոսել է վար, Հետո այդ շտապ նկարող ձեռքն անցել է մի ուրիշ տեղ, նույն նշանը դնելու։

Քաղաքի կենտրոնական մասերում նրանք այնքան էլ շատ չեն, բայց Գետառ-չայի նեղ-նեղ փողոցներում չափազանց շատ կան նրանցից։ Ի՞նչ նշաններ են դրանք, այդ անխուսափելի խաչաձևերը։

Շատերն այդ նշանների իմաստը հասկանում են միայն այն ժամանակ, յերբ մի ճարտարապետ, շրջապատված բանվորներով, մոտենում է դրանցից մեկին և ասում.

— Քանդել...

Ու կիսում են փողոցը, շենքը, սենյակը, պատը, և մի նոր փողոց են բաց անում։ Հետո քարտաշներն ու վորմնադիրներն են գալիս, մի նոր, մեծ ու օդաշեն շենք շինելու համար։

Գետառ-չայի նեղ-նեղ փողոցներից մեկում, ցեխաշեն պատերից մեկի վրա այդ նշանից դրված կա, իսկ պատի վրա, բարձրում, կա մի փոքրիկ լուսամուտ։ Այնտեղ է ապրում չադրայով Թուրքի աղջիկը, Զահրան, վոր հեռվից շշի յե նմանվում։

Յերբ վերջին գորտն իր ձայնն է կտրում Գետառ-չայի ջրերում և լույսը բացվել է սկսում, Զահրայի տանից դուրս է գնում մի Թուրք բանվոր ու գնում է աշխատելու։ Նա վերադառնում է տուն միայն ուշ գիշերին, յերբ ամբողջ Գետառ-չայի յերկարությամբ գորտերն են կռռում իրենց ճահճային համերգը։ Գործից հետո նա սիրում է գնալ չայխանա և նարդի խաղալ։ Զահրայի հայրն է նա, այդ բանվորը։ Մի ժամանակ, յերբ դեռ ջահել եր, նա

ցեխե աղյուսներ եր պատրաստում ցեխաշեն պատերի ու շենքերի համար։ Այն ժամանակ նա յերգում եր մելամաղձոտ «քյարփիչ» յեղանակը։ Հիմա յել է նա «քյարփիչ» յերգում, բայց ցեխե աղյուսի փոխարեն սև քար է տաշում հիմի։ Բոլորը վկայում են, վոր այդ մարդը մի գեղեցիկ աղջիկ ունի և նրա անունը Զահրա յե...

Ի՞նչ հոգ, թե նեղ փողոցներով սև սավերներ են քարշ գալիս նրա յետևից։ Զահրան ուշադրություն չի դարձնում վոչ վոքի վրա։

Իհարկե, շատ լավ կլիներ, յեթե լայն ու լուսավոր լիներ այն փողոցը, վորտեղ ինքն եր ապրում, բայց այդպես չի։ Գոնե գորտերը չկռռային այդպես ճահճային, խռնավ կռռոցով։

Գոնե անցուդարձ լիներ և յերեկոյան ամայի չլինեյին այդ փողոցները։ Նրանք ամայի յեն առավոտից յերեկո և հազիվ մի քանի մարդիկ են անցնում ամբողջ որվա ընթացքում։

Գոնե գային քանդող մարդիկ ու այդ խաչի մոտից սկսած քանդեյին և բաց անեյին մի լայն ու լուսավոր փողոց, քարե շենքերով։

Կոմսոմոլկա Ֆաթման է պատմել Զահրային, վոր այդպես պիտի լինի։ Նա նույնիսկ տեսել է Յերևանի նոր «պլանը», այդ գեղեցիկ, հեռավոր ու անծանոթ «պլանը»...

...Ելի յերեկոն իջավ և ելի առաջին գորտը կռռաց Գետառ-չայի ջրերում...։

3.

Իրիկունից առավոտ, առավոտից իրիկուն, համարյա թե բոլորովին ուրիշ կյանքով՝ ապրում է յերկրորդ Յերևանը։ Ապրում է քաղաքի ծայրամասերում, Գետառ-չայի ափերին ու նրանից էլ այն կողմ, Նորքում, Կոնդում, և մյուս թաղամասերում։ Բազարում յետ ընկած չայխանաներ կան, վոր յետ ընկած տեղերում են գտնվում։

Այնտեղ յերկրորդ Յերևանի մարդիկն իրենց կյանքի մեծ մասն են անցնում։ Սևացած սեղաններ կան այդ չայխանաներում, իսկ սեղանների վրա կեղտոտ նարդիներ։ Այդ նարդու սեղանների շուրջը դեռ ապրում է յերկրորդ Յերևանը…

Յերբ մի չայխանի դռնով ըստ սովորականի ներս եր մտնում Զաքրայի հայրը նարդի խաղալու, մի ուրիշ դռնով, իրենց տան դռնով, Զաքրան դուրս յեկավ։ Յեվ վորովհետև յերեկո յեր ու մութը, դրա համարել նա արագ-արագ անցավ նեղ փողոցներով։ Հիմի այնտեղ, լայն Աբովյանում այնքան լույս է ու բազմամարդ… Ինչքան մոտիկ, բայց ինչքան հեռու յե թվում այդ փողոցը…

Մի կամուրջ կա։ Յերբ անցնես այդ կամրջից այս կողմ, դու արդեն առաջին Յերևանում կլինես։ Լայն ու լուսավոր, քարաշեն Յերեվանում, վոր բազմամարդ է։

Զաքրան այդ կամրջի վրայով անցավ։ Տակից գնում եր բարակ ու փոքրիկ առուն՝ Գետառ չայը։

Մնաս բարև, Գետառ-չայ, տխուր ու անտանելի առվակ։ Յես մի քանի ժամով դուրս եմ գալիս քո տիրապետության շրջանից։

Հեռվում յերևում եյին ելեքտրական լույսերի շողքերը։ Զաքրան առաջ անցավ և թակեց մի քարաշեն տան դուռը։

-Ֆաթմա…

— Զաքրա… դո՞ւ յես։ Յես իսկույն կգամ…

Ու շուտ դուրս յեկավ տանից Ֆաթման։

—Չադրաս վերցրու, ծիծաղեց Զաքրան ու յետ գըցեց չադրան։ Ֆաթման ներս տարավ չադրան ու յեկավ դուրս։

—Գնա՛նք…

Գնացին։ Զաքրայի գլխին չադրա չկար, իսկ Ֆաթման բացի դրանից, կրծքի վրա ուներ մի ծանոթ նշան՝ Կիմը։ Հայրը շատ պիտի բարկանար, յեթե տեսներ Զաքրային

առանց չադրայի և քաղաքի այս մասերում։ Բայց նա չեր կարող տեսնել, վորովհետև չայխանաները հեռու յեն Աբովյանից և չայխանայի հաճախորդը հազիվ թե այդ տեղերով անցնի։

Ամեն շաբաթ, մի կամ յերկու անգամ Զաքրան դուրս եր գալիս և գնում եր Ֆաթմայի մոտ։ Այնտեղից յերկուսով գնում եյին վորևե տեղ։ Զաքրան շատ եր սիրում կինո գնալ…

- Զաքրա, ասաց Ֆաթման, ուզո՞ւմ ես այսոր ել գնանք թատրոն։

- Ուզում եմ…

Իսկ յերբ հասան նրանք և վեր բարձրացան սանդուխքի աստիճաններով, նրանց հանդիպեցին շատ ընկերներ ու ընկերուհիներ։ Հասարակության միջից առանձնանալով, նրանք մոտեցան Զաքրային ու Ֆաթմային։ Այնքան ուրախ եր անցնում ժամանակը և հաճելի…

…Իսկ այնտեղ, Գետառ-չայի ափին, հիմի խավար է և գորտերն են կռռում անդադար։ Ամայի և նեղ փողոցներում վոչ վոք չկա…

- Նայի՛ր,—ընդհատեց Ֆաթման Զաքրայի մտքերը։ Պատի վրայի նկարը տեսնո՞ւմ ես, դա յե նոր Յերևանը։

Զաքրան ցատկեց տեղից և մոտեցավ պատին։ Սակայն վոչինչ չկարողացավ վորոշել զանազան գույնի ու ձևի գծերի, նշանների միջից։ Ընկերներից մեկն սկսեց բացատրել։

…Իսկ այն կարմիր քառակուսին վոր կա, դա յել մի մեծ շենք է, վոր նոր պիտի շինվի ձեր թաղում, ձեր տան տեղը, յերբ կը քանդեն նրան։

Զաքրան նայում եր ակնապիշ…։

4.

Զաքրան տուն վերադարձավ—ճանապարհը նույնն եր ամեն ինչ նույնն եր, բայց այսոր վոչ վոք չհետևեց իրեն

և Զաւրան ուրախ էր դրա համար։ Տանը մարդ չկար։ Հայրը դեռ չէր եկել։ Նա հիմա ով գիտե որ չայխանայում խաղում էր հավլուենական նարդին։

Զաւրան նստեց։ Դեռ չէր մոռացել քիչ առաջվա տեսածը։ Վաղուց նրա մեջ արթնացած մի ցանկություն մարմնավորվելու չէր ձգտում։ Երազելի բայց մոտիկ մի աշխարհի նման՝ դեմից ժպտում էյին կիմերի բանակն ու լուսավոր Երեվանը...

Այդ գիշեր Գետառ-չայի ջրերում նորից գորտերը երգեցին իրենց ճահճային երգը, բայց Զաւրային թվաց, թե նրանք երգում են վերջին անգամ, մահամոտ մի սարսուռով...։

ԶՈՒԲԵՅԻԴԱ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՈՒՐ ԱՅՍ ՊԱՏՄՎԱԾՔԻ ՀԵՂԻՆԱԿԸ ԽՈՍՈՒՄ Է ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԵՏ

Այս գիշեր ինչքա՜ն նոր լույսեր վառվեցին...

Այս գիշեր, երբ դու, ընթերցող, օրվա աշխատանքներից հոգնած քնած էյիր, ես շրջում էյի Երևանի լեռին փողոցներով, և լսում էյի, թե ինչպես քաղցր տարածվում էյին մի գեղեցիկ երգի հնչյունները...

Ես գիտեյի, որ այս գիշեր նորից կլսեմ այդ երգը և դրա համար էլ տանից դուրս եկա։ Երբ քայլերս ուղղեցի դեպի քաղաքի ծայրամասերը, հեռու, մթին թաղերը, նույնիսկ չէյի կասկածում, որ հենց այդ տեղերում էլ կլսեմ երգը։

Զախալվեցի. այս գիշեր ես նորից լսեցի և այժմ իմ գլխում դեռ հնչում են այդ մեղմ երգի ելևէջները։ Ամբողջ գիշերը լսեցի և մտածում էյի, որ առավոտյան կը կգրեմ։ Բայց գրեցի երեկոյան։ Իսկ հիմա, գրածս տալիս եմ քեզ կարդալու, որպեսզի դու էլ լսես այն, ինչ որ ես լսեցի։ Չէ՞ որ դու, օրվա աշխատանքներից հոգնած քնած էյիր, երբ ես շրջում ու լսում էյի երգը և այդ իմ պարտականությունն էր,—իմ իրավունքը...

Ո՞վ էր երգում.—այդ չգիտեմ։ Իսկ ի՞նչ էյին երգում...

Յուրաքանչյուր անից, յուրաքանչյուր սենյակից գալիս էր երգի ձայնը։ Դրսում ձայներն իրար էյին միա-

խառնվում և թռչում եյին փողոցից-փողոց, առանց վըրդովելու գիշերվա անդորրությունը։ Նրանք յերգում եյին, վոր յուրաքանչյուր պատի յետևում, յուրաքանչյուր առաստաղի տակ աճում է մի նոր ծիլ, բռնկվում է մի նոր լույս։ Նրանք յերգում եյին այդ մթին փողոցներում, այդ փոքրիկ տնակներում աճող փոքրերի մասին, վորոնք վաղը կգան, ավելի կգեղեցկացնեն այս աշխարհը և ավելի կշենացնեն։

Նրանք յերգում եյին հետևյալ առավոտվա մասին, յերբ ավելի կենսուրախ կարթնանան այդ ծայրամասերը։

— Մենք հին տարիների հետքերն ենք, բայց մոռացված ծայրամասեր չենք հիմի.— յերգում եյին նրանք։

— Մենք մեր մեջ աճեցնում ու մեծացնում ենք մեզ քանդողներին ու նորը կառուցողներին,— յերգում եյին նրանք։

Յեվ յես լսում եյի, թե ինչպես յուրաքանչյուր տան մեջ բաբախում եր կյանքի յերակը։

Որը լուսանում եր, յերբ յես վերադարձա։ Քաղաքի կենտրոնում, բացվող որվա լույսից արդեն աժգունացել եյին ելեքտրական լամպերը։

Փողոցներում դեռ վոչոք չկար։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ՎՈՐՏԵՂ ՊԱՏՄՎՈՒՄ Ե ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յերևանի կենտրոնում ընկած են բանուկ փողոցները։ Նրանք յերկար շարքերով ձգվում են կողք-կողքի. նըրանք, յերկար շարքերի մի ուրիշ խմբով կտրատում են նախկիններին։

Այդ բանուկ փողոցներից ամենավերջինը գտնվում է քաղաքի կենտրոնի և քաղաքի «անհետաքրքիր» մասի սահմանում և յերկար յերիզով անջատում է նրանց։ Մի կողմում ընկած են ավելի մեծ փողոցները, կինոները,

թատրոնը, ակումբները, հիմնարկները, մեծ և մի քանի հարկանի տները, իսկ մյուս կողմում համատարած գորշություն է և ցեխով ծեփված պատերի խառնիխուռը պանորաման։

Յերկար ձգվում է այդ վերջին փողոցը։ Վոչ մի լայն փողոց չի կտրում անցնում նրան։ Յեվ թվում է, թե ճանապարհ չկա դեպի մյուս կողմը։ Անծանոթ անցորդն անպայման այդպես կյենթադրի։

Բայց այդպես չե։ Հազիվ նկատելի մի քանի նըրբանցքներ,— նեղ, շատ նեղ նրբանցքներ ճանապարհ են բաց անում քո դեմ։

Մտիր այդ նրբանցքներից մեկը և գնա։ Յերկար գընա։ Նրբանցքը զիգզագներ շատ ունի և մեկ այս կողմն է ծռվում, մեկ մյուս։ Բայց վորևե այլ նրբանցք չի կտրում անցնում նրան։ Դու չես կարող ճանապարհդ փոխել։ Կամ պիտի վերադառնաս, կամ պիտի շարունակես նույն ծուռումուռ նրբանցքով առաջանալ։

Պատերը։ Պատերը ցեխապատ են և ցածր։ Այնուամենայնիվ նրանք բարձր են քո հասակից և դու չես կարող նայել նրանց վրայով։

Յերբեմն հանդիպում է մի փոքրիկ դուռ, պատերի նման գորշացած, չներկված փայտից։ Դռան ճեղքից յերևում է հայաթը։

Յերբեմն ցեխով ծեփված պատերի այդ յերկար և անընդհատ շարքի մեջ քեզ հանդիպում է մի բարձր պատ, նույնպես ցեխով ծեփված ու գորշ։ Նրա վրա, բարձրում, լինում են վառ կանաչ կամ վառ կապույտ ներկված յերկու պատուհաններ։ Համատարած գորշության մեջ այդ վառ գույնի պատուհանները քեզ շատ են հետաքըրքրում։ Ի՞նչ կա նրանց յետևում... Բայց նրանք բարձր են և նրանց սպիտակ վարագույրների յետևից հազիվ միայն յերևում է ծաղկանոթի մի մասը։

Շարունակիր ճանապարհդ։ Բավական տեղ, ուղիղ

ձգվում է նրբանցքը։ Գնա։ Դիմացը պատ է,—բարձր պատ, և թվում է, որ ճանապարհն այնտեղ վերջանում է։ Բայց հասնելով այնտեղ, դու քո մի կողմում կնկատես նրբանցքի չեշտակի կերպով թեքվող շարունակությունը։ Մի քիչ գընալուց հետո նրբանցքը կլայնանա և ահա, դու դուրս կը գաս մի փայտե կամուրջի դեմ։

Տակից հոսում է փոքրիկ, շատ փոքրիկ Գետառ-չայ առուն։ Քեզ կթվա, թե լայն փողոց դուրս յեկար։ Լայն փողոց, որի միջոցով սակայն, Գետառ-չայն է հոսում, իսկ նրա յերկու կողմերում նույնպիսի տների պատեր կան,—ցեխածեփ և նույնպիսի դռնակներ կան,—գորշագույն։

Ո՞ր նրբանցքով յեկար.—միևնույնն է։ Քո առաջ դուրս կգա փայտե կամուրջ։ Այդ կամուրջներից այն կողմումն ընկնում է քաղաքի գորշ մասը. այն, որ հեռվից յերևում է շատ «անհետաքրքիր» և որտեղ հին ժամանակներում ապրել է խաների և աղաների աչքերից հեռու, նրանց ստրուկ ժողովուրդը։

Ահա թե ինչու վերջին մեծ փողոցը վոչ մի ճանապարհ չունի դեպի այս կողմ և նա յերիզում, իրարից անջատում է քաղաքի յերկու մասերը։ Ահա թե ինչու նրբանցքները հասնում են փայտե կամուրջներին և այդ կամուրջներից այն կողմ փռված է քաղաքի անծանոթ մասը։

Դեպի կամուրջը ձգվող նրբանցքի տներում և կամուրջից այն կողմ, ապրում են իմ հերոսները։ Նրանք բանվորներ են, արհեստավորներ, պարսիկ, թյուրք ու հայ։

Իսկ յեթե այդ նրբանցքներում և կամուրջներից այն կողմ հանդիպեն ավելի բարձր պատեր վառ գույնի լուսամուտներով,—այնտեղ էլ ապրում են իմ «հերոսները»։ Նրանք առևտրականներ են, խանութպաններ, պարսիկ, թյուրք ու հայ։

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ԱՅՍԻՆՔՆ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՍԻՆ

Կամուրջները, առուն և առվի մյուս կողմը գտնվում են քաղաքի արևելյան մասում, ամբողջ քաղաքի յերկարությամբ։ Իսկ հյուսիսային կողմում, մի բարձր բլրի վրա, շրջապատված ծառաշատ ձորերով, նստել է Նորքը, որը քաղաքի հետ կապված է այգիների միջով անցնող մի նեղ ճանապարհով և որը քաղաքից անջատված է մի փայտե կամուրջով։ Յես նրա մասին այստեղ չեմ խոսում։ Մի ուրիշ անգամ։

Քաղաքի արևմտյան կողմում, ամբողջ քաղաքի յերկարությամբ ձգված է մի բլրաշարք և նրանց վրա գտնվում է քաղաքի Կոնդ թաղամասը։ Կոնդը բարձր է քաղաքից։ Բլուրի լանջի վրա, մինչև ծայրը, շարքերով կառուցված են տնակները և մի շարքի կտուրները ավելի վերևի շարքի գետնին են հավասար։

Լուսամուտներն ու պատշգամբները նայում են քաղաքին։ Այդ լուսամուտների յետևում և այդ պատշգամբներում յերեկոները նստում են մարդիկ և նայում են ներքև, քաղաքին, որտեղ յերևում են բազմաթիվ լույսեր ու փողոցներ։

Բլուրի մյուս լանջի վրա, մինչև ձորը, մինչև Զանգուն, փռված է քաղաքի Ձորագեղ թաղը։ Բայց նրա մասին ևս մի ուրիշ անգամ։

Հարավում բազարն է։ Ավելի հարավում՝ չայխանաները, պանդոկները և նորից չայխաններն ու պանդոկները։ Նրանք ևս, գտնվում են քաղաքից բարձր։ Ներքևում բազարն է, իսկ ավելի այս կողմ, քաղաքի կենտրոնը։

Այդ բոլոր թաղերում կան նեղ նրբանցքներ, լաբիրինթոսի նման խառնիխուռը, բազմաթիվ, իրար կտրատող, փակուղիներով...։

Սակայն բավական է որ բարձրանաս որևէ բարձր տեղ և այնտեղից նայես ներքև, դեպի այդ «լաբիրինթո-

ըը», վորպեսզի տեսնես Նրա ամբողջ պարզությունն ու խեղճությունը: Մի հարվածով կարելի չէ լուծել Նրա գաղտնիքը:

Այդ յետ ընկած թաղերում գտնվում են բաղանիքները: Գետնափոր, ամբողջովին գետնի տակ շինված, վորոնց գմբեթաձև կտուրներն են միայն, վոր գետնից մի քիչ վերև են բարձրացել: Առանձին համարներ չունեցող ընդհանուր լողարաններ են դրանք,— պարսկական բաղանիքներ:

Այդ յետ ընկած թաղերում գտնվում են յեկեղեցիներն ու մզկիթները: Յեկեղեցիներն ունեն ընդարձակ հայաթներ, վորոնց կենտրոնում գտնվում է յեկեղեցին: Մզկիթներն ընդհակառակը, կանգնած են իրենց բարձր պատերով և այդ բարձր պատերի յետևում, շենքի ներսում են գտնվում նրանց հայաթները:

Այդ յետ ընկած թաղերից մեկում, բազարից մի քիչ այն կողմ, գտնվում են չայխանաները: Խանութի նման, նրանք փողոցի վրա փեղկեր ունեն, իսկ ներսում չայխանան է, վորը բաղկացած է մի սենյակից: Կան չայխանաներ, վորոնց խորքի անկյուններից մեկում գտնվում է մի սանդուխք, փայտե կամ քարե աստիճաններով: Աստիճանները տանում են վերև, դեպի վերնահարկը, վորտեղ մի շարք թախթեր կան, կեղտոտ անկողիններով:

Գիշերելու տեղն է դա:

Այդ յետ ընկած թաղերից մեկում, չայխանաների թաղում, գտնվում են խաները (պանդոկները): Ընդարձակ բակեր են դրանք, վորտեղ միշտ լինում են սայլեր, ֆուրգոններ, ձիեր, էշեր... Բակի մեջ կան նաև սենյակներ, վորոնցից մեկը խանի չայխանան է, մյուսը գիշերելու տեղը: Նրանց անմիջապես կողքին, գտնվում են ախոռները:

Հին Յերևանն է դա,— յետ ընկած թաղերի այդ շրջանակը, վորն օղակել է քաղաքին: Այդ թաղերում ա-

ճում ու մեծանում են նրանք, ովքեր պիտի քանդեն նրանց և նրանց փոխարեն նոր կառուցում սկսեն...:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՅԼ ԿԵՐՊ ԱՍԱԾ՝ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՅԵՎ ՉԱՅԽԱՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Գյուլիստանի վարդն ես,
Ջահելների դարդն ես,
Ծաղկանոցի զարդն ես,
Զուբեյդա՛,
Ո՞վ քաղե քու վարդից,
Ո՞վ մեռնի քու դարդից.
Դու չես ծնվել մարդից,
Զուբեյդա . . .

Ալաքպեր Հասան-օղլու չայխանան այդ յերեկոյան լիքը լցված էր մարդկանցով: Շարժվելու տեղ չկար: Ինքըն Ալաքպերը, իր օգնականի, տասնվեց տարեկան Իբրահիմի հետ միասին, հազիվ եյին կարողանում իրար յետևից հաճախորդներին «շիրին-չայ» հասցնել: Իսկ յերբ հաճախորդներից մեկն ուզում էր ընթրել և «փիթի» յեր պահանջում, Իբրահիմը հազիվ էր դուրս պրծնում դռնից, դիմացի «քյաբաբխանայից» ընթրիք բերելու համար: Դրսում Ալաքպերի չայխանայի դռների մոտ հավաքվել եյին մարդիկ և հետաքրքրությամբ նայում եյին ներս: Հավանական է, վոր նրանք փող չունեյին և դրա համար էլ ներս չեյին մտնում: Յերբեմն միայն, հավաքվածների խմբին մոտենում էր մեկը, ճանապարհ էր բաց անում դեպի դուռը և մտնում էր ներս: Յեվ չնայած նրան, վոր ներսում նստելու տեղ չկար, նա դարձյալ գտնում էր մի նեղ անկյուն ու նստում էր: Մինչև նրա նստելը, Ալաքպերըն աչքերով հետևում էր նրան, ապա սրբիչն ուսին ձգած, մոտենում էր և կիսաժպիտ շողոքորթությամբ հարցնում.

— Շիրին-չա՜յ...

— Շիրին-չայ...

Ամբողջ սենյակը լցված եր եժան ծխախոտի դառը ծխով և մարդիկ յերևում եյին կիսամշուշի մեջ։ «Դախլի» վրա թշշում եր մեծ հեշտաեռը։ Ալաքպերը թեյ եր լցնում, իսկ Իբրահիմը բաժանում եր հաճախորդներին։ Սեղանների վրայից նա հավաքում եր դատարկ բաժակները, վորոնք Ալաքպերն անմիջապես լվանում եր և սրբում ուսի վրա գցած սրբիչով։

Ներսում հավաքվածները նստել եյին սեղանների մոտ, յերկար նստարանների վրա, պատերի տակ, սակայն այնպես, վոր բոլորի դեմքերն ել ուղղված եր դեպի միևնույն կողմը։ Աղմուկ չկար։ Միայն լսվում եր համատարած մի ղժժոց և լվացվող բաժակների չխչխկոցը «դախլի» կողմից։

Հավաքվածների մեծ մասը գյուղացիներ եյին, պարսիկ և հայ գյուղացիներ։ Կային նաև արհեստավորներ ու մի քանի բանվորներ։

Ի՞նչ եր պատճառը, վոր այդ յերեկոյան Ալաքպերի չայխանայում այդքան մարդ կար հավաքված։ Յեվ ինչն եր պատճառը, վոր հավաքվել եյին վոչ միայն ներսում, այլև դրսում, դռների մոտ։

Պատճառն այն եր, վոր հեռու տեղից աշուղ եր յեկել և այդ յերեկոյան Ալաքպերի չայխանայում հեքիաթ եր պատմում։ Յերկու ժամ առաջ եր սկսել հեքիաթը և առաջին մասը վերջացել եր։ Այժմ, աշուղը նստել եր սեղաններից մեկի մոտ և թեյ եր խմում։

Իսկ քիչ հետո պիտի շարունակեր հեքիաթը։

Աշուղ Հաֆիզ-Զադեն, հիսուն տարին անց մի առույգ ծերունի յեր, յերկարահասակ և համեմատաբար նեղիրան։ Նրա վերին շրթունքի վրա բուսել եյին յերկար, բայց ցանցառ բեխերը. մորուք բոլորովին չուներ։ Գլխին դրել եր բուխարական նախշուն գլխարկ, վորը պինդ կերպով նստել եր նրա ճաղատ գլխի վրա. կողքին, նրա-

տարանի վրա նա դրել եր իր սազը։ Նա թեյ եր խմում և խոսում եր իր սեղանակից վաճառականների հետ։

Հեռու տեղից եր յեկել Հաֆիզ-Զադեն և շատ նորություններ գիտեր։ Նա որինակ, գիտեր թե ինչ արժե թուզը Քիրմանշահում, չամիչը Թավրիզում կամ չիրը Որդուբադում։ Յեվ վաճառականները հետաքրքրությամբ լսում եյին նրան ու յերբեմն ել իրենց ծոցի դավթարներում մատիտով ինչ վոր բաներ եյին նշանակում։

Մյուս սեղանների մոտ նստել եյին հողի մարդիկ՝ պարսիկ ու հայ գյուղացիներ, քարի մարդիկ՝ պարսիկ ու հայ արհեստավորներ։ Նրանք փոքր կումերով ֆռթացնում եյին թեյը և մտածում հեքիաթի վերջավորության մասին։

— Հե՛-հե՛-հե՛, Զուբեյիդա, Զուբեյիդա... լսվում եյին յերբեմն բացականչություններ։

Յեվ այդ ժամանակ դիմացը նստած մի ուրիշը լուռ որորում եր գլուխը, կարծես ի նշան համաձայնության։

— Բարի լույս բացվի ձեր վրա, վոնց վոր բացվեց Զուբեյիդայի սիրեկան Իսկյանդարի վրա։

Մի վայրկյանում ամեն ինչ լռեց։ Ղժժոցն ել, խոսակցության ձայներն ել։ Բաժակների չխչխկոցները ցածրացան։

Աշուղը, սազը ձեռքին, նորից կանգնել եր դախլի և սեղանների միջև յեղած ազատ տարածության մեջտեղում և պատմում եր, համապատասխան շարժ ու ձևերով։

— . . . Կողքը նայեց Իսկյանդարը տեսավ.— ինչ տեսնի վոր լավ լինի, տեսավ, Զուբեյիդան չկա։

Աշուղը յերկու քայլ արեց դեպի պատը և կանգնեց։

— Զուբեյիդա՛, ասաց Իսկյանդարը. .

Տեսավ, — ձայն չկա...

Աշուղն արագ փոխեց յերեք քայլ և մոտեցավ դռանը։ Բոլորի աչքերը հառած եյին նրա վրա։

— Հա՛, տեսավ վոր Զուբեյիդան չկա, նստեց լաց յեղավ։ Լաց վոր յեղավ պրծավ, ետպես յերգեց.

Աշուղը սազը տնկտնկացրեց մատներով, ապա մի քիչ նվագելուց հետո սկսեց բայաթին։

—Հէ-եհէ-եհէ-եհէ...

Բոլորի կրծքից հառաչանք թռավ։ Մի քանիսը ձեռքները դրեցին ականջներին։

Գյուլիստանի վարդն ես,
Ջահելների դարդն ես,
Ծաղկանոցի զարդն ես,
Զուլեյխա,
Ո՞վ քաղե քու վարդից,
Ո՞վ մեռնի քու դարդից,
Դու չես ծնվել մարդից,
Զուլեյխա...

Յուրաքանչյուր տունը յերգելուց հետո աշուղը տնկտնկացնում էր սազը, իսկ հավաքվածներն ընդմիջումից ոգևվելուց, «հէյ վախ» եյին կանչում։

— Արևը յոթը գազ բարձրացավ։ Արևը վոր յոթը գազ բարձրացավ, Իսկյանդարին խաբար բերեցին, թե ով Իսկյանդար, Զուլեյխային փախցնողն Աբբաս-ողլին է...

Նստարանների և աթոռների վրայից, վոչխարի միամիտ հայացքով դեպի աշուղն եյին նայում բազմաթիվ զույգ աչքեր։

Բազմաթիվ բերաններ զարմանքից կիսաբաց, նորածիլ բեխեր, միամիտ, գեղջկական հայացքներ և խորը հետաքրքրություն...

Իսկ յերբ աշուղն սկսում էր նվագել, նրանք,—հողի և քարի այդ մարդիկը, ձեռքերն ականջներին եյին դընում, դանդաղ օրորվում և հիշում եյին իրենց Զուլեյխաներին, իրենց Սանամներին ու Գյուլիզարներին։ Յեվ կյանքը նրանց թվում էր անգույն, իրենց Սանամներն ու Գյուլիզարներն՝ անհրապույր։ Գունագեղն ու հրապուրիչն անծանոթ աշխարհի այն հեքյաթն էր, վոր լայներախ դուրս էր հորդում աշուղի սազի լարերից։

Յեվ նայում եյին միամիտ հայացքներն ու լսում եյին հողի, քարի մարդիկ։

Վերջին նստարաններից մեկի վրա, պատի տակ, նստել էր քսանյերկու տարեկան Ահմեդը։ Բոլորի նման, նա էլ լսում էր աշուղին և լսում էր հետաքրքրությամբ։ Սակայն նրա աչքերում, փոխանակ վոչխարի միամտության, փայլում եյին մի զույգ ջահել կրակներ։ Բորբոքված լսում էր նա Զուլեյխայի հեքյաթը և նրան թվում էր, վոր այդ հեքիաթն իր Զուլեյխայի մասին է,—իր Զուլեյխայի, վոր հեքիաթի փերի չի, այլ իրական աղջիկ և ապրում է Գետառ-չայից այն կողմ, Թումի փողոցում։

Ահմեդը լսում էր աշուղին և մտածում։ Հաճախ նրա միտքը կանգ չէր առնում և Ահմեդին տանում էր հեռու։ Նա սկսում էր վերհիշել ամեն ինչ սկզբից, ամեն ինչ մինչև յերեկ։ Յեվ յերբեմն նա նայում էր դեպի դուրս,—փողոց։ Նույնիսկ մի յերկու անգամ յետ դարձավ և պատի ժամացույցին նայեց։

Իսկ հետո, սկսեց նորից մտածել։

Ահա, ինքը, Ահմեդը, նստել է այստեղ, չայխանայում, լսում է աշուղին և մտածում է։ Իսկ ուր է հիմի Զուլեյխան...

Յերևի դպրոցում կլինի...

Քիչ հետո, ժամանակը կգա և Ահմեդը վեր կկենա։ Նա կգնա դեպի թուրքական դպրոցը և կսպասի։ Զուլեյխան դուրս կգա դպրոցից և քայլերը կուղղի դեպի տուն։ Նա կնկատի Ահմեդին և ընկերուհիներից կանջատվի։ Անկյունին հասնելիս, Ահմեդը կմոտենա և ամաչկոտ ժպիտով կբարևի։

— Բարև։

Զուլեյխան կասի.

— Բարև, Ահմեդ։

Իսկ հետո, ավելի կամաց ձայնով.

— Հը՞, Ահմեդ . . .

Ահմեդը չի խոսի . . .

— Ելի՛ չես լսել,— կասի Զուբեյդան։

Ահմեդն ելի չի խոսի . . .

— Մարդ դարձիր։ Լավ մարդ որ դառնաս, քեզ կառնեմ, կասի Զուբեյդան ու կհեռանա։

Ախր ո՞նց անի Ահմեդը, որ մարդ դառնա, Զուբեյդա։ Դու դպրոց ես գնում, սովորում ես ու շուտով կը վերջացնես։ Իսկ Ահմեդն ի՞նչ անի։ Դու հայր ունես, մայր ունես և քեզ պահում է հայրդ, որ պատ շարող ուստա յե։ Իսկ Ահմեդն ի՞նչ անի։ Ահմեդը հասարակ արհեստավոր է,— մեջքի վրա քար կրող հասարակ արհեստավոր։

Յեվ մտամոլոր, դեպի իր սենյակն էր վերադառնում Ահմեդը, քթի տակին մրմռալով հայերեն յերգը.—

Թե ինձ չեյիր առնի, ընչի՞ սիրեցիր,
Մե բուռ կրակ դարձար, սիրտս էրեցիր...

Ահմեդին սթափեցրեց աշուղի ձայնը։ Սազը ձեռքին նա սկսել էր մի նոր յերգ, որն յերգում էր վոգևորված կերպով ու իր ձայնի ամբողջ ուժով.—

Զուբեյդա, Շիրազի վարդ,
Զուբեյդա, ծաղկունանց զարդ . . .

Ահմեդը հառաչեց։ Վո՞րտեղից է յեկել այս աշուղը... վո՞րտեղից է բերել այս հեքիաթը . . . վո՞րտեղից է գտել Զուբեյդայի անունը... Իր Զուբեյդայի հեքիաթը չէ՞ սա . . .

Պատի ժամացույցը, որ մինչ այդ, աննկատելի կերպով չխկչխկում էր, ինն անգամ խփեց։ Ահմեդը վեր ցատկեց։ Ուշացել է։ Այդեն դպրոցից դուրս յելան . . .

Ուշացել է . . .

Սակայն և այնպես, նա փողը վճարեց, արագ դուրս թռավ և բռնեց դպրոցի ճանապարհը։ Համարյա վազելով նա հասավ դպրոցին և առանց անկյունում կանգնելու, առաջ անցավ։

Դպրոցի բոլոր լուսամուտներն էլ մութ եյին։ Վոչ մի տեղից լույս չէր յերևում։ Նշանակում է դասերն արդեն վերջացել եյին։

Ահմեդն անշարժացավ։ Շեյթանի աշուղ . . . իրեն ուշացրեց . . .

Նա կարծես չէր հավատում աչքերին։ Յերեք ամիս է, որ ամեն յերեկո նա գալիս կանգնում է այն անկյունում և միշտ ժամանակին է յեկած լինում։ Իսկ հիմի...

Դանդաղ շարժվեց Ահմեդը և ուղևորվեց դեպի կապույտ մզկիթը, որի ներսում,— խուցերում, ապրում եյին արհեստավոր պարսիկներ,— նաև ինքը։

Ճանապարհին նա մի քանի անգամ յետ դարձավ և նայեց դեպի դպրոցը, կարծես հուսալով, որ այնտեղ նորից կվառվեն լույսերը։ Իսկ յերբ բավական հեռացավ, խորը հառաչեց և արագացրեց քայլերը։

Իսկ նրա ականջներում դեռ հնչում եյին աշուղի յերգի խոսքերը—

Ո՞վ քաղե քու վարդից,
Ո՞վ մեռնի քու դարդից,
Դու չես ծնվել մարդից,
Զուբեյդա . . .

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՈՒՐԻՇ ԽՈՍՔՈՎ, ԹՅՈՒՐՔ ՈՒ ՊԱՐՍԻԿ ԿԱՆԱՆՑ ԱԿՈՒՄԲԻ ՄԱՍԻՆ

Քաղաքի կենտրոնից քիչ հեռու, մի մութ և նեղ փողոցի մեջ գտնվում է պարսկական վոճի, կամարաձև մի դարպաս։ Դարպասի յետևում, ներսում, լայնարձակ հայաթն է գեղեցիկ ծաղիկներով և մի քանի ծառներով։

Հայաթում գտնվում է ալյուսաշեն մի բարձր շենք, յերկու հարկից բաղկացած։

Այդ հայաթն ու այդ շենքը պատկանելիս են յեղել Միրզա Աբաս ողլի անունով մեկին։ Միրզան հեղափոխու-

թյան օրերին փախել է Պարսկաստան և այնտեղ է հաստատվել։

Տունը մնացել է անտեր և պետությունն այդ տունը վերցրել է իբրև լքյալ գույք, նորոգել է և քրեհով տվել։

Այժմ, այնտեղ տեղավորված է Թյուրք ու պարսիկ կանանց ակումբը։

Յերեկոյան, չափազանց գեղեցիկ են յերևում լույսերն այդ շենքի յերկրորդ հարկի պատուհաններից։ Դուրսից ներս են մտնում կանայք, աղջիկներ,—չադրայով ու առանց չադրայի և գնում են ակումբ։

Վոչ մի տղամարդ այդ ակումբը չի մտնում.—չի կարելի։ Յերբ ներսում կանայք կան, չի կարելի։ Յերբեմն միայն, յերբ փակ է լինում ակումբը և ներսում վոչ վոք չի լինում, կարելի յե գնալ ակումբի վարիչի մոտ և նրա հետ միասին գնալ ակումբը տեսնելու։

Վոչ ակումբի վարիչը,—ընկերուհի Այիշեն, վոչ էլ կին-բաժինը, չեն շտապում վերացնել ակումբի այդ օրենքը։ Նրանք գիտեն, վոր այդ էլ մեծ բան է,—Թյուրք ու պարսիկ կանանց գրավել դեպի ակումբ։

Նրանք գիտեն, վոր յեթե մի օր, մի տղամարդ մտնի այդ ակումբը, շատ տղամարդիկ իրենց կանանց ու աղջիկներին կարգելեն ակումբ հաճախել։

Յեվ այդ է պատճառը, վոր Այիշեն, այն կրթված, նախապաշարմունքներից ազատ, կոմունիստկա Այիշեն, այդ խնդրով իրեն դիմող յուրաքանչյուր մարդու կարճ պատասխանում է.

— Չի կարելի . . .

Ակումբը տեղավորված է յերկրորդ հարկում։ Ներքևի հարկում ապրում է ծառայող կինը և ելի մի յերկու յերեք կին։

Այնտեղ են գտնվում նաև ակումբին կից կար ու ձևի արհեստանոցը, փոքրիկ ջուլհականոցը և պարապմունքի մի քանի սենյակներ։

Ցերեկներն այդ սենյակներում լցվում են Թյուրքուհիներն ու պարսկուհիները։ Կարի մեքենաներն ու ջուլհականոցի մաքուքները չխկչխկում են, իսկ մյուս սենյակներում լսվում են վորևէ պարապմունքի նստած կանանց ձայները։

Մի նեղ սանդուղք, առաջին հարկից տանում է դեպի վերև. վորտեղ փոքրիկ նախասենյակում գտնվում է դուռը, վրան գրված՝ «Թյուրքուհիների ակումբ»։

Չորս սենյակից է բաղկացած ակումբը։ Չորս գեղեցիկ սենյակներից։ Նրանցից մեծը դահլիճն է, յերկուսը ազատ սենյակներ են, հավաքվելու և զրուցելու համար, իսկ վերջինը ընթերցարանն է։

Բոլոր սենյակներում, պատերի վրա խփված են հեղափոխականների նկարները. Լենին, Կլարա Ցետկին, Կրուպսկայա, Լյուքսեմբուրգ . . .

Ակումբի ամենագեղեցիկ սենյակը դահլիճն է։ Նրա առաստաղը, վոր գմբեթաձևի յե նման, ամբողջապես ծածկված է փոքրիկ հայելիների համաչափ կտորներով, վորոնց մեջ բեկբեկվում են բոլոր առարկաներն ու մարդիկ։

Դահլիճն ունի մեկ մեծ և յերկու փոքր լուսամուտներ, զարդարված կարմիր, կապույտ և կանաչ փոքրիկ ապակիներով։ Յերբ ցերեկով մեկը ներսից նայի այդ ապակիներին,—կամ գիշերով դրսից՝ յերբ ներսում լույսեր են վառում,—լուսամուտների այդ գույնզգույն տեսարանը չափազանց գեղեցիկ ու գրավիչ կերևա։ Կթվա, վոր դրանք վոչ թե ապակիներ են, վորոնցից լույս է թափանցում, այլ պպղուն, գույնզգույն թիթեռներ։

Դահլիճի պատերի վրա կան բազմաթիվ վորմաքանդակներ։ Տեղ-տեղ, պատերի մեջ կան փոքրիկ խորություններ, վորոնք ծառայում են պահարանի տեղ։ Հատակը քարից է, վորի վրա փռված են թաղիքներ։

Յերեկոյան, ակումբի ազատ սենյակներում շատ կա-

յին կանայք և աղջիկներ։ Ակումբի սովորական որերից մեկն եր այդ. ժողով կամ ներկայացում չկար։ Ամեն վոք զբաղված եր մի գործով։ Շատերը զրուցում եյին իրար հետ։ Նրանք չադրաները նետել եյին մի կողմ։ Ամենուրեք յերևում եյին թրքուհիների գեղեցիկ աչքերը և մետաքսի թեթև փայլ ունեցող մազերը։

Դուռն արագ բացվեց և ծիծաղելով ներս մտան Զուբեյդան և իր ընկերուհի Ասմարը։ Նրանք իրենց ձեռներում ունեյին գրքեր, տետրակներ։ Նշանակում է, դպրոցից ուղիղ այստեղ եյին յեկել։

Ներս մտան, ժպտալով ու ծիծաղելով, գրքերը դրեցին պատի դարակներից մեկում, Ասմարը, վոր չադրայի տակ եր, վերցրեց չադրան մի կողմ և նստեց։

Զուբեյդան նույնպես նստեց։

— Ասմար, մեր աղջիկներից չկա՞ն...

— Չեն յեկել դեռ։

— Ասմար, ծիծաղում եմ, բայց շատ տխուր եմ...

— Խի՞ . . .

— Չեմ իմանում, Ասմար . . .

Քիչ հետո ներս մտան յերկու կին ու մի աղջիկ։ Կանայք չադրաներով եյին, իսկ աղջիկը գլխին կապել եր «Բաղդադի փուշի» թաշկինակ։ Թաշկինակի տակից, քունքերի մոտ, դուրս եյին պրծել նրա սև մազերը, — զարմանալի սև, գիշերվա նման մազերը։ Նրա արտակարգ սպիտակ դեմքի վրա, փայլուն քարածուխի նման վառվում եյին սև աչքերը։ Նա ներս մտավ և մոտեցավ Ասմարին ու Զուբեյդային։

— Աղջի՛, բարև . . .

Ասմար բարևեց։ Զուբեյդան ցրված եր յերևում։ Մի քիչ անց, նա ել, բարձրացրեց գլուխն ու ժպիտով բարևեց։

— Հը՞, Զուբեյդա դու քիթդ խի՞ յես կախել...

— Աղջի, չեմ իմանում, հիվա՞նդ եմ, ինչ եմ...

— Չե՞ս գալիս, գնանք «Զանգի» կարդանք։

— Գնացեք, յես կգամ . . .

Ասմարն ու այդ թյուրք կոմյերիտուհին մտան ընթերցարան։

Զուբեյդան մնաց մենակ։

Ախր ինչո՞ւ չե նա այսոր տխուր . . .

Դպրոցից դուրս յելավ, Ասմարի ու Նագիրի հետ գընում եր։ Հետո բաժանվեց նրանցից, վոր յեթե Ահմեդն անկյունում ելի սպասելիս լինի, — մենակ հանդիպի նրան։ Տեսավ Ահմեդը չկա։ Վազ տվեց, հասավ Ասմարին։ Հետո յեկան այստեղ . . .

Ախր ինչո՞ւ չե տխուր . . .

Այսոր Ահմեդը չկար։ Ե՛, չկար՝ չկար։ Ի՞նչ արած։ Ահմեդն իմ ինչն ե վոր . . . Աչք ունի ինձ վրա։ Ի՞նչ անեմ թե աչք ունի։ Լավ տղա չե, բայց վոր դեռ խամ ե, անփորձ ե . . . Նա կնիկ պահո՞ղ ե Նա մարդ դարձո՞ղ ե։ Աշխարհքից բեխաբար, անուսում . . . Ինքը խո նրա թայը չի՞։ Ուզի՝ իրեն հետ ամուսնացող չկա՞։ Ես ել ինչպիսի՜ տղաներ . . . Ուսումով, խելոք, ճարպիկ . . .

Զուբեյդան գլխի փուշիի ծայրն առավ մատների արանքը և սկսեց խաղացնել։

. . . Մենակ թե . . . մենակ թե յես նրան եմ սիրում։

Եսոր չկար։ Ամեն որ սպասում եր։ Գնում եյի, բարևում, մի քանի խոսք ասում կամ չասում և անցնում Ահմեդն ել, առանց դժգոհելու, անցնում գնում եր իրեն համար։

— Մարդ վոր դառնաս, քեզ կառնեմ, ասում եր նրան Զուբեյդան։

...Եսոր չեկավ։ Քա՞ր ընկավ մեջքին, ջարդեց։ Պատի վրայից վա՞ր ընկավ։ Հիվանդացա՞վ։ Ի՞նչ յեղավ։

— Մարդ դարձիր, քեզ կառնեմ . . .

Վո՞նց մարդ դառնա։ Յես դպրոց եմ գնում, կոմսոմոլիստ ընկերներ ունեմ, ակումբ եմ գալիս . . . Ինքն

ինչ անի խեղճը... Իր օրվա հացն է աշխատում, ուրիշ ոչինչ...

Զուբեյդան անհանգիստ շարժումներ էր անում։ Ապա դիմեց Ասմարին.

— Ասմար, տուն գնա՛նք...

— Ի՞նչ։

— Տուն գնա՛նք։

— Եսպես շո՞ւտ։

— Հա գնանք, Ասմար։

— Գնանք։

Ասմարն ու Զուբեյդան դուրս եկան։ Ասմարն ըզգում էր, վոր Զուբեյդան տխուր է, բայց ոչինչ չէր հարցնում, հարմար րոպեի սպասելով։ Նրանք դուրս եկան նրբանցք և նույն նրբանցքով շարունակեցին իրենց ճանապարհը։

— Աղջի, եսոր քեզ ինչ է պատահել...

— Ասմար ջան հանաք մի անի, սիրտս մի տեսակ տխուր է...

— Խի՞...

— Դու գիտե՞ս, Ասմար, վոր յես մի աղայի գիտեմ, անունը Ահմեդ, ինքն էլ մի լավ տղա յե...

— Հը՛, հետո...

— Չէ՛, Ասմար, գիտեմ ինչ ես ասում, բայց չէ։ Էդ Ահմեդն ինձ վրա աչք ունի։ Լավ տղա յե, բայց կնիկ պահող դուրս չի գա։ Ես մի քանի ամիս է, վոր ինձ հանդիպում է, նայում է ինձ ու կարծես հարցնում է.

— Ի՞նչ ես ասում, Զուբեյդա։

... Յես էլ, խոսք չեմ տալիս։

— Հետո՞...

— Ամեն որ տեսնում եյի։ Էդ խեղճը եսոր չկա։ Չըլինի՞ մի բան է պատահել։ Հը՞, Ասմար...

Բայց Ասմարը, պատասխանի փոխարեն պինդ ծիծաղում էր։ Ապա ձեռքով բամփեց ընկերուհու գլխին.

— Դե ասա, սիրտս տաք է վրեն, էլի...

Զուբեյդան ձայն չհանեց։

— Ինչ անենք, թե եսոր չես տեսել։ Էգուց կտեսնես։ Մեկել որ կտեսնես։

Զուբեյդան դարձյալ լուռ էր։

Ասմարն ուզեց նորից խոսել, բայց տեսնելով ընկերուհու տխրությունը, միայն մի քանի համոզիչ խոսք ասաց ու լռեց։

Ռումի փողոցում, Զուբեյդան ցտեսություն ասեց Ասմարին ու մտավ իրենց տուն։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՒԶՈՒՄ ԵՄ ԱՍԵԼ, ԳԵՏՆԱՓՈՐ ԲԱՂԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Գետնից մի մետր բարձրությամբ, դուրս են ցցված յերկու մեծ գմբեթների վերևի մասերը։ Նրանցից մեկի շուրջը կան չորս ուրիշ գմբեթներ, սակայն մեջտեղի գմբեթից ավելի ցածր։ Մարդու կես բարձրությամբ, գմբեթների մի կողմում գտնվում է փոքրիկ դռնակը։ Քարե սանդուղքներն ուղիղ ներքև են իջնում, դեպի գետնի տակը։

Այդ է բաղանիքի արտաքին տեսքը։

Դեպի ներքև իջնող քարե սանդուղքի ցածր ծայրում նույնպես կա մի փոքրիկ դռնակ, վոր ուղղակի բացվում է դեպի բաղանիքի հանվելու սենյակը։ Դա մի մեծ, վեցանկյունանի, ընդարձակ սենյակ է, վորի առաստաղը դրսից յերևացող մեծ գմբեթներից մեկն է։

Հատակը քարից է։ Պատերն ու հատակը խոնավ, տեղ-տեղ՝ ուժակի թաց։ Սենյակի կենտրոնում, քարից շինված մի ավազան կա, մինչև մարդու գոտին հասնող պատերով։ Ավազանի մեջտեղի քարե գուռից դուրս է հորդում ջուրը և լցվում ավազանի մեջ։

Պատերի տակ թախտեր կան դրված.— լայն, յերկար թախտեր, վորոնք միայն ընդհատվում են դռների մոտ։

Մեկ՝ դեպի դուրս տանող դռան մոտ, մեկ էլ դեպի լողարան տանող դռան։ Այդ թախտերը, փոքրիկ վարագույրներով բաժանված են առանձին մասերի։ Յուրաքանչյուր մասում, հենց թախտի վրա, դրված են փայտե նստարաններ, հանվելու և շորերը դնելու համար։

Թախտերի այդ բաժանմունքներից մեկում, փայտե գալլի, — փոքրիկ դրամարկղի յետևում ծալապատիկ նստած ե մի չաղ պարսիկ, բաղնիքի տերը։ Նա «Թագբեհ» ե քաշում և «քյահրուբար» հատիկների չխկչխկոցը միախառնվում ե դատարկ սենյակում կարկաչող ավազանի ջրի ձայնին։

Մի ուրիշ բաժանմունքում, մի ուրիշ պարսիկ, գոգնոցը կապած և սրբիչն ուսին գցած, նստած ե մեծ սամովարի մոտ։ Պատի վրա շինված փոքրիկ դարակներում թեյի բաժակներ կան, և ափսեներ։

Մի որ լողարանը բաց ե տղամարդկանց համար, մյուս որը կանանց։ Յեվ այն որերին, յերբ կանայք են լողանում, գալլի մոտ նստում ե բաղնիքի տիրոջ կինը, իսկ սամովարի մոտ, թեյ ծախողի կինը։

Այդ որը տղամարդկանց լողանալու որն եր։ Առավոտից մինչև յերեկո, մեկ-մեկ, յերկու-յերկու կամ յերեք-յերեք ներս եյին մտնում մարդիկ ու լողանում։ Շատ «մուշտարիներ» յերեկոյան եյին գալիս, ուստի և, արդեն ժամանակն եր և նրանք ուր վոր ե, պիտի գային։ Հաստ պարսիկը չխկչխկացնում եր Թագբեհը և առանց ներքին ու արտաքին անհանգստության, սպասում եր հաճախորդներին։

Թեյ ծախողը, բաժակները կրկին ու կրկին լվանալուց ձանձրացած, նստել և նիրհում եր։

Թախտերից մեկի վրա, հազիվ նկատելի պառկել եյին յերկու «քիսաչիները»։

Յեվ իրոք. քիչ հետո բաղնիքն սկսվեց լցվել։ Յեվ վորովհետև հինգշաբթի յեր այդ որը, դրա համար ել գալիս եյին ավելի շատ, քան մյուս որերը։ Չե՞ վոր վաղն ուրբաթ ե։

Թեյ ծախողն արթնացավ, սամովարի կրակն ուժեղացրեց։ Քիսաչիներն արթնացան և աչքերը տրորելով ըսկսեցին սպասել։ Բաղնիքի տերը հազաց։

Նա, այդ հաստամարմին պարսիկը, սիրալիր ժպիտներով դիմավորում եր դռնից յուրաքանչյուր ներս մտնողին։ Նրանց, ում նա ճանաչում եր անունով, «համեցեք»-ին միացնում եր նաև նրա անունը։ Նրանց, ում գըրպանը նա ճանաչում եր իբրև հաստ ու լիքը գրպան, հանդիպում եր ավելի սիրալիր, ավելի քաղցր խոսքերով։

— Համեցե՛ք։

— Համեցեք, ուստա Ալի։

— Ա՜յ բարև, բարև, աչքիս վրա յեկար, Սուլեյման աղա։

— Ոսման աղա՞... Ա՜յ բարև քեզ... Ես ո՞ւր ես, չես յերևում։ Յես ասի, քեֆ չունես։ Լա՞վ ես։ Ե՛, լավ վոր լավ ես։ Փառք ալլահին։

Ոսման աղան, — վաճառական Ոսմանը, դանդաղաքայլ ու հանդիսավոր առաջացավ և յերբ ուզում եր թախտի վրա բարձրանալ, չգիտես վորտեղից դուրս պրծավ մի փոքրիկ տղա և աթոռիկը դրեց Ոսմանի վոտքերի տակ. Ոսմանը բարձրացավ թախտի վրա։

Հանվեց, իջավ ներքև և չաղ մարմինը տմբտմբացնելով մտավ լողարան։

Յեվ չնայած գոլորշու առաջացրած կիսամշուշին, նա տեսավ մի քանի ծանոթների ու մոտեցավ։

— Բարև։

— Բարև՛, Ոսման ջան։ Տեղ տվեք Ոսմանը լողանա։

Ոսմանը կանգնեց ցնցուղի տակ, մի քիչ շփեց մարմինը և ապա, վոչխարի նման բառաչեց.

— Քիսաչի՜...

Քիսաչին, փայտե բարձր վոտնամանները — նալիկները հագին ներս մտավ և սկսեց Ոսմանի մարմինը տրորել։

— Հը՛, Ոսման, քեֆիդ յերբ ե, հարցրեց նրա ընկերներից մեկը։

Օսմանը, դեմքին մի ինքնահավան արտահայտություն, ծանր պատասխանեց.

— Եսոր գիշեր։

— Ինչ ես ասում... եսոր գիշե՞ր...

Մի քանիսը մոտեցան։

Օսմանը, իբրև թե անփույթ և անտարբեր դեպի նրանց հետաքրքրությունը, լուռ լողանում եր։

Յեվ սկսվեց շողոքորթությունը։ Ո՞վ գիտի, գուցե հագնվելիս, Օսմանը դառնա իրենցից մեկին և ասի.

— Դու յել արի...

Բաղնիքի լողարանը, որ նույնպես վեցանկյունանի յեր, ուներ չորս մուտքեր, որոնք տանում եյին դեպի բաղնիքի մյուս բաժանմունքները։ Նրանցից մեկում ջրամբարն եր, մյուսում ավազանը, — վաննան, յերրորդը ցեխ քսվելու տեղը և վերջինը՝ շոգու բաղնիքը։

Օսմանը քայլերն ուղղեց դեպի այդտեղ։ Յերբ ներս մտավ, առաջին հայացքից չկարողացավ ոչինչ որոշել։ Ապա նկատեց որ ինքը մենակ չի և ներսում մի ուրիշն էլ կա։

Մոտեցավ նրան։

— Բարև, Բեքիր։

— Բարև, Օսման ջան։

— Վո՞նց ես։

— Լավ եմ, փառք չունի։ Դո՞ւ։

— Յես էլ լավ եմ։

— Օսման, եսո՞ր ե...

— Ըմ։

— Հերն ինչ ե ասել։

Օսմանը քթի տակին, թեթև քմծիծաղ ավեց։

— Ինչ պիտի ասի։ Ինձ պես մարդուն աղջիկ ե տալիս։ Մարդ եյի ղրկել, պարելով եր խոսք ավել։

— Աղջիկը գիտե՞...

— Թող չիմանա, փա՞ն ինչ։

— Գիտե՞...

— Չե։

— Յեղա՞վ, Օսման։

— Ինչի՞։

— Յես ինչ գիտեմ։ Հիմի յել խո են հին ժամանակները չե՞ն։ Ո՞վ գիտե, աղջիկ ե, որ չուզեց՝ չուզեց։ Զոռով կարո՞ս։

— Ինչ զոռ։ Բանն առանց զոռի յել յոլա կգնա։

— Վո՞նց։

Օսմանը տաքացավ.

— Ինձ պես մարդ ե առնում, ի՞նչ պիտի չուզի։ Կը համոզեմ։

— Կհամոզե՞ս։

— Հա։ Հիմի հերն ասած կլինի։ Յես էլ որ գնացի, հարստությանս մասին խոսք բաց կանեմ հոր հետ։ Ինքը կլսի, կհամոզվի։ Բար խո չի՞,— աղջիկ ե։

— Վերջը...

— Վե՞րջը։ Մի յեմ թողնում, որ յերկաթը սառի,— աղջիկը փոշմանի։ Ձեռաց մարդ կուղարկեմ, մոլլին կը կանչեմ, որ քեբինը կտրի։

Յեվ լռեց։ Դեմքի վրա ինքնահավան ժպիտ և այնքա՞ն մեծ հավատ դեպի իր հարստության ուժը։

Դրսում, հագնելու տեղում, հագնողների մեջ արդեն տարածվել ե լուրը Օսմանի քեբինի մասին։

Յեվ յերբ Օսմանը դուրս յեկավ լողարանից, բոլորի աչքերն ուղղվեցին դեպի նա։ Իսկ ինքը, Օսմանը, ցույց տալով թե ուշադրություն չի դարձնում այդ բոլորի վրա, հանդիսավոր կե՞րպով բարձրացավ թախտի վրա, ապա բառաչեց...

— Զամաշո՞ւր...

Փոքր տղան վազ ավեց և մի ծալած սավան բերեց Օսմանին։

Յերբ Օսմանն իր մարմինը չորացրեց, առանց սավանը վրայից վար առնելու, նստեց և կանչեց.

— Շիրին-չայ։

Թեյ ծախողը, չսպասվող արագությամբ մաքրեց մի բաժակ, թեյ լցրեց և բերեց Ոսմանին։ Ոսմանը թեյը վերցրեց և սկսեց դանդաղությամբ փոթացնել։ Խմում էր մի կում և աչքի տակով նայում շուրջը։ Խմում էր մի ուրիշ կում և ականջը սրած լսում էր խոսակցությունները, վորոնց կեսից ավելին իրեն էյին վերաբերում։

Բաղանիքի անկյուններից մեկում հագնվելը վերջացրին բամբակագործարանի մի քանի պարսիկ բանվորներ և մոտեցան դրամարկղին։

— Ի՞նչ տանք։

— Ինչ ուզում եք տվեք,—ըստ սովորականի ասաց բաղանիքի տերը։

— Մարդ-գլուխ քսան կոպեկ։

— Շեն մնաք։

Բանվորները վճարեցին ու դուրս յելան, իսկ հասա պարսիկը շարունակեց թազբեհը չխչխկացնել և լսել։

Ոսմանը մոտեցավ պատերի վրա կախված փոքրիկ լամպերից մեկին, վառեց ծխախոտն ու ծխեց։ Ապա բարձր ձայնով սկսեց խոսել բաղանիքի տիրոջ հետ, վորի գախլը գտնվում էր իր դեմուդեմը, սենյակի մյուս պատի տակ։

— Հ՞ը, գործերդ վո՞նց են։ Մուշտարի շատ ունե՞ս։

— Ապրում ենք էլի, Ոսման աղա։

Թախտերի վրա խոսակցությունները ցածրացան. շատերն սկսեցին հետևել բաղանիքի տիրոջ և Ոսմանի խոսակցության, աշխատելով վորևե հետաքրքիր լուր վորսալ։ Միայն մի քանի քարտաշներ, վորոնք բարձր խոսակցում էյին իրար հետ, վոչ մի մասնակցություն ցույց չտվեցին ընդհանուր հետաքրքրությանը։

Ոսմանը հագնելը վերջացրեց, իջավ վար և մոտենալով դրամարկղին, մի ռուբլիանոց դրամը դրեց բաղանիքի տիրոջ առաջ և քայլեց։

— Եվալլա՜, եվալլա՜,—ձայնեց նրա յետևից պարսիկը։

Դռների մոտ Ոսմանը վճարեց քիսաչու փողը, ապա հարցրեց.

— Գործ խո չունե՞ս.

— Չէ, Ոսման աղա։

— Դե մի ֆայտոն կանչի։

Քիչ հետո, կառքը, վառվող յերկու լապտերներով, մոտեցավ և կանգնեց բաղանիքի դռանը։

— Ռուսմի փողոց,—ասաց Ոսմանը։

Կառքը քշեց։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՎՈՐԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԿԱՊՈՒՅՏ ՄԶԿԻԹԻՆ

Բազարի մոտ, հրապարակի մեջ, կանգնել է Կապույտ մզկիթի մեծ շենքը աղյուսից շինված բարձր պատերով, վորոնց վրա, վերևում, փոքրիկ պատուհաններ կան, ապակու փոխարեն լարացանցով ծածկված։ Գիշերով, Կապույտ մզկիթն անհրապույր է թվում իր յերեք պատերով։

Սակայն չորրորդը,—ճակատը, տարբեր է մյուսներից։ Այդտեղ, դռան յերկու կողմերում, պատը զարդարված է գույնզգույն չինիի կտորներով։ Գույնզգույն չինիի կտորներով են զարդարված նաև գմբեթն ու մինարեն։

Արևոտ ցերեկով կամ լուսնյակ գիշերին, մզկիթի գմբեթն ու մինարեն գեղեցիկ են փայլում իրենց նախշերով և գույնզգույն, պարսկական տառերի նկարներով

Մզկիթի յերկու փոքրիկ դարպասները, վոր գտնվում են կողքի պատերի վրա, միշտ փակ են լինում։ Բաց է միայն ճակատի դուռը, վորը մի ծածկված միջանցքով տանում է ուղիղ դեպ մզկիթի հայաթը, վորտեղ ծառներ կան և ծաղիկների մարգեր։ Իսկ հայաթի կենտրոնում քառակուսի ավազանն է—հավուզը։

Հայաթի հարավային մասը գլխավոր մզկիթն է,—աղոթարանը, իսկ նրա դիմացի՝ հյուսիսային մասը, մյուս

աղոթարանը։ Արևելյան և արևմտյան պատերի վրա կան իրար նման քսան-քսանչորս փոքրիկ դռներ։ Դրանք խուցերի դռներն են։ Այն խուցերի, ուր մի ժամանակ իջևանել են ուխտավորները։ Այժմ այլևս ուխտավորներ չեն գալիս, իսկ խուցերում ապրում են պարսիկ ու թյուրք արհեստավորներ, բանվորներ։

Կեղտոտ, հին խուցեր են դրանք, որտեղ ապրողները բնակարանային ծանր պայմաններից դրդվելով և միայն, որ համաձայնվել են այդ սենյակներում մնալ։ Յեվ նրանցից որևէ մեկը, հենց որ գտնում է մի ավելի լավ սենյակ, անմիջապես դուրս է գալիս այդտեղից և տեղափոխվում։

Իսկ նրա տեղը բռնում է մի ուրիշը։

Ապրողների մեծ մասը ամուրի բանվորներ են, որոնք ապրում են յերեք-յերեք, չորս-չորս յուրաքանչյուր խցիկում։ Բայց կան նաև ամուսնացածներ,—նույնիսկ յերեխա ունեցողներ։

Արևմտյան պատի հինգերորդ խուցում ապրում էր Ահմեդը։ Նա մենակ էր իր սենյակում, որովհետև այդ խուցը, բնակվելու համար ամենաանհարմարն էր Կապույտ մզկիթի բոլոր խուցերից։ Քարաշեն հատակը բոլորովին քանդվել էր, առաստաղը նույնպես։ Լուսամուտի լարացանցից յերեք-չորս լար էր մնացել միայն և քամին հաճախ փոշու հետ միասին ներս էր լցնում նաև տերևներ, թղթի կտորներ, որոնք բռնվում էին սարդի ոստայնների մեջ։

Միայն յերկու խուցեր կային մզկիթում, որոնք շատ գեղեցիկ էին և ապրելու հարմար։ Նրանցից մեկը գտնվում էր գլխավոր աղոթարանի աջ կողմում, մյուսը ձախ։ Բայց այնտեղ ապրում էին ոչ բանվորներ, ոչ էլ արհեստավորներ։ Մեկում մոլլան էր ապրում, մյուսում մզկիթի ծառան—պահապանը։

Իր խցում, հասարակ, շատ հասարակ անկողնի մեջ պառկած էր Ահմեդը։

Նա քնել էր։

Լուսամուտից ներս ընկած լուսնի շողքերի տակ յերևում էր Ահմեդի դեմքը, որի վրա մերթ-մերթ յերևացող ժպիտը վկայում էր, որ նա յերազ է տեսնում։

Յեվ ինչպես կարող էր յերազ չտեսնել։ Հոգնած մտավ անկողին ու քնեց, մտածելով Զուբեյիդայի մասին, իսկ նրա ականջներում դեռ հնչում էին աշուղի յերգերը հեքիաթական Զուբեյիդայի մասին։

Հենց որ աչքերը փակեց, նրան թվաց թե ինքը գտնվում է Նորքի այգիներում,—բաղերից մեկում։ Պառկել է ծառերից մեկի տակ ու մտածում է։ Հետո, հանկարծ լըսեց, իբր թե մեկը քաղցր զնգզնգոցով թառ է ածում ու նվագում է «հեյդարի»։ «Հեյդարի»-ի տխուր հնչյունները հասնում են իրեն և ինքը մտածում է Զուբեյիդայի մասին, որ «հեյդարի»-ից էլ գեղեցիկ է, «հեյդարի»-ից էլ քաղցր։

Հետո նրան թվաց, իբր թե նորից պառկած է իր սենյակում և իր սենյակը շա՜տ լավն է։ Ուրիշ տեղում է իր սենյակը.—ոչ մզկիթի հայաթում։ Ինքը պառկել է մաքուր անկողնի մեջ ու քնել է։ Մեկը դուռն է թակում.

— Ո՞վ է։

Լսվում է Զուբեյիդայի ձայնը.

— Բաց արա, Ահմեդ, յես գալիս եմ քեզ մոտ։ Քո կինը պիտի դառնամ։

Նորից են թակում դուռը։

Ահմեդը վեր ցատկեց քնած տեղից, արագ մոտեցավ դռանը և բաց արեց։

— Արի, անուշ Զուբեյիդա...

Թարմ օդի հոսանքը, որ դիպավ Ահմեդի յերեսին, սթափեցրեց նրան։ Նա անշարժ կանգնեց դռան մեջ տեղը, դառնորեն հիասթափված քաղցր յերազից։

— Թխկ, թխկ,—նորից լսվեց դռան թակոցը, բայց այս անգամ ոչ թե իր դռան, այլ մոլլայի։

Անմեղը դուրս նայեց։ Յերկու մարդ թակում էին մոլլայի դուռը։ Ահա դուռը բացվեց և նրանք ներս մտան։

Անմեղը նայեց յերկնքին։ Իրիկուն է թե գիշեր։ Նայեց աստղերին Անմեղն ու մրմնջաց.

— Դեռ շուտ է։

Հետո հաշվեց ու տեսավ, որ ժամի տասը հազիվ լինի և ինքը քնել է մի ժամից էլ քիչ։ Բայց թեև այդքան քիչ էր քնել, այնուամենայնիվ նա իրեն զգում էր բոլորովին կազդուրված և քնից կշտացած։

— Ե՜, է, է… ես իրիկուն Զուբեյդային չտեսա… Հետո մտածեց.

— Ե՜հ, մի բան, որ նա ինձ առնողը չի…

…Տեսնես Զուբեյդան հիմի քնած է թե արթուն։ Զէ, խի՞ պիտի քնած լինի։ Ինքն է շուտ քնում, որ առավոտը շուտ վեր կենա և գործի գնա։ Զուբեյդան շուտ ինչու պիտի քնի։ Յերևի հիմի լուսամուտի գոգում նստած, դասերն է սովորում…

Այդ միտքը հանկարծ գրավեց Անմեղին։ Շուտ էր։ Հիմի նա լուսամուտի գոգում նստած, դասերը սերտելիս կլինի։ Ի՞նչ կլինի, յեթե գնամ անցնեմ լուսամուտի տակով, մի անգամ տեսնեմ Զուբեյիդային ու գամ քնեմ…

Նա արագ շրջվեց, ներս մտնելու և շորերը հագնելու համար։ Այդ րոպեյին, բացվեց մոլլայի դուռը և այնտեղից դուրս յեկան յերկու մարդ ու մոլլան և գնացին։ Անմեղը մի րոպե նայեց նրանց յետևից, ապա մտավ ներս և սկսեց շորերը հագնել։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ՌՈՒՄՄԻ ՓՈՂՈՑԻ ՄԱՍԻՆ

Յերկար է ձգվում Ռումմի փողոցը Գետառ չայից այն կողմ, Գետառ-չային զուգահեռ։ Թաղի ամենալավ փողոցը Ռումմի փողոցն է, որի վրա են գտնվում կենտ-կենտ պատահող քարաշեն կամ յերկու հարկանի տները։

Ռումմի փողոցն սկսվում է գլխավոր փողոցներից մեկից զատվող մի նրբանցքով և վերջանում է Գետառ-չայի կամուրջներից մեկի մոտ։ Այդտեղից անմիջապես, սկսվում է մի նոր փողոց, որ տանում է դեպի Ուղտի Անկողին բլուրը։ Այդ բլուրի վրա գտնվում են վերջին տնակները, իսկ նրանցից այն կողմ ուրիշ տներ չկան և քաղաքը վերջանում է այնտեղ։

Ռումմի փողոցը նեղ փողոց է։ Յեթե պատահի, որ մի կառք անցնի այդ փողոցով, ոտքով գնացողը պետք է սեղմվի պատերից մեկին, կառքին ճանապարհ տալու համար։

Մայթերը չափազանց նեղ են Ռումմի փողոցի վրա։ Անցորդի միայն մի ոտքն է լինում մայթի վրա։ Քայլելիս նրա մյուս ոտքը մնում է մայթից ցած, փողոցի մեջ։

Տեղ-տեղ հանդիպում են այնպիսի ցածած պատեր և դռներ, որ մարդ ուղղակի զարմանում է, թե ինչպես կարելի յե ներս մտնել այդ դռնից։ Քիչ չեն այնպիսի դռներ, որոնց բարձրությունը գետնից հասնում է մինչև մարդու կուրծքը։

Պատերը նույնպես։

Յեվ թվում է, թե այդ պատերն ու դռները մանուկների ձեռքով շինված փոքրիկ խաղատներ են, ուրիշ վոչինչ։

Ու զարմանալի չէ, որ համատարած այդ ցածածության մեջ հանդիպող որևէ քարաշեն կամ յերկհարկանի տունը հսկա շենք է թվում անցորդի աչքին։

Փոքրիկ դռնակներից մեկի յերկաթե «չախկ»-ը, որ փոխարինում է զանգին,—մի քանի անգամ չխկչխկաց։ Փողոցի վրայի լուսամուտներից մեկի մեջ մեջ մարդկային մի ստվեր յերևաց.

— Ո՞վ է…

— Մենք ենք։

Ներսում լսվեցին շշուկներ.— Ոսմանն է…

Քիչ հետո դուռը բացվեց և Ոսմանը յերկու-յերեք ուրիշ մարդկանց հետ ներս մտավ։

Դուռը նորից փակվեց։

Անակնկալ այցելության առթիվ Զուբեյիդան շատ զարմացավ։ Նա դասագիրքը ծալեց և դրեց մի կողմ։ Ոսմանն ի՞նչ գործ ուներ իրենց տանը, վորին դեռ «աղա» յեն ասում ըստ հին սովորության, մի քանի կեղծավորներ...

—Յերեսդ ցույց մի տա, —շշնջաց Զուբեյիդայի մայրը, մոտենալով նրան։

—Ինչի՞, —զարմացած հարցրեց Զուբեյիդան։ Զաղրան եր պակաս...

—Աղջի, բան եմ ասում, —կրկնեց մայրը։ Ըս անգամին ինձ լսիր...

Բայց Զուբեյիդան ականջ չարավ և գնաց դեպի հյուրերը, վորոնք իր հոր հետ նստած, զրուցում եյին։

—Հալ, քեֆ. —հարցրեց Ոսմանը, դիմելով Զուբեյիդայի հորը։

—Շարում ենք ելի, պատասխանեց նա, ձեռքերով պատ շարելու շարժումներ անելով։ —Դու վոնց ես։

—Յես էլ եմ շարում, ժպտաց Ոսմանը, դարակներում ապրանք շարելու շարժումներ անելով։

Ոսմանի ընկերները ծիծաղեցին։

Քիչ հետո, Ոսմանն անցավ իր ծրագրին, սկսելով խոսել կոոպերատիվների մասին, վոր «մարդու տուն են քանդում», և այն մասին, վոր միայն իր նման տղամարդը կարող է դիմանալ և նույնիսկ հարստանալ։

Առաջին րոպեյին, Զուբեյիդան վոչինչ չեր հասկանում։ Ինչո՞ւմն է բանը... վո՞րվա սրտակից բարեկամներն են արհեստավոր Հասանն ու վաճառական Ոսմանը... Ուրիշ բան թաքնված կլինի այս այցելության տակ...

Յեվ քիչ հետո, յերբ Ոսմանը խոսք բաց արեց ամուսնության և «հիմիկվա» աղջիկների մասին, Զուբեյիդան ամեն ինչ հասկացավ։ Նա արագ մոտեցավ մորը և քաշեց մի կողմ։

—Ես ինչ ապուր եք յեփել...

Մայրը կմկմաց։ Ապա նշանացի ցույց տվեց իր ամուսնուն և հասկացրեց Զուբեյիդային, վոր վոչ թե ինքը, այլ իր ամուսինն է այս բանի պատճառը։

—Ասում է լավ մարդ է, հարուստ...

Վերջին բառի հետ միաժամանակ նա նայեց Զուբեյիդայի աչքերին, կարծես տեսնել ուզելով իր ասածի թողած տպավորությունը։

—Ե՛ հեյ... Նադիր Շահի վախտը խո չե՞ք, բարկացավ Զուբեյիդան։ Ապա հանկարծակի լռեց, սպասելով վերջաբանին։

Քիչ հետո, հայրը Զուբեյիդային կանչեց.

—Զուբեյիդա արի։

Զուբեյիդան հաստատ քայլերով մոտեցավ։

—Բարև արա Ոսմանի հետ։

Զուբեյիդան քմծիծաղի տվեց։

—Ի՞նչ գործ ունեմ...

Հայրը, թեև գիտեր աղջկա «բաց» բնավորությունը, այնուամենայնիվ, շատ զարմացավ։

Իսկ Ոսմանին շա՛տ դուր յեկավ Զուբեյիդայի այդ արարքը։

—Կրակի կտոր է... հուրի-փերի յե, —մտածեց նա ինքնիրեն, ցնորելով նրան ունենալու ցանկությամբ։

—Ղոնախ չե՞ս ուզում, —ժպտաց Ոսմանը, դիմելով Զուբեյիդային։

—Տունն իմ տունս չի՞ խո, —հորս տունն է։ Նրան ես ղոնախ յեկել, նա յել ընդունել է։ Իմ ուզել-չուզելս մի հաշիվ չէ։

Ասավ Զուբեյիդան ու հեռացավ։

Ոսմանի սրտում կասկած ընկավ։ Հաճելի տրամադրությունը փոխվեց վախի։ Չլինի՞ իսկապես, գործը փչանա...

—Զուբեյիդա՛, —կատաղած բղավեց հայրը։

—...Ի՞նչ...
Զուբեյդան նորից մոտեցավ։
—Դու գիտե՞ս Ոսման աղան ինչի յե յեկել։
—Չէ։
—Յեկել ե քեզ առնելու։
—Ո՞ւմ...ինձ հարցրե՞լ եք...Յես կառնե՞մ վոր...
Զուբեյդայի հայրը բարկացած նայեց աղջկան, ապա ատամների արանքով, զսպված հանդարտությամբ մռմռաց.
—Կառնես...
—Չե՛մ առնի։ Կին-բաժին կդիմեմ, չեմ առնի։
Կին-բաժնի անունը լսելով, հայրը բոլորովին դուրս յեկավ համբերությունից։
—Ինչ կանե՞ս, կի՞ն-բաժնի՞ն կդիմես. դիմիր։ Կին-բաժինը քեզ հաց կտա՞, քեզ կպահի՞։
Զուբեյդան ձայն չհանեց։
Հայրն ավելի տաքացավ։
—Չեմ պահի։ Հասկանո՞ւմ ես, շան աղջիկ, չեմ պահի։ Ի՞նչ պիտի անես, վոր չպահեմ։ Մեծ աղջիկ ես. մինչև պառավելդ խո տանս մեջ չպիտի՞ մնաս։ Ամուսնացիր, ելի։ Պակա՞ս մարդ ե Ոսմանը...
Ոսմանն իր անունը լսելու պես, մեջտեղ ընկավ.
—Ինչի՞ յես բարկանում խեղճ աղջկա վրա։ Գործը քաղցրությամբ վերջացնենք։ Աղջիկ ե, կբարկանա յել, կհամոզվի յել...
Այս անգամ արդեն, Զուբեյդան ինքնիրենից դուրս յեկավ։ Իր գեղեցիկ աչքերը հառելով Ոսմանի և մյուսների վրա, հաստատ ձայնով ասաց.
—Վոր մեռնեք ել, յես չեմ առնի։
Հայրը, վոր ուզում եր ինչ գնով լինի համոզել աղջկան, զսպեց իր բարկությունը և կիսաձայն հրամայեց.
—Տանից կորիր...
Յեվ յեղավ մի անսպասելի բան։
—Ես սահաթին, ասաց Զուբեյդան և փուշին կապե-

լով, գնաց դուրս։ Մայրն ուզեց հասնել աղջկան և կանգնեցնել, սակայն ամուսինը ձայնեց նրան.
—Յերես մի տա...Իր վոտքով գնաց, իր վոտքով ել կվերադառնա։
Ոսմանն ու իր ընկերները նայեցին միմյանց, դեմքերի վրա անորոշ, բայց անպայման տհաճ արտահայտություն։ Նույնիսկ Զուբեյդայի հայրը մի րոպե կասկածեց, վոր իրոք, աղջիկը կարող ե չվերադառնալ։
Դուռը բացեց Զուբեյդան և դուրս յեկավ փողոց։ Յեվ այդտեղ, փողոցում նա անդրադարձավ ամբողջ պատահածին։
—Ի՞նչ անեմ հիմի...Ո՞ւր գնամ ես կես գիշերին...
Նա ուզեց քայլել առաջ, բայց մեխված մնաց դռան մոտ։ Ու յերբ հանկարծ նայեց փողոցով դեպի վար, տեսավ թե ինչպես դեպի իրենց տունն եյին գալիս յերկու մարդ և մոլլան։ Յերևի Ոսմանի հաշվով, այդքան ժամանակում նա գործ վերջացրած պիտի լիներ և մոլլայի գալը պիտի լիներ ճիշտ ժամանակին։
Յեկան յերկու մարդն ու մոլլան և յերբ դռնից ներս եյին մտնում, Զուբեյդան շարժվեց տեղից և արագ հեռացավ։
—Բա ո՞ւր գնամ...
Զուբեյդան իրեն հանձնեց իր վոտներին։ Թող տանեն, ուր վոր ուզում են։
Ակամա քայլում եր նա և մտածում։ Վաղը կգնա կին-բաժին, կասի։ Հետո կին-բաժնից կգնան իրենց տուն, իր հորը կասեն, վոր նա իրավունք չունի աղջկան դուրս անելու։ Յեվ ինքը նորից կվերադառնա տուն։
Բայց թույն չէ՞ դառնա իր կյանքն իրենց տանը, վաղվանից սկսած...
Ո՞ւր գնալ...Չէ՞ վոր նույնիսկ մինչև առավոտ, մնալու վոչ մի տեղ չունի։ Ընկերուհիներից մեկի մո՞տ գնա։ Բայց չէ՞ վոր, բոլոր ընկերուհիներն ել ծնողներ ունեն և այդ

ծնողները հազիվ թե ներս ընդունեն տանից դուրս արածին։

Այսօր յերեկոյան, հենց սկզբից ամեն ինչ թարսվեց։ Դպրոցից դուրս յեկավ՝ Ահմեդը չկար։ Ակումբ գնաց — տխրեց։ Տանը՝ այս խայտառակ պատմությունը։

Աշխարհի վրա ո՞վ կա իրեն սրտակից ու հավատարիմ։ Ո՞ւմ ունի Զուբեյիդան աշխարհիս յերեսին։ Բոլորովին մենակ չէ՞ նա։

Նրա մտքով անցավ ակումբը, կին-բաժինը, ապա Ահմեդը։

Նա հիշեց Ահմեդին։

Միթե նա իրեն գրկաբաց չի ընդունի...

Զուբեյիդան շառագունեց, կես գիշերին իր սիրած մարդու դուռը թակելու գաղափարից։ Նրա մարմնով անցավ մի դող, հաճելի, բայց վեհերոտ...

— Մարդ դարձիր...

Յես մարդ կդարձնեմ նրան, մտածեց Զուբեյիդան։ Չէ՞ վոր յես նրանից ավելի ուսումով եմ և աշխարհից խաբար։ Յես նրան կօգնեմ։

Կայծակի պես անցան նրա աչքի առաջից մի քանի տեսապատկերներ։ Ահա ինքը, փաթաթվել է Ահմեդի վզով և նրան պատմում է մի լավ, ավելի լավ կյանքի մասին։ Ահա նա Ահմեդին սովորեցնում է, թե ինչպես պետք է անել, վոր լարացանցը պոկված լուսամուտից փոշին ներս չլցվի և սարդի վոստայններ չլինեն։

Տարված այդ տեսապատկերներով, Զուբեյիդային թվաց, թե իրոք, դեմից տեսնում է ինքը, Ահմեդը։

Զուբեյիդան մոտեցավ և նրան թվաց, թե Ահմեդն էլ է տեսնում իրեն։

— Զուբեյիդա..,

— Ահմե՞դ...Ահմեդ, դու՞ յես։

— Յես եմ Զուբեյիդա։ Ո՞ւր ես կես գիշերին։

Զուբեյիդան ձայն չհանեց։ Մի րոպե նա լուռ կանգնած եր, կարծես ինչ-վոր բանի մասին լուրջ մտածելով։ Լուռ եր նաև Ահմեդը։

Ապա Զուբեյիդան մի վճռական շարժում արեց, բռնեց Ահմեդի ձեռքը և ձգեց դեպի Կապույտ մզկիթի ճանապարհը.

— Գնանք։

— Ո՞ւր, Զուբեյիդա...

— Գնանք տուն։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ.—

ԱՅՍ ՊԱՏՄՎԱԾՔԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ ՅԵՎ ՆՈՐԻՑ ՅԵՍ ՈՒ ԸՆԹԵՐՑՈՂԸ

Մի գիշերում յես տեսա և լսեցի այս ամենը և յուրաքանչյուր հարկի տակ կյանքի յերակն եր բաբախում։

Յես պատմեցի միայն մի պատմություն, — միայն մի փոքր պատմություն։ Բայց քանի՜ այդպիսիներն են տեղի ունենում յուրաքանչյուր որ, յուրաքանչյուր գիշեր։

Կապույտ մզկիթի խուցերից մեկը նոր շունչ առավ։ Ահմեդին թվաց, թե արև մտավ իր մթին սենյակը։ Յեվ վորքան ել գեղեցիկ լինեն Կապույտ մզկիթի գմբեթի գույները, այնուամենայնիվ, հենց նույն Կապույտ մզկիթի ներսում աճում է նրան բոլորովին խարխլող, իր փառքից բոլորովին զրկող ուժը։

Քաղաքն ալեկոծվում է ծայրեծայր, կենտրոնից մինչև ծայրամասերը։ Ամենուրեք յեռնում է նոր ուժը։ Ամբողջ գիշերը յես լսում եյի այդ ուժի յերգը և այդ իմ պարտականությունն եր, — իմ իրավունքը...։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Անհասկանալին 3
2. «Խորտակված հոգիների» փողոցում . 20
3. Խանդը 41
4. Առաջին փորձը 62
5. Արևը, հուրհրան արևը... . . . 87
6. Ծաղկավոր չիթը 95
7. Գյուղաշխատավորի հիշատակարանը . 102
7. Գայլերը 117
9. Հացվորը 141
10. Սոնա 196
11. Մենավոր մարդկանց մասին . . . 226
12. Կարմիր քառակուսին 232
13. Զուբեյիդա 239

ՀՀ Ազգային գրադա
NL0321710

22144

891.99
Ուն-91